

ՌՈՒԲԵՆ ԹԱՐՈՒՄԵԱՆ

ՎԱՐՍԳՈՒՅՐ

2 0 2 0 - 2 0 2 3 թ թ

 **Lragir**^{am} ԿԱՅՔՈՒՄ

ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ



ԵՐԵՎԱՆ 2024

ՀՏԴ 070
ԳՄԴ 76.0
Թ 330

Թարումեան (Ռուբեն Հակոբյան)

Թ 330 Վարագույր. 2020 - 2023 թթ Lragir.am կայքում հրապարակված հոդվածները /
Ռուբեն Թարումեան (Ռուբեն Հակոբյան). - Եր. Թարումեան, 2024, – 202 էջ:

Ժողովածուի մեջ ներառված են Ռուբեն Թարումեանի նշված տարիներին Lragir.am կայքում լույս տեսած, թերեւս, բոլոր հրապարակախոսական նյութերը: Դրանք դասավորված են, սկսած վերջին նյութերից. 2023-ից՝ 2020 տարիները: Արվել են հատ ու կենտ խմբագրումներ, առավելապես՝ սրբագրական բնույթի:

ՀՏԴ 070
ԳՄԴ 76.0

ISBN 978-9939-0-5181-9

© Պատճենաշնորհ, Ռուբեն Թարումեան (Ռուբեն Հակոբյան), 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինքնիշխանության մասին	9
ՌԱՀ-ն ընդդեմ ԱՀԿ-ի	14
Իրավիճակ է փոխվել, թե՞ կաթսայի ճնշումը գցելու կարիք կա	17
Հեղափոխություն՝ վերելից, կամ ԲՌԻԿՍ երկրների ժե գազաթնաժողովի Մեր օրերի կրոնը	25
Պետական կրոնը	27
Կրոնների ծագումն ու տեսակները	28
Ապահանրացում (dissociatio)	30
Կրոնական հեղափոխություն	35
Что до России, то кинув Армению и в этот раз, она, скорее всего, в любом случае потеряет Армению, или Армяно-русский вопрос	38
Սրբազան կթու կովերը	41
Ներկան՝ ապագայի անցյալն է. Պատմագիտական գեների մասին	46
Պատմագիտությունը որպես գեներ	48
Պատմագիտական գեները եւ հայոց պատմությունը	50
Հայ ազգը ժամանակային գալարում	54
Նոր իրավունքի անհրաժեշտությունը եւ սկզբունքները	57
Օրենքը պիտի հնարավոր լինի հիշել ամբողջությամբ:	59
Դատական համակարգի մասին	61
Դատական համակարգի անջատումը պետությունից:	62
Եւրոպական քաղաքակրթության գազաթնաժամը՝ 30 տարի անց	66
Гений и	69
Գավարիտյե պա ռուսսկի	75
30 տարի առաջ	75
Այսօր	76

Ով է ազգայնական	78
Հոգեգեղծում.....	82
Շշի վզիկի, Արցախի եւ հայ ազգի ապագայի մասին.....	86
Capitulation Արդյոք Հայաստանը պարտվել է պատերազմում	89
Ո՞րն է պատճառը, որ.....	95
Միասնական գրոհի հայ ինքնության դեմ	97
Վարդան Մամիկոնյանը եւ Ավարայրի ճակատամարտը.....	98
Մեսրոպ Մաշտոցը եւ հայոց տառերը	100
Կրկին Մաշտոցի մասին	101
Հայոց տպատառերի մասին	104
Եւ կրկին՝ Ավարայրի մասին.....	105
Ծիւելու իրավունքի մասին	108
Տուգանքը շահույթ է. տուգանքներ շատ վճարեք, եւ կհարստանաք	114
Օտարամոլության նուրբ համը.....	118
Déjà vu՝ հակադարձ նշանով	121
Ոսկի միլիարդի մասին.....	124
Կանադական խռովության կապակցությամբ.....	128
Ազա՛տ, թե՞ անազատ Համացանց.....	130
Բժշկություն, թե՞ մոգություն.....	132
Կայանելու խնդիրը.....	137
Թագավարակը որպես կրոն.....	140
Բաց նամակ կառավարությանը.....	145
Հայաստանում 1 ռուսական դպրոցի դիմաց՝ 50 հայկական դպրոց Ռուսաստանում. Ի՞նչ կարծիքի եք, պարոն Լավրով.....	147
Այդ ո՞ր ազգն է, որ.....	149
Հայակենտրոնություն (Armenocentrism)	150
Հայոց գիրը եւ թիթեռը կամ՝ Հայակենտրոնություն-2	168
Լորենցի եւ Բրեդբերիի թիթեռները	168
Պատմությունը.....	171
Չհայտնագործված ամերիկյան.....	175
Բժշկությունը որպես սպասարկման ոլորտ	180
Բաղրամյան պողոտայի 8-րդ հատվածի առօրյայից.....	185
Արդի հայ պոեզիայի չափն ու ինտելեկտը	190
Թագավարակի, մարդու իրավունքների եւ արժանապատվության մասին. 194	
Գլխավոր խաղացողը. դեմ եւ թեր.....	198

Արտաքիններն ու ներքինները.....	205
Դաշնակցի կոչը	205
Դրդապատճառ եւ շահույթ	206
Խաղացողները	209
Հեռանկարներ	214
Եւ ամենակարեւորը	215
Հայաստանի ներկայիս վարչախմբին	216
«Նոր» թագավարակը	217
Ձեր նվաճումները.....	218
Ձեր հեռանկարները.....	222
Համընդհանուր մարտահրավերները եւ դավադրության տեսությունը	225
Ինչպե՞ս է դա հաջողվել.....	225
Դավադրության տեսություն	232

Վերջին հողվածն է, մտածում եմ.
Էլ չեմ գրի ոչ մի անգամ,
Հետո կրկին մի բան դրդում է
Գրել այս մեկն էլ անպայման:
Կրկին կասկած. արդյո՞ք քո գործն է,
Արդյո՞ք չկա այլ մասնագետ,
Եւ պատասխան. իհարկե՝ քոնն է,
Հո չե՞ն տալի՝ լինի անպետք:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս տարի դադարեց գործել Լրագիր օրաթերթի կայքը: Դադարեց գործել մի օրաթերթ, որը ստեղծվեց Երրորդ Հանրապետության առաջին տարիներին եւ հայ հանրային կյանքի մասնակիցն էր շուրջ երեսուն տարի, դադարելով աշխատանքը Չորրորդ Հանրապետության օրոք: Իմ նյութերը պարբերաբար լույս էին տեսնում Լրագրի էջերին: Թեեւ հատկապես հաճախ էի նյութեր հրապարակում վերջին՝ ամենաողբերգական երեք տարիների ընթացքում:

Նյութերն այդ ծնվում էին, երբ տեղեկատվական-քարոզչական դաշտում հայտնվում էր հերթական մի վտանգավոր գաղափար, որի դեմ, հասկանալի պատճառներով, պայքարելն անհնար է՝ այն արտադրած ուժերի աներեւակայելի հզորության պատճառով, բայց եւ լռելն անտանելի էր լինում: Եւ նույնիսկ այս նյութերը կազմելիս գիտակցել եմ, որ չեմ կարող համոզված լինել, որ ինքս էլ չեմ գտնվում այդ նույն ուժերի արտադրած մոլորեցնող գաղափարների ազդեցության տակ: Թեեւ այս պահի դրությամբ դեռ չեմ գտնում, թե սխալվել եմ:

Քանի դեռ Լրագիրը գործում էր, այդ նյութերին կարելի էր մատչել իմ կայքից. ես սոսկ հղում էի տալիս դրանց վրա՝ իմ կայքից: Հիմա, երբ կայքը չի գործում (թեեւ հույս է մնում, որ մի օր այն կվերականգնվի), այդ նյութերը դուրս են մնացել հանրային դաշտից, եւ ես որոշեցի դրանք ներկայացնել մեկ ժողովածուի տեսքով:

Այս ժողովածուի մեջ ես ներառել եմ վերջին տարիներին Լրագրում հրապարակված, թերեւս, բոլոր իմ նյութերը (թեեւ չի բացառվում, որ ինչ-որ նյութեր աչքաթող եմ արել): Դրանք դասավորված են, սկսած վերջին նյութերից. 2023-ից՝ 2020 տարիները: Արվել են հատ ու կենտ խմբագրումներ, առավելապես՝ սրբագրական բնույթի:

Երկու խոսք՝ վերնագրի մասին: Վարագույր է իջեցվում թատերական ներկայացման կամ դրա առանձին արարների վերջում, իսկ նշված տարիներին մենք անցանք նման մի շարք «արարների» միջով, որոնք դուրս էին

Երեւակայության սահմաններից: Կենդանի խոսքում դրանց մասին ասում են.
«դա վերջն է», վարագույր: Բացի այդ, բերված նյութերը հաճախ վերաբերում են
գաղափարաբանական եւ քաղաքական հարցերին, իսկ քաղաքականության
հիմնական մասը կատարվում է վարագույրի ետեւում...

Ռուբեն Թարումեան

ԻՆՔՆԻՇԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավելի վատ էլ է լինում. քիչ առաջ մարդը պատրաստվում էր Կիսլովոդսկ մեկնել, — թվում է, թե դատարկ բան է, բայց դա էլ չի կարող անել, որովհետեւ չգիտես ինչու մեկ էլ տեսար սայթաքեց ու ընկավ տրամվայի տա՛կ: Մի՞թե կասեք, թե ի՞նքն այդպես տնօրինեց: Ավելի ճիշտ չի՞ լինի մտածել, որ բոլորովին ուրիշ մեկն այդպես տնօրինեց, — եւ այստեղ անծանոթը տարօրինակ ձեւով ծիծաղեց:

Վարպետն ու Մարգարիտը

Միխայիլ Բուլգակով

Այսօր Հայաստանը կորցրեց Արցախը: Սա հայ ազգի ամենամեծ արհավիրքն է վերջին 100 տարվա ընթացքում. նույնիսկ Երկրորդ Աշխարհամարտում տարած 200 հազար զոհը դրա հետ չի համեմատվի, քանի որ այն ժամանակ Հայաստանն, ի վերջո, հաղթանակած ճամբարում էր: Այդ ժամանակահատվածում Հայաստանն անցավ երեք «հանրապետությունների» փուլերով, ու, մինչեւ վերջերս, թվում էր, թե վատագույնն անցյալում է: Սակայն չորրորդ «հանրապետության» փուլում՝ 2018-ի իշխանափոխությունից հետո, սկսեց զգացվել, որ հեռանկարներն աստիճանաբար վատանում են: Եւ խնդիրը նույնիսկ 44-օրյա պատերազմի տխուր արդյունքը չի եւ Արցախի ընթացող հայաթափումը: Ավելի զարհուրելին այն է, որ Հայաստանն, ըստ էության, [ամբողջ](#)

[ուժով պատերազմ չվարեց](#)*. չկատարվեց համընդհանուր զորահավաք,
չօգտագործվեցին բոլոր առկա զինատեսակները... Ինչո՞ւ:

Հասկանալու համար անհրաժեշտ է մի քանի տարրով հետ գնալ: 2015—
2018-ին հարեւան երկրներում՝ Հայաստանում, Թուրքիայում, Վրաստանում
հաջորդաբար տեղի ունեցան կարեւոր իրադարձություններ, որոնք սակայն ըստ
արժանվոյն չգնահատվեցին. վարչապետական Թուրքիան դարձավ՝
Նախագահական, իսկ Նախագահական Հայաստանն ու Վրաստանը՝
վարչապետական: Ո՞րն էր այդ փոփոխությունների իմաստը:

Հասկանալու համար հիշենք, թե առհասարակ ի՞նչ կառավարման ձեւեր
կան աշխարհում:

Հնում պետությունները հիմնականում կառավարվում էին միապետների՝
արքաների, կեսարների, սուլթանների, շահերի, ռաջաների, դուքսեր եւ այլ
իշխանների կողմից: Կային նաեւ շահնշահեր, արքայից արքաներ: Ի՞նչ իմաստ
ունեին այդ կոչումները: Ինչո՞ւ էին տարբերվում արքայից արքաները՝
արքաներից, արքաները՝ իշխաններից եւ այլն: Ակնհայտ է, որ տարբերությունը
ինքնիշխանության աստիճանն էր:

Իսկ ի՞նչ կոչումներ կան հիմա. Նախագահներ, վարչապետներ, եւ կրկին՝
կեսարներ, արքաներ, դուքսեր, Էմիրներ... Կարծես թե չկան արքայից արքաներ.
բայց դա, իրոք՝ կարծես թե. այդ մասին՝ ստորեւ:

Եւ ինչպե՞ս են հարաբերվում այդ կոչումները ինքնիշխանության
տեսակետից: ՉԷ՞ որ ակնհայտ է. եթե տարբերություն չլինե՞ր՝ տարբեր
եզրույթներ չէին գործածվի:

Նախ, ի՞նչ կարելի է ասել այժմյան թագավորությունների եւ
կայսրությունների մասին: Սովորաբար, համարվում է, որ դրանք ձեւական են,
«սահմանադրական» եւ այլն: Իրականում, երկրի գերագույն պաշտոնը չի կարող
ձեւական լինել, որքան էլ «սահմանադրությամբ» նրա իրավունքները
կրճատված լինեն: Վերջապես, «միացնենք» բանականությունը. ինչպես կարող
գոյություն ունենալ մի պաշտոն, որը ձեւական է, «խորհրդանշական» եւ այլն:
Ակնհայտ է, որ այդ պաշտոնը ճանաչվում է ազգի մեծամասնության կողմից.
հենց այդ պատճառով էլ այն գոյություն ունի:

Միեւնույն ժամանակ, ակնհայտ է, որ այժմյան տարբեր միապետություններ
ունեն տարբեր ինքնիշխանության աստիճան, եւ յուրաքանչյուր օրինակը պետք
է վերլուծել առանձին: Այսպես, փաստացիորեն գրավյալ ճապոնիայի «կայսրը»,
որի տարածքում գտնվում է ամերիկյան ռազմակայան, չի կարող համեմատվել

* Այստեղ եւ ստորեւ պահպանված են ցանցային տարբերակում եղած հղումների նշումները:

ինքնիշխանության աստիճանով, օրինակ Շվեդիայի թագավորի հետ, որի երկիրը գրավյալ չէ: Սակայն թե՛ Նա, եւ թե՛ այժմյան որեւէ այլ միապետ չի կարող համեմատվել Մեծ Բրիտանիայի թագավորի հետ:

Անցնենք «երիտասարդ» կոչումներին՝ Նախագահներին եւ վարչապետներին. ինչ ինքնիշխանություն ունեն սրանք, եւ ինչպես դրանք կարող են համեմատվել միապետների ինքնիշխանության հետ: Հասկանալու համար, թվարկենք մի քանի Նախագահական եւ մի քանի՝ վարչապետական երկիր (չմոռանալով, որ յուրաքանչյուր դեպքում կան բազմաթիվ իրավաբանական նրբություններ):

Նախագահական.

Միացյալ Նահանգներ, Ռուսաստան, Ֆրանսիա, Բրազիլիա, Մեքսիկա:

Վարչապետական.

Գերմանիա, Հնդկաստան, Պակիստան, Իտալիա, Հունաստան:

Դժվար չէ նկատել, որ առաջին խմբում տեսնում ենք շատ ավելի ազդեցիկ երկրներ, քան՝ երկրորդում: Իրոք, Միացյալ Նահանգների հաշվով ամեն ինչ պարզ է. Նույնիսկ եթե «Նախագահական» խմբում լինել միայն այդ երկիրը, դա բավարար կլիներ ասելու, որ Նախագահական երկիրը ունի ավելի բարձր ինքնիշխանություն, քան վարչապետականը: Ռուսաստանի եւ Ֆրանսիայի հաշվով կասկածներ չկան: Բացի այդ, առաջին երեքն էլ միջուկային երկրներ են:

Մյուս խմբից՝ Գերմանիան, փաստացիորեն, գրավյալ տարածք է. բավական է հիշել ամերիկյան բազմաթիվ ռազմակայաններն այդ երկրում: Այդ, Հնդկաստանն ու Պակիստանը Նույնպես միջուկային երկրներ են, բայց դրանց միջուկային զինանոցը էապես զիջում է առաջին խմբի երկրների զինանոցին, ու բացի այդ, դրանք եղել են Մեծ Բրիտանիայի գաղութները, ու մինչ այժմ փաստացիորեն գտնվում են դրա ազդեցության տակ, լինելով Բրիտանական Համագործակցության անդամ, կարճ ասած (կրկին, եթե «միացնենք» բանականությունը, մի կողմ թողնենք քարոզչությունը եւ հետեւենք սոսկ իրատեսությանը), շարունակում են մնալ գաղութներ. անշուշտ զգալիորեն ավելի մեծ ինքնիշխանությամբ, քան Նախկինում. բայց միեւնույն է՝ գաղութներ: Այլապես, այդ «համագործակցությունը» գոնե չէր կոչվի «Բրիտանական»: Ճիշտ այնպես, ինչպես ԱՊՀ երկրները շարունակում են փաստացիորեն մնալ Ռուսաստանի գաղութները, թե՛ եւ երբեմն «թպրտում» են:

Այնպես որ, կասկած չկա. Նախագահով կառավարվող երկրները անկասկած ավելի ինքնիշխան են, քան եթե գլխավոր դեմքը փոքրաթիվ պատգամավորների նշանակած վարչապետ է:

Իսկ դր երկրներն ու դրանց կառավարիչներն են ավելի ինքնիշխան. միապետական, թե՛ նախագահական: Նախագահները փաստորեն թագավորներ են, բայց՝ ընտրովի, իսկ ինքնիշխանությունը մեծապես կախված է նրանից, թե որքան խորն են ղեկավարի կապերը վերնախավի շրջանում: Եւ դա նշանակում է, որ նախագահները չեն կարող ունենալ նույնքան ամուր դիրքեր, որքան ժառանգական կառավարիչները, որոնց կապերը վերնախավում ձեւավորվում են դարերի ընթացքում: Հետեւապես, կարելի է *a priori* պնդել, որ թեեւ առանձին վերցրած նախագահը կարող է ունենալ ավելի մեծ ինքնիշխանություն, քան որեւէ միապետը, սակայն այլ հավասար պայմաններում առավելությունը միապետներինն է:

Այս իմաստով, առանձին տեղ է գրավում Մեծ Բրիտանիայի թագավորը: Մեծ Բրիտանիայի Համագործակցության մեջ մտնում են աշխարհի պետությունների թվով եւ բնակչությամբ գրեթե 1/3-ը, եւ այն զբաղեցնում ցամաքի գրեթե 1/4-ը: Համեմատության համար ԱՊՀ-ի տարածքը կազմում է ցամաքի 1/6-ը, իսկ ըստ բնակչության՝ ընդամենը 1/22-ը: Հետեւապես այդ մեծագույն դաշնության միապետի՝ Մեծ Բրիտանիայի թագավորի ինքնիշխանությունը գերազանցում է ցանկացած այլ երկրի ղեկավարի ինքնիշխանությունը, ներառյալ՝ Միացյալ Նահանգների նախագահի (դեռ չհաշված, որ թեեւ այն ձեւականորեն ընդգրկված չէ Համագործակցության կազմում, հասկանալի է, որ փաստացիորեն դա Համագործակցության ամենաազդեցիկ անդամն է): Սրանից հետեւում է, որ Մեծ Բրիտանիայի միապետը կարող է համարվել *արքայից արքա*: Սակայն եթե հին աշխարհի տարբեր մասերում կարող էին լինել տարբեր արքայից արքաներ, ապա մերօրյա Ընդհանրական աշխարհում տեղ կամ միայն մեկ արքայից արքայի համար:

Ուշադիր ընթերցողը նկատած կլինի, որ չդիտարկվեց այժմյան աշխարհի խոշորագույն տնտեսության՝ Չինաստանի ղեկավարը: Այն նույնպես կոչվում է Նախագահ, բայց ընտրվում է խորհրդարանի կողմից, այսինքն, ըստ էության, վարչապետ է: Սակայն հազիվ թե այս երկիրը, չնայած խոշորագույն տնտեսությունն ունենալը կարող է համարվել ավելի ինքնիշխան, քան, օրինակ, Հնդկաստանը. Ափիոնային պատերազմների իրավաբանական հետեւանքները այս կամ այն կերպ դեռ շարունակում են գործել:

Իսկ այժմ, այն մասին, ինչից որ այս նյութը սկսվել էր: Ուրեմն ինչպե՞ս պետք է գնահատել Թուրքիայի անցումը վարչապետականից՝ նախագահական կառավարման ձեւի, իսկ Հայաստանի անցումը՝ հակառակ ուղղությամբ: Վերոշարադրյալի շրջանակներում դա, փաստորեն, նշանակում է Թուրքիայի ինքնիշխանության բարձրացում եւ Հայաստանի ինքնիշխանության նվազում:

Հնարավոր է, որ մի անձ (լինի դա ֆիզիկական, թե՛ իրավաբանական) ինքնակամ հրաժարվի իր ինքնիշխանությունից, կամ դրա գոնե մի մասից: Հագիվ թե: Եւ Հայաստանը նույնպես ինքն իր գլխին այդպես չէր տնօրինի, այլ (ինչպես ասում է Բուլգակովի հերոսը) բոլորովին ուրիշ մեկն է այդպես տնօրինել: Ընդ որում, շատ էլ լավ հայտնի է, թե ով. դա արվել է «միջազգային հանրության» վերահսկողության ներքո՝ ի դեմս *Վենետիկյան հանձնաժողովի*, որը թելադրում է իր անդամների (եւ ոչ միայն՝ անդամների) սահմանադրական կառուցվածքները:

Այսինքն, այն պահին, երբ Հայաստանի քաղաքացիները «քվեարկում էին» իրենց երկիրը վարչապետականի վերածելու օգտին (հուսով եմ, կարիք չկա՞ բացատրելու, թե ինչպես են կատարվում այդ քվեարկումները. ԱՄՆ-ի օրինակը բոլորիս աչքի առաջ է), նրանք հաստատում էին, որ պատրաստ են հանձնել Արցախը:

Այո, երբ 90-ականների արցախյան պատերազմում Հայաստանը հաղթեց, նա ուներ ավելի բարձր ինքնիշխանություն, այն է՝ կարգավիճակն աշխարհում, քան իր հիմնական թշնամին՝ Թուրքիան: Իսկ 2020 թվի պատերազմում Թուրքիայի եւ Ադրբեջանի ղեկավարները նախագահներ էին, իսկ Հայաստանի ղեկավարը ընդամենը վարչապետ, նշանակված վերոհիշյալ Վենետիկյան հանձնաժողովի հանձնարարականների շրջանակներում...

Ու երբ 2018-ին կատարվեց «ոչ բռնի» միջոցառումը, հագիվ թե, Հայաստանի հին եւ նոր «ղեկավարները» տեղյակ չէին, թե ինչ է սպասվում մոտ ապագայում...

23.09.2023

ՌԱՅՆ ԸՆԴԴԵՄ ԱՅԿ-Ի



Եւ եթէ սատանայ զսատանայ հանէ,
յանձն իւր բաժանեցաւ. արդ՝ զիմրդ կացցէ
թագաւորութիւնն Նորա:

Մատթէոս ԺԲ.26

Ինչպէս հայտնի է, առաջարկություններ են եղել Վ. Պուտինին առաջադրելու Նոբելյան մրցանակի՝ բժշկության գծով՝ թագավարակը գահընկեց անելու համար. պարզվել էր, որ COVID-ի դեմ ամենալավ պատվաստանյութը CBO-ն է:

Սակայն վաղ էր խանդավառությունը, եւ, կարծես թէ, ՎՎ-ն կարող է եւ չարժանանալ մրցանակի: Վերջերս ավելի ու ավելի են բազմանում հաղորդումներն այն մասին, որ թագավարակը դեռ չի գահավիժել եւ ինչպէս ցանկացած վեստերնում՝ եղունգներով ու ճանկերով խոր ակոսներ թողնելով

Ժայռերի երեսին, նա՝ վերջին ճիշն արձակելով՝ դեռ չի ընկել անդունդը, բայց դեռ հույս է փայփայում վեր մագլցելու:

Այսպես, ԱՅԿ-ի փորձագետ Մարիա վան Կերթովեն հայտարարել է, որ վերջերս ավելի ու ավելի հաճախ են վարակվում թագավարակով. արդեն 100 հազարավոր մարդիկ են հայտնվել հիվանդանոցներում: Հայտնվել է նաեւ թագավարակի օմիկրոն շտամմի նոր տարբերակ՝ Պիրոլա քնթուշ անունով (կամ չոր «գիտական» լեզվով՝ BA.2.86): ԲԱ՞՞

Նրան ձայնակցում է նաեւ ամերիկացի (այդ՝ ոչ բրիտանացի) համաճարակաբան Դենիս Նեշը: «Մենք դեռեւս չգիտենք բոլոր մանրամասները, բայց այն, ինչ արդեն հայտնի է, թույլ է տալիս ենթադրել, որ այս նոր տարբերակը կարող է շրջանցել առկա անվարակելիությունը, ինչը կմեծացնի վարակվելու հավանականությունը: Բացի այդ Պիրոլան, հավանաբար, կարող է հարուցել հիվանդության ավելի ծանր ընթացք, քան տարբերակները, որոնք մենք տեսել ենք վերջին ժամանակները»:

Տեսնում եք, ինչ մասնագետ է. դեռեւս չգիտի բոլոր *մանրամասները*, բայց արդեն ենթադրություններ է անում. նոր տարբերակը, պարզվում է, կարող է նախորդներից վտանգավոր լինել: Մեկը հարցրե՞լ է դրան. այդ... այդ ինչի՞ն ես կարծում, թե քո դեռեւս չիմացած *մանրամասներից* չի հետեւի, հակառակը. որ նոր տարբերակը նախորդներից ՊԱԿԱՍ վտանգավոր է...

Այդ, հետաքրքիր ժամանակներ ենք ապրում: Կարելի էր, իհարկե, պարզապես վերցնել ադիբուդին, եւ զվարճանալ տեսարաններով: Ցավոք, սա Մանչեստեր Յունայթեդի եւ ՏեՆԻՍԿԱ-յի հանդիպումը չէ: Մարտնչում են ծանրաբաշխիկները. դեղագործներն ընդդեմ ռազմարդյունաբերականների: Տնտեսական ճգնաժամի արդյունքում փոքրացել է համաշխարհային կարոկանդակը եւ հիմա դրանից փորձում են մի փշուր պոկել՝ ով կարող է: Իսկ արդյունքում մարդիկ են մեռնում. թե՛ COVID-ից եւ թե՛ CBO-ից, եւ թե՛ մեզ մոտ՝ Արցախում, որն, իրականում նույն CBO-ի ճակատներից մեկն է. ընդ որում, թերեւս, ամենակարեւորը:

Համենայն դեպս, այսօր դեղագործները աշխուժացել են, եւ հակագրոհի անցել ռազմարդյունաբերականների դիրքերին. եթե պատասխան հարված չլինի, պիտի վազենք դիմակ ու ձեռնոցներ գնելու: Իսկ եթե լինի՝ ստիպված ենք լինելու ռմբապատարաններ վազել: Չգիտես, թե՛ հրն է նախընտրելի: Թեեւ հնարավոր է նաեւ, որ *պարտադրված* լինենք ռմբապատարան վազել դիմակներով ու նախապես՝ պատվաստված, այնպես ներս չեն թողնի: (Ինչպես վկայում է մեր ոչ հեռու անցյալը, այս վերջինը, միանգամայն հավանական է):

Միակ հույսն այն է, որ ինչպես ասված է Ավետարանում, եթե սատանան սատանայի դեմ է դուրս գալիս, նշանակում է նրա անձը բաժանվել է: Այսինքն, առկա է, ժամանակակից լեզվով ասած, նրա *անհատականության դիսոնցիա* (անհամապատասխանություն): Կդիմանամ արդյոք այդ վիճակում նրա թագավորությունը (թե՞ թագավարակը)...

Մնում է սպասել...

Միայն նկատենք, որ աշնանը հրասայլերը խրվում են ցեխի մեջ եւ մարտական գործողություններ վարելը դժվարանում է: Մինչդեռ նույն միջոցին աշխուժանում են օդակաթիլային վարակները, եւ նախաձեռնությունը հեշտությամբ կարող է անցնել Պիրուային...

18.09.2023

ԻՐԱՎԻՃԱՐԷ ՓՈԽՎԵԼ, ԹՇ ԿԱԹՍԱՅԻ ՃՆՇՈՒՄԸ ԳՑԵԼՈՒ ԿԱՐԻՔ ԿԱ

Վերջին օրերին աշխուժացել են Երեւանի փողոցները. ինչ-որ ցույցանման միջոցառումներ են սկսվել՝ բեմով, Էկրանով, բարձրախոսներով...

Հիշում եմ, 1988-ի ձմեռը... Ով երիտասարդ է՝ երեւի չի հիշի... Էլի նույն տեղում բեմ էին կառուցել, ծածկով, հզոր բարձրախոսներով (դե, Էկրաններ չկային այն ժամանակ)... Երգիչ-դերասաններ էին ելույթ ունենում, տարբեր հին կուսակցությունների հին առաջնորդներ... Եկեղեցու սպասավորներ ու Սփյուռքի ներկայացուցիչներ էլ խոսեցին... Այդպէս էր... Թե, երեւի ինչ-որ բաներ շփոթել եմ... Բեմ չի եղել, ու բարձրախոսների փոխարեն էլ ձեռքի խոսափողներ էին... Եւ այն ժամանակվա «աստղերն» էլ չէին զբաղեցնում «հանդիսատեսներին»... Եւ «կուսակցություններ» էլ չկային... Ինչ մեղքս թաքցնեմ. ես էլ լավ չեմ հիշում. տարիք է, ինչ անես...

Բայց որոշեցին, որ Արցախը պիտի ազատ լինի: Ու շարժում սկսվեց... Ու ցուցարարներ էլ էին անցնում փողոցներով... Բայցեւ՝ սարերից էլ իջան... ու հաղթեցինք... Ասում են՝ ճակատամարտը... Բայց միեւնույն է՝ հաղթեցինք... Հետո երեսուն տարի Արցախ գնում-գալիս էինք, շրջափակված չէր...

Նաեւ աղոտ հիշում եմ... մի քանի տարի առաջ էր. կրկին սկսեցին քայլել եւ հյուսիսից մոտենում էին մայրաքաղաքին... Ու վարչապետը հրաժարական տվեց, ու ~~Թաթարյանը~~ Նախագահը նոր վարչապետ նշանակեց...

Ու պարտվեցինք: Ասում են՝ պատերազմը. իսկ գուցե սոսկ՝ ճակատամարտը... Այդ ինչպէս է, որ այն ժամանակ մենք ճակատամարտն էին շահել, իսկ հիմա համարում են, որ մի ամբողջ պատերազմ ենք տանուլ տվել...

Ու հաստատ հիշում եմ (սա ընդամենը երկու տարի առաջ էր). կրկին փողոցով մարդիկ էին քայլում, հրաժարական էին պահանջում... Մի քանի օր

բայլեցին... Հետո որոշեցին այլեւս չբայլել... Հենց այդպես. որոշեցին, եւ վերջ... Մի բանի ամիս կարգին չբայլեցին... Հետո նորից «ընտրություններ» եղան... Հետո...

Հետո-ն էլ հիմա-ն է... Ո՛ր...

Մարդիկ (ոչ շատերը, բայց կան եւ այդպիսիք) հասկանում են, որ «Մեծ Ե Հայքը, իսկ նահանջելու տեղ չկա»... Այստեղից էլ գիտակցությունների, սրտերի ու հոգիների կաթսասնեւում ճնշման աճ... Ու բայլելու ցանկություն...

Արցախի «նախագահի» հրաժարականը հուշում է, որ ինչ-որ բաներ են կատարվում նաեւ այնտեղ՝ վերելներում... Թե, հատկապես, ինչ՝ պարզ չէ. համարժեք խոշորացմամբ հեռադիտակներ չեն ճարվում... Հեռվից երեւում են ինչ-որ մարդկանց ստվերներ. վազվզում են ծախ-աջ... Ինչ-որ ինքնաթիռներ են այս կողմ, այն կողմ թռչում. դիվանագետներ են գնում-գալիս... Այդ ինչ է դրանց մտքին... Պարզ է մի բան. որ որոշելու են առանց մեզ... (Եթե չենք միջամտում). մենք միայն բայլում ենք...

Իրոք, իրավիճակ է փոխվում... Աշխարհն է փոխվում, ամեն շաբաթ է փոխվում, օր, րոպե... Ահռելի քաղաքական տեղաշարժեր են կատարվում [այս պահին](#). փլուզվում է աշխարհի կառավարման վերջին դարերի կառուցվածքը՝ Վեստֆալյան համակարգը. կործանվում են հին կայսրությունները, կրոնները, եւ մեր աչքի առաջ ստեղծվում է «Չքնաղ նոր աշխարհ»...

Իսկ մենք Ազատության հրապարակում gala-համերգներ ենք կազմակերպում...

03.09.2023

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՎԵՐԵԻՑ, ԿԱՍ ԲՈՒԿՍ ԵՐԿՐՆԵՐԻ ԺԵ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Մենք ապրում ենք բացառիկ դարաշրջանում: Այն իրոք բացառիկ է՝ առարկայորեն, այլ ոչ թե այն պատճառով, որ դա մե՛ր դարաշրջանն է: Դա երեւում է, մասնավորապես, պատմական փուլերի տեւողությունների [վերլուծությունից](#): Դեռեւս անցած դարի 80-ականներին նկատված այդ փուլերի տեւողությունների կրճատման օրինաչափությունից հետեւում էր, որ հենց ընթացիկ ժամանակաշրջանը պիտի համաշխարհային խառնակություններով բնորոշվի: Ինչի ականատեսը եւ ենք:

Քաղաքական եւ տնտեսական տեսակետից այս փուլը բնորոշվում է նրանով, որ տնտեսության զարգացման միևնույն այսօր իշխող եղանակը, որը, սովորաբար, կոչվում է «դրամատիրություն» կամ «կապիտալիզմ», սպառել է իր ներուժը: Բանն այն է, որ մինչեւ վերջերս աշխարհի երկրների տնտեսությունները շարժվել են դեպի խոշորացում, այն է՝ փոխմիաձուլում: Դրա շարժիչ ուժը արտադրանքի համար նորանոր շուկաների գրավումն էր, ինչը իրագործվում էր ռազմաքաղաքական եղանակներով: Իր հերթին, դա հնարավորություն էր տալիս մեծացնել աշխատանքի բաժանումը, քանի որ տեխնոլոգիական շղթաների ավելի ու ավելի փոքր օղակներ հնարավորություն էին ստանում հայթայթելու շուկաների իրենց մասնաբաժինը, վերածվելով առանձին արդյունաբերական ճյուղերի: Ինչը, ի դեպ, խթանում էր նաեւ գիտության զարգացումը:

Սակայն երկրագունդը սահմանափակ է. մի օր նոր շուկաները պիտի սպառվեին: 1991-ին տեղի ունեցավ վերջին միավորումը, երբ վերջին ինքնուրույն շուկան՝ Ռուսական կայսրությունը (ի դեմս ԽՍՀՄ-ի եւ «սոցիալիստական ճամբարի») դադարեց իր գոյությունը միանալով հաղթողին՝ Բրիտանական կայսրությանը, որին այլեւս մնում էր զարգանալ միայն ինքն իր մեջ. աշխարհի

ընդհանրացումը «գլոբալիզեշնը» հասավ իր բնական սահմանին՝ երկիր մոլորակի չափերին: Հետեւապես համաշխարհային տնտեսությունը այլեւս չի կարող զարգանալ (առնվազն՝ հին ձեւերով), ինչը պիտի բերի նրան, որ կանգ է առնելու անհատների բարեկեցության աճը, որը սովորական էր վերջին մեկ-երկու դարերում: Իրական գործընթացները ավելի բարդ են, եւ լրագրային հոդվածում դժվար է դրանք ներկայացնել: Սակայն հիմնական էությունն այն է, որ բարեկեցության աճի դադարեցումը պիտի որ դժգոհություն առաջացնի քաղտնտեսական հարաբերությունների մեջ գտնվող բոլոր կողմերի շրջանում:

Դա նշանակում է, որ, ինչպես կասեր Լենին պապին, հաստատվել է հեղափոխական իրավիճակ. «վերեւները չենք կարող, ներքեւները՝ չեն ուզում»:

Ինչպե՞ս կարող է հանգուցալուծվել հեղափոխական իրավիճակը: Սկզբունքորեն կա մեկ ձեւ. հեղափոխություն: Բայց կա հեղափոխության երկու տարբերակ. *տարերային եւ կազմակերպված*, կամ, ինչպես ընդունված է ասել, *ներքեւից եւ՝ վերեւից*:

Ինչպիսիք կարող են լինել հետեւանքները: Նախ տեսնենք, թե ինչ կարելի է ակնկալել հեղափոխությունից: Այստեղ էլ կարելի է տեսնել երկու տարբերակ. լուծումներ արդեն գտնված են, կամ՝ չեն գտնված: Առաջին դեպքում հայտնվում է նույն Լենին պապին եւ բղավում. «*Կա այդպիսի կուսակցություն*», իմա՝ խնդիրը լուծելու ծրագիր եւ դրա իրագործողը: Մյուս տարբերակում սկսվում է, ինչպես ասել է ռուս դասականը «*...խռովություն. անիմաստ եւ անողոք*»:

Ինչպիսին է վիճակն այսօր, տարբերակներից ի՞նչ է հավանական: Ցանկացած փոփոխություն տիպ է, եւ եթե վիճակն *անտանելի* չի ոչ ոք չի ցանկանա փոխել կյանքի ընթացքը: Եւ որքան լավ է այդ վիճակը, այդքան ավելի քիչ կլինի այն փոխելու ցանկությունը: Հետեւապես, ամենաքիչը վիճակը կցանկանան փոխել «վերեւները»՝ վերնախավերը: Միեւնույն ժամանակ, որքան երկար է ընթանում զարգացման արգելակումը, այնքան ավելի շատանում են *անտանելի* վիճակում հայտնվողները: Եւ նույնիսկ բարեկեցիկ «վերեւները» որոշ հեռատեսության դեպքում սկսում են հասկանալ, որ շուտով «գմփալու է»՝ ներքեւից: Եթե այդ գիտակցումը գերակշռում է, «վերեւները» կայացնում են «քաղաքական որոշումը», եւ իրագործվում է «հեղափոխություն՝ վերեւից»:

Բայց, ինչպես ասվեց, լուծումներ կարող են լինել, կարող են եւ չլինել: Ստեղծված իրավիճակում *լուծումը* ենթադրում է տնտեսական նոր սկզբունքների մշակում: Այդ դեպքում պիտի գոնե սկսված լինեին այդ սկզբունքների քննարկումներ. մինչդեռ առնվազն հիմնական «մեյնսթրիմային» քաղտնտեսական շրջանակներում դրանք չկան եւ չեն էլ սպասվում: Ավելին, փաստացիորեն իշխանություն ունեցող վերնախավերի կեցվածքից երեւում է, որ

որեւէ Նոր տնտեսական սկզբունքներ մշակելու պատվեր չի տրված: Դրա լավագույն ապացույցն այն է, որ վաղուց արդեն վարկաբեկված եւ ԱՄՆ-ի կողմից յուրացված «Նոբելյան» մրցանակները տնտեսագիտության ոլորտում տրվում են տնտեսական այժմյան սկզբունքներն «ապացուցող» հեղինակներին: Օրինակ, անցած տարվա մրցանակը, ի թիվս այլոց, տրվեց ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի նախկին ղեկավար Բեն Բերնանկեին, ով այդ պաշտոնը զբաղեցնում էր... 2007—09 թվականների ճգնաժամի ընթացքում...

Միեւնույն ժամանակ, կասկած կա, որ վերնախավի ինչ-որ շրջանակներում ընթանում են քննարկումներ այսպես կոչված «արժույթային գոտիների» վերաբերյալ, ինչը դրսևորվում է որոշ տնտեսագետների ելույթներում՝ գրոյական թվականների սկզբից: Ենթադրվում է, որ այդ գոտիները սկսելու են առեւտուր վարել իրար մեջ, մրցակցել եւ դա կապահովի տնտեսական աճ, միևնույն ամբողջ աշխարհի, ըստ եուրոյան, մեկ արժույթի՝ դոլարի տիրույթում գտնվելը բացառում է մրցակցությունը եւ արգելակում աճը: Թե որքանով դա կարող է լուծել խնդիրը՝ այլ հարց է. ակնհայտ է, որ կրկին գործ ունենք ավանդական «մրցակցության», որպես զարգացման շարժիչի, ծեծված «կապիտալիստական» դրույթի հետ: Բայց, դա հուշում է, որ ինչ-որ լուծումներ գտնելու փորձեր այնուամենայնիվ արվում են:

Այս բոլոր փաստերի համադրումը, այն է՝

- շուկաների հետագա ընդարձակման անհնարինությունը,
- Նոր տնտեսական սկզբունքներ չորոնելը,
- քաղաքական հարաբերությունների սրումը, եւ, որպես հետեւանք,
- որոշ երկրների տնտեսական մեկուսացումը,

հուշում են, որ վերնախավերը.

- գիտակցում են ստեղծված «հեղափոխական իրավիճակը», սակայն,
- պառակտված են,
- առկա է վերնախավերի երկու թել. պահպանողական եւ հեղափոխական:

Այսպիսով «քաղաքական որոշում» կայացրել եւ որոշել է կազմակերպել «հեղափոխություն» վերելից» միայն թեւերից մեկը: Այն հարցը, թե որոնք են այդ թեւերը եւ ինչ ուժեր կարող են լինել դրանց կազմում, այս հոդվածի խնդիրներից դուրս է:

Վերջին երկու տասնամյակում արձանագրվել են դոլարի մենաշնորհին հարվածող ոտնձգություններ, երբ մի շարք երկրների ղեկավարներ առաջարկել են փոխադարձ հաշվարկները կատարել ազգային արժույթներով, կամ՝ ոսկով: Նման մտքեր արտահայտողների ճակատագիրը եղել է ծանր կամ՝ ողբերգական.

այդ երկրները եւ/կամ ղեկավարները կան ոչնչացվել են, կամ հայտարարվել «բռնապետական» եւ ենթարկվել «պատժամիջոցների»: Իսկ գաղափարաբանական մարտադաշտում դուլարը ազգային արժույթներով փոխարինելը պարզապես ենթարկվել է ծաղրի ու ծանակի:

Սակայն այսօր բոլոր այդ փորձերը կարելի է դիտել, որպես, յուրատեսակ, «հետախուզումներ՝ մարտով». թերեւս, վերնախավերի հեղափոխական թեւերը փորձում էին հասկանալ, թե ինչ հակազդում է լինելու հակառակ կողմից, կամ հույս ունենալով, որ այն տեղի կտա, ինչը տեղի չունեցավ: Դա նշանակում էր, որ խաղաղ պայմանավորվել չի հաջողվի: Եւ հեղափոխականները կատարեցին ձիու քայլ, որը շահմատում կոչվում է «եղան». երբ միաժամանակ հարվածի տակ են վերցվում հակառակորդի երկու եւ ավելի քարեր: Դա Ուկրաինական պատերազմի սանձազերծումն էր:

Իրոք, եթե դուլարի տերը, այսինքն Միացյալ Նահանգները, որոնք ԽՍՀՄ-ի տապալումից հետո Ուկրաինան Նախապատրաստում էին, որպես հարթակ՝ Ռուսաստանին հերթական հարված հասցնելու եւ ապա՝ մասնատելու համար, չպաշտպանեին իրենց ավատառուին դա հարված կհասցնեք երկրի հեղինակությանը, ինչը կհարվածեր նաեւ դուլարին, քանի որ 1971 թվականին դուլարը ոսկու ապահովությունից զրկելուց հետո, այն ապահովված է միայն այդ երկրի քաղաքական հեղինակությամբ: Իսկ պաշտպանելը անխուսափելիորեն հանգեցնելու էր (եւ՝ հանգեցրեց) Ռուսաստանի տնտեսության վտարմանը դուլարային գոտուց, այն է՝ ռուբլու գոտու վերստին ձեւավորմանը... Այսինքն ի չիք դարձավ 1991-ն նվաճումը, երբ վերջին ոչ-դուլարային տարածաշրջանը դադարեց իր գոյությունը: Փաստորեն, պաշտպանելով Ուկրաինային (իսկ չպաշտպանել նրանք, ինչպես ասվեց, չէին կարող) նրանք սեփական ձեռքով նորից ստեղծեցին ռուբլու գոտի:

Սակայն այսօր եւ երեսուն տարի առաջ աշխարհում քաղաքական տարբեր իրավիճակներ էին: 1990-ականներին ԽՍՀՄ-ը (Ռուսական կայսրությունը) անկում էր ապրում, քանի որ Ստալինի մահից հետո խորհրդային վերնախավերի գաղափարական անօգնականությունը, (ինչը հնարավորություն չտվեց զարգացնելու կոմունիզմի գաղափարաբանություն) եւ պարտվողական դիրքորոշումը «խաղաղ գոյակցություն» վարդապետության շրջանակներում հարվածեց ժողովրդի խանդավառությանը (passionarity), իսկ Արեւմուտքը, զինված լինելով շատ ավելի պարզ, ուստի եւ՝ հրապուրիչ «ազատության» եւ «ազատականության» գաղափարաբանությամբ ԽՍՀՄ-ին հասցրեց իր մահացու հարվածը: Մինչդեռ այսօր հակառակ վիճակն է. անցած երեսուն տարիների ընթացքում այս անգամ արդեն Արեւմուտքը չգտավ մտավոր ուժ զարգացնելու իր գաղափարաբանությունը նոր գիտա-տեխնիկական պայմաններում, եւ

Նախընտրեց շարունակել «ազատության» գաղափարի շահագործումը, հասցնելով թե՛ այդ գաղափարը եւ թե՛ ազգերին անհեթեթության եւ ամլության (բառի բուն իմաստով) աստիճանին, իսկ Ռուսաստանը, թեեւ նույնպես նոր գաղափարներ չկարողացավ առաջ քաշել, բայց արթնացնելով իր ազգի նկեղեցված ազգայնականությունը կարողացավ միավորել եւ խանդավառեցնել ժողովրդին, ինչը կտրուկ առավելություն է տալիս նրան այսօրվա հակամարտության ընթացքում:

Դրան գումարվեց եւս մի հանգամանք: Անցած երեսուն տարիների ընթացքում ելնելով տնտեսական շահավետությունից ԱՄՆ-ը տեղափոխեցին իրենց արդյունաբերության մեծագույն մասը հարավ-արեւելյան Ասիայի երկրներ. հիմնականում՝ Չինաստան, Նախընտրելով զարգացման «ետարդյունաբերական» ուղին: Ասել «ետարդյունաբերական», նշանակում է ոչինչ չասել. այժմյան ԱՄՆ-ի Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ընդամենը 19 տոկոսն է պայմանավորված արտադրությամբ, հիմնական մասը դա ծառայությունների ոլորտն է: Սակայն պատերազմի ժամանակ մրցում են արդյունաբերությունները, այլ ոչ թե ծառայությունները: Իսկ այդ տեսակետից ԱՄՆ-ի արտադրական հզորությունները գրեթե հավասար են Ռուսաստանի հզորություններին: Ու բացի այդ պետք է հաշվի առնել, որ ԱՄՆ-ը գտնվում է օվկիանոսից այն կողմ եւ դա կտրուկ [սվագեցնում](#) է հնարավորությունը ազդելու այլ մայր ցամաքում ընթացող պատերազմական գործողությունների վրա:

Այս հանգամանքները արագորեն սկսեցին դրսևորվել սկսված հակամարտության ընթացքում: Ռուսաստանը արդեն Լիբիա կամ Իրաք չէ, որ հենց այնպես հարցը հնարավոր լինի փակել (թեեւ նման փորձեր եղան): Առավել եւս, որ նույն այդ Լիբիայի, Իրաքի կամ Իրանի դեպքում «հեղափոխական» վերնախավը առաջ քշելով դրանց, չէր պատրաստվում անցնել վճռական գործողությունների, դրանք, ինչպես ասվեց, սոսկ փորձաքարեր էին: Մինչդեռ այժմ, թվում է, թե «հեղափոխականները» չեն պատրաստվում «զցել» իրենց առաջապահ ջոկատին՝ Ռուսաստանին. համենայն դեպս՝ առայժմ տպավորությունն այդպիսին է: Եւ հենց դրա արտահայտությունն էր ԲՈՒԿՄ-ի անցած գազաթնաժողովի ընթացքում վեց նոր անդամի ընդգրկումն այս միավորման կազմում եւ եւս երկու տասնյակ երկրների հերթագրումը: Ինչպես ասում է ժողովրդական խոսքը. *«երբ եզն ընկնում է, դանակավորները շատանում են»:*


Այսպիսով, վերջին մեկ ու կես տարվա ընթացքում, «արժույթային գոտիների» կողմնակիցներին հաջողվեց կատարել շատ ավելի շոշափելի քայլ, քան Նախորդ քսան տարիների ընթացքում եւ իրապես կրճատել դուրսի գոտին: Դա իր հերթին էլ ավելի կարագացնի դրա կրճատման ընթացքը՝ *դրական հետադարձ կապի* սկզբունքով: Եւ հնարավոր է, որ մոտ ապագայում իրոք

ստեղծվեն 5-7 արժույթային գոտիներ: Թերեւս դրանք լինելու են Յուանի, Ռուպիայի, Եւրոյի, Դոլարի, Սուկրեի գոտիները: Եւ վերջապես՝ Ռուբլու գոտին:

Հայաստանի համար հետաքրքիր է հատկապես այս վերջինի հեռանկարը, քանի որ դրա հարցը այնքան էլ պարզ չէ: Որոշ տնտեսագետների կարծիքով գոտու բնակչությունը պիտի կազմի ոչ պակաս, քան կես միլիարդ մարդ, այլապես այն չի բավարարի ներքին շուկա ձեւավորելու համար: Առաջին հինգ գոտիների բնակչությունները բավարարում են այդ պայմանին, մինչդեռ Ռուսաստանի բնակչությունը հազիվ 150 միլիոն է: Հետեւապես կամ Ռուսաստանը պիտի մտնի մեկ այլ գոտու մեջ, օրինակ՝ Եւրոյի, կամ պիտի միավորվի մի քանի այլ երկրների հետ: Որոշ հեղինակների կարծիքով դրանց թվում կարող են լինել, մասնավորապես, Ճապոնիան, Իրանը, Եւ... Թուրքիան...

25.08.2023

ՄԵՐ ՕՐԵՐԻ ԿՐՈՆԸ



Natura abhorret vacuum

*Բնությունը չի հանդուրժի դատարկություն,
կամ.*

Սուրբ տեղը թափուր չի մնա

1789 թվականին տեղի ունեցավ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Ինչ փոխվեց Ֆրանսիայում: Ասում են, որ հիմնական արդյունքը *հին կարգերի* տապալումն էր, եւ *նոր կարգերի* հաստատումը: Լսել ենք, լսել ենք. *հները* գնացին, *նորերը* եկան... Բայց ովքեր էին այդ «հները» Ֆրանսիայի դեպքում. Լուի Ժ2 թագավորը, որի գլուխը հատեցին: Բայց հետո եղան Լուի ԺԸ-ը, Շարլ Ժ-ը... Իսկ

ինչն էր նորը. եղել են կարծիքներ, որ նույնիսկ կես դար անց էլ Ֆրանսիայում վիճակը նույնն էր, ինչ հեղափոխությունից առաջ: Ստացվում է ինչ. հեղափոխություն չէր էլ ստացվել: Ոչ իհարկե. մի շատ լուրջ բան իրոք փոխվել էր, ավելի ճիշտ՝ սկսել էր փոխվել, թեեւ դրա մասին ամենից քիչն են խոսում: Դա վերաբերմունքն էր կրոնին:

Անմիջապես հեղափոխությունից հետո սկսվեց երկրի *ապաքրիստոնեացումը*, որն արվում էր ամենաբիրտ եղանակներով՝ եկեղեցիների կողոպուտով եւ սպասավորների սպանություններով (տարոսով փոխանցված անցած դարի ռուսական հեղափոխությանը): Հետո փորձ արվեց քրիստոնեությունը փոխարինել *Գիտակցության*, ապա՝ *Գերագույն Եակի* խեղկատակային պաշտամունքներով: Նապոլեոնի օրոք քրիստոնեության կարգավիճակը մեծապես վերականգնվեց, սակայն սկիզբն արդեն դրված էր, եւ աստիճանաբար եկեղեցու իրավունքները կրճատվում էին, մինչեւ որ 1905 թվականին եկեղեցին եւ պետությունը վերջնականապես տարանջատվեցին եւ եկեղեցին այլեւս չէր կարող օգտվել պետության աջակցությունից: Եւս մեկ դար, եւ 2004-ին դպրոցներում արգելվում է կրոնական նշաններ կրելը, իսկ 2011-ին արգելվեց աղոթքը՝ հանրային վայրերում: Ավստրիայում է, որ վերջին երկու որոշումները վերաբերում են *առավելապես* մահմեդականներին, որովհետեւ քրիստոնեական նշանները, այն է՝ անձնական խաչերը, հազիվ թե առանձնապես աչքի ընկնեն: Այնուամենայնիվ, ընդհանուր միտումը դեպի կրոնի մերժում, ակներեւ է: Այսօր Ֆրանսիայում լքված են հարյուրավոր, եթե ոչ՝ հազարավոր եկեղեցական շենքեր, որոնք վաճառվում են աճուրդներում, վերածվում բնակարանների, խանութների, սրճարանների, իսկ մեկ ծխական քահանան սպասարկում է 21 եկեղեցի:

Նկատենք, որ այսօրվա աշխարհում կրոնի վիճակը մոտավորապես նույնպիսին է նաեւ այն երկրներում, ուր ավանդական կրոնը քրիստոնեությունը չի: Պարզապես քրիստոնեական երկրներում կրոնի նկատմամբ արշավը ավելի շուտ սկսվեց: Քարտեզը ցույց է տալիս, որ պետական կրոն ունեն աշխարհի շուրջ 200 պետություններից հազիվ մոտ 40-ը, որոնք զբաղեցնում են ցամաքի ընդամենը մոտ 13 տոկոսը: Սրանցից էլ 2/3-ը մահմեդական պետություններն են, որոնց տարածքի հիմնական մասը կազմում են անապատները: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ երկրները, որոնցում պետությունը եւ կրոնը տարանջատված են, զբաղեցնում աշխարհը գրեթե ամբողջությամբ:

Իսկ ինչ է նշանակում՝ պետության եւ կրոնի տարանջատվածություն, կամ որ նույնն է՝ պետական կրոնի բացակայություն: Ինչպես նշվեց, դա նշանակում է, որ ոչ մի կրոն չի կարող օգտվել պետության աջակցությունից: Ընդ որում (թեեւ դա սովորաբար չեն նկատում), ճիշտ է եւ հակառակը. պետությունը նույնպես

այլևս չի կարող օգտվել *որեւէ* կրոնական կազմակերպության աջակցությունից: Բայց մի՞թե կրոնական կազմակերպությունները կարող են ինչ-որ կերպ օգնել պետությանը: Այդ հարցին պատասխանելու համար պետք է հասկանալ, թե ինչի համար են պետական կրոնները: Եւ ինչ է կրոնն առհասարակ:

Պետական կրոնը

Մարդը հանրային կենդանի է. ի տարբերություն կենդանական աշխարհի բազմաթիվ այլ ներկայացուցիչների, որոնք վարում են անհատական կենսակերպ, միայնակ մարդն անզոր է բնության ուժերի հանդեպ: Մարդը կարիք ունի խմբեր կազմելու՝ միասնական ուժով պայքարելու գիշատիչների, բնական տարերթների դեմ, ինչպես նաեւ մարդկային այլ խմբերի դեմ, որոնք հավակնում են օգտվելու տվյալ խմբի զբաղեցրած տարածքի բարիքներից: Սակայն այդ պայքարը պահանջում է, որ մարդիկ իրենց խմբերում՝ համայնքներում, կազմակերպված լինեն: Այն է՝ հետեւեն որոշակի կանոնների. ոմանք պիտի զբաղվեն պաշտպանության հարցերով, մյուսները՝ սնուդն հայթայթելով, համայնքի ներքին կարգի պահպանությամբ եւ այլն: Այսինքն, համայնքը պիտի կառավարվի եւ առանձին անդամները պիտի *ենթարկվեն* կառավարիչներին. փաստորեն, *պիտի սահմանափակվի իրենց ազատությունը*: Հիշենք այս հանգամանքը:

Ինչպէս կարելի է դա իրագործել: Ամենաակնհայտը՝ *ուժի* կիրառումն է: Կենդանական աշխարհում՝ գայլերի, առյուծների, կապիկների ոհմակներում դրանով էլ ամեն ինչ սահմանափակվում է: Խոշոր ոհմակներում օգնության է գալիս նաեւ ոհմակի ստորակարգային կառուցվածքը. առաջնորդը վերահսկում եւ հնազանդեցնում է միայն առաջնորդության ամենաարտահայտված հավակնորդներին, իսկ նրանք արդեն ենթարկեցնում են մնացածներին: Սակայն մարդկային համայնքը ավելի խոշոր է. մեկ անձը, որքան էլ ուժեղ լինի, չի կարող վերահսկել հազարավոր եւ միլիոնավոր անհատներից բաղկացած համայնքը: Այստեղ էլ կա վերնախավ, ապա՝ ուժային կառույցներ՝ բանակ, ոստիկանություն եւ այլն: Բայց այդ դեպքում ինչպէս պիտի ապահովվի արդեն այդ կառույցների ենթարկումը բարձրագույն իշխանությանը: Առաջնորդության հավակնողները մարդկային ~~ոհմակում~~ համայնքում, նույնպես հաճախ ուժ են ցուցադրում, սակայն հիմնականում խնդիրը լուծվում է մեկ այլ միջոցով, որն ընձեռում է բանականությունը, եւ որի շնորհիվ համայնքի առանձին անդամներն ինքնակամ՝ առանց ուժային պարտադրանքի, անում են այն, ինչ անհրաժեշտ է համայնքին՝ բացառապես գիտակցելով դրա անհրաժեշտությունը: Դա կոչվում է *փափուկ ուժ*: Այս եզրը հայտնվել է վերջերս, սակայն բուն ուժը նկատվել եւ սկսել է կիրառվել հազարամյակներ առաջ: Փափուկ ուժի տեսակներից է հենց կրոնը,

որ գործածվում է սովորական ուժին՝ *կոշտ* կամ *բիրտ* ուժին զուգահեռ, եւ դրանք՝ *կոշտ* եւ *փափուկ* ուժերը փոխադարձ ուժեղացնում են միմյանց: Այդպես կրոնը, եթե այն պետական է, հնարավորություն է տալիս պարտադրելու մարդկանց այս կամ այն վարքագիծը, առանց լրացուցիչ ուժի գործադրման, ինչի շնորհիվ կրճատվում են ծախսերը ուժային կառույցների վրա, իսկ կրճատված վիճակում էլ դրանք գործում են նույն, եթե ոչ ավելի մեծ արդյունավետությամբ:

Հայկազյան բառարանը կապում է *կրոն* եզրը՝ *օրենք*, *կարգ* եզրերի հետ: Եւ իրոք, այն ինչ մենք հիմա անվանում ենք կրոն, միշտ կազմել է տվյալ երկրի կարգերի եւ օրենսդրության հիմքը: Այնպես որ, երբ 1789-ին տապալում էին «հին կարգերը» դա հավասարազոր էր հենց պետական կրոնի տապալմանը. կառավարման ձեւը պարզապես դրա դրսեւորումներից մեկն էր, եւ նույնիսկ՝ խորհրդանիշը:

Կրոնների ծագումն ու տեսակները

Այն հարցին, թե ինչպես է ծագել կրոնը, առաջարկվել են բազմաթիվ պատասխաններ. որ կրոնական զգացումը ներդրված է մարդու մեջ ի բնե, որ այն առաջանում է բնության ուժերը բացատրել չկարողանալուց ու վախից՝ դրանց նկատմամբ եւ այլն: Այդ մասին գրվել են հազարավոր գրքեր:

Սակայն պատասխանը շատ պարզ է. կրոնը՝ որպես *հավատի դրսեւորում* գոյություն ունի այնքանով, որքանով գոյություն ունի *անհայտություն*: Հավատը սկսում է այնտեղ, որտեղ ավարտվում է *իմացությունը*: Հավատը, դա *տվյալ պնդումը ճիշտ համարելն է՝ առանց ապացույցի*: Ցանկացած *հավատ*, ծնվում է *վստահությունից*: Դա հատկապես ակնհերեւ է ռուսերենում՝ *вера* եւ *доверие* զուգի դեպքում. նույն տրամաբանության շրջանակներում հայերենում *վստահությանը* կարելի էր ասել *նախահավատ*: Այսինքն հավատալուն պիտի նախորդի ինչ-որ բան. երեւոյթ, դեպք, անձ (ուսուցիչ), որի ազդեցության տակ մարդը կհավատա տվյալ պնդմանը: Հավատալուց հետո համապատասխան երեւոյթը կամ դեպքը ընկալվում են, որպես *հրաշք*, իսկ անձը... դե, անձը նույնպես... եւ հաճախ էլ՝ աստվածացվում է... Ո՞ր անձին են մարդիկ առավելագույնս վստահում. նրան, ով իրենց աշխարհ է բերել կամ՝ փրկել է կործանումից, սնուցել եւ ոտքի հանել: Սովորաբար, դա ծնողն է, ով նույնպես հրաշք է: Ուստի եւ ընդունում են նրա համոզմունքները առանց ստուգելու՝ հավատալով. այդ իսկ պատճառով, որպես կանոն զավակները՝ ընդունում են ծնողների կրոնը (այս հանգամանքին դեռ կանդրադառնանք):

Իսկ կրոնի անհրաժեշտությունը հայտնվում է, երբ մարդն սկսում է ինքնուրույն քայլեր կատարել կյանքում եւ գիտակցում է, որ կյանքը եւ շրջակա աշխարհը լի են վտանգներով, որոնց մասին նա ամեն ինչ չէ, որ գիտի, բայց

ստիպված է կատարել այդ քայլերը, այսինքն՝ ապրել: Բացվում է երեք հնարավորություն.

- հրաժարվել այդ քայլերից (այն է՝ չապրել),
- կատարել դրանք, չիմանալով, թե իրեն ինչ վտանգ է սպառնում այդ ճանապարհին, այն է՝ գտնվել մշտապես լարված վիճակում (որն, ի վերջո, կարող է հանգեցնել առաջին տարբերակին),
- հետեւել վստահելի մարդուց լաված խորհուրդների որեւէ համակարգի՝ ուսմունքի, որն այս կամ այն կերպ ուղղորդում է իրեն կյանքում, խոստանալով որոշակի ապահովություն. եթե ոչ անհայտությանը բախվելու պահին, ապա գոնե՝ հեռու ապագայում: Այդ խորհուրդների համակարգը հենց կրոնն է: Այդքան բան:

Կրոնը շատ բարդ երևույթ է եւ դրան դժվար է տալ անվիճելի սահմանում ու ոչ պակաս դժվար է ստեղծել աշխարհում եղած հարյուրավոր կրոնների միարժեք դասակարգում: Սակայն այս հոդվածի նպատակը կրոնի տեսություն շարադրելը չէ, այլ սոսկ փորձ, հասկանալու, թե ինչ կրոնական, կամ՝ փափուկ ուժի դաշտում է գտնվում *այսօրվա աշխարհը*, եւ այս խնդրի շրջանակներում, թերեւս, բավական կլինի կրոնի ամենաընդհանուր սահմանումը, որպես *աներևույթ ուժերին երկրպագելու համակարգ*, իսկ որպես պարզագույն դասակարգում՝ ըստ նրա, թե դա երկրպագություն է *աճին, բարդացմանը նպաստող, կառուցողական*, այն է՝ *բարի* ուժերին, թե *քայքայմանը, պարզեցմանը, ոչնչացմանը նպաստող*, այն է՝ *չար* ուժերին: Կրոնը թելադրում է վերաբերմունքն այդ ուժերին:

Այժմ, երբ մենք հասկացանք, թե ինչ է կրոնը, եւ ինչով է պայմանավորված (առանց հաստատվոր հատորներ գրելու՝ ավանդական «~~ա~~փմաստասիրության» ոճով), փորձենք հասկանալ, թե ինչպիսին կարող է լինել այդ վերաբերմունքը:

Նախ, կարճից է մարդն, այնուամենայնիվ, ընտրել երկրորդ տարբերակը, այսինքն, կյանք՝ առանց կրոնի, փաստորեն՝ անհավատություն: Տեսականորեն՝ այդ, թեեւ, ինչպես ասվեց, դա հոգեպես դժվար ընտրություն է, ուստի եւ՝ անկայուն: Դա հավասարազոր կլիներ գիտական մոտեցմանը կյանքին. ընդունել որեւէ պնդման ճշմարտությունը, միայն ստուգելու եւ համոզվելու արդյունքում: Միայն սակավաթիվ մարդիկ կարող են մնալ այդ ուղու վրա, իսկ մեզ հետաքրքրում են ընդհանուր միտումները:

Թե ինչպես պետք է հետեւել եւ նպաստել բարի ուժերին՝ պարզ է. յուրաքանչյուր կրոնում դրանց երկրպագուն հետեւում է որոշակի օրենքների,

պատվիրանների, վարվելակարգի եւ ծայրագույն դեպքում՝ նահատակվում հանուն դրանց՝ ապավինելով անդրշիրիմյան արդար հատուցմանը:

Ավելի բարդ է հարաբերությունը չար ուժի հետ: Նրան կարելի է անտեսել, նրան կարելի է սիրաշահել, կաշառել, վերջապես՝ դառնալ նրա ծառան: Բայց պարզ չէ արդյունքը. չէ՞ որ դա չար ուժ է. ինչո՞ւ պիտի նա բարով հատուցի իր ծառային... Թեե՛ւ՝ ճաշակի հարց է... Կգտնվեն մարդիկ, ովքեր կմտածեն, որ անտեսել չար ուժը, նշանակում է չհարգել, իսկ դա կարող է վատ հետեւանքներ ունենալ եւ կնախընտրեն գոնե կաշառել: Վերջապես, ոմանք կարող են ապահովագրվել եւ երկրպագելով *բարի* ուժին դրա հետ մեկտեղ կաշառել *չարին*. Նման օրինակները քիչ չեն կրոնական հարաբերություններում:

Աշխարհի այժմյան կրոնական դաշտի վերլուծումը ցույց է տալիս, որ ամենահայտնի եւ խոշոր, այսպես կոչված՝ համաշխարհային կրոնները հենց *բարի* եւ *չար՝ կառուցող* եւ *քայքայող* ուժերի մասին ուսմունքներ են, որոնք մարդկանց առաջարկվում հետեւել բարի, կառուցող ուժերին եւ հեռու մնան քայքայողներից: Որոշ դեպքերում, դա հիմնավորվում է, հեռու ապագայում բարի եւ չար ուժերի անխուսափելի վերջին ճակատամարտում բարի ուժերի նույնքան անխուսափելի հաղթանակով, որի արդյունքում առաքինիները փրկվելու են, իսկ չար ուժերի հետեւորդները՝ ոչնչանալու: Այսինքն, չար ուժերի հետեւորդները, գուցե տվյալ պահին իրենց կյանքում կարող են ինչ-որ օգուտ քաղել, բայց վերջնական արդյունքում՝ տուժելու են:

Ապահանրացում (dissociatio)

Եւ ահա, ինչպես տեսնում ենք, այսօր աշխարհի պետությունների մեծագույն մասը ավանդական կրոններից որեւէ մեկը այլեւս չի ճանաչում, որպես պետական: Ինչո՞ւ:

Կարելի է ենթադրել, որ գիտության նվաճումները եւ տնտեսական հզորացումը այնքան են ընդարձակել մարդու անվտանգ կենսական տարածությունը, որ մարդկանց մեծագույն մասն այլեւս չի նկատում շրջակա աշխարհի կործանարար դրսեւորումները: Իրոք. քաղաքներում չեն զգոսնում վագրեր ու գայլեր, ժանտախտը միլիոններով մարդկանց չի հնձում, սնունդ հայթայթելու համար բավական է իջնել մոտակա խանութ, շոգն ու ցուրտը կարգավորվում են օդորակիչներով, իսկ վերջին 70 տարիների *գրեթե* անպատերազմ կյանքը շատերի մոտ պատրանք է ստեղծել, թե Վահագնը կամ Մարսը, այլեւս երբեք մարտադաշտ չեն տանելու իրենց բանակները: Արդյունքում ձեւավորվել է մարդկանց մի ստվար զանգված, ովքեր շրջակա աշխարհից իրենց կյանքին ու ապահովությանը սպառնալիք չեն տեսնում. համենայն դեպս, այնքան լուրջ սպառնալիք, որ դրանից խուսափելու համար նպատակահարմար

գտնեն սեփական կյանքը՝ ավանդական կրոնների պահանջների համաձայն կարգավորելը: Իսկ պետությունները պարզապես հետեւում են մեծամասնության կարծիքին: Այլ հարց է, թե որն է եղել առաջինը. գուցե հենց պետությո՞ւնն է ինքն իրեն տարանջատել կրոնից, իսկ հետո ժողովուրդները ընտելացել են ստեղծված իրողությանը: Համենայն դեպս, երբ 1905-ին Ֆրանսիայում եկեղեցին անջատվեց պետությունից, հավատացյալ քրիստոնյաները դեռ հաստատապես մեծամասնություն էին կազմում: Նույնիսկ 2010 թվականին քրիստոնյաները կազմում էին բնակչության շուրջ 63 տոկոսը:

Իսկ մյուս կողմից, եթե այդպես է, ապա այն մարդիկ, ովքեր «կյանք վայելելու» փոխարեն դեռեւս ձգտում են շարժվել ինչ-որ ճիշտ (իրենց կարծիքով) ուղով՝ Դաոյի, Դհարմայի, կամ՝ հայտնվել Նիրվանայում, Դրախտում, ապա դա իրենց մասնավոր գործն է. ինչ՞ու պիտի պետությունը միջոցներ հատկացնի հեքիաթների հավատացող այդ տարօրինակ մարդկանց կազմակերպություններին, փոխանակ ապահովելու մարդկանց բարեկեցիկ կյանքը այստեղ եւ հիմա:

Բացի այդ, եթե մշակույթների «փոխներթափանցման» արդյունքում կողք-կողքի բնակվել են ամենատարբեր կրոնների հետեւորդներ, եւ հաստատվել է «բազմազանություն» (եւ կրկին. արդյո՞ք դա ինքն իրեն է ստացվել, թե՞ դրան նպաստել են), ապա ինչպե՞ս կարող է որեւէ երկրի կառավարություն նախապատվություն տալ դրանցից մեկին. բա մյուսնե՞րը: Չէ՞ որ անհրաժեշտ է «համոզմունքների ազատություն», ու նաեւ պետք է «նրբանկատ» լինել մարդկանց կրոնական զգացմունքների նկատմամբ:

Ու ոչ մեկին չի հուզում, որ յուրաքանչյուր երկիր ավանդաբար ունեցել է քրիստոնեական, կամ մահմեդական, կամ բուդդայական (կամ մեկ այլ) բնակչություն, մինչդեռ այլ կրոնների ներկայացուցիչները կազմել են (ու ցայսօր՝ կազմում են) բացարձակ փոքրամասնություն (հյուր են այդ երկրում) եւ տվյալ երկրի կրոնական հաստատության տարանջատումը պետությունից ոչ միայն նրբանկատ չէ համապատասխան կրոնի բնիկ հետեւորդների, այն է՝ մեծամասնության զգացմունքների նկատմամբ, այլ բացահայտ ապտակ է: Թեեւ կասեն, որ մեծամասնությունը կամովին է հրաժարվել իր գերակա դիրքից, հարգելով փոքրամասնությունների զգացմունքները. չգիտես ինչ տրամաբանությամբ, որոշվել է, որ առաջնային պիտի համարվեն փոքրամասնությունների զգացմունքները: Թթած մեծամասնության վրա. միքիչ կոժգոհեն, հետո՝ կհամակերպվեն, հետո՝ արդեն իրենք փոքրամասնություն կդառնան: Բայց այն ժամանակ արդեն էլ ի՞նչ «համոզմունքների ազատություն». այն ժամանակ կարելուրդ լինելու է մեծամասնության կարծիքը. «ժողովրդավարություն» է չէ՞:

Ուրեմն ինչ. փափուկ ուժի կարիք այլևս չկամ, հրաժարվել եմ դրանից. այլևս պետական կրոն չի լինելու: Ոչ իհարկե. առանց փափուկ ուժի միլիոնավոր մարդկանց կառավարել չի ստացվի: Եւ **սուրբ տեղը թափուր չի մնա**. այն զբաղեցնող միշտ կգտնվի: Գուցե դա պիտի լինի մի որեւէ ոչ կրոնական գաղափարաբանությո՞ւն: Չէ՞ որ ցանկացած կրոն նախ եւ առաջ գաղափարաբանություն է: Գուցե կրոնի եւ պետության տարանջատումը սոսկ նշանակում է, որ չի խրախուսվում (հիմ կողմից չի խրախուսում) *աներեւոյթ* ուժերին երկրպագելը, որպես ժամանակավրէպ՝ «ժողովրդավարության» եւ «գիտության» դարում, եւ նոր գաղափարաբանությունները գուցե պիտի գիտակամ բնույթ ունենան: Դա կարող էր հետաքրքիր լինել. նման գաղափարախոսությունը կարելի էր քննարկել, զարգացնել, ինչպես ցանկացած գիտական տեսություն:

Բայց այդպես լինել չի կարող: Ինչպես ասվեց սկզբում, մարդուն խորհուրդ եւ ուղեցույց է անհրաժեշտ հենց անհայտությանը բախվելիս: Երբ ստիպված է լինում որոշում կայացնել այնպիսի բաների հետ կապված, որոնց մասին *հաստատապես* ոչինչ հայտնի չէ, երբ մնում է միայն հավատալ, կամ՝ չհավատալ, վստահել, կամ՝ ոչ: Ուրեմն բոլոր դեպքերում պետական գաղափարաբանությունը կարող էլ լինել *միայն կրոնական*: Նույնիսկ եթե այն այդպես չկոչվի...

Եւ իրոք. որո՞նք են գաղափարաբանությունները, որոնց այսօրվա աշխարհում աջակցում են այն պետությունները, որոնք, *իբր*, հրաժարվել են պետական կրոնից: Դրանց մեխն ու ստիկնձը կազմում են «ազատության» հետ կապված գաղափարները՝ տարբեր ածանցներով «ազատականություն» (*Liberalism*), «ազատությունականություն» (*Libertarianism*) եւ այլն. սրանք սնկի պես տարածվեցին հենց Ֆրանսիական հեղափոխությունից հետո: Բացի այդ, կան ածանցյալ գաղափարներ, օրինակ՝ «բազմազանություն», «բազմակարծություն» եւ այլն:

Բայց հիվ է ասել, թե նման եությունները տեսանելի են կամ շոշափելի: Գուցե «ազատություն» հասկացությունը ավելի պարզ է թվում, քան, օրինակ, բրիտոնեական «երրորդությունը»... Բայց իրոք՝ սոսկ թվում է... Այո, գոյություն ունի «ազատություն» հասկացության հստակ գիտական՝ ֆիզիկական, մաթեմատիկական ընկալումը, բայց մերօրյա գաղափարաբանները ֆիզիկական հասկացություններից (եւ առհասարակ՝ գիտությունից, նույնիսկ՝ տարրական) չափազանց հեռու են: Իսկ ոչ ֆիզիկական իմաստով այն նույնքան անշոշափելի եւ անըմբռնելի է, որքան ավանդական կրոնների հասկացությունները: Դա հաստատում են նաեւ «ազատություն» հասկացության շուրջ, արդեն հազարավոր տարիներ ընթացող վեճերը: Իսկ եթե գաղափարաբանության

հիմքում դրված է աներեւոյթ, անըմբռնելի մի եռություն, որը պարզ չէ, թե ինչպես կարելի է շոշափել, չափել, ուրեմն դա արդեն կրոն է, այլ ոչ թե գիտական տեսություն:

Իսկ մյուս կողմից, պետական գաղափարաբանության իմաստը ժողովրդին ու անհատներին կառավարելն է, այն է՝ *ազատության սահմանափակումը*: Ուրեմն էլ ինչ ազատության մասին կարող է խոսք լինել: Պարզապես, մարդը բնագդաբար ձգտում է ազատության. գիտության նվաճումները ամրապնդում են պատրանքը, թե աստիճանաբար մարդու անհատական ազատության աստիճանը աճում է, եւ նոր՝ դեռեւս, ձեւավորման փուլում գտնվող կրոնի քարոզիչները շահագործում են իրենց «հոտի» այդ ձգտումները:

Սակայն հր բն տանում «հոտի» ձգտումները եւ քարոզիչների ծրագրերը: Տեսնենք: Շնորհիվ փոխադրամիջոցների արագության աճի մարդիկ հնարավորություն են ստանում մեկնելու երկրագնդի ցանկացած վայր, ապրելու եւ աշխատելու այնտեղ՝ ազատորեն անելով իրենց ուզածը: Արդյունքում խզվում են անհատների կապերը ընտանիքի, ընկերական միջավայրի, ծննդավայրի հետ: Դրա հետ կապված որոշ անհարմարությունը մեղմվում է կապուղիների զարգացմամբ. ցանկացած պահին տեսահեռախոսները հնարավորություն են տալիս կապվելու բարեկամների հետ, պատրանք ստեղծելով, թե հարազատներն իրենց կողքին են:

Բացի այդ, դրան նպաստում է քարոզչությունը, որը հեռատեսորեն սկսվել էր դեռեւս կես դար առաջ՝ մասնավորապես՝ «հիպի»-ների շարժումից: Գաղափարաբանները երիտասարդներին հորդորում են չապրել իրենց ծնողների հետ, այլ «ազատ», «ինքնուրույն» լինել: Ինչո՞ւ: Պարզ է, թե ինչու. միայնակ երիտասարդներին ավելի հեշտ է ուղղորդել անհրաժեշտ ուղղությամբ, քան ծնողների հետ ապրողներին. «*Ինչպե՞ս թե. դուք արդեն 16 տարեկան եք (ապա՝ 15, 14, 13, 12) ու դեռ ապրում եք ձեր «նախնիների» հետ. բա ամոթ չի. դուք այդքան մանկամի՞տ եք: Իսկ դուք, ծնողներ, հաճո՞ւյք եք ստանում նրանից, որ ստրկացնում, վերահսկողության տակ եք պահում ձեր երեխաների «ինքնությունը»: Դուք բռնապետներ եք»:* «Եւ առհասարակ, ծնողներ, զբաղվե՛ք ձեր անձնական կյանքով. որսացե՛ք երջանկության պահերը. երեխաները ձեզ միայն կխանգարեն»: Քարոզվում են «անզավակ»՝ (childfree) «հարաբերություններ» («ընտանիք», այդ ինչ բան է). չէ՞ որ երեխաները կապում, կաշկանդում են մարդկանց, իրենց «անազատ» են դարձնում, իսկ կյանքի իմաստը Ազատությունն է, որը փաստորեն բացարձակացվում է. ըստ եռության՝ աստվածացվում: Իսկ եթե երեխաներ այնուամենայնիվ ծնվում են, տարբեր պատրվակներով փորձ է արվում նրանց խել ծնողներից՝ «ճիշտ» «ընտանիքներին» հանձնելու համար. չէ՞ որ, ինչպես ասվեց վերեւում,

երեխաները հետեւում են ծնողների կրոնին: Արդյունքում, անհատները տարանջատվում են, ընտանիքները՝ քայքայվում: Իրականացվում է համայնքների *ապահանրացում* (լատիներեն՝ *dissociatio*). բնագիտության մեջ այդ եզրով է կոչվում քիմիական բարդ մասնիկների տրոհումը ավելի պարզ, փոքր տարրերի:

Նոր կրոնի մեկ այլ աներեւոյթ եւ անըմբռնելի (բայց՝ հրապուրիչ) հասկացությունն է «բազմազանությունը»: Ինչ է դա: Պատկերացրե՛ք. քայլում եք փողոցում, եւ ձեր կողքով անցնում են միեւնույն հագուստով, սանրվածքով, դիմագծերով մարդիկ. երեւի տխուր տեսարան է: Եւ հակառակը՝ ինչ հաճելի է, երբ բոլորը տարբեր են. մեկը՝ սպիտակամաշկ, մյուսը՝ ցորենամաշկ, մյուսը՝ սեւ (չէ, այս ինչ ասեցի, պետք է նրբանկատ լինել՝ «աֆրո»): Կամ՝ մեկը, խոսում է անգլերեն, մյուսը՝ թուրքերեն, մյուսը՝ հնդկերեն. մեկը կրում է գլխարկ, մյուսը՝ չալմա, մեկը՝ տաբատ, մյուսը՝ փեշ, մյուսը՝ ոչինչ չի կրում. դե, իր «ինքնությունը» դա է պահանջում: Հրա՛շք:

Թե՛ դժոխք: Իրոք, պատկերացրե՛ք մի շարք հեղուկներ, ասենք՝ *ջուր, կաթ, գինի, ձեթ, հյուլ*՝ տարբեր անոթներում: Առանձին վերցրած անոթում ոչ մի բազմազանություն չկա. ամբողջովին նույն նյութն է: Բայց որքան համեղ է յուրաքանչյուրը. մեկը կնախընտրի ջուրը, մյուսի ճաշակով է կաթը՝ մյուսը գինի է սիրում. նույնիսկ ձեթի սիրահարներ կգտնվեն, օրինակ՝ զեյթունի: Եւ կարող ենք ասել, որ մեր առջեւ հեղուկների (համերի, բույրերի, գույների) բազմազանություն է: Իսկ այժմ դրանք խառնենք մեկ անոթում, եւ կստանանք մի գարշելի, համասեռ *ջրա-կաթա-գինե-ձեթե-հյուլ*: Գուցե դրա սիրահարն էլ կգտնվի, բայց միեւնույն է դա *մեկ* հեղուկ է լինելու, միակը՝ առանց տարբերակի: Բա ո՛ր մնաց բազմազանությունը: Չե՛ որ դա հանուն բազմազանության էր արվում:

Նույնը եւ կրոնների, լեզուների, ազգերի, ռասաների եւ այլնի դեպքում է. քանի դեռ դրանք առանձին զարգանում են իրենց հայրենիքներում, բազմազանություն կա. բազմազանություն՝ մոլորակի ընդգրկմամբ: Կարելի է ճանապարհորդել, տեսնել տարբեր սովորույթներ, մշակույթներ: Բայց բավական է խառնել դրանք՝ «ազատության» եւ «նրբանկատության» դրոշների տակ, վերացնելով պետական եւ կրոնական սահմանները, Մարաթեշի՝ [«Տեղաշարժի համընդհանուր պայմանագրի»](#) եւ նման այլ միջոցներով ապահովելով «աշխատուժի ազատ տեղաշարժ» եւ՝ վերջ բազմազանությանը. մեր առջեւ կլինի մի գարշելի մարդկային «կոկտեյլ»: Ինչ կունենանք արդյունքում՝ քայքայված ազգեր, կրոններ, լեզուներ, պետություններ: Եւ ոչ մի «բազմազանություն»: Ռուսն ասում է. «За что боролись, на то и напоролись»: Բայց ոչ. այս դեպքում հենց դա է նպատակը. հրապուրիչ եւ գայթակղիչ «բազմազանություն» գաղափարը գործածել՝ հակառակ արդյունքին հասնելու համար:

Կրոնական հեղափոխություն

Կարող է հարց առաջանալ, թե ինչի՞նչ: Թվում է, թե հակասություն կա. իրոք, սկզբում ասվեց, որ համայնքների կառավարմանը նպաստում է դրանց ստորակարգային կառուցվածքը, մինչդեռ ազգեր, լեզուներ, խավեր խառնելու արդյունքում ստորակարգությունը կորչում է, հետեւապես կառավարելու գործընթացը՝ դժվարանում: Բայց դա՝ առաջին հայացքից: Բանն այն է, որ փոխվել են ժամանակները. այսօր զարգացել են մարդկանց վերահսկելու միջոցները: Տեսախցիկները հետեւում են յուրաքանչյուր մարդուն՝ օրվա ցանկացած պահին եւ ցանկացած վայրում: Վճարման համակարգերը վերահսկում են յուրաքանչյուրի բանկային միջոցները: Այդ հնարավորությունը հատկապես աճելու է կանխիկ փողի վերացումից հետո. հանրությանը արդեն մի քանի տասնամյակ աստիճանաբար նախապատրաստում են դրան: Եթե գոյություն չունենա կանխիկ փող, մեկ կտոնոցով հնարավոր կլինի գրկել մարդուն իր դրամական միջոցներից. այդպիսի վտանգից ով ասես կխելոթանա:

Իսկ դա նշանակում է, որ թեեւ հանրության ստորակարգային կառուցվածքը միեւնույն է անհրաժեշտ է, սակայն ժամանակակից հետեւող սարքերի շնորհիվ ստորին հատվածում արդեն հնարավոր է վերահսկողության տակ պահել շատ ավելի մեծաքանակ չկարգավորված զանգված: Ավելին, զանգվածի կարգավորված չլինելը նվազեցնում է ընդվզումների հավանականությունը: Կամ էլ դրանք կլինեն չկազմակերպված եւ հեշտությամբ կճնշվեն: Հետեւապես, հնարավոր կլինի էլ ավելի նվազեցնել ուժային կառույցների թվաքանակը, քան դա հնարավորություն էին տալիս ավանդական կրոնները (տե՛ս վերեւում): Արդյունքում խնայողություն է կատարվում դրանց վարձատրության մասով. նախկին «ուժայինների» մի ստվար հատված այլեւս չի սնուցվի բյուջեից, այլ տեղ կգտնի Նույն այդ անդեմ, անգույն «կոկտեյլում»:

Այսպիսով, մենք ապրում ենք համայնքների կառավարման տեսակետից ավելի հարմար՝ *Նոր կրոնի* կայացման, այն է՝ ընթացող *կրոնական հեղափոխության* դարաշրջանում: Այդպիսին էր մեր թվականության 4-րդ դարը, երբ կործանվում էին զրադաշտությունն ու միհրականությունը եւ ձեւավորվում էր քրիստոնեությունը, այդպիսին էր՝ 7-րդ դարը, երբ ձեւավորվում էր մահմեդականությունը... Այդ գործընթացը չի ավարտվում մեկ օրում, անցնում է մի քանի սերունդ, մինչեւ վերջնականապես հաստատվում է Նոր կրոնը: Սկսվում է նրանից, որ բացահայտվում է այդ պահին իշխող կրոնական գաղափարների անհամապատասխանությունը կյանքի Նոր իրողություններին, ապա՝ դա վերածվում դժգոհության, որն արտահայտվում է սկզբնապես մանկամիտ եւ անվնաս թվացող ընդվզումների տեսքով (մեր դեպքում՝ «հիպի»-ական եւ նման

այլ շարժումների), մինչև որ չի հայտնվում «դրոշակակիրը» եւ չի հավաքում բոլորին մէկ դրոշի տակ, ծառայեցնելով իր նպատակին:

Շուրջ կես դար առաջ Սերգեյ Միխալկովը գրել էր «Չլսելու տոնը» («Праздник непослушания») հեքիաթը, որում այլաբանորեն ներկայացրել էր անասնձ «ազատության» վտանգները: Հեքիաթում ծնողները իրենց չսող երեխաներին դաս տալու նպատակով հեռանում են քաղաքից, թողնելով, որ նրանք անեն իրենց ուզածը. այսինքն, անվերջ խաղան, չվազվեն, ուտեն միայն քաղցրավենիք... հաստատվում է «Չլսելու տոն»: Սկզբում երեխաներին դա ուրախալի է թվում, քանի դեռ չի պարզվում, որ իրենք անօգնական են կյանքի բարդ խնդիրների առջեւ: Հեքիաթը լավ է ավարտվում, որովհետեւ այդ հեքիաթային քաղաքում երեխաների կողքին անսպասելիորեն հայտնվում է կրկեսի մի դերասան՝ տարեց թզուկ, ով ուղղորդում է երեխաներին մինչև ծնողների վերադարձը:

Մեր դեպքում, «ծնողները» դրանք ավանդական կրոններն են (ի դեմս դրանց սպասավորների), որոնք այլեւս չեն կատարում իրենց պարտականությունները եւ ժողովուրդներն անտեր են մնացել, իսկ դա կարող է ողբերգական հետեւանքների բերել: Փաստորեն, այսօր հաստատվել է *դասական հեղափոխական իրադրություն*. Նոր գիտա-տնտեսական պայմաններում *ավանդական կրոնները չեն կարողանում ուղղորդել ժողովուրդներին հին գաղափարներով, իսկ ժողովուրդները չեն ցանկանում ապրել հին գաղափարների համաձայն:*

Կարող է կարծիք հնչել, որ եթե դա այդպես է, ապա ողբերգություն չկա. թող մարդկությունը եւս մի կրոնական հեղափոխություն ապրի. ի վերջո, աշխարհը չկործանվեց, երբ հաստատվեցին բուդդայականությունը կամ քրիստոնեությունը: Եւ դրան իրոք կարելի էր հանգիստ վերաբերվել, եթե չլիներ մի հանգամանք. *այսօրվա կրոնական հեղափոխությունը որակապես տարբերվում է նախորդներից:* Բոլոր ավանդական կրոնները, համաշխարհային կրոնները, առաջարկում են հետեւել կառուցողական ուժերին, եւ հեռու մնալ գայթակղիչ, բայց՝ քայքայող ուժերից: Կառուցումը, այն է՝ համակարգի բարդացումը միշտ էլ դժվար է, քանի որ ջանք է պահանջում. ֆիզիկայի լեզվով ասած՝ Էներգիայի ծախս է ենթադրում, ուստի եւ, անհատների տեսակետից, տհաճ է: Ավելի հեշտ է (Էներգիայի ծախսի տեսակետից) պարզեցնել, քայքայել համակարգը, խզելով դրա տարրերի փոխադարձ կապերը (ломать — не строить): Եւ ահա այսօր մենք տեսնում ենք, որ առաջին տեսակի՝ կառուցողական կրոնական գաղափարներ ժողովուրդներին չեն առաջարկվում, այլ *բացառապես՝* երկրորդ տեսակի գաղափարներ, որոնք հրամցվում են որպես գայթակղիչ «քաղցրավենիք»՝ գրավիչ փաթեթավորմամբ, վարպետորեն

թաքցնելով իրական մտադրությունները: Փաստորեն քարոզվում է բացառապես քայքայիչ ուժերին երկրպագելը. դա այնքան հաճելի է:

Բայց սպասե՛ք. քայքայումը դա մահն է՝ մեծագույն չարիքը: Իսկ հիշում եք ինչպես է կոչվում չար ուժին երկրպագելու կրոնը...

Այո... *Սուրբ տեղը թափուր չի մնա*: Բայց ակնհայտ չէ, որ այդտեղ կհայտնվի մեկ այլ սրբություն: Կարող է հայտնվել եւ ճիշտ հակառակը: Այնպես որ եթե վերելում բերված քարտեզի վրա աշխարհի երկրների մեծ մասը ներկված է մոխրագույն, դա չի նշանակում, թե այդ տարածքում չկան պետական կրոններ, ինչպես մեզ փորձում են համոզել: Դա նշանակում է, որ այդ բոլոր վայրերում արդեն հաստատվել է (առնվազն՝ իրավաբանորեն) մեկ այլ կրոն. միասնական համաշխարհային, պետական կրոն՝ երկրպագություն չանձնավորված քայքայիչ ուժին... Իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ անձնավորված... Դա *փաստ* է, որքան էլ *անհավատալի* թվա. պարզապես նայե՛ք քարտեզին...

22.08.2023

АРМЯНО-РУССКИЙ ВОПРОС

Есть такая детская шутка: один толкает другого в опасном направлении – под машину, в пропасть и т. п. — и тут же хватается, говоря: «если бы не я, ты бы погиб». Эту незамысловатую шутку Россия обратила в основу своей политики в отношении Армении, постоянно провоцируя армянский народ на опасные для его будущего политические шаги, и заявляя, что она гарант существования Армении, или, по крайней мере — армян. «А не то — турки вас сожрут». «А вы сами виноваты». «А вы пытаетесь усидеть на двух стульях». «А вы неблагодарны». «А вы националисты». И т. д. и т. п. С той разницей, что в отличие от этой детской шутки, после каждой такой провокации, Армения лишалась части территории, на которой армяне жили в течение тысячелетий. Это началось чуть больше двух веков назад и продолжается по сей день.

Армения была захвачена тюркскими племенами в 11-ом веке. Россия реально появилась в регионе в начале 19-ого века. $19 - 11 = 8$. То есть, почти 8 веков армянская нация жила на территории, контролируемой тюркскими государствами. Безусловно, в течение этих веков армяне не шиковали, но и тотальных геноцидов не было. В начале 20-го века была составлена знаменитая русская 10-верстовая карта Армении. На неё нанесены армянские населённые пункты и отдельные монастыри на всей территории исторической Армении. Нанесены русскими. То есть ещё совсем недавно на территории турецкого государства армяне были. Сейчас их нет. То есть 800 лет были, а как появились русские, они исчезли. Совпадение? Возможно: ведь «после» не значит «вследствие».

А кто говорил. «Нам нужна Армения без армян?» Или «Единственным армянином будет его чучело в Тифлисском музее?» Никто не говорил? Ах да, это англичане распространяют «утки». И да, можно не сомневаться, что англичане ко всему этому руку тоже приложили: как-никак всемирную британскую империю никто ещё не отменял. А какая разница кто, турки, англичане или ещё кто-то, если

гарантом является Россия? Или не является? Или является, но не может выполнить свои обязательства? Или не хочет? А хрен не слаще редьки.

Так что, нет *армянского* вопроса, есть *армяно-русский* вопрос, поскольку именно Россия довела положение армянского народа до возникновения «вопроса». До появления России в регионе такого вопроса не было.

Итак.

Вот уже более 200 лет, как православная Россия перешла Кавказский хребет и с тех пор методично «защищает» христианские народы, в частности — армян, в рамках легенды о том, что она союзник и гарант существования армянского народа. В результате, на данный момент армянский народ, до её появления живший на всей территории своей обширной (в полмиллиона кв. км) исторической родины, ныне кое-как ютится на территории чуть больше 30 тыс. кв. км. То есть, в течение 200 лет присутствия русских за Кавказом, естественный ареал армянского народа уменьшился почти в 15 раз. Причём ныне он практически окружён враждебными народами.

Но слово «враждебный» не передаёт всю реальность: это вражда неестественная. До появления России она, конечно, то же была: как-никак один народ захватил территорию другого, у них совершенно разные языки, религии и т. д. Но вражда эта была, как бы, на уровне интересов, а теперь она проникла в кровь народов, можно сказать — на уровень ДНК. А причина в том, что всё это время Россия продвигала свои политические интересы, играя на противоречиях армянского и тюркских народов и сея между ними раздор.

Казалось бы — политика — ничего личного: тоже лишь интересы. Но нельзя сказать, что Россия в ней преуспела: как достигла в 1828 году Аракса, так и осталась на этой линии. Желание захватить всю историческую Армению под лозунгом защиты христиан было, но после всех попыток приходилось откатываться назад. И это естественно: интересы — интересами и кидать союзников время от времени — святое дело. Но когда постоянно, когда это входит в привычку — это себе дороже.

Однако, прошедшие годы ничему не научили. И даже сегодня Россия пытается из противоречий Армении и тюркских стран вытянуть максимум выгоды. Хотя чего взять у крошечной Республики Армении. Будь Россия исторически дальновидней, и чуть более честной с союзником (о рыцарской чести речи не идёт — политика, сэр: просто чуточку честнее) она бы через большую и союзную Армению имела бы сейчас выход к Средиземному морю, а не держалась бы на птичьих правах в Сирии. В течение 2-х веков Россия не


смогла усечь, кто её естественный союзник в регионе. Видимо сказалось воздействие на национальное самосознание 300-летнее иго тюркской Орды. Но что есть, то есть...

И сегодня тоже для России Армения разменная монета в запутанной игре, которая ведётся на Украине (предлог «на» — чисто для благозвучия). Но хотя бы сегодня Россия (или русский народ: неясно, взаимозаменяемые это понятия, или — нет) должна сделать выбор. Ведь действительно: нельзя усидеть на двух стульях (кааак русские любят использовать этот образ, критикуя тех же турков). Нужно чётко (понимаете? — чётко) заявить, кого Россия считает своим союзником: армян или турков. И не перекладывать вину на Армению, стандартно обвиняя всех в «русофобии»: Армении уже давно не до политеса, тут быть бы живу. Что до России, то кинув Армению и в этот раз, она, скорее всего, в любом случае потеряет Армению: вне зависимости от будущего существования Армении. Поскольку если даже Армении сегодня удастся проскочить, на легенде о России как о «гаранте» можно будет поставить жирный крест. Ведь, как известно, можно всё время дурачить некоторых (т. е. русофилов — неисправимых оптимистов, которых всё меньше и меньше), можно некоторое время дурачить всех (даже русофобов: они тоже есть, чего уж там: не все же доверчивые оптимисты), но нельзя всё время дурачить всех.

Впрочем, боюсь, выбор, скорее всего будет неоптимистичен. Причём и́ для Армении, и́ для России: вопрос то — Армяно-Русский.

23.08.2023

ՄՐԲԱԶԱՆ ԿԹՈՒ ԿՈՎԵՐՆ



Ամերիկացին՝ խորհրդային Միության քաղաքացուն.
«Ես ունեմ խոսքի ազատություն. ես կարող եմ կանգնել
Սպիտակ Տան առջեւ եւ բղավել. «Կորչի Ռեյգանը», եւ ինձ
ոչ ոք չի ձերբակալի:

խորհրդային Միության քաղաքացին՝ ամերիկացուն.
«Ես նույնպես ունեմ խոսքի ազատություն. ես նույնպես
կարող եմ կանգնել Կրեմլի առջեւ եւ բղավել. «Կորչի
Ռեյգանը», եւ ինձ ոչ ոք չի ձերբակալի:

խորհրդային տարիներին՝ այլախոհական կատակ

խոսքի ազատությունը գեղեցիկ հասկացություն է: Սա այն
հասկացություններից մեկն էր, որոնք քարոզելու միջոցով Արեւմուտքին
հաջողվեց գայթակղել խորհրդային Միության քաղաքացիներին եւ քայքայել

երկիրը: Իրականում, բնաբանում բերված կատակը այնքան էլ չի արտահայտում խոսքի ազատության սահմանափակման աստիճանը Խորհրդային Միությունում. Նույնիսկ Ռեյգանի դեմ արտահայտվելը կարող էր ձերբակալության հիմք դառնալ, եթե այդ գործողությունը չէր լիազորվել վերադաս մարմինների կողմից:

Սակայն հետագայում պարզվեց, որ Արեւմուտքում էլ խոսքի ազատության հետ կապված վիճակը այլ է, քան ներկայացվում էր արեւմտյան քարոզիչների կողմից: Վերջին տարիների մի օրինակ. 2015 թվականին ահաբեկչական հարձակում կատարվեց փարիզյան Charlie Hebdo հանդեսի խմբագրության վրա, որը բերեց բազմաթիվ զոհերի: Հարձակման պատրվակներից մեկը իսլամի մարգարեին ծաղրող նկարների հրապարակումն էր. խմբագրությունը հրապարակել էր դրանք, հայտարարելով, որ իրենց համար խոսքի ազատությունը վեր է հավատացյալների կրոնական զգացմունքներից: Թվում է, խոսքի բացարձակ ազատության օրինակ է: Սակայն այն ժամանակ կարծիքներ հնչեցին, որ իզուր են եւրոպացիները «սկզբունքայնություն խաղում», որ յուրաքանչյուր երկիր եւ մշակույթ ունի միայն իրեն հատուկ սրբությունները, որոնց այն թույլ չի տա դիպչել: Որ եւրոպացիներն էլ ունեն իրենց «սրբազան կովերը», օրինակ՝ հրեաների անձեռնմխելիությունը: Եւ իրոք, Նույն Charlie Hebdo հանդեսը տարիներ առաջ ծաղրանկար էր հրապարակել, որում ծաղրել էր Նախագահ Սարկոզիի որդուն, ում հարսնացուն հրեուհի էր, եւ ծաղրանկարիչը հեռացվել էր աշխատանքից՝ հակահրեականության համար:

Սակայն ռուս-ուկրաինական պատերազմի ընթացքում, երբ Իսրայելը աջակցեց Ուկրաինային, ուր շատ արտահայտված են հակահրեական տրամադրությունները, պարզ դարձավ, որ հակահրեականությունը Եւրոպայում թեեւ անթույլատրելի է, սակայն ոմանց համար պակաս անթույլատրելի է, քան մյուսների: Այսօր, Եւրոպայում կարծես թե հիմնական «սրբազան կովը» սեռափոխական գաղափարներն են. այսօր արդեն դրա դեմ խոսելն է մեծագույն «տաբու»:

Այո, յուրաքանչյուր երկիր եւ մշակույթ ունի իր սրբությունները, սակայն դրանք փոխվում են ժամանակի ընթացքում, եւ երբ խոսում ենք որոշակի «տաբու»-ների մասին, պետք է միշտ ճշտել, թե, հատկապես, դր ժամանակահատվածին է դա վերաբերում: Մինչեւ 311 թվականը Հռոմում հալածում էին քրիստոնյաներին, իսկ հետո սկսեցին հալածել «հեթանոսներին», մինչեւ 1917 թվականը Ռուսաստանում հալածում էին կոմունիստներին, իսկ հետո արդեն կոմունիստները՝ ոչ կոմունիստներին: Մի խոսքով, «O tempora, o mores», «Dura lex sed lex». հայերեն ասած՝ մեռնեմ օրենքին...

Ինչպես տեսանք, «տաբու»-ներն էլ տարբեր խստության են լինում. շատ Նրբորեն գործող, բայց երբեմն էլ՝ պետության ողջ ուժով պարտադրվող: Սակայն

այս ամենը, ընդհանուր առմամբ, հայտնի է, եւ ես գրել եմ սա ոչ նրա համար, որ կրկնեմ հանրահայտ ճշմարտություններ: Ես ուզում եմ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ *վերլուծելով տվյալ վայրում, տվյալ պահին արգելված դրույթները եւ վերաբերմունքն այդ արգելքին, կարելի է պատկերացում կազմել այս կամ այն անհատի, կազմակերպության եւ նույնիսկ՝ պետության հիքնոլոգիայի աստիճանի մասին*: Առնվազն՝ «խոսքի ազատության» շրջանակներում: Մասնավորապես, կարելու է, որ բացի «տաբու»-ներից, որոնք գործում են այս կամ այն երկրում, կան «տաբու»-ներ, որոնք գործում են գրեթե բոլոր երկրներում: Դրանց ես արդեն անդրադարձել էի իմ «[մարտահրավերներում](#)»: Դրանք են, մասնավորապես.

- ԶԻԱՅ-ը
- Թագավարակը
- Համաշխարհային ցերմացումը
- Բրիտանական կայսրության քայքայումը Երկրորդ աշխարհամարտից հետո
- Ամերիկացիների Լուսնային արշավանքը

Հատկապես հետաքրքիր է հետեւել ռուսների վերաբերմունքի փոփոխությանն այդ «ծրագրերի» նկատմամբ: Երկիրը, որը փորձում է ձեւացնել, թե ինքնիշխան է (բա ոնց. հանդգնել է առճակատման մեջ մտնել ՆԱՏՈ-ի հետ), կուռնուռի ձագ է դառնում, երբ անհրաժեշտ է լինում մերկացնել այդ համաշխարհային «մարտահրավերների» զուտ առեւտրային ծրագրեր լինելը: Այսինքն ծրագրեր, որոնք հարստացնում են համաշխարհային վերնախավի անդամ շատ որոշակի անձանց:

Եւ ահա, վերջին մի քանի ամիսների ընթացքում կարելի էր նկատել, որ մամուլի էջերում եւ հեռուստատեսությամբ ռուսները, ովքեր մինչեւ վերջերս կասկածի տակ չէին դնում այդ «ծրագրերից» ոչ մեկը, սկսել էին հեզնել դրանցից մի քանիսը, հատկապես՝ «Համաշխարհային ցերմացումը», որի մերկացմանն ուղղված մի շարք թողարկումներ եղան ռուսաստանյան հեռուստատեսություն: Երբեմն, հեզնում էին նաեւ «Ամերիկացիների Լուսնային արշավանքը»: Թեեւ դեռեւս անսասան դիրքերում են «ԶԻԱՅ»-ը եւ «Թագավարակը» (Եկրորդի դեմ «պայքարի» մասին վերջերս ռուսները նույնիսկ հեռուստատեսային «հերոսապատում» էին նկարահանել): Թվում էր, այդ ծրագրերը աստիճանաբար դադարում են «սրբազան կովեր» լինել, եւ շուտով մենք կարող ենք ականատես դառնալ դրանց «մերկացմանը». դրանց արդեն բավարար չափով կթել են, դրանք «ծեր» են, եւ այլեւս շահուկաբեր չեն, ինչպես շահուկաբեր չի այլեւս հենց «խոսքի ազատությունը»: Իր հերթին, դա կարող էր նշանակել, որ Լոնդոն

մայրաքաղաքով համաշխարհային կայսրությունը իրոք սասանվել է, եւ ուր որ է Ռուսաստանը իրոք կարող է հայտարարել իր ինքնիշխանության մասին:

Ինչպէս դա կարող էր արտահայտվել: Օրինակ՝ դադարեցնելով «հերոսական դիմադրումը» Ուկրաինական «հակագրոհին», եւ անցնելով վճռական գործողությունների:

Մինչդեռ, առայժմ որեւէ ինքնիշխանության մասին խոսք լինել չի կարող: Հիշենք. իբր վարելով արդար պատերազմ \$աշիգմի դեմ, որն իր համար լինել-չլինելու պայքար է, եւ որպէս մեծագույն հայտնություն Ներկայացնելով, որ իրականում պատերազմում է ոչ թե Ուկրաինայի, այլ «Հավաքական Արեւմուտքի» դեմ, Ռուսաստանը ամբողջ տարի մասնակցում էր «ցորենային գործարքին», միեւնոյն ժամանակ ակնարկելով, որ հասկանում է, թե իրականում դա անհրաժեշտ է Արեւմուտքին՝ զենք հասցնելու համար Ուկրաինա, կամ աջակցելու համար Երդողանին, որպէսզի Նա վերընտրվի: Եւ Նույնիսկ դուրս գալով այդ «գործարքից», բարձրաստիճան պաշտոնյաները շարունակում են հայտարարել, որ ինչ-ինչ պայմաններով պատրաստ են վերադառնալ դրան:

Կամ, մեկ ու կես տարի տեւող պատերազմի ընթացքում Ռուսաստանը չի հասցնում հարվածներ Արեւմուտքից՝ զինամթերքի մատակարարման կարելորագույն կապուղիներին՝ երկաթգծերին, կամուրջներին: Իսկ վերջին օրերին եռանդաբար հարվածում է ցորենի պահեստներին, ինչը ռազմական առումով բոլորովին անիմաստ է, եւ ինչը պարբերաբար նկատում են ռուսական հայրենասեր-ազգայնական ռազմական մեկնաբանները:

Կամ, հայտարարելով, որ պայքարում է «Հավաքական Արեւմուտքի» դեմ, Ռուսաստանը չի անցկացնում զորահավաք, ստեղծելու համար թվային գերազանցում Ուկրաինական բանակի նկատմամբ, առանց որի անհնար է գրոհել եւ գրավել Ուկրաինայի տարածքը: Հիշենք, որ Երկրորդ աշխարհամարտի ընթացքում, երբ Ռուսաստանը (ԽՍՀՄ-ը) Նույնպէս պատերազմում էր «Հավաքական Արեւմուտքի» դեմ, դրա կազմում (համեմայն դեպս՝ բացահայտորեն) չկային Մեծ Բրիտանիան եւ ԱՄՆ-ը, մինչդեռ Ռուսական բանակի անձնակազմը միայն Ուկրաինայում կազմում էր 1.5 միլիոն (ամբողջ բանակը գերազանցում էր 6 միլիոնը, իսկ 1945-ին, ավելի քան 10 միլիոնը):

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, որ ինչպէս եւ «Թագավարակը», այս մի «միջոցառումը» Նույնպէս ուղղված է որոշակի շրջանակների հարստացմանը: Պարզապէս, «Թագավարակ» «օպերացիան» հարստացնում էր դեղագործական ընկերություններին, իսկ այս մեկը՝ ռազմաարդյունաբերական ընկերություններին: Հայտնի կատակի համաձայն (իսկ կատակներում, ինչպէս հայտնի է, կա Նաեւ կատակի որոշ բաժին), Ներխուժելով Ուկրաինա Պուտինը

ամբողջ աշխարհը «բուժեց» թագավարակից: Հավանաբար, ռազմաարդյունաբերական ընկերությունները դժգոհում էին. ինչո՞ւ պիտի «դեղագործները» հարստանան, իսկ իրենք՝ ոչ: Արդյունքում գործի անցավ բժիշկ Պուտինը: Նկատենք, որ ռուսական ՉԼՄ-ներում հաճախ են նկատում, որ Արեւմուտքի նպատակն է երկարաձգել պատերազմը, մինչդեռ պատերազմն ունի երկու հակամարտող կողմ եւ այն չի կարող ձգձգվել, եթե կողմերից մեկը դա չցանկանա:

Բայց, ինչ խոսք, սա էլ ակնհայտ ճշմարտություններ են: Իսկ այս հոդվածը որոշեցի գրել մեկ այլ կապակցությամբ: Բանն այն է, որ օգոստոսի 16-ին ռուսական ՉԼՄ-ները տարածեցին հաղորդագրություններ Պուտինի մասնակցությամբ կայացած մի խորհրդակցության մասին, որի ընթացքում ինչեցին «ահարկու» կանխատեսումներ «համաշխարհային քերմացման» հաշվով, եւ այդ մարտահրավերներին պատրաստ լինելու մասին: Իսկ դրանից ընդամենը երկու օր առաջ (ինչպիսի՞ զուգահեռություն) «մոլորակի ինքնառնչացման» մասին «ահագանգ» էր տարածել Սպիտակ տանը որպես դաշնային «լրբբիստ» գրանցված, հայկական ազգանուն կրող (բայց ոչ հայկական անուն) ոմն Էգոն Չոլսկյանը: Ըստ այդ «ահագանգի» մոլորակին մնացել է 10 տարվա կյանք, որից հետո նրա հետ կատարվելու է այն, ինչ միլիոնավոր տարիներ առաջ կատարվել էր Մարսի հետ. մեր մոլորակը դառնալու է անկենդան: Ինչպես կասեր Վլադիմիր Վիսնցկին. «страшно, аж жуть».

Այս լույսի ներքո պարզ է դառնում, որ «համաշխարհային քերմացումը» դեռ շարունակելու է «սրբազան կով» մսալ եւ Պուտինի շտապ հավաքած «խորհրդակցությունը» միանգամայն օրինաչափ է. ինչպես ասում էին ԽՍՀՄ-ի տարիներին. «Կուսակցությունը հրամայեց, ժողովուրդը՝ կատարեց»: Տվյալ դեպքում «կուսակցություն» ասելով պետք է հասկանալ (ինչպես սիրում են մեր օրերում ասել ռուսները) «Վաշինգտոնյան շրջկոմը»: Դե, իսկ «ժողովուրդի» տեղը հիմա ամբողջ մոլորակի բնակչությունն է: Այնպես որ որեւէ «պետության», այդ թվում եւ Ռուսաստանի «ինքնիշխանության» մասին խոսելն, առայժմ, վաղաժամ է:

Չի բացառվում, որ, ինչպես Պուտինը մոլորակը «բուժեց» «թագավարակից», այնպես էլ ԱՄՆ-ը մոտ ժամանակներում «փրկելու» է այն միջուկային պատերազմից: Հատկապես, որ վերջին շաբաթներին թե՛ արեւմտյան եւ թե՛ ռուսական ՉԼՄ-ները նախապատրաստում են բոլորին ուկրաինական պատերազմի սառեցմանը: Ռուս «հայրենասեր-ազգայնականները» դրան դեմ են, բայց հազիվ թե նրանց լսող լինի. դեղագործներից եւ զինագործներից բացի այլ քաղցած վերնախավեր էլ կան...

17.08.202

ՆԵՐԿԱՆ՝ ԱՊԱԳԱՅԻ ԱՆՑՅԱԼՆ Է. ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՁԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Ինչ եղել է՝ պատմություն է: Այն հիշում են, բացահայտում, վերլուծում. այն պատմագիտության առարկան է: Իսկ միևնույն ժամանակ, այն եղել է ապագա՝ դեռ չի եղել: Յուրաքանչյուրն ուզել է հայտնվել իր երազած ապագայում: Ոմանց երազանքներն իրականացել են, մյուսներինը՝ ոչ: Եղել է եւ այնպես, որ հայտնվել են հենց այն ապագայում, որին ձգտել են, բայց հասկացել են, որ ավելի լավ կլիներ մեկ այլ ապագայում հայտնվելին, եւ նույնիսկ՝ անցյալում. մենք, հո, դա լավ գիտենք՝ մեր 2018-ը դեռ նոր է պատմություն դարձել:

Ինչո՞ւ է այդպես ստացվում: Մի՞թե կյանքը, այդ թվում՝ քաղաքական, բոլորովին անկանխատեսելի է, պատահական է: Այո, որոշ երկրներ ավելի հաջողակ են, բայց դրանք նույնպես, երբեմն, ջախջախիչ պարտություններ են կրում: Արդյո՞ք հնարավոր է դրանցից խուսափել, թե՞ քաղաքականությունը սոսկ արկածախնդրությունների շարք է: Մի՞թե անհնար է կանխատեսել քաղաքական բայլերի հետեւանքներն այնպես, որպեսզի դրանք չբերեն կործանարար անհաջողության: Պիտի որ հնարավոր լինի:

Բանն այն է, որ որեւէ համակարգի վիճակը որոշակի պահին կախված է այդ համակարգի նախորդ վիճակից, եւ դա հնարավորություն է տալիս կանխատեսումներ կատարելու: Այսպես, իմանալով գնդակի սկզբնական արագությունը եւ զանգվածը կարելի է իմանալ (կանխատեսել) դրա ընկնելու տեղը: Եւ դա է ցանկացած գիտության նպատակն ու իմաստը. որեւէ համակարգի նախորդ վիճակի հիման վրա ճիշտ կանխատեսումներ կատարելը:

Մարդկային հանրությունը նույնպես համակարգ է, եւ իմանալու համար, թե ինչի կբերի դրա ղեկավարների այս կամ այն բայլը պետք է իմանալ, թե ինչ վիճակում է եղել այդ համակարգը (հանրությունը) նախկինում եւ ինչ ուժերի ազդեցության տակ է եղել: Պարզապես, ի տարբերություն այլ համակարգերի՝ ֆիզիկական, քիմիական՝ մարդկային հանրության՝ որպես համակարգի՝

Նախորդ եւ հաջորդ վիճակները ուսումնասիրում են տարբեր գիտությունները։ Նախկին վիճակները՝ *պատմագիտությունը*, հաջորդ վիճակները՝ *քաղաքագիտությունը*։ Այս երկու գիտությունների տարանջատվածությունը բերում է նրան, որ երկուսն էլ անիմաստ են դառնում։ Իրոք, հում է պետք պատմության ճիշտ շարադրումը, այն է՝ համակարգի նախորդ վիճակի նկարագրությունը, եթե քաղաքական գործիչները դրանցով չեն առաջնորդվելու, եւ ինչ արդյունավետություն կունենան քաղաքագիտական վերլուծությունները, եթե չհիմնվեն համակարգի նախորդ վիճակի վրա։ Արդյունքում *պատմագիտությունը* վերածվում է «պարապ ժամանակի զբաղմունքի», պատմավեպի, իսկ *քաղաքագիտությունը*՝ «մարզական մեկնաբանության» եւ իմաստակության։

Անշուշտ, իրականությունն այդքան պարզ չէ, եւ որոշ շփման եզրեր մնում են։ Առնվազն, քաղաքագետները հաճախ հիշում են, թե պատմությունից հայտնի այս կամ այն քայլը ինչ հետեւանքների էր հանգեցրել, իսկ պատմաբանները, երբեմն ահազանգում են քաղաքագետներին այս կամ այն վտանգների մասին, եթե տեսնում են վերջիններիս բացահայտ կործանարար որոշումները։ Բայց միասնականություն այդ երկու գիտությունների միջեւ միեւնույն է չկա։ Չկան *միասնական տեսություններ*, հստակորեն ձեւակերպված եւ ավելին՝ անաչառորեն ապացուցված օրինաչափություններ, եթե կուզեք՝ ապացուցված *թեորեմներ*, որոնք կարող էին գործիք դառնալ քաղաքական գործիչների ձեռքում։ Ինչպես եւ հակառակը։ Ներկայից հայտնի քաղաքական հարաբերությունների փորձը չի գործածվում, կամ գրեթե չի գործածվում հասկանալու համար պատմական որոշ դժվար ըմբռնելի փաստերը, որովհետեւ ձեւակերպված չեն բանաձեւեր, որոնց գործադրմամբ դա հնարավոր կլիներ անել։

Անշուշտ, միշտ էլ լինում են անկանխատեսելի հանգամանքներ եւ նույնիսկ եթե պատմագիտությունն ու քաղաքագիտությունը միասնական գիտություն կազմեին (ասենք՝ «քաղպատմություն»՝ «քաղտնտեսության» օրինակով), որն անաչառորեն կզարգանար եւ քաղաքական որոշումների հիմքը կդառնար, դա չէր կարող քաղաքական գործիչներին ապահովագրել սխալներից։ Ի վերջո, կողմերից մեկը հաղթում է, մյուսը՝ պարտվում։ Նույնիսկ թնդանոթի արկը ամենաճշգրիտ հաշվարկներից հետո հաճախ վրիպում է թիրախից, քանի որ միշտ էլ մնում են պատահական ներգործումներ՝ ջերմության, քամու եւ այլն։ Բայց փաստ է, որ տարեց տարի հրետանու ճշգրտությունն աճում է, մինչդեռ քաղաքագետները կատարում են նույն կարգի սխալներ, ինչ դարեր առաջ, ինչը եւ արձանագրված է պատմության Էությունը նվիրված տասնյակ ասույթներում՝ «պատմությունից դասեր չբաղելու» եւ «պատմության կրկնվելու» մասին։

Կարող է հարց առաջանալ. իսկ գուցե շփոթված են պատճառն ու հետեւամբը: Գուցե, եթե պատմագիտությունը ճիշտ նկարագրեր անցյալը, դրանից կբխեին այնքան տրամաբանական հետեւություններ, որ քաղաքական գործիչները չէին անտեսի դրանք եւ երկու գիտությունները ինքնաբար կմիավորվեին: Դա պիտի որ հնարավոր լիներ. չէ որ պատմաբանները տեսնում են կատարված իրադարձություններն ամբողջությամբ. դրանց եւ սկիզբը, եւ վերջը, այն է՝ քաղաքական հետեւանքները: Բնչ կարելի է պատասխանել. գուցե: Բայց ծնվում է նաեւ պատասխան հարց. իսկ գուցե դա անհնամբ է: Իրոք, եթե դա հնարավոր լիներ, մարդկային պատմության հազարավոր տարիների ընթացքում երեւի կարվէր դա:

Եկեք տեսնենք: Բնչը կարող է խանգարել պատմության ճիշտ շարադրանքին: Նախ եւ առաջ՝ կարելու իրադարձությունների մասին պահպանված տեղեկության պակասը: Բայց, թվում է, այդ խնդիրը կարող էր լուծվել. ի վերջո, բոլոր գիտություններին էլ հնում քիչ բան էր հայտնի, սակայն աստիճանաբար դրանք զարգացել են, եւ այժմ տեսնում ենք նույն այդ ֆիզիկայի կամ քիմիայի նվաճումները: Սակայն հայտնվում է երկրորդ, եւ շատ ավելի կարելու պատճառը. *ցանկության բացակայությունը*, ավելին՝ *իրականությունը թաքցնելու ցանկությունը*: Եւ իրոք, պատմությանը նվիրված ասույթների զգալի մասը վերաբերում է պատմագիտության կեղծությանը, ընդ որում՝ միտումնավոր կատարված կեղծիքներին. «*Պատմությունը գրում են հաղթողները*»:

Պատմագիտությունը որպես զենք

Եւ դա տրամաբանական է. ամեն ինչ չէ, որ կյանքում (այն էլ՝ քաղաքական), մեղմ ասած, գեղեցիկ է (դա նույնպես միշտ հիշում են պատմության մասին արտահայտվելիս), եթե հնարավոր է թաքցնել տգեղ պահերը, ապա հազիվ թե հաղթողը չօգտվի իրեն ընձեռնված հնարավորությունից: Բայց չէ որ պատմությունը գրվում է ոչ միայն կատարված դեպքերից հետո: Պայքարող կողմերը կարող են շարադրել նաեւ որեւէ սպասվելիք իրադարձությանը նախորդած դեպքերը: Ի վերջո, պատմությունը գրվում եւ հետագոյնում է անընդհատ՝ իրար հաջորդող իրադարձություններին զուգահեռ: Իսկ կարճ է ազդել տվյալ իրադարձության վրա դրան նախորդած դեպքերի այս կամ այն շարադրանքը: Այն էլ ինչպէ՛ս: Օրինակ, որեւէ երկիր մյուսի վրա հարձակվելուց առաջ (որքան առաջ. կարելու չէ գուցե 1, 10, 100, նույնիսկ՝ 1000 տարի առաջ, կախված, թե որքան հեռահար են ծրագրերը) տարածում է հարեւան երկրի պատմության այնպիսի շարադրանք, ըստ որի դրա այս կամ այն տարածքները, կամ նույնիսկ՝ ամբողջը, իբր, նախկինում այդ երկրին չեն պատկանել: Իսկ դրան

գուգահեռ, այդ հարեան երկրի ներսում նույնպես հայտնվում են պատմաբաններ, կամ, ավելի ճիշտ՝ «պատմաբաններ», ովքեր հետեւելով պատվիրատուի պահանջներին հրատարակում են «գիտական» աշխատություններ՝ նույնօրինակ եզրահանգումներով: Բնչ էք կարծում, ինչպե՞ս կազդեն այդ աշխատությունները երկրի պաշտպանների ոգու եւ մարտունակության վրա:

Այսինքն, պատմության շարադրանքը կարող է գործածվել, որպես Ձեռք. քարոզչական զենք: Եւ հենց սա է պատմագիտության եւ քաղաքագիտության տարանջատման պատճառը. պատմագիտությունը միշտ էլ ծառայեցվել է քաղաքական նպատակներին, յուրատեսակ «քաղպատմական» զենքի շրջանակներում:

Հնում այդ զենքը դանդաղ էր գործում, քանի որ ցածր էր տեղեկույթի հաղորդման արագությունը. դրա միջոցները սահմանափակվում էին բանահյուսությամբ, ձեռագրերով, եւ արտահայտվում էին ավանդազրույցների տարածման տեսքով: Դրանց ազդեցությունը տվյալ պահի քաղաքական դեպքերի վրա լուրջ նշանակություն կարող էր եւ չունենալ, թեեւ դրանց հնագույն օրինակների գոյությունը հուշում է, որ նման հնարքներ միեւնույն է գործածվել են, իսկ դարերի ընթացքում դրանց ուժն ավելի է աճել, շնորհիվ կուտակային «կումուլյատիվ» ազդանքի, քանի որ հնագույն ավանդազրույցների տեղեկությունը բազմաթիվ անգամ կրկնված, սկսում է ընկալվել, որպես փաստ՝ անկախ նրանից, թե այդպես եղել է, թե ոչ:

Իսկ տպագրության դարաշրջանից սկսած հաղորդակցման արագությունն այնքան աճեց, որ այդ կարգի միջոցները կարող էին ազդել նույնիսկ ընթացիկ քաղաքական գործընթացների վրա: Բացի այդ սկսեց օգտագործվել գիտության հեղինակությունը, որը կտրուկ աճել էր, շնորհիվ ճշգրիտ գիտությունների նվաճումների գործածման՝ տեխնիկայի բնագավառում:

Ինչպես ցանկացած այլ զենք, այս մեկն էլ կիրառում են պայքարող բոլոր կողմերը: Եւ ինչպես սովորական զինատեսակների դեպքում այստեղ նույնպես այն տարբեր ուժի եւ արդյունավետության է: Բնականաբար, քանի որ, տվյալ դեպքում գործ ունենք գիտական ոլորտի հետ, սպասելի է, որ այն առավել հզոր է զարգացած գիտություն ունեցող երկրներում, որոնք նախապես ձեռք են բերել ավելի մեծ *հեղինակություն* գիտության բնագավառում, որոնք ավելի մեծ *ներդրում* են կատարել թե՛ այդ հեղինակությունը բարձրացնելու համար, եւ թե, մեղմ ասած, կողմնակիցներ ձեռք բերելու՝ այլ երկրներում: Այսինքն առավել հարուստ երկրները: Մինչեւ վերջերս առավել հարուստ տնտեսություն եւ զարգացած գիտություն կար եւրոպական երկրներում եւ հենց դրանց գիտական

Կենտրոնները կարող էին առավել հաջողությամբ մշակել քաղաքական գրոհներ այս կամ այն երկրի վրա:

Սակայն ինչ կարգի գրոհների մասին է խոսքը: Ինչպես ասվեց, դրանք պիտի ուղղված լինեն թշնամու ոչ նյութական դիմադրողականության դեմ. հիմնականում՝ իրավաբանական եւ հոգեւոր բնույթի: Օրինակ, դրանք կարող են պարունակել պնդումներ, որոնց համաձայն.

- տվյալ պետության որեւէ մասը իրեն չի պատկանել նախկինում,
- իրեն չի պատկանել տվյալ ազգի որեւէ սբրություն,
- տեղերով փոխվում են բարեկամ եւ թշնամի ազգերը,
- վարկաբեկվում են հերոսները եւ գովերգվում դավաճանները,
- եւ այլն:

Ընդ որում, վարպետորեն կազմակերպված քաղաքատմական գրոհը կարող է նույնիսկ չպարունակել գիտական կեղծիք: Օրինակ, վերահսկվող «մասնագետների» միջոցով կարող է հանրության ուշադրությունը բեւեռվել մի պատմական իրողության վրա, որը տվյալ քաղաքական պահին ցանկալի կլիներ չհիշել. եւ հակառակը՝ կարող են լռության մատնվել ազգի հաղթանակները: Կամ կարող են օգտագործվել գոյություն ունեցող տարակարծությունները, որոնք բնորոշ են ցանկացած գիտությանը՝ ուռճացվելով եւ շեշտվելով անհրաժեշտ պահին: Կամ՝ քննադատվել անապացույց ավանդական պատկերացումները, փոխարինելով դրանք նույնքան անապացույց վարկածներով, ինչը հարված կհասցնի ազգային ինքնությանը:

Պատմագիտական զենքը եւ հայոց պատմությունը

Բնականաբար այդ զենքը կիրառվել եւ կիրառվում է նաեւ մեր ազգի նկատմամբ: Դրա հնարավոր նշույլները նկատելի են արդեն իսկ հնագույն ավանդազրույցներում, որոնք գրառել են մեր հնագույն պատմիչները: Իսկ վերջին մեկ-երկու դարերում քաղաքատմական զենքը կիրառվել է գրեթե անընդհատ:

Ստորեւ բերված են հայոց պատմության որոշ խնդիրներ, որոնք հեշտությամբ օգտագործվում են նման գրոհների դեպքում: Սակայն այստեղ եւ չեմ քննարկելու որոշակի լուծումներ, քանի որ նման հարցերը պետք է քննարկվեն բացառապես գիտական դաշտում, այլ ոչ թե՝ հրապարակախոսական հողվածի ձեւաչափով: Մեր օրերում քաղաքատմական գրոհներին ոչ գիտական ձեւաչափով հակազդումը ոչ միայն անօգուտ է, այլ նույնիսկ ուժեղացնում է գրոհի ուժը, տալով դրա նախաձեռնողներին լրացուցիչ փաստարկներ. «Տեսե՛ք,— ասում են,— հակառակ կարծիքը պաշտպանում են

միայն տգետները. ոչ մի մասնագետ, «գիտնական» նման կարծիքներ չի պաշտպանում»: Բնականաբար, լուրջամբ շրջանցելով այն հանգամանքը, որ հնարավորություն ունենալով վերահսկելու պատմագիտությանը հատկացվող միջոցները իրենք արդեն հոգ են տարել, որպեսզի մասնագետները հաստատեն բացառապես իրենց թելադրած դրույթները:

Եւ ցավոք, որպես կանոն, պարզվում է, որ ազգանպաստ կարծիքի կողմնակիցները իրոք կիսագրագետ մարդիկ են. գուցե լավագույն հայրենասիրական մղումներով առաջնորդվող, բայց՝ կիսագրագետ: Իսկ դա արդեն լրացուցիչ վարկաբեկում է այդ կարծիքը:

Բացի այդ, որեւէ չլուծված խնդրի շուրջ հակագիտական շարադրանքների բազմացումը վանում է դրա լուծումից առողջ եւ անկաշառ մասնագետներին, քանի որ նրանք չեն ցանկանում լուսանցքայինի համբավի արժանանալ, եւ խնդիրը ոչ միայն մնում է չլուծված, այլեւ դրան ոչ մի մասնագետ նույնիսկ մոտ չի գալիս: Իր հերթին, խնդրի լուծված չլինելը դրա շուրջ հավաքում է սիրողականների նորանոր ջոկատներ: Հաստատվում է արատավոր շրջան. չվստահելով տվյալ խնդրի պաշտոնական հայտարարված տեսությանը դրա «լուծմանը» լծվում են նորանոր «հայրենասերներ», ովքեր էլ ավելի խորն են թաղում դրա իսկական լուծման հնարավորությունը...

Ահա հայոց պատմության այդպիսի հանգուցային՝ քարոզչական ներուժ պարունակող եւ կեղծելու տեսակետից գայթակղիչ դրվագներից մի քանիսը (բնականաբար, դրանց թիվն ավելի մեծ է).

- հայ ազգի նախահայրենիքի հարցը,
- Հայկ նահապետի պատմականությունը,
- ուրարտական թագավորության կապը հայ ազգի հետ,
- նախաքրիստոնեական կրոնի էությունը,
- քրիստոնեության ընդունման հանգամանքները,
- հայոց այբուբենի ստեղծման հանգամանքները,
- Վարդանանց պատերազմի հանգամանքները,
- առանձին պետությունների դերը հայոց նորագույն պատմության մեջ,
- եւ այլն...

Նկատենք, որ գրոհներ կարող են լինել նաեւ պատմագիտության հարակից՝ պատմական լեզվաբանության եւ պատմական աշխարհագրության ոլորտներում, երբ վերլուծվում է, օրինակ.

- Հայոց լեզվի տեղը՝ հնդեվրոպական լեզվընտանիքում,
- Տիգրանակերտ մայրաքաղաքի գտնվելու վայրը,

- Ավարայրի ճակատամարտի վայրը,
- Եւ այլն...

Բերված խնդիրների մի մասը վերաբերում է հայ ազգի ձեւավորմանը եւ առնչությանը իր պատմական տարածքին: Այսինքն, արդյո՞ք հայ ազգը ձեւավորվել է իր անունը կրող տարածքում, թե եկել է այլ վայրերից. դրանից է կախված, թե արդյո՞ք հայ ազգը ինչ-որ բացառիկ քաղաքական իրավունքներ ունի իր պատմական տարածքի նկատմամբ, թե՞ այլ ազգերը նույն իրավունքներով կարող են հավակնել այդ տարածքին: Կա կարծիք, որ նման հարցադրումն անիմաստ է. քեզ է պատկանում այն տարածքը, որը դու կարող ես վերահսկել ռազմական ուժով: Գործնականում դա ճիշտ է, բայց բարոյական տեսակետից վիճակն այլ է. եթե տարածքը բռնն էր ի սկզբանե, դու ավելի եռանդաբար կարող ես այն պաշտպանել, ու դա քեզ լրացուցիչ ներուժ կհաղորդի: Հակառակ դեպքում դու հայտնվում ես զավթիչների նկատմամբ նույն կարգավիճակում. ժամանակին դու ես զավթել այն, հաղթելով նախորդ տերերին, այժմ քեզ են տապալում նոր զավթիչները, եւ տիրանում նույն հողին: Եւ թե՛ իրավաբանորեն, եւ թե՛ հոգեբանորեն քո դիրքերը արդեն խարխուլ են:

Խնդիրների մի մասն էլ այս կամ այն կերպ վերաբերում է քրիստոնեությանը, դրա դերին մեր ազգի պատմության ընթացքում ու, մասնավորապես՝ այլ ազգերի հետ հարաբերություններում. սա արդեն անմիջապես առնչվում է քաղաքագիտության ոլորտին: Միեւնույն ժամանակ, սրա հետ կապված հանգամանքները ազգային աշխարհայացքի, ինքնության մաս են դարձել, բարու եւ չարի, ազնիվի եւ անազնիվի գնահատման չափանիշ: Այդ պատճառով սրանք շատ դժվար է անաչառորեն վերլուծել, առանց վնաս հասցնելու ազգային ինքնությանը: Այս հարցերում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն եւ նրբանկատություն. յուրաքանչյուր վրիպում ինքնին հզորացնելու է մեր դեմ գործադրված քաղաքական զենքի ուժը:

Վերադառնալով այս նյութի սկզբին հիշենք, որ մենք ապրում ենք ապագայի անցյալում, հետեւապես մենք ենք ուղղորդում այն հրթիռը, որը տանում է մեր երկիրը դեպի ապագա: Փորձենք չսխալվել: Իսկ դրա համար պիտի հասկանանք, թե *իրականում* ինչ ուղեծրով է այդ հրթիռը հասել մեր օրերին, որպեսզի հաշվարկենք, թե ինչպես պիտի ճշտենք դրա ուղեծիրը, որպեսզի հայտնվենք մեզ համար բարենպաստ ապագայում: Դրա համար փորձենք քննադատորեն վերլուծել մեր պատմությունը, զանազանելու համար իրական պատմությունը թշնամական հորինվածքներից. հատկապես՝ 19-րդ դարում հավելված: Ինչպես ասել է մի խելացի մարդ. «*Հորինված պատմության հիման վրա, հնարավոր է կանխատեսումներ կատարել միայն հորինված ապագայի համար, իսկ մենք ապրելու ենք մեկ այլ ապագայում՝ իրական*»:

Միեւնույն ժամանակ, պետք է հիշել, որ պատմագիտության դեպքում կիրառելի է բժշկության հիմնարար սկզբունքը. *չվնասեն*: Եթե պատմական որեւէ իրադարձություն չունի վստահելի եւ համոզիչ բացատրություն, չարժե հարվածել ավանդական տարբերակին, սոսկ բացահայտելու համար դրա թույլ կողմերը: Այդպես, վիրաբույժը կարող է նախընտրել մարմնում օտար առարկան թողնելը, քան թե հեռացնել այն, վնասելով առողջ հյուսվածքները:

08.08.2023

ՀԱՅ ԱՉԳԸ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԳԱԼԱՐՈՒՄ

Այն, որ հայտնվել են ժամանակային գալարում ինձ համար բոլորովին անհավատալի էր: Բայց կասկած չմնաց, երբ Երեւանի 2800-ամյակի զբոսայգում մեկի ձեռքին տեսա համակարգիչ, որն այնքան բարակ էր, որ կարծես թե առհասարակ հաստությոն չուներ. այն հիշեցնում էր սովորական գրելու թուղթը, թեեւ զգալիորեն կոշտ: Համենայն դեպս, նա աշխատում էր դրանով, ինչպես սովորական համակարգչով:

— Բարեւ ձեզ, — ասացի: — Հետաքրքիր գործիք է: Կարող եմ նայել:

— Խնդրեմ, — հանգիստ պատասխանեց նա. հավանաբար, ես առաջինը չէի, որ դիմել էի այդ խնդրանքով: — Դուբայում եմ գնել: Վիետնամական է: Մատների համար մի փոքր տհաճ է. վրան կարծես յուղ քսած լինես: Բայց էժան է:

Տարօրինակ էր, որ այդ հագիվ կես միլիմետրանոց թաղանթն այդքան կոշտ էր, որ դրա կարծական ստեղնաշարով կարելի էր աշխատել, ինչպես սովորական սալիկի վրա: «Սա այսօրվա բան չէ», — մտածեցի: Համակարգչի սեղանը տարօրինակ էր. կարծես թե Ինդոնեզիա էր, բայց եւ՝ ոչ: Եւ արդեն չգարմացա, երբ կարդացի վարկածը՝ 15: Եթե ամեն երկու-երեք տարի մեկ լույս է տեսնում Նոր վարկած, ուրեմն սա պիտի ստեղծված լիներ, մոտավորապես, 2030-32 թվականներին: Ինչ էր անում այդ մարդն այստեղ՝ 2023-ի ամռանը, Երեւանում...

Սեղանի վրա նկատեցի տարբեր լեզուների տառերով պատված ծանոթ գուռը՝ ճեպագիտարանի պատկերակը: Կտտացրեցի: Բացված հավելվածը գրեթե նույն՝ ինձ ծանոթ տեսքն ուներ: Ես արդեն չէի կասկածում, որ այս համակարգիչը ապագայից է: Եւ արեցի, այն, ինչ կաներ, երեւի, յուրաքանչյուր հայը: Որոնման տողում մուտքագրեցի «Armenia»:

Այն ինչ, բացվեց ինձ համար բոլորովին անսպասելի էր: Նույնիսկ հաշվի առնելով, որ տարիների ընթացքում զբաղվել եմ քաղաքական վերլուծություններով եւ կանխատեսումներով: Բայց միեւնույն է...

Այդ եւ հաջորդ էջերի բովանդակությունը բերում են թարգմանաբար, քանի որ հայերեն տարբերակներ այդ էջերը չունենին:

Եւ այսպիսով:

Վերնագրի տակ գրված էր. «Արմենիա» եզրույթը հասցեագրվում է այստեղ: Այս անունն ունի նաեւ այլ կիրառություններ:

Արմենիա, *Երմենիստան, Երմենիստան Ռեսպուբլիկասի*: Պետություն Անդրկովկասում: Սահմանակից է Թուրքիային, Իրանին, Վրաստանին եւ Ադրբեջանին: Մայրաքաղաքը՝ Իրեվան: Բաղկացած է Աղրի, Թովուզ, Գյոլչա, Չանգեզուր, Կարաբաղ եւ Նախիջվան մարզերից: Պետական լեզուն՝ Երմենի: Բնակչության կրոնը՝ շիա մահմեդականություն:

Հոդվածում նշված էր, որ Երմենիստանը աշխարհի հնագույն պետություններից է: Այն եղել է Շումերի, Աքքադի, Աքեմենյան Իրանի ժամանակակիցը: Այս հնագույն թյուրքական պետությունը դիմադրել է այդ երկրների, ապա նաեւ դրանց հաջորդած՝ հռոմեական, արաբական, ռուսական զավթողական քաղաքականությանը: 1991 թվականին Ռուսական կոմունիստական կայսրության փլուզումից հետո լավ հնարավորություն ստեղծվեց հռչակելու անկախ պետականություն: Եւ 36 տարի տեւած պայքարի արդյունքում հաջողվեց վերաստեղծել ավելի քան 200 տարի առաջ կորցված անկախությունը, երբ Արեւմտյան Ադրբեջանի ոչ թուրքական փոքրամասնության անունից երկրի իշխանությունը զավթած կառավարությունը միջազգային հանրության ճնշման տակ ստիպված եղավ հեռանալ քաղաքական թատերաբեմից:

Այստեղ ես կանգ առա եւ երկար ժամանակ ոչինչ չէի անում: Ընդ որում՝ չէի Էլ մտածում. առհասարակ՝ ոչինչ: Հետո, մտքերս մի փոքր կենտրոնացնելուց հետո սեղմեցի այլ կիրառությունների հղումը: Ի թիվս այլ կիրառությունները կարդացի.

Արմենիա՝ Պատմական աշխարհագրական տարածք

Արմենիա՝ սատրապություն

Արմենիա՝ ծխախոտի մականիշ

Արմենիա՝ ԽՍՀՄ վարչական միավոր

Արմենիա՝ քաղաք Կոլումբիայում

Ապա անցա «Երմենի» լեզվին նվիրված էջը:

Էջի վերելում նշված էր. «Երմենի» եզրույթը հասցեագրվում է այստեղ: Չշփոթել հնդեւրոպական «արմենիան» լեզվի հետ, որի կրողները բնակվում են որոշ երկրներում:

Այլ անվանումներն են՝ «երագերի», «արեւմտաադրբեջաներեն»:
Երմենիստանի պետական լեզուն է: Երմենի լեզվով է խոսում երկրի բնակչության
87 տոկոսը: «Թյուրքական լեզուներից մեկն է եւ պատկանում է դրանց հարավ-
արեւմտյան խմբին: Խոսողների թիվը աշխարհում՝ 5.7 միլիոն է...

Ես շարունակում էի լռել... Ապա մտքերս կրկին վերադարձան այս
տարօրինակ համակարգին: Իսկ ինչպե՞ս է այն սնուցվում, մտածեցի. մի՞թե
մարտկոցը կես միլիմետր հաստություն ունի:

— Սրա յուրաքանչյուր կետը առանձին համակարգիչ է,— ասաց Նա.
հավանաբար դեմքս մի մեծ հարցական նշանի էր վերածվել:— Յուրաքանչյուրն
ունի իր մշակիչը, հիշողությունը, արեւային մարտկոցը: Բոլորը միասին կազմում
են միասնական պատկեր:

— Հիանալի հարմարանք է («համակարգիչ» դրան արդեն դժվար էր ասել.
ավելի ճիշտ կլիներ ասել «նյութ»): Հետաքրքիր է, երբ հնարավոր կլինի այստեղ էլ
ձեռք բերել դրանից:

— Կարող եմ տալ մի փոքր կտոր,— ասաց Նա: Ապա ծալեց
«համակարգիչը», եղունգով տրորեց ծալքը, եւ պատռելով, ինչպես սովորական
թուղթը, տվեց ինձ մոտ 15-ը 20 սանտիմետրի վրա մի կտոր: Կանխելով իմ
չինչաձ հարցը Նա բացատրեց. — Սրա յուրաքանչյուր կտորը պարունակում է
ամենը, ինչ կա ամբողջի մեջ: Պարզապես մի փոքր դանդաղ է աշխատելու:

Ես նրան շնորհակալություն հայտնեցի, այդ կտորը դրեցի գրպանս, ու
հրաժեշտ տալով՝ հեռացա, շտապելով տուն. անհամբերաբար ուզում էի
հանգիստ պայմաններում կարդալ եւ իմանալ, թե 2030-ականներում ովքեր են
ապրելու Երեւանում, եւ որտեղ ենք լինելու մենք, հայերս: Ինձ միշտ հոռետես են
համարել եւ գուցե՝ ոչ անհիմն: Ես միշտ էլ ասել եմ, որ եթե այսպես գնա, ապա
մոտ ապագայում Հայաստանը էլ չի լինի: Բայց որ դա կարող է լինել արդեն մի 7-8
տարուց, ես չեի պատկերացնում...

Միակ բանը, որ հույս էր ներշնչում (այդ պահին ես լավատեսության խիստ
կարիք գգացի) այն էր, որ, ասում են, երբ տեսնում ես ապագան, այն փոխվում է:
Քանի որ, շնորհիվ ժամանակային գալարի, արդեն պարզ էր, թե ինչպիսին է
լինելու մեր մոտ ապագան, հույս առաջացավ, որ գուցե այն կարող է եւ այլ
կերպարանք ստանալ: Մնում էր իմանալ, թե որքանի՞վ՝ այլ, եւ ի՞նչ ուղղությամբ է
լինելու տարբերությունը...

28.07.2023

ՆՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Օրենքները փակել են դռները բոլոր
Ռուբեն Չախվերդյան

Ներկայիս իրավական համակարգը սկզբունքներով գալիս է հռոմեական դարաշրջանից, իսկ գուցե եւ՝ էլ ավելի վաղ ժամանակներից. այսօր գործող որոշ դրույթներ կարելի է տեսնել Համաժողովրդի օրենքներում: Դա ինքնին վատ չէ, քանի որ, մի կողմից, դրույթների անփոփոխությունը վկայում է դրանց իսկության մասին, իսկ մյուս կողմից՝ բարձրացնում դրանց հեղինակությունը: Սակայն մարդկային հարաբերությունները վերջին դարում էապես փոխվել են՝ կյանքի ցուցչային օրինաչափությամբ արագանալու հետեւանքով, եւ դրանք պիտի արտահայտվեն իրավունքի նոր սկզբունքներում. հները, հաճախ, կիրառելի չեն: Սակայն այսօր դրանք մի կերպ կարկատում են, հավելելով նոր ենթակարգեր, որոնց թիվն աճում է ձնագնդի պես (նույն այդ ցուցչային կարգով):

Դարերով իրավագետները շարունակում են անպտուղ վեճերը իրավունքի մասին, բայց այսօր էլ ամենահիմնարար հասկացությունների համար այդ «գիտությունը» չունի հստակ ձեւակերպումներ, չունի *հիմնադրույթների անաչառ համակարգ*, ինչպիսիք են, օրինակ, Էկկլիդի աբսիոմները՝ երկրաչափության համար: Արդյունքում իրավագետները ցանկացած բառով կարող են ձեռնածություն կատարել, ստանալով իրենց ուզած եզրակացությունը: Կարելի է առարկել, որ յուրաքանչյուր գիտություն ունի իր առանձնահատկությունները, կամ որ այլ գիտություններում նույնպես կան բազմաթիվ չլուծված խնդիրներ: Սակայն փաստը որ, բացի Էկկլիդի երկրաչափությունից ստեղծված են նաեւ Ռիմանի եւ Լոբաչևսկու երկրաչափությունները, կամ այն, որ, օրինակ, վաղը կարող է պարզվել, որ Էյնշտեյնի տեսությունը սխալ է, չի շոշափում սովորական մարդու շահերը, նրա ունեցվածքի, առողջության եւ նույնիսկ՝ կյանքի հեռանկարները:

Եւ մինչ ընթանում են բոլոր այդ վեճերը, իրավագիտական համակարգերը շարունակում են միայն ընդարձակվել: Իսկ որեւէ մեծության ցուցչային ընդարձակումն ունի այն հատկությունը, որ սկսած մի պահից այն դառնում է անվերահսկելի. դրա նկարագրության գծապատկերը գրեթե ուղղաձիգ ուղղվում է դեպի անվերջություն: Եւ համակարգի նման զարգացումը կարող է կանխվել միայն այն կարգավորելու, կամ՝ դրա քայքայման արդյունքում: Այսպես, Միացյալ Նահանգների իրավական համակարգը արդեն մոտ է այդ ուղղաձիգ գոտուն. ամերիկյան օրենքների՝ *Մեծ օրենսգրքի* այժմյան ծավալը գերազանցում է 140 մլն բառը, իսկ Նահանգների օրենսդրությունները, Նախագահի եւ Նահանգապետների հրամանագրերը հաշված, բառերի գումարային թիվը մոտ է 1 միլիարդին:

Իհարկե, կարելի է ասել, որ դա մեզ չի վերաբերում, որ այլ երկրներում վիճակն այդքան սոսկալի չէ, սակայն, մի կողմից՝ Նոյն ուղու վրա է, իսկ մյուս կողմից, ԱՄՆ-ը լինելով այս պահին աշխարհի ամենաազդեցիկ երկիրը, հաճախ մյուս երկրներին է փաթաթում իրավունքի մասին իր պատկերացումները: Կարելի է նաեւ առարկել, որ այդ օրենքների եւ իրավական այլ ակտերի մեծ մասի գործողությունը չի վերաբերում սովորական մարդուն, կամ գործել է սահմանափակ ժամանակահատվածում, սակայն յուրաքանչյուր դեպքում համոզվելու համար անհրաժեշտ է ծանոթանալ այդ փաստաթղթերին, մինչդեռ տասնյակ միլիոնավոր բառ ՈՉ ՈՔ կարդալ չի կարող՝ սկզբունքորեն: Բայց եթե օրենքը անհնար է կարդալ, դա Նոյնն է, որ այն չկա: Այսինքն օրենքների ահռելի քանակությունը հավասարազոր է դրանց բացակայությանը, այն է՝ անօրինականությանը: *«Օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից»*. այս սկզբունքը հայտնի է բոլորին: Սակայն եթե ֆիզիկապես անհնար է կարդալ օրենքը, ուրեմն յուրաքանչյուրը կարող է պատասխանատվության ենթարկվել (այն է՝ պատժվել) իր համար բոլորովին անսպասելի պահին: Մինչդեռ այսօր էլ հաճախ խոսում են որեւէ բնագավառի օրենսդրական չկարգավորվածության մասին, կոչ անելով օրենսդիր մարմիններին ստեղծել լրացուցիչ օրենքներ:

Հնարավոր է արդյոք լուծել այս խնդիրը: Չեմ կասկածում. հնարավոր է: Բայց կասկածում եմ, որ լուծելու ցանկություն կլինի, քանի որ, երբ չի գործում «օրենքի ուժը», հաստատվում է «ուժի օրենքը»: Իսկ ուժը իշխանավորների ձեռքին է. դր իշխանավորը կիրառարկի իր իրավունքներից հանուն վերացական արդարության: Նա մինչեւ վերջին պահը կփորձի պահպանել «օրենքների» առկա խառնաշփոթը, քանի որ դա իրեն ձեռնտու է, քանի որ այսօր ռուսական խոսքով ասած. *«Օրենքն առեղ է. կտանի ուզածը տեղը»*:

Սակայն այն աներեւակայելի դեպքի համար, երբ նման ցանկությունը ինչ-ինչ քաղաքական գործընթացների արդյունքում գուցե ի հայտ գա, ուզում եմ առաջարկել լուծումը: Դրա հիմնական կետը պիտի լինի հենց վերոհիշյալ իրավիճակից բխող պայմանը: Այն է.

Օրենքը պիտի հնարավոր լինի հիշել ամբողջությամբ:

Օրենսդրության ծավալը չպիտի գերազանցի մի որոշակի շեմը, որից հետո այն անհնար կլինի հիշել ամբողջությամբ: Այսինքն այն պիտի լինի մոտավորապես դպրոցական մի դասագրքի ծավալով:

Բացի այդ, ըմբռնելի լինելու համար անհրաժեշտ է, որ օրենքն ունենա ստորակարգային՝ բրգաձեւ կառուցվածք: Անշուշտ, այժմյան համակարգը նույնպես որոշ չափով բրգաձեւ է, սակայն այդ հատկությունը պիտի բացարձակեցվի: Օրենքի հիմքում (կամ գագաթում. կախված դիտակետից) պիտի լինեն սահմանափակ թվով դրույթներ, որոնց զգալի մասը պարունակվում է 10 պատվիրաններում: Ընդ որում դրանցից ամենահիմնականը (որից այս կամ այն կեպ բխում են մյուսները), դա «Մի գողացիր» պատվիրանն է: Իրոք, «Մի սպանիր» պատվիրանը կարող է ներկայացվել, որպես «Մի խլիր (մի՛ գողացիր) ուրիշի կյանքը», «Սուտ վկայություն մի՛ տուր» պատվիրանը, որպես «Մի գողացիր ճշմարտությունը», «Պատվիր քո հորն ու մորը», որպես «Մի գողացիր պատիվը» եւ այլն: Վերջապես, մեր օրերում, երբ մարդու ազատությունը սահմանափակելու նոր՝ թվային ձեւեր են հայտնվել, ավանդական պատվիրաններին իմաստ ունի հավելել եւս մեկը. «Մի հետեւիր», որը պիտի բացառի մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության խախտումը՝ տեսախցիկների եւ համակարգչային եղանակների միջոցով:

Թերեւս, օրենսդրական հիմքում՝ ***առաջին մակարդակում*** կարող են լինել հետեւյալ պատվիրանները:

Մի գողացիր

Մի սպանիր

Մի ստիր

Մի անպատվիր

Մի հետեւիր

Այս պարզ, եւ բոլորին հասկանալի 5 դրույթները պիտի գտնվեն օրենսդրական համակարգի հիմքում եւ ունենան անմիջական գործողության ուժ, այսինքն հնարավոր չլինի դրանք խեղաթյուրել օրենսդրական որեւէ եղանակով: Միեւնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ դրանցից յուրաքանչյուրը կարող խախտվել պետության կողմից՝ ***դատարանով որոշված***

դեպքերում: Օրինակ, «Մի գողացիր» պատվիրանը կարող է խախտվել, տուգանք նշանակելու դեպքում, «Մի սպանիր»-ը՝ հանցագործին մահապատժի դատապարտելու դեպքում եւ այլն:

Օրենսդրության **երկրորդ մակարդակը** պիտի կազմեն անձանց իրավունքները՝ մոտ 2-3 էջի ծավալով: Ընդ որում, բացի անհատների իրավունքներից պիտի ներառվեն նաեւ անհատների խմբերի՝ ընտանիքի, ընկերությունների, կազմակերպությունների իրավունքները, այդ թվում եւ՝ ազգերի:

Վերոհիշյալ հինգ պատվիրանների եւ իրավունքների շրջանակներում պիտի կազմվի օրենսդրության **երրորդ մակարդակը**՝ երկրի Սահմանադրությունը, որում պիտի դիտարկվեն սոսկ ամենահիմնական հարցերը, կապված պետության գործունեության հետ: Այսինքն, այն պիտի լինի շատ սեղմ. մերօրյա սահմանադրություններից շուրջ 10 անգամ սեղմ (օրինակ, ՀՀ սահմանադրության ծավալը ավելի քան 70 էջ է):

Վերջապես **չորրորդ մակարդակում** պիտի գտնվի բուն օրենսգիրքը՝ 500 էջից ոչ ավել, որը պիտի ներառի թե՛ քաղաքացիական եւ թե՛ քրեական հոդվածներ: Ընդ որում, այդ ծավալը պիտի հնարավոր չլինի ավելացնել: Այսինքն, եթե Նոր դրույթ ավելացնելու խնդիր առաջանա, դա պիտի արվի բացառապես նախկինում եղած ինչ-որ դրույթի հեռացման կամ (եթե իմաստի պահպանման տեսակետից դա հնարավոր է)՝ կրճատման հաշվին:

Կարող է հարց առաջանալ, ինչպե՞ս պիտի այդ դեպքում իրագործվի երկրի կառավարումը, այդ թվում՝ Նոր հրամանագրերի եւ օրենքների արձակումը. այլապես քաղաքացին միշտ կարող է հայտարարել, որ, օրինակ, կառավարության վերջին որոշումներին ծանոթ չե: Խնդիր չկա. դա ընդամենը նշանակում է, որ կառավարությունը եւ օրենսդիրը չպիտի բավարարվեն որոշումների եւ օրենքների հրապարակմամբ, այլ պիտի հասնեն նրան, որ յուրաքանչյուր քաղաքացի, ում իրավական այդ փաստաթուղթը վերաբերում է, *պատշաճ ծանուցված լինի* եւ այդ փաստը հաստատված լինի գրավոր: Համապատասխան եղանակները պետք է մշակվեն: Համենայն դեպս, իշխանությունները պիտի իմանան, որ սեփական պետքերից հորինած «օրենքը» ինքն իրեն օրինական ուժի մեջ չի մտնում «հրապարակման պահից», եւ այդ ուղղությամբ լրացուցիչ աշխատանք պիտի կատարվի: Մյուս կողմից դա կնպաստի ժողովրդի ներգրավմանը երկրի կառավարման գործին. այլապես քաղաքացիները հաճախ չեն էլ նկատում, երբ «ընդունվում» են իրենց շահերը ոտնահարող «օրենքներ», իսկ հետո արդեն բողոքելը ուշ է լինում:

Հրապարակահոսական հոդվածի ձեւաչափը հնարավորություն չի տալիս անդրադառնալու մի շարք այլ կարեւոր սկզբունքների քննարկմանը: Այդ թվում, այնպիսի սկզբունքների, որոնք կբացառեն օրենքների «բազմացումը»: Այսպես, պիտի բացառվի օրենքների ստեղծումն այնպիսի նյութի վերաբերյալ, որն արդեն դիտարկված է ավելի ընդհանուր օրենքով: Օրինակ, երեխաների իրավունքները չեն կարող դիտվել որպես մի նոր առարկա, քանի որ արդեն գոյություն ունեն մարդու իրավունքները կարգավորող դրույթներ (երեխան նույնպես մարդ է):

Նաեւ անհրաժեշտ է անդրադարձ ավանդական այնպիսի հասկացություններին, ինչպիսիք են. «Ամեղության կանխավարկածը», «Օրենքի հետադարձ ուժը» եւ այլն: Կամ օրենքների կիրառման կարգը ռազմական դրության ժամանակ. անհրաժեշտ է համակարգ, որը հնարավորություն կտա բացառել անօրինականությունը ռազմական իշխանությունների կողմից, բայցեւ հնարավորություն չի տա պետությանը չհայտարարել ռազմական դրություն, երբ դրա անհրաժեշտությունը բացահայտ կլինի:

Անհրաժեշտ է նաեւ հատուկ անդրադարձ «օրենք» հասկացության եռությանը: Օրենքը մի բան է, որն արտահայտում է բնության կառուցվածքը, եւ որպես այդպիսին չի ենթարկվում մարդու կամքին. այն հայտնագործվում է՝ հետազոտության արդյունքում, ինչպիս, օրինակ, ֆիզիկայի կամ քիմիայ օրենքները: Մարդկային հասարակությունը որպես բնության մի մաս նույնպես կառավարվում է օրենքներով: Օրենքներ կարելի համարել նույն այդ պատվիրանները, մարդու իրավունքները: Մինչդեռ սովորաբար «օրենսդիրի» հորինած որոշումները թյուրիմացաբար նույնպես «օրենք» են հորջորջում: Իմաստ ունի դրանց հատկացնել հատուկ եզրույթ, օրինակ՝ «կարգ»: Թեեւ այս հոդվածի շրջանակներում դրանք ավանդաբար նույնպես «օրենք» են կոչված:

Դատական համակարգի մասին

Վստահ եմ, որ «մասնագետ» իրավաբանները կծիծաղեն. այս ինչ անգրագիտություն ու սիրողականություն է. իրավագիտությունը այնքան նրբություններ ունի: Սակայն իրենց կարծիքը ոչինչ չարժե, քանի որ փաստացիորեն հենց այդ «նրբություններն» են դարձել ձեռնածությունների եւ սողանցքների աղբյուր եւ բերել այսօրվա «օրինականացված անօրինականության» վիճակին: Դա չի նշանակում, թե այդ մասնագետների գիտելիքները բոլորովին անօգուտ են. ինչ էլ լինի, իրավական դաշտի խնդիրները ողջ մանրամասնությամբ հայտնի են միայն իրենց, սակայն նոր իրավական

համակարգի մշակման ընթացքում նրանք պիտի գործեն նոր սկզբունքների շրջանակներում:

Մյուս կողմից, եթե ստեղծվել են հազարավոր օրենսդրական փաստաթղթեր դրանք արվել են ինչ-որ խնդիրներից ելնելով. ուրեմն ինչպե՞ս պիտի լուծվեն դրանք նոր պայմաններում: Դրա միակ լուծումը ես տեսնում եմ *դատական համակարգի լիազորության տիրույթի ընդլայնման* մեջ: Այսօր դատարանը դարձել է վերոհիշյալ խառնիճաղանչ իրավական դրույթների շրջանակներում եզրակացություններ ձեւակերպող մարմին, այլ ոչ թե արդարություն հաստատող. սեփական կարծիք դատավորը չունի: Բացի այդ, ինչպես հայտնի է, «*Ով վճարում է, նա էլ պատվիրում է երաժշտությունը*»: Դա նշանակում է, որ եթե դատավորին վճարում է պետությունը, ապա դա կանխորոշում է դատավճիռը: Այսպես կոչված «*ժողովրդավարական*» երկրների քարոզիչները սիրում են խոսել «*իշխանության երեք թելերի անկախության*» մասին: Գեղեցիկ գաղափար է: Բայց ի՞նչ անկախություն կարող է լինել, եթե բոլորը վարձատրվում են նույն *քսակից* (ֆրանսերեն՝ *bougette*): Այսպիսով, նոր իրավական համակարգի կարեւոր դրույթներից մեկը պիտի լինի.

Դատական համակարգի անջատումը պետությունից:

Իսկ այդ դեպքում ինչպե՞ս պիտի վարձատրվի դատավորի աշխատանքը: Շատ պարզ. *դատավորները պետք է ինքնաֆինանսավորվեն*, այն է՝ պիտի ստեղծվի *դատավորների ազատ շուկա*, իսկ նրանք ծառայությունների դիմաց պիտի վճարեն *միայն ու միայն* վիճաբանող կողմերը:

Ընդհանուր գծերով, համակարգը կարող է գործել հետեւյալ կերպ. վիճաբանող կողմերը դիմում են փոխադարձաբար ընդունելի դատավորի: Յուրաքանչյուրն առաջարկում է դատավորին ծառայության դիմաց որոշակի գումար՝ պետության կողմից նշանակված նվազագույն չափից ոչ պակաս: Դատավորը ստանում է երկու կողմերից առաջարկված գումարներից նվազագույն չափը: Եթե այդ չափը դատավորի համար ընդունելի չի լինում, նա մերժում է առաջարկը: Եթե երկու դատավոր գրավոր կերպով մերժում են առաջարկը, ապա երրորդը պարտավոր է դատել պետության կողմից սահմանված նվազագույն սակագնով:

Այդպիսի համակարգի դեպքում վիճաբանող կողմերը շահագրգռված են լինելու դիմել այն դատավորին, ով ավելի արդար է իրեն դրսևորել նախորդ գործերում: Արդար լինելու համբավի արժանացած դատավորները կկարողանան ավելի բարձր գումար ակնկալել իրենց հաճախորդներից, ինչը կնպաստի դատական համակարգի ինքնամաքմանը:

Վիճաբանող կողմերից մեկը կամ երկուսն էլ, կարող է լինել պետական այս կամ այն մարմինը: Այսինքն, պետությունը չի ունենալու արտոնություն եւ ազդեցության լծակներ: Բնական է, որ իր օգտին վեճը լուծելու համար կողմերից մեկը (այդ թվում եւ պետությունը) կարող է դատավորին գաղտնիորեն լրացուցիչ գումար խոստանալ (այն է՝ կաշառք): Կարգ է, ապօրինություններ միշտ էլ հնարավոր են: Սակայն այս դեպքում, կաշառքի ընդունումը ինքնին հանցագործություն լինելուց բացի նաեւ վնասելու է դատավորի հեղինակությանը եւ շշուկներն այդ մասին կրճատելու են նրա հաճախորդների թիվը՝ կրկնակի հարված հասցնելով իրեն:

Կողմերը կարող են համաձայն չլինել տվյալ դատավորի վճռին, եւ կարող են դիմել այլ դատավորների: Եթե երկրորդ դատավորը հաստատում է առաջին դատավորի վճիռը, այն համարվում է ուժի մեջ մտած: Եթե հակասում է, ապա կողմերը կարող են դիմել երրորդ դատավորին. նրա կայացրած որոշումը արդեն վերջնական է համարվում, եւ պետությունը պարտավորվում է ապահովել դրա իրականացումը:

Դատական վճիռներից, որոշումներից, եւ դատական այլ փաստաթղթերից կազմվում են նախադիպային տվյալների շտեմարաններ, որոնցից կարող են օգտվել այլ դատավորներ եւ, պարզապես, քաղաքացիներ: Սակայն իրավաբանական ուժ այդ նախադեպերը ունենալ չեն կարող. դատավորը ազատ պիտի լինի կայացնել ցանկացած որոշում, որը նա կհամարի արդար՝ տվյալ դեպքում:

Եւ սա եւս մի կարեւոր սկզբունք է. դատավորը իրավասու է կայացնել ցանկացած *խելամիտ* վճիռ, որն իր կարծիքով արդար կլինի, այն է՝ իրավիճակին համարժեք: Սա կվերացնի այն վիճակը, երբ, օրինակ, տույժ սահմանելիս դատավորը ստիպված է ընտրություն կատարել միայն խիստ սահմանափակ պատժաձեւերի միջեւ. *տուգանք, հարկադիր աշխատանքներ, ազատազրկում*, մինչդեռ կյանքը շատ ավելի բազմազան իրավիճակներ է ստեղծում: Կարճ կարելի է ձեւակերպել դա, որպես «*ակն ընդ ական*», այն է՝ նույնականության՝ «*տալիոնի*» սկզբունքի վերականգնում: Իրավաբանները հրճվում են նրանից, որ այդ սկզբունքը մեր օրերում չի կիրառվում, համարելով այն «բարբարոսական», եւ նախընտրում «համարժեքության» սկզբունքը, չցանկանալով նկատել, որ նման մոտեցումը ամբողջ աշխարհում բերել է հանցագործությունների աննախադեպ աճին, որի առջեւ արդեն անգոր են իրավապահ մարմինները: Երբեմն հնչող մտավախությունը, թե «ակն ընդ ական» սկզբունքի գործածումը բոլորին կույր կդարձնի, սոսկ հռետորական դատարկախոսություն է: Գոնե այն պարզ պատճառով, որ այն պետք է չէ տառացիորեն հասկանալ, եւ դատավորը մեծագույն հավանականությամբ այդ կարգի դեպքերում ավելի արդարացված

կհամարի այլ վճիռներ: Խոսքը սոսկ հնարավորության մասին է, այլ ոչ թե՝ պարտադրանքի. շարադրվող սկզբունքները ուղղված են դատավորների ինքնուրույնության բարձրացմանը: Վստահորեն կարելի է ասել, որ այն դատավորը, որը տառացիորեն կհետեւի «նույնականության» սկզբունքին մեծ հեղինակություն չի վայելի, ուստի եւ չի ունենա հաճախորդ:

Երկու խոսք ազատագրկման մասին, որպես պատժամիջոցի: Հազարավոր անգամ ասվել է, որ ազատագրկումը բոլորովին անարդյունավետ եւ, ավելին՝ վնասակար երեւոյթ է: Ազատագրկման վայրերում գտնվելը դեպքերի մեծ մասում ոչ միայն չի նպաստում հանցագործի զղջմանը, այլեւ ավելի է խորացնում նրա կապը հանցագործ աշխարհի հետ: Բանտերն ու գաղութները վերածվում են նոր հանցագործությունների դարբնոցի, միաժամանակ հսկայական գումարներ կլանելով՝ բյուջեից: Փաստորեն, օրինապաշտ քաղաքացիները եւ, մասնավորապես՝ տուժածները, իրենց հաշվին կերակրում են հանցագործներին, չհաշված սպասարկող անձնակազմի վարձատրումը: *Նոր իրավունքի* շրջանակներում ազատագրկման տիրույթը պետք է սահմանափակվի *Նախաքննության* անհրաժեշտությամբ, ինչպես նաեւ դեպքերով, երբ դատավորը կգտնի, որ արդարությունը պահանջում է որպես պատժամիջոց նշանակել հենց ազատագրկումը:

Այսպիսով, *Նոր իրավագիտության* հիմնարար սկզբունքները հետեւյալն են.

1. Ստորակարգային կառուցվածքով սեղմ օրենսդրություն

Բխում է «*Օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից*» սկզբունքից.

- Պատվիրաններ
- Իրավունքներ
- Սահմանադրություն
- Օրենսգիրք
- Կառավարության որոշումներ եւ դատական նախադեպեր:


Առաջին չորսը կազմում են բուն օրենսդրությունը եւ դրանք պարտավոր են իմանալ բոլորը: Դրանք պիտի դասավանդվեն արդեն իսկ դպրոցի ավագ դասարաններում: Վերջին խումբը նեղ մասնագիտական է: Որքան լավ տիրապետեն դրանց իրավաբանները՝ դատավորները, փաստաբանները, այնքան ավելի լավ մասնագետներ կլինեն, եւ այնքան լավ կվարձատրվեն, բայց սովորական մարդը կարող է դրանց ծանոթ չլինել՝ առանց իր համար իրավաբանական հետեւանքների:

2. Դատավորների ազատ շուկա

Բխում է «Ով վճարում է, նա էլ պատվիրում է երաժշտությունը» սկզբունքից, այն է՝ արդարադատության անաչառության պայմանից. ոչ մեկին այնքան պետք չէ արդարությունը, որքան վիճաբանող կողմերին: Ուստի հենց նրանք եւ միայն նրանք պիտի վճարեն դատավարության համար, այլ ոչ թե ինչ-որ երրորդ կողմ, ի դեմս, օրինակ, պետության: Պետությունը վճարում է, եթե ինքն է լինում դատավարության կողմ:

09.07.2023

ԵՐՐՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹՆԱԺԱՄԸ՝ 30 ՏԱՐԻ ԱՆՑ



Շուրջ 30 տարի առաջ «Հայաստանի Հանրապետություն» թերթում (2 հունիսի, 1994 թ., հինգշաբթի, թիվ 104 (968)) լույս տեսավ իմ [«Երոպական քաղաքակրթության գազաթնաժամ»](#) հոդվածը, «Ապագայի գուշակման ոչ հավակնոտ փորձ» ենթավերնագրով: Դրանում ես, հենվելով իմ կողմից նկատված պատմական օրինաչափությունների վրա կատարել էի որոշ կանխատեսումներ: Հետագայում ես անդրադարձա այդ խնդրին նաեւ 2000 թ. «Կառավարում» հանդեսի [էջերին](#): «Գազաթնաժամ» եզրով ես թարգմանել էի «պիկ ժամ» հասկացությունը, իսկ հոդվածի հիմքում այն դիտարկումս էր, որ մարդկային պատմությունը ընթանում է ոչ հավասարաչափ. ակներեւ է

պատմության արագացում, որն արտահայտվում է համաշխարհային նշանակության հեղափոխությունների միջեւ ժամանակահատվածների կրճատմամբ՝ նվազող երկրաչափական հարաճի օրենքով՝ մոտ 0.25 գործակցով (հետագայում նկատվեց դրա կապը՝ Ֆիբոնաչիի թվի՝ «ոսկի հատույթի» հետ՝ $\phi \approx 1.62$. գործակցի իրական արժեքն է $1/\phi^3 \approx 0.24$) եւ դա հնարավորություն է տալիս հաշվարկել համաշխարհային նշանակության հաջորդ հեղափոխությունը: Օրինաչափությունը եւ նկատել էի դեռեւս 1984-ին եւ ստացվել էր, որ մոտակա ժամանակներում պիտի այդ հեղափոխությունը տեղի ունենար: Ինչը եւ եղավ՝ ԽՍՀՄ-ի փլուզման եւ կոմունիզմի գաղափարաբանության տապալման տեսքով: Ցավոք, այն ժամանակ եւ այդ օրինաչափության մասին ոչ մի նյութ չէի հրապարակել (եւ, պարզ է. չէի էլ կարող դա արած լինել): Բայց ահա 1994-ին որոշեցի, որ իմաստ ունի այդ մասին գրել, քանի որ, եթե օրինաչափությունն իրական է, ապա ինչ-որ լուրջ բան պիտի տեղի ունենար մոտակա երկու տասնամյակների ընթացքում (թերեւս, այժմյան մեծագույն կայսրություններից որեւէ մեկի՝ ԱՄՆ, Եւրամիության, կամ կրկին՝ Ռուսաստանի փլուզման տեսքով) եւ հետաքրքիր կլիներ ստուգել նկատված օրինաչափության իսկությունը, ըստ որի այն պիտի զուգամիտվեր 2016-ին:

Ովքեր ծանոթ էին հոդվածիս՝ ժպիտով էին վերաբերում այդ կանխատեսումներին: Ժպիտների որակը Էապես փոխվեց 2008—2010 թվականներին, երբ ընթացավ համաշխարհային ճգնաժամը: Սակայն կայսրություններ մնացին գրեթե անփոփոխ (բացառությամբ՝ Բրեքզիտի, ինչը, բոլոր դեպքերում, փաստ է) եւ ժպիտները վերադարձան սովորական վիճակին: Մինչդեռ հիշյալ հոդվածները ուշադիր ընթերցածները պիտի նկատեին, որ կայսրությունների փլուզումից բացի եւ գրել էի նաեւ գաղափարախոսությունների (եւ դրանց նախորդող տեղեկատվական միջոցների՝ գիր, տպագրություն, ռադիո, համացանց եւ այլն) հեղափոխական փոփոխման մասին:

1994-ի հոդվածում ասված էր հետեւյալը. «Շուտով կյանքն ամենայն հավանականությամբ կկայունանա: 2001 թվին Եւրոպան, հավանաբար, խաղաղ կտոնի Նոր հազարամյակի սկիզբը... Բայց ընդամենը վեց տարի անց ամեն ինչ կխառնվի եւ այդ գաղափարախոսական խառնաշփոթը կշարունակվի որոշ ընդմիջումներով մինչեւ 2015 թվականը, որը կարելի է անվանել Եւրոպական քաղաքակրթության գազաթնաժամ: Ինչպես ասացինք, այստեղ օրինաչափությունը խզվում է, եւ ինչ կլինի դրանից հետո, կարելի է միայն ենթադրել»:

Եղմով գաղափարախոսական խառնաշփոթ: Այն էլ՝ ինչ... Այսօր աշխարհում իրոք տիրում է գաղափարաբանական քաոս, պայմանավորված

միջհեղափոխական ժամանակահատվածների ծայրաստիճան կրճատմամբ: Այսօր զուգահեռաբար (նույնիսկ միեկնույն երկրի սահմաններում) գոյատևում են ոչ այնքան խաղաղ գոյատևում են քրիստոնեության, մահմեդականության, սոցիալիզմի, ազատականության, ազգայնականության, եւ այլ պատկերացումների կողմնակիցներ: Թեեւ առավել հաճախ հոլովվող գաղափարները կապված են *անդրմարդկայնության* հետ (*տրանսհումանիզմ*), այսինքն մի *կրոնի*, որի հետեւորդները *հավատում* են, որ մարդուն կարելի է երջանկացնել, նրա մարմինը ձեւափոխելու եւ նույնիսկ՝ որոշակի սարքերով փոխարինելու միջոցով: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, կրոնները օգտագործվում են քաղաքական խնդիրների լուծման համար: Կամ հակառակը. քաղաքական բախումները, որպես կանոն, ընթանում են որոշակի կրոնական դրոշի տակ, ինչը եւ այս պահին տեսնում ենք Եւրոպայում:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ նկատված օրինաչափությունը հերքված չէ: Այլ հարց է, որ այն բավական լոգիկա է, ու հատկապես դա ազդում է ներկա փուլում կանխատեսումների ճշտության վրա: Եւ եթե հին դարերի դեպքում, երբ ժամանակահատվածները տեսնում էին հարյուրավոր եւ հազարավոր տարիներ մեկ-երկու տասնամյակով շեղումը գրեթե դեր չի խաղում, ապա այսօր երբ ժամանակահատվածները արդեն կրճատվել են տարիների եւ նույնիսկ ամիսների, օրինաչափությունը մոտոք է գործել մրրիկայնության փուլ երբ ճշգրիտ հաշվարկն անհնար է: Սկզբնական պայմանների աննշան՝ մի քանի տարով փոփոխումը քիչ է ազդում հնագույն պատմական փուլերի ճշտման վրա, սակայն ընթացիկ փուլը կարող է լոգիկա էլ շեղվել մեկ-երկու տասնամյակով, իսկ դա արդեն մի ամբողջ սերունդ է:

Այնուամենայնիվ, պատմական եւ ներկա իրադարձությունների ուսումնասիրությունից բխում է, որ երկրաչափական նվազող հարաճի զուգամիտման կետը մոտ է, եւ կարող է համընկնել առաջիկա մեկ-երկու տարիների հետ: Դրանից հետո (եթե տեղի չունենա համատարած ոչնչացում, ինչը նույնպես չի կարելի բացառել), առավել հավանական է, որ ժամանակահատվածները կսկսեն աստիճանաբար երկարել. այսինքն, մարդկության զարգացումը կսկսի դանդաղել:

Բերված գծապատկերը ներկայացնում է վերոհիշյալ օրինաչափությունը: Տեղի սղության պատճառով այն սկսված է բողոքականության փուլից: Հեղափոխական փուլերը սոսկ մոտավոր են համապատասխանում նշված թվականներին եւ անվանված են մինչեւ 2001 թվականը. դրանից հետո, ինչպես ասվեց, առկա էի գաղափարների քաոս՝ անդրմարդկայնության ընթացող ընդլայնմամբ ու խորացմամբ:

02.07.2023

ГЕНИЙ И ...

Վերջերս Լրագրում հրապարակվեց իմ «[Գավարհոյե պա ռուսսկի](#)» հոդվածը, որում հիշել էի Ալեքսանդր Պուշկինի «Տազիտ» պոեմի այն տողը, ուր հավասարության նշան է դրվել *վախկոտ ստրուկի* եւ *հայի* միջեւ: Այս հիշատակումը որոշ դժգոհություն առաջացրեց ընթերցողների շրջանում, եւ ես զգացի, որ անհրաժեշտ է մի քանի խոսքով անդրադառնալ նաեւ այս, ինչպես գրում են Համացանցում, «սկանդալային» խնդրին:

Ո՞րն է այդ խնդիրը: Փորձեք Համացանցում որոնում կատարել «Пушкин и армяне» բառակապակցությամբ եւ կստացվի ավելի քան 1700 արդյունք: Համեմատության համար «Лермонтов и армяне», կամ «Толстой и армяне» հարցումները բերում են ընդամենը 8, 4, 10 արդյունք՝ համապատասխանաբար, իսկ «Тютчев и армяне» եւ «Достоевский и армяне» հարցումները՝ ոչ մի:

Իսկ առհասարակ, ինչո՞ւ պիտի գոյություն ունենային նման բառակապակցություններ: Բանն այն է, որ ԺԸ դարում Կովկասի եւ ապա՝ Հայաստանի մի շոշափելի մասի ներառումը Ռուսական կայսրության կազմում բերեց նրան, որ բազմաթիվ հայեր հայտնվեցին Ռուսաստանի քաղաքներում, այդ թվում եւ՝ ռուս մշակույթի խոշոր ներկայացուցիչների շրջապատում եւ օրինաչափորեն առաջացավ նաեւ փոխադարձ վերաբերմունքի հարցը: Բայց հին է վերոհիշյալ թվերի այդպիսի մեծ տարբերության պատճառը. հազիվ թե, Պուշկինի շրջապատում հայրերի թիվը հարյուրավոր անգամ գերազանցեր Լերմոնտովի կամ Տոլստոյի շրջապատում եղած հայերի թիվը: Կարելի էր կարծել, թե պատճառն այն է, որ Պուշկինը եղել է Հայաստանում եւ նկարագրել է այդ ուղեւորությունն իր «Путешествие в Арзрум» ուղեգրությունում: Սակայն Լերմոնտովը նույնպես եղել է Հայաստանում, մինչդեռ հայերի նկատմամբ նրա վերաբերմունքը շատ քչերին է հուզում: Իրականում, պատճառը Պուշկինի անավարտ «Տազիտ» պոեմում ներառված վերոհիշյալ արտահայտությունն է, որն ասում է գլխավոր գործող անձի՝ Տազիտի հայրը՝ Գասուրը. «Поди ты прочь — ты мне не сын, Ты не чеченец — ты старуха, Ты трус, ты раб, ты армянин!»

(«Կորչիր, գնա՜ որդիս չես դու, Չեչեն չես դու այլ կին պառավ, Վախկոտ ես, ստրուկ ես, հայ ես դու»):

Այս տողի քննարկումը չի դադարում մինչ այսօր. հայերի մի մասը համարում է, որ մեծագույն ռուս բանաստեղծի այս տողը վիրավորական է հայ ազգի համար, մյուսը՝ փորձում է ապացուցել, որ տողերն այդ սխալ են հասկացվում, եւ դրանցում հայերին վիրավորող ոչինչ չկա. պարզապես, պետք է այդ տողերը ճիշտ հասկանալ:

Ուրեմն, փորձենք հասկանալ: Նկատենք, որ իրականում գործ ունենք բազմաշերտ խնդրի հետ: Նախ եւ առաջ, այն տրոհվում է երկու հարակից հարցի, որոնք պետք է զանազանել.

- ցանկանո՞ւմ էր արդյոք Պուշկինը վիրավորել հայ ազգին
- վիրավորակա՞ն է արդյոք հայ ազգի համար այդ տողը:

Այս զանազանումը շատ կարեւոր է, քանի որ, սովորաբար, երկրորդ խնդրի քննարկումը աննկատ փոխարինում են առաջին խնդրի քննարկմամբ: Ասում են. Պուշկինը ճանաչել է բազմաթիվ հայերի, նրանց շատ բարձր է գնահատել, հայաստանում եղած ժամանակ անձամբ է տեսել հայերի խիզախությունը, հետեւապես չէր կարող նպատակ ունենալ վիրավորելու հայերին: Վերջ. հարցը լուծված է:

Սակայն դա խնդրի միայն մի՛ կողմն է: Ընդունենք, որ հարգել է, եւ *նպատակ չի ունեցել վիրավորելու* (թեեւ նրա մահից հետո այդ մասին կարելի է միայն ենթադրություններ անել), բայց դրանից չի հետեւում, որ *չի վիրավորել*:

Եկեք տրամաբանենք: Առհասարակ, ազգերի անունները հաճախ են գործածվում, որպես տարբեր հատկությունների որակում՝ թե բացասական եւ թե՛ դրական, կամ չեզոք: Յուրաքանչյուրը կիիշի, թե որ ազգերի անուններն են գործածվում «գող», «գազան», «ժլատ», «ճշտապահ», «երաժշտասեր», «հեշտասեր», «հարբեցող» եւ այլ իմաստներով, այնպես որ լիովին բնական է, որ մեր ազգի անունը որեւէ միջավայրում նույնպես կարող էր գործածվել, նշանակելու համար որեւէ հատկություն, այդ թվում եւ՝ բացասական: Տվյալ դեպքում այն գործածված է «վախկոտ» եւ «ստրուկ» բառերի շարքում, ուստի եւ լրացնում է այդ հատկությունները: Այնպես որ, մեր ազգի անվան գործածումը բացասական իմաստով *փաստ* է, որն անհնար է ժխտել: Բայց ինչպէս վերաբերել այդ *փաստին*:

Կարելի է ասել, որ հայ ազգին դա չի վիրավորում: Եւ առհասարակ դա, գրականություն է, արվեստ է. ինչպէս կարելի է «բաղաբականացնել» արվեստը, գրական հորինվածքը, այն էլ՝ Պուշկինի գործը: Իրոք, եթե ընդունենք, որ Պուշկինը հայ ազգին վիրավորանք է հասցրել, ուրեմն նա, մեղմ ասած, սխալ է, իսկ դա «վիրավորանք» է՝ արդեն Պուշկինին. ինչպէս կարելի է: Ուրեմն պետք է գտնել այնպիսի բացատրություն, որ ի՛նչ մեր ազգը վիրավորված մնա, ի՛նչ էլ

Պուլշկինը սխալ դուրս գա: Ինչպես ասում են ռուսները. «Чтоб и волки были сыты и овцы — целы»:

Պաշտպանությունն իրագործվում է հետեւյալ մարտավարությամբ: Ասում են (եւ շատ ճիշտ են ասում), որ պետք չէ շփոթել հեղինակին եւ իր ստեղծագործությունների գործող անձանց, որոնք կարող են եւ բացասական կերպարներ լինել, ուստի եւ նրանց վերագրված խոսքերը կարող են չհամընկնել հեղինակի կարծիքին: Եւ այս դեպքում Նույնպես, Գասուրը, ասում են, բացասական կերպար է, քանի որ ճիշտ է համարում կողոպուտն ու սպանությունը, հետեւապես, իրեն վերագրված այս արտահայտությունը չի կարող վիրավորական համարվել հայերի համար: Ոմանք Նույնիսկ ավելի հեռու են գնում, պնդելով, որ վերագրելով այդ արտահայտությունը բացասական կերպարին Պուլշկինը, ոչ ավել, ոչ պակաս՝ մեծարել է հայ ազգին. այն, ինչ Գասուրի տեսակետից վախկոտություն է, իրականում, ուրեմն դրա հակառակն է՝ առաքինություն է՝ մեծահոգություն է, եւ Նույնիսկ՝ անվախություն:

Լավ, ընդունենք այդ տրամաբանությունը: Բայց ինչիւ է որոշվել, որ Գասուրը բացասական կերպար է: Նա ամենեւին էլ բացասական չէ. ճիշտ կլինի ասել, որ նրա կերպարն ունի բացասական գծեր, իսկ դա արդեն բոլորովին այլ բան է: Ավելորդ է ասել, որ յուրաքանչյուր անձի կերպարում կարող են փոխհյուսված լինել ամենատարբեր հատկանիշներ: Նույն մարդը տարբեր իրավիճակներում կարող է դրսեւորել իր էության տարբեր կողմերը:

Իսկ ինչ ունենք տվյալ դեպքում: Պոեմում Գասուրը Նախ զարմանում է, որ իր որդին չի սպանել իր մոտով անցած հայ առեւտրականին. այստեղ նա միանշանակ ներկայանում է, որպես ավազակ, որը ցանկանում է, որ իր որդին Նույնպես ավազակ լինի:

Երկրորդ դրվագում Գասուրը զարմանում է, որ իր որդին չի բռնել եւ հետ չի վերադարձրել իրենց փախած ստրուկին: Այստեղ նա կրկին ներկայանում է, թերեւս, որպես բացասական կերպար: «Թերեւս», քանի որ պետք է խոստովանել, որ այս եւ Նախորդ օրինակները զգալիորեն տարբերվում են իրենց բացասական երանգով. փախած ստրուկին հետ վերադարձնելը կարող է անվերապահորեն դիտվել որպես բացասական արարք միայն մեր եւ մերօրյա տեսակետից: Եթե սպանությունը եւ կողոպուտը անվերապահորեն բացասական է համարվում արդեն վերջին մի քանի հազարամյակների ընթացքում, ապա ստրկատիրության մասին դա դժվար է ասել: Ստրկատիրական էին հարստագույն մշակույթ ստեղծած այնպիսի քաղաքակրթություններ, ինչպիսիք էին Հին Եգիպտոսն ու Հռոմը: Հռոմեական իրավունքն առհասարակ մինչ այսօր բազմաթիվ եվրոպական պետությունների իրավագիտության հիմքն է կազմում: Չմոռանանք նաեւ, որ ստրկատիրությունը տարածված է եղել նաեւ

Պուշկինի հայրենիքում (ճորտատիրության տեսքով) եւ վերացվել է միայն 1861 թվականին: Ավելին, անձամբ Ալեքսանդր Պուշկինը ունեցել է հարյուրավոր ճորտեր (ստրուկներ), ու հազիվ թե մեծագույն ռուս բանաստեղծը ուրախանար, եթե իրենից փախչեր իր «ունեցվածքը»: Այսպիսով, թեեւ մենք հասկանում ենք, որ այս դրվագում Գասուրը կրկին պիտի ընկալվի, որպես բացասական կերպար, բայց տրամաբանությունը հակադրվում է դրան:

Վերջապես, երրորդ դրվագում նկարագրվում է, որ Տազիտը հանդիպել է իր եղբոր սպանողին եւ վրեժխնդիր չի եղել, քանի որ վերջինս վիրավոր էր ու անգէն, մինչդեռ հոր՝ Գասուրի տեսակետից կարելու էր, թե իր որդու սպանողը վիրավոր էր, թե՛ ոչ. իր համար կարելու էր վրեժն էր: Ու ի՞նչ. այս դրվագում արդյո՞ք Գասուրը բացասական կերպար է. քանի՞սը նույն իրավիճակում կսպանեին իրենց որդու սպանողին, եւ քանի՞սը՝ կվարվեին Տազիտի պես. այսինքն, անպատիժ կթողնեին հանցագործին... Սա արդեն շատ լուրջ հարց է: Նույնիսկ մեր օրերում (քարոզվող բարոյականության շրջանակներում) Տազիտը պարտավոր էր գոնե բռնել այդ մարդասպանին եւ հանձնել ոստիկանությանը (նա, թերեւս, պարզապես պարտավոր կլիներ դա անել, այլապես կդիտվեր, որպես հանցանք թաքցնող, ուստի եւ՝ հանցակից): Իսկ այն դարերում բարբերն այլ էին, եւ դրանք *թելադրում էին* այլ քայլեր... Ո՛չ. այս դեպքում Տազիտին անհնար է արդարացնել, իսկ Գասուրը ի՞նչ բացասական կերպար է, ի՞նչ էլ դրական. սովորական մարդ է՝ իր բոլոր թուլություններով ու զգացմունքներով: Եւ հենց այս դրվագում է նա արտասանում խնդրո առարկա այդ նշանավոր տողը... Հետեւապես, մեր ազգի անունը բացասական համաշարում գործածելը, մենք այլեւս չենք կարող արդարացնել Գասուրի, իբր, բացասական կերպար լինելով... Ընդ որում, չի կարելի է բացառել, որ հենց Գասուրի կերպարի ոչ համոզիչ ստացվելու պատճառով է Պուշկինը անավարտ թողել այս պոեմը...

Կա մեկ այլ մարտավարություն եւս. որոշ վերլուծողներ նկատում են, որ Պուշկինի մոտ «трус», «раб» եւ «армянин» բառերը բաժանված են ստորակետներով, եւ եզրակացնում, որ, ուրեմն, այդ բառերի միջեւ հեղինակը հավասարության նշան չի դրել: Սակայն այս տրամաբանությունը էլ ավելի թույլ է եւ չի կարող չզարմացնել. բնականաբար, դրանք տարբեր հատկանիշներ են, սակայն հենց ստորակետներով թվարկելը նշանակում է, որ շարադրանքում այդ հասկացությունները լրացնում են իրար, այսինքն ներկայանում են, որպես հոմանիշներ: Ի վերջո, հո չէին կարող առաջին երկուսը գործածվել մի՞ իմաստով, իսկ երրորդը՝ բոլորովին այլ:

Երբեմն էլ, այս հարցը քննելիս, վերլուծողները, հենվելով պատմական վկայությունների վրա սկսում են ապացուցել, որ հայերը շատ բարձր համարում ունեին, որպես ռազմատենչ եւ խրոխտ ազգ, մինչդեռ խնդիրը հայերի իրական

արժանիքների հաստատումը չէ, այլ հենց այս որոշակի տողում մեր ազգի անունը վիրավորական իմաստով կիրառելու *փաստը*:

Մնում է եւս երկու հարց. ինչո՞ւ է Պուշկինը գրել այդ տողը, եւ ինչպէս վերաբերել մեզ համար դրա վիրավորական լինելու վիճարկմանը:

Թերեւս, այդ տողի հայտնվելու պատճառը Պուշկինին բնորոշ գրական անկաշկանդ ոճն է (մեղմ ասած). նա հաճախ է գործածում տարբեր ազգերի անուններ՝ ոչ դրական համաշարում: Այդպիսի դեպքեր կան, օրինակ, նրա էպիգրամներում, ուր տեսնում ենք «*лях*», «*жид*», «*цыган*» անվանումները արհամարհական երանգով: Նշանավոր «*Я памятник себе воздвиг нерукотворный...*» բանաստեղծության մեջ նա հիշատակում է տունգուս ազգի անունը «*дикий*»՝ «վայրի, հետամնաց» մակդիրով: Կամ հիշենք նրա տիպիկ խոսքը վրաց կանանց հասցեով «*Путешествие в Арзрум*» ուղեգրության մեջ, ուր, նշելով վրաց աղջիկների գեղեցկությունը, նա անմիջապէս գրում է. «*Зато не знаю ничего отвратительнее грузинских старух: это ведьмы*». («Փոխարենը չգիտեմ ոչինչ ավելի զգվելի, քան վրաց պառավները. դրանք վիուկներ են»): Եւ սա արդէն հենց իր՝ Ալեքսանդր Պուշկինի բառերն են, այլ ոչ թե իր հերոսներից մեկի. չեմ կարծում, թե վրացիներին հաճելի է կարդալ նման որակումը, որը գուցէ հավասարակշռվում է նախորդ տողերի գովասանքով, սակայն միեւնոյն է, չափազանց կոպիտ ու տհաճ է: Կասեն. «Դա իր կարծիքն էր», «Դա իրականության արտահայտումն է», «Դա գեղարվեստական հնարք է» եւ այլն: Բայց մի՞թե մարդուն, այն էլ՝ բանաստեղծին՝ վայել է նպատակին հասնելու համար արտասանել ցանկացած կարծիք եւ գործածել ցանկացած հնարք: Ինչ վերաբերում է իրականության արտահայտմանը, ապա ամեն իրականություն չէ, որ արժէ ներառել արվեստի գործում. օրինակ, մարդու առօրյա կյանքի որոշ բնույթի դրվագներ սովորաբար չեն պատկերում, բայց դրանից ստեղծագործությունը չի դառնում պակաս իրապաշտական կամ արժեքավոր: Եւ հակառակը, դրանց պատկերումը հաճախ զգվանք է առաջացնում եւ գեղեցկացնում ու արժեզրկում է գործը:

Հիշենք նաեւ մեկ այլ հանգամանք: 1838 թվականին, Պուշկինի մահից մեկ տարի անց մյուս խոշորագույն ռուս բանաստեղծը՝ Միխայիլ Լերմոնտովը՝ գրում է «*Беглец*» պոեմը, ուր նկարագրում է շատ նման իրավիճակ՝ շոշափելով վախկոտության խնդիրը: Լերմոնտովը վերցրել է դրա նյութը լեռնականների առասպելներից. դա է վկայում պոեմի ենթավերնագիրը: Այս պոեմում Գառուն անունով չերկեսը փախչում է մարտի դաշտից, ուր զոհվել էին իր հայրն ու եղբայրները, վերադառնում իր գյուղը, սակայն նրան չեն ընդունում մտերիմներն ու նաեւ հարազատ մայրը, որը նրան ասում է. «*Ты раб и тряс — и мне не сын!..*» («Դու ստրուկ եւ վախկոտ ես՝ եւ որդի չես ինձ»):


Դժվար չէ նկատել, որ երկու պոեմները նմանվում են ոչ միայն նյութով, այլեւ հանգուցային տողերի կառուցվածքով եւ նույնիսկ՝ հանգով, այն

տարբերությամբ, որ Լերմոնտովի Գառունը միարժեքորեն բացասական կերպար է, իսկ Նրա մայրը՝ միարժեքորեն դրական, ի տարբերություն Պուշկինի Տազիտի եւ Նրա հոր հակասական կերպարների: Հանգուցային այդ տողերի գրեթե լիակատար նույնությունը թույլ է տալիս ենթադրել, որ Պուշկինն ու Լերմոնտովը օգտվել են նույն լեռնական առասպելից, կամ միեւնույն առասպելի երկու զուգահեռ ճյուղերից, եւ մեծ հավանականությամբ, գլխավոր գործող անձին ծնողի (հոր, կամ՝ մոր) կողմից «ստրուկ» եւ «վախկոտ» որակելը եղել է արդեն իսկ այդ առասպելի բնագրում: Բայց Լերմոնտովի պոեմում ծնողը որդուն «հայ» չի անվանում: Փոխարենը Նա իրեն անվանում է «գյավուր», այն է՝ «անհավատ», փաստորեն՝ «քրիստոնյա», եւ կա կարծիք, որ սկզբնապես «Տազիտ» պոեմի ձեռագրում (կամ առաջին հրատարակության մեջ) «армянин»-ի փոխարեն եղել է հենց «христианин»՝ «քրիստոնյա», այսինքն, փաստորեն՝ «անհավատ», ինչպես եւ Լերմոնտովի տարբերակում: Պարզ չէ, թե փաստական ինչ հիմքեր ունի այդ կարծիքը, թեեւ Լերմոնտովի մոտ «գյավուր» եզրույթի առկայությունը նման վարկածը որոշ չափով հավանական է դարձնում: Բայց հնարավոր է եւ հակառակը. բնագրում, այսինքն՝ լեռնականների առասպելում՝ «հայ» բառը, որպես հայիոյանք գործածված եղել է, սակայն Լերմոնտովն (ի տարբերություն Պուշկինի), այդ մանրամասը չի ներառել իր պոեմում, նրբանկատորեն զգալով, որ չարժե գրական խնդիրներ լուծել որեւէ ազգին վիրավորանք հասցնելու գնով: Սակայն, անկախ պատճառներից, ունենք այն, ինչ ունենք, եւ միլիոնավոր ընթերցողներին Պուշկինի տարբերակը հայտնի է հենց «հայ»-ով:

Այդ, լինում են դեպքեր, երբ մարդիկ շփոթում են հեղինակին եւ իր ստեղծած կերպարները, բայց Նաեւ հաճախ Էլ մոռանում են, որ հեղինակը (նույնիսկ եթե հանճար է) ընդամենը մարդ է՝ իր բոլոր թուլություններով ու թերություններով հանդերձ: Այսօր մենք արդեն չենք կարող իմանալ, թե ինչ նպատակ էր հետապնդում Պուշկինը, ներառելով իր պոեմում մեր ազգի անունն այդ տիպի համաշարում. արդյո՞ք Նա սոսկ անփոփոխ փոխանցել էր իր լսած առասպելը, հաղորդելով բանաստեղծական ձեւ, թե՞ փորձում էր այլ խնդիրներ լուծել. ի վերջո, չմոռանանք, որ պոեմն անավարտ է մնացել: Բայց այն, որ մեր ազգի անունը այդ գործում հայտնվել է մեզ համար տիպի համաշարում, կրկնում եմ, *փաստ է*: Անտեսել դա, ժխտել ակնհայտը, կամ Պուշկինի անկոչ փաստաբանի դեր ստանձնել, նշանակում է միայն հաստատել մեզ համար այդ տիպի որակման արդարացիությունը: Եւ հակառակը. պետք է իրապաշտորեն վերաբերվել այդ դրվագին, հստակորեն արտահայտել մեր վրդովմունքը՝ առիթ չտալու համար այլ հեղինակներին, լինեն նրանք հանճարներ, թե՛ ոչ, կրկին տեղադրելու մեր ազգի անունը «վախկոտ» եւ «ստրուկ» բառերի հետ մեկ շարքում:

08.04.2023

ԳԱՎԱՐԻՏՅԵ ՊԱ ՌՈՒՍՍԿԻ



30 տարի առաջ

1980-ականների վերջ՝ 90-ականների սկիզբ: Հայկական «գարուն» (այսօրվա բառերով): Խորհրդային Միության վերջին տարիներին կյանքի գրեթե բոլոր ոլորտները գրաված ռուսաց լեզվի ու սնկի պես բազմացած ռուսական դպրոցների հետագա անսանձ տարածումը կանխելու համար հայտնվում են լեզվական դաշտը կարգավորող օրենքի մի շարք նախագծեր եւ ներկայացվում Խորհրդարանի քննարկմանը: Կար մոտ 10 էջանոց, ինչպես թվում էր՝ շատ սեղմ, հիմնական հարցերը կարգավորող մի նախագիծ: Կար մի ծավալուն՝ «Լեզվական օրենսգիրք»՝ շուրջ 40 էջ ծավալով, ուր դիտարկված էին կարգավորում պահանջող բոլոր հնարավոր դեպքերը: Բայց 1993 թվականին հաստատվեց

հազիվ մի 2-3 էջանոց տարբերակ, ուր չէին շոշափված բազմաթիվ կարեւոր հարցեր: Այնուամենայնիվ դա էլ նվաճում էր այն ապագային մթնոլորտում, որն իշխում էր նորանկախ հայոց երկրում: Բացի այդ, ստեղծված էր Լեզվի տեսչություն, եւ հույս կար, որ աստիճանաբար հնարավոր կլինի կարգավորել լեզվական դաշտը: Սակայն տարեց տարի այդ տեսչության կարգավիճակը եւ հեղինակությունը նվազում էր, եւ փաստորեն ոչ մի լուրջ խնդիր այդ ատյանը չէր լուծում:

Հետո եկավ 2012 թվականը, եւ սկսվեց ռեւանշը. արդեն իսկ կիսատ-պռատ այդ օրենքի մեջ փոփոխություններ մտցվեցին, թույլատրելու համար օտարալեզու դպրոցների վերաբացում (որոնք այդ պահին առանց այդ էլ գործում էին «ընդհատակյա» կարգավիճակներով), իսկ դրա դեմ պայքարող «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» ինքնաբուխ շարժումը գրեթե ոչնչի չհասավ:

Ու վերջապես եղավ հանգուցալուծումը. «Լեզվի տեսչությունը» վերացվեց, եւ դրա փոխարեն հայ ազգին (ինչպես շանը՝ ոսկոր) շարտվեց «Լեզվի կոմիտե» կոչված ձեւական փոխարինիչը...

Այսօր

Վերջերս, հետեւելով այստեղ պատկերված գովազդի տվյալներին զանգեցի մի ռուսաստանյան ընկերություն, եւ դրա աշխատողը, ինձ հայտարարեց, որ ես պիտի խոսեմ իր լեզվով, այն է՝ ռուսերեն: Ես շարունակեցի խոսել իր հետ հայերեն. նա համառորեն պատասխանում էր ռուսերեն...

Արդյո՞ք դա Հայաստանի օրենսդրության խախտում է: Կարող ենք մենք պաշտպանել մեր մայրենի եւ պետական համարվող լեզվի իրավունքները, վկայակոչելով «Լեզվի մասին» անողնաշար օրենքը: Թվում թե՛ ոչ, քանի որ դրա 3-ի համաձայն, կարծես թե, խախտում չկա էլ. ըստ դրա «...սպասարկման **առանձին ոլորտներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են տիրապետել գրական հայերենին**», եւ, երեւի, միշտ էլ կարելի է հայտարարել, որ հենց այն ոլորտում հայերենի (այն էլ՝ գրական) իմացությունը պարտադիր չէ: Սակայն 3-ի համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները **այլ երկրների պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հաղորդակցվում են փոխադարձաբար ընդունելի լեզվով**», մինչդեռ ինձ, որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացու, ընդունելի չէ օտար լեզվով հաղորդակցվելը: Իսկ 3-ի համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն

հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի **բոլոր** ոլորտները», եւ այս հոդվածը ինձ շատ ավելի է դուր գալիս: Ի վերջո, նաեւ ըստ Սահմանադրության Յոդված 20-ի (նկատե՛ք, միայն 20-րդի!!!) «*Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է*»։ Իսկ ուրիշ ինչպե՞ս պետք է դա հասկանալ, եթե ոչ այնպես, որ հայոց երկրում հաճախորդը պիտի իրավունք ունենա սպասարկվելու հայերեն։ Կամ, գուցե սա հայոց երկիր չէ՞. ու հաստատ կգտնվեն չէ՞ մարդիկ, ովքեր կլոր աչքերով եւ դեմքերին արդար ցասման դիմակ դրած կասեն, որ նման պնդումը (նկատենք՝ օրինական, սահմանադրական պնդումը) ազգայնամոլություն է, եւ այլն, եւ այլն...

Խնդրում եմ դիտել այս շարադրանքը, որպես **բաց նամակ Հայաստանի Կառավարությանը** եւ ակնկալում եմ պատասխան.

- Արդյո՞ք այս իրավախախտումը մնալու է անպատիժ եւ այլազգիներին իրավունք է տրվելու խախտելու մեր ազգային եւ պետական օրենքները:
- Ո՞ր ատյանն է պատասխանատու այս օրինազանցության համար եւ ո՞ր ատյանը պիտի կարգավորի եւ վերահսկի լեզվական ոլորտը:

Սա շատ լուրջ նախադեպ է (իսկ նման որքան դեպքեր դեռ կան...), հատկապես, երբ մեր պետությունը ի տարբերություն բազմաթիվ այլ պետությունների ստորագրել է Մարաբեշի 2018 թվականի մեր ազգային շահերի տեսակետից վտանգավոր «Միգրացիայի գլոբալ պայմանագիրը», իսկ մեր փողոցները արդեն իսկ ողողել են Ռուսաստանից փախած տասնյակ հազարավոր իրենց երկրի դավաճաններ, որոնք այսօր չէ՝ վաղը կսկսեն պահանջել, որ **մենք բոլորս** խոսենք **իրենց համար ընդունելի** լեզվով...

Նկարագրված օրինազանցումը այն հիմնարար խնդիրներից է, որոնց նկատմամբ Հայաստանի պետական կառավարման մարմինների արձագանքից պարզ կդառնա. արդյո՞ք **այսօրվա** Կառավարությունը ի վիճակի է օտարի ոտնձգություններից պաշտպանել հայոց պետության ամենահիմնարար ունեցվածքները՝ **տարածքն** ու **հայոց լեզուն**, թե իրավացի է ռուս ամենահարգված բանաստեղծը, երբ հավասարության նշան է դրել [վահկոտ ստրուկի եւ հայի](#) միջեւ:

25.03.2023

ՈՎ Է ԱԶԳԱՅՆԱԿԱՆ

Մի քանի օր առաջ ռուսական հեռուստատեսության բազմաժամանոց քարոզչական զրուցահանդեսներից մեկի ընթացքում մի «փորձագետ», որի անունը, բարեբախտաբար, չգիտեմ, փիլիսոփայում էր այն մասին, թե ամերիկացիները Ռուսաստանի հարեւան ո՞ր պետությունները կարող են օգտագործել իրենց՝ ռուսների դեմ: Եւ առաջին տեղում (Ղազախստանի, Թուրքմենստանի հետ մեկ շարքում) նա նշեց Հայաստանը: Հիմնավորում էր, մասնավորապես հետեւյալ կերպ.

- Հայաստանում տարածված է ազգայնականությունը,
- Հայաստանը մեղադրում է Ռուսաստանին, պատերազմի ընթացքում իրեն չօգնելու համար: Հայաստանում խոսում են, որ եթե իրենց դաշնակիցը լիներ, օրինակ, Ֆրանսիան, ապա նա կօգներ:

Նախ, փորձենք հասկանալ երկրորդ պնդումը: Հատկանշական է, որ այդ «փորձագետը» շրջանցեց այն հարցը, թե, ի վերջո, Ռուսաստանը, որպես դաշնակից, օգնե՞լ է Հայաստանին, թե՞ ոչ: Եւ առհասարակ, ինչպես է ընդունված իրենց երկրում. դաշնակիցներին պետք է օգնե՞լ, թե՞ ոչ: Երեւի՝ ոչ. որքան հիշում եմ, Ռուսաստանը չի օգնել Նոյնիսկ իր ցեղակից սերբերին, երբ նրանց ռմբակոծում էր Նոյն այդ ՆԱՏՈ-ն, Էլ ի՞նչ խոսենք հայերի մասին: Նկատեմ, որ խնդիրն այն չէ, թե օգնել է, թե՞ ոչ. ի վերջո, քաղաքականությունը ՉԱՓԱԶԱՆՑ բարձր «բարոյականության» ոլորտ է, եւ ցանկացած երկիր կարող է հազար ու մի հիմնավորում գտնել, չկատարելու համար դաշնակցային պարտավորությունները, սակայն «փորձագետը» այնպես էր արտահայտվում, կարծես թե Ռուսաստանի այդ պահվածքը հայերը Նոյնիսկ քննարկելու իրավունք չունեն: Քննարկեցի՞ր, ուրեմն թշնամի ես: Թեեւ, հիմա ո՞վ է հասկանում, թե ում պետք է օգնել. դաշնակցի՞ն, թե՞ թշնամուն: Հայաստանն Էլ, օրինակ, հիմա օգնում է Թուրքիային, բայց Թուրքիան Հայաստանի դաշնակիցը չէ (թե՞ դաշնակիցն է): Եւ ինչո՞ւ այդ դեպքում Ռուսաստանն Էլ Հայաստանին օգնելու փոխարեն, չօգնի Ադրբեյջանին, որն իր դաշնակիցը չէ (թե՞ դաշնակիցն

Ե), եւ չհայաթափի մնացյալ Արցախը, ինչպէս տարիներ առաջ «Կոլոց» գործողության արդյունքում հայաթափեց Արցախի հյուսիսային հատվածը: Սկիզբը, համեմայն դեպս, դրված է. Հադրուբում հայեր արդեն չկան:

Իսկ Ֆրանսիան: Դաշնակի՞ց է, թե՞ ոչ: Այդ փորձագետի կարծիքով, մենք, հայերս, ինչ-որ հույսեր ենք կապում Ֆրանսիայի հետ: Թե ո՞վ հատկապես, եւ ի՞նչ հույսեր՝ չնշեց. մինչդեռ, այն պահից, երբ մեկ դար առաջ Կիլիկիայի վերջին փշուրը՝ Ալեքսանդրետը՝ Ֆրանսիան նվիրեց Թուրքիային, ոչ մի խելամիտ հայ այդ երկրի հետ որեւէ հույս չի կապում: Երեւի ԱՄՆ-ի հետ պիտի հույսեր կապենք: Հիշո՞ւմ եք «Վիլսոնյան Հայաստանը»: Չե՞ք հիշում: Իրենք ել չեն հիշում: Եւ, առհասարակ, ի՞նչ հույսի մասին կարող է խոսք լինել քաղաքականության ասպարեզում. դա հո ազնվազարմ օրիորդաց վարժարա՞ն չէ:

Բայց ավելի հետաքրքիր է ազգայնականության հաշվով մեղադրանքը: Ի՞նչ բան է ազգայնականությունը: Սկզբունքորեն, ազգայնականությունը սոսկ մի սկզբունք է, ըստ որի պետությունը պիտի կառուցվի ազգային հիմքի վրա: Այսօրվա աշխարհում պետությունների զգալի մասը ազգային է՝ Հունաստան, Լեհաստան, Վիետնամ... Դե, գիտե՞ք... Այլ հարց է, որ ազգայնականությունը կարող է վերածվել ազգայնամոլության, դրա բոլոր հետեւանքներով հանդերձ: Ռուսերենում, ի դեպ, այդ երկու եզրույթները չեն զանազանվում եւ ասելով «նազիոնալիզմ» ռուսը կարող է հասկանալ, եւ, որպես կանոն, հասկանում է «ազգայնամոլություն», թեեւ իմաստային հստակության համար այդ դեպքում գործածում են «նացիզմ» եզրույթը: Սակայն տվյալ «իքսպերտը» հայերին մեղադրելով «նացիոնալիզմի» համար, հաստատ նկատի ուներ երկրորդ իմաստը, քանի առաջին իմաստը, ինչպես տեսանք, ոչ մի բացասական երանգ չի պարունակում:

Բայց, միեւնույն է, զարմանալի է. ազգայնականություն Հայաստանո՞ւմ: Ես Հայաստանում ապրում եմ արդեն 60 տարի, բայց դեռ չեմ տեսել ազգայնական հայ. առավել եւս՝ ազգայնամոլ: Հասկանալու համար, հիշենք ոչ վաղ անցյալը, երբ Հայաստանը դեռ կոմունիստական էր: Հիշո՞ւմ եք: Չկար մի մեծ փողոց (երբեմն, Նույնիսկ՝ փոքր), ուր փակցված չլիներ մի որեւէ կոմունիստական կարգախոս, առաջնորդի դիմանկար կամ այդ կարգի այլ խորհրդանիշ՝ կարմիր աստղ, մուրճ ու մանգաղ, եւ այլն: Հեռուստատեսային հաղորդումները սկսվում եւ ավարտվում էին կոմունիստական բանաձեւերով եւ կապիտալիստական կարգերի քննադատությամբ: Չկար ոչ մի ուսումնական, գեղարվեստական կամ գիտական ստեղծագործություն, որ չշոշափեր կոմունիստական սկզբունքները, մեջբերումներ չպարունակեր դրա գաղափարախոսներից, կամ օժտված չլիներ Նույն դիրքերից շարադրվող նախաբանով:

Ես այնպես եմ հասկանում, որ եթե այժմ Հայաստանը ազգայնական է, ապա բոլոր փողոցներին պիտի լինեն հայ ազգը փառաբանող եւ մյուս՝ առնվազն՝ թշնամական ազգերը պախարակող կարգախոսներ, լինեն հայ

ազգայնականության առաջնորդների պատկերներ: Յուրաքանչյուր տպագրվող գրքում, հոդվածում, յուրաքանչյուր երգում պիտի փառաբանվի հայ ռազմիկը, պաշտոնատար անձինք պիտի հայ ազգը գերադասեն բոլոր այլ ազգերից, պիտի արգելվի Հայաստանի տարածքում օտարալեզու ամեն ինչ, եւ այլն եւ այլն: Իսկ ի՞նչ ենք տեսնում իրականում: Իրականում, Նույնիսկ պատերազմի ժամանակ մեր պաշտոնատար անձանց համար չկան թշնամիներ, այլ միայն՝ «հակառակորդներ», ասես մենք պատերազմ չենք վարում, այլ ֆուտբոլ ենք խաղում: Իսկ մեր փողոցների գովազդային վահաններին տեսնում ենք, ոչ թե ինչ-որ ազգայնականի դիմանկար, այլ, օրինակ, Պարույր Սեւակի, ով ասել է. *«Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում»*: Շատ հետաքրքիր տեսակի ազգայնականություն է, չե՞ք կարծում. մերն ուրիշ է: Հաստատ:

Եւ առհասարակ. եղե՞լ են արդյոք հայ ազգայնականներ: Միայն չասեք՝ Նժդեհ: *«Քննադատել՝ հոգեպես տառապել է Նշանակում»*, ասել է Նա: Միայն այս նախադասությամբ արդեն իսկ բացառվում է ազգայնականությունը, քանի որ լինել ազգայնական, Նշանակում է նախ եւ առաջ քննադատել այլազգիներին: Սակայն ռուսների համար Նժդեհ անունը՝ հայերիս շատերի համար պաշտելի անունը՝ միեւնույն է, ատելի է:

Ցանկացած ազգ, դա նախ եւ առաջ տվյալ լեզուն է. լինել ազգայնական, Նշանակում է նախ եւ առաջ պայքարել մայր լեզվի մաքրության եւ իրավունքի համար: Իսկ Հայաստանում ընդամենը մեկ էջանոց մի ողորմելի օրենք կա «Լեզվի մասին», եւ այն էլ, փաստացիորեն, չի գործում. ամեն քայլափոխին կարելի է տեսնել դրա խախտումները, իսկ «Լեզվի տեսչությունը», որը, իբր, պիտի վերահսկեր Լեզվի մասին օրենքի կատարումը՝ լուծարվեց (ի դեպ, դեռեւս՝ «նախկինների» օրոք), եւ դրա փոխարեն ստեղծվեց իրավագուրկ եւ անողնաշար «Լեզվի «կոմիտե»»: Համեմատության համար. օրերս, Ռուսաստանի օրենսդիր մարմինը ընդունում է առանձին օրենք, որը կոչված է պաշտպանելու ռուսաց լեզուն անհարկի փոխառություններից. հիմա ո՞վ է ազգայնականը: Պատկերացնո՞ւմ եք, որ նման օրենք ընդունվի մեր «ազգայնական» երկրում: Պատկերացնո՞ւմ եք իիի՞նչ վայնասուն կբարձրանա: Մեր երկրում, ուր կարելի է բոլորովին անպատիժ հռչակ հայերեն Նորաբանությունների հաշվով, եւ բեմերից ծաղրել «մաքրամոլությունը»: Կամ ծաղրել «ծովից՝ ծով Հայաստան» գաղափարը:

Այո, գողը բոլորից ավելի եռանդուն է «որոնում» գողին, եւ Ռուսաստանն էլ ազգայնականներ բացահայտելու առիթը բաց չի թողնում: Օրինակ, ռուս քարոզիչների բառապաշարում ուկրաինացիների, որպես թշնամիների, հիմնական մակդիրը հենց դա է. «ուկրաինացի ազգայնականներ»: Այսինքն, եթե մեզ, հայերիս, ռուսն անվանում է «ազգայնական», ապա դա սոսկ «թշնամի» եզրույթի փոխարինիչն է, այլասությունը. ներեցեք՝ էֆֆեմիզմը: Պետք է հասկանալ «հայ թշնամիներ»:

Միեւնույն ժամանակ, Ռուսաստանը միակը չէ, որ քննադատում է ազգայնականությունը: Հետ չի մնում նաեւ Արեւմուտքը, որը, կարծես թե, դեմ է ՑԱՆԿԱՑԱԾ խտրականությանը: Եւ մենք, հայերս, ինչպես միշտ «թագավորից ավելի միապետական ենք» եւ նույնպես դեմ ենք ազգայնականությունը: Արդեն մի քանի դար է, ինչ դեմ ենք: Ու չենք էլ նկատում, որ միշտ չէ, որ ազգայնականությունը քննադատվում է աշխարհի տերերի կողմից: Որ ժամանակ առ ժամանակ բացառություններ են արվում տարբեր ազգերի համար: Օրինակ, այսօր Արեւմուտքը թույլատրել է ազգայնականությունը ուկրաինացիների համար. նրանց թույլատրված է ցանկացած արարք, եթե այն ուղղված է ռուսների դեմ, իսկ ուկրաինացիները կարծես զգալով ազգայնականության համը դրան ավելի լայն ընդգրկում են տալիս: Մենք, հայերս դա արդեն զգացել ենք մեր վրա վերջին պատերազմի ընթացքում, երբ Ուկրաինան աջակցում էր Ադրբեջանին: Հետաքրքիր է վերաբերմունքը թուրքական ազգայնականության նկատմամբ. այն թույլատրում են եւ ռուսները եւ՝ Արեւմուտքը. ինչը մենք նույնպես միշտ զգում ենք մեր մաշկի վրա:

Բայց հայերի մեծ մասը միեւնույն է դիտում է ազգայնականությունը, որպես ինչ-որ վատ բան: Բնականաբար, այն ինչ թույլատրված է մեկին, չի նշանակում, թե կթույլատրվի՝ մյուսին: Բայց ինքը, փաստը, որ ազգայնականությունը կարող է թեկուզ եւ բացառության կարգով թույլատրվել գոնե մեկ ազգին եւ ազգայնամոլության աստիճանի բերված գործադրվել թշնամու դեմ, պիտի մեզ հուշի, որ դա այնքան էլ խիստ սկզբունք չէ, եւ մենք առնվազն կարող ենք չբացարձակեցնել այն, եւ չպարծենալ, որ ազգայնական չենք: Գոնե կարող ենք զգալ, որ մեր անշահախնդիր ատելությունը ազգայնամոլության նկատմամբ ոչ մեկի կողմից չի գնահատվում: Եւ նույն այդ ռուս «փորձագետը» (եւ առհասարակ, պաշտոնական Ռուսաստանը) բոլորովին չի նկատել, թե հենց վերջին օրերին ինչպիսի մեծահոգությամբ ենք մենք հայերս, ի դեմս մեր պետության, օգնում իրենց՝ ռուսների բարեկամ թուրքերին: Ի՞նչ անես՝ չի գնահատվում: Ռուսների համար հայերը միեւնույն է ազգայնական են. գոնե այն պատճառով, որ ռուսներենից բացի նաեւ հայերեն ենք խոսում երբեմն: Ինչ վերաբերում է Ֆրանսիային եւ մնացյալ Արեւմուտքին, ապա նրանց համար մեր բարձր հոգեվիճակները, ինչպես կասեր ռուսը՝ «դո լամպոչկի»:

Հիմա մենք ազգայնակա՞ն ենք թե՞ ոչ:

Պիտի՞ լինենք ազգայնական, թե՞ ոչ:

Կարո՞ղ ենք պահպանել մեր գոյությունը, չլինելով ազգայնական...

25.02.2023

ՀՈԳԵԶԵՂԾՈՒՄ

Այդպես եմ թարգմանել անգլերեն *Gaslighting* հասկացությունը (չթարգմանեմ հենց սկզբից՝ «իրատես» ընկերները «փոխառելու» են անգլերենը): Իսկ ժողովրդական լեզվով ասած դա կոչվում է. «*Էշի տեղ դնելը*»:

Հետաքրքիր երեւոյթ է այդ *հոգեզդծումը*: Այդպես են անվանում «որեւէ մեկին կոպտորեն մոլորեցնելու գործողությունը կամ գործելակերպը, հատկապես շահադիտական նպատակներով», կամ «անձի նկատմամբ հոգեբանական ձեռնածությունները, սովորաբար երկարատեւ, որոնք զոհին դրդում են կասկածի տակ դնելու սեփական մտքերի, իրականության ընկալման կամ հիշողությունների իսկությունը եւ հանգեցնում են խուճապի, վստահության, արժանապատվության, սեփական զգացմունքների հոգեկան կայունության կորստի եւ կախվածությանը՝ չարագործից»: Այսպես է սահմանում այդ երեւոյթը Մերիամ-Բեքստերը: (<https://www.merriam-webster.com/words-at-play/word-of-the-year>)

Այս եզրույթը բխում է 1944 թվականի շարժանկարի անվանումից: Այն նկարագրում է մի տղամարդու գործողությունները, ով շահադիտական նպատակներով փորձում է համոզել իր կնոջը, որ նա խելագար է: Դրա համար, մասնավորապես, երբ ձեռնահարկում խավարում է գազի լամպի լույսը, նա համոզում է կնոջը, որ լույսը չի խավարում, ուստի եւ նա չի կարող վստահել սեփական զգացումների:

Եւ ահա այս բառը Մերիամ-Բեքստերը հայտարարել է «տարվա բառ»: Անցած տարվա ընթացքում այդ բառի հետ կապված հարցումների քանակը ավելացել է 1740 տոկոսով: Տպավորիչ թիվ է: Ինչի՞վ կարող էր այդ աստիճանի աճը պայմանավորված լինել: Գուցե դրա բացատրությունը թաքնված է նրանում, որ, ինչպես հաղորդում է նույն կայքը, «*հոգեզդծումը, այն է՝ մոլորեցնելու նպատակով կազմակերպված դավադրության գաղափարը, հարմար եղավ նկարագրելու համար մեկ այլ, ավելի խոշոր, սուտը*: Ի տարբերություն սովորական ստի, որը լինում է առանձին մարդկանց միջեւ, եւ մեքենայությունների, որոնց

մասնակցում են կազմակերպությունները, հոգեզեղծումը կիրառվում է ինչպես անձնական, այնպես էլ եւ քաղաքական համաշարում»:

Եւ, իրոք, հենց անցած տարվա ընթացքում մարդկությունը բախվեց այդպիսի առնվազն երկու ստերի բացահայտմանը, երբ շատերի (թեեւ՝ ոչ բոլորի) համար ակնհայտ դարձավ այսպես կոչված «թագավարակի» փուչիկը, եւ «փչվեց» ուկրաինական պատերազմի էլ ավելի դաժան եւ նողկալի «փուչիկը», երբ զոհվում են հարյուր հազարավոր մարդիկ, ավերվում են գյուղեր ու քաղաքներ, մինչդեռ ցանկացած ուշադիր մարդու համար պարզ է, որ մարտնչող ոչ մի կողմն էլ մտադրություն չունի հաղթելու. խամաճիկների Տերը համապատասխան «անկախ պետությունների» «ղեկավարների» առաջ նման խնդիր չի դրել: Երբ մի՛ կողմը իր «դաշնակցին» մատակարարում է հնացած, ժամանակավորեալ զենք ու զինամթերք, իսկ մյուս կողմը չի էլ փորձում խանգարել Նույնիսկ այդ ողորմելի քանակով «օգնության» մատակարարմանը: Երբ խոհեմ հեռուստադիտողները դիտելով այդ «իրահանդեսը» (reality show), ռազմական «հետախուզություններից» ոչ պակաս հավաստիությամբ նախապես գիտեն, թե՞ որ կողմը եւ ճիշդ է անցնելու գրոհի կամ հակագրոհի, եւ ինչ հաջողությամբ (ինչպես հայտնի է, օր օրի սպասվում է ռուսների գրոհը, որոնք միջոցառման սկզբում ինչ-որ շատ արագ էին առաջ գնում, եւ ստիպված եղան նահանջել, գրաֆիկից առաջ չանցնելու համար): Մինչդեռ բազմաժամանոց քարոզչական հաղորդումների ընթացքում միլիոնավոր մարդկանց փորձում են համոզել, թե դա այդպես չէ, որ *դա իրենց սոսկ թվում է*: Մինչդեռ երկու կողմերն էլ պայքարում են հանուն ամենապայծառ զաղափարների եւ ընդդեմ ամենասոսկալի տմարդների, եւ երկուսն էլ, ինչպիսի՜ զուգահեռություն, իրար մեղադրում են ֆաշիզմի (կամ «ռաշիզմի») համար: Իսկ այդ բազմաժամանոց քարոզչության Նույնքան բազմաժամանոց ընդմիջումները հեղեղված են երգ ու պարով, սերիալներով եւ գռեհիկ ու տափակ կատակներով ու ծամածռություններով (Ռուսաստանում) եւ Նույն կարգի զվարճալիքներին հավելված վեճերով, թե՞ հորմոնալ «բուժումը» սեռափոխների համար պետք է թույլատրել, թե՞ ոչ (ԱՄՆ-ում): Մի՞թե, սա՛ չէ, որ ժողովուրդն անվանում է «Էշի տեղ դնել», եւ մի՞թե այս վիճակը չի համապատասխանում Միրիամ-Իեբստեր կայքի հոգեզեղծմանը տված սահմանումներին:

Իսկ է՛լ ինչ եղանակներ կարող են գործածել հոգեզեղծողները: Կան դրա բազմաթիվ հնարքներ: Դրանց մի մասը ներկայացված է այս հոդվածում.
<https://style.rbc.ru/life/604f05fe9a79477b66054b35#p6>

Օրինակ, փաստերի ժխտում.

Ինչպես եւ այդ հասկացությանը անուն տված շարժանկարում Էր. «դու նման բան չես ասել», կամ «ես նման բան չեմ արել»: Օրինակ. «Դուք խոստացել եք, որ ՆԱՏՈ-ն չի ընդարձակվի դեպի արեւելք». «Ո՛չ, մենք նման բան չենք

խոստացել, Ուկրաինան անկախ պետություն է»: Կամ. «Դուք խոստացել եք, որ ՀԱՊԿ-ը կպաշտպանի Հայաստանին». «Ո՛չ, մենք նման բան չենք ասել. Ադրբեջանը մեր ռազմավարական դաշնակիցն է»:

Վիրավորական մակդիրների գործածում.

Դա կարող է լինել եւ ոչ գրաքննական մի մակդիր, օրինակ, փափուկ տարբերակով ասած, «սեւահետույք», եւ շատ ավելի անմեղ թվացող հեգնական հորինվածքներ, ասենք. «մաքրամոլ»: Օրինակ, հայոց ազգի, այն է՝ լեզվի թշնամիները սիրում են տարածել հեքիաթներ, թե, իբր, հայոց լեզվի անաղարտության կողմնակիցները առաջարկում են գործածել «երկարակլորախմորածակ», կամ այդ կարգի ինչ-որ այլ բառեր, թեեւ իրենք էլ գիտեն, որ նման բան ոչ ոք չի առաջարկել, այլ հենց իրենց, որպես խամաճիկ օգտագործող տերերն են իրենց բերանում տեղադրել այդ զառանցանքները:

Զգացմունքների նսեմացում.

Հիշում եք, թե որը եղավ 1988-ին արցախյան շարժման ամենաազդեցիկ «ծգանը». ոմն Օվչարենկոյի «Էմոցիի ի ռազում» հոդվածը, ըստ որի մենք, հայերս, ինչ-որ շատ զգացմունքային էինք: Դա վրդովեցրեց շատերին: Բայց դա առաջին փուլն էր: Իսկ հետո գտնվեցին շատերը, որ ընդունեցին դա, «հոգեզեղծվեցին». «Դե, ճիշտ են ասում, էլի. հայրենասիրությունս որն է»: Կամ, պնդում, որ տվյալ անձը (ազգը) ոչ համարժեքորեն է ընկալում աշխարհը. «Աշխարհը փոխվել է. ձեր կյանքով ապրեք. ձեր ի՞նչ գործն է. ինչ եղել է՝ անցել է»:

Պատասխանատվությունից խուսափում.

Դա հենց հիմա մենք տեսնում ենք թե՛ «Արեւմուտքի», թե՛ «Հյուսիսի», եւ թե՛ «Նախկինների» եւ թե՛ «Ներկաների» կողմից: Ինչո՞ւ հայ ազգը հայտնվեց այս ողբալի վիճակում. մեղավորներ բոլորն են, բացի իրենցից: Եւ հիմնականում, հենց հայ ազգը. «Էդ էիք ուզում»: Կամ մի հայտնի հմուտ սոփեստի բառերը. «Յուրաքանչյուր ժողովուրդ արժանի է իր ղեկավարներին», որ թարգմանաբար նշանակում է. «Մեղավորը միշտ ժողովուրդն է»: Բայ. անորոշ «ժողովուրդը» միշտ մեղավոր է, բայց ոչ մի որոշակի «առաջնորդ» կամ «ընդդիմություն» մեղավոր չէ:

Հարձակողականություն.

Հոգեզեղծողը հարձակողական է: Ահա, այսպիսի մեջբերում՝ Դիմատետրից. «Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժից ոչ միայն չպետք է հրճվել, այլ նաև պետք է գիտակցել, որ եթե հանկարծ Հայաստանում նման ուժգնությամբ երկրաշարժ տեղի ունենա, ամեն ինչ հողին կհավասարվի, Երևանն էլ կվերածվի փլատակների: Թուրքիայում ամեն ինչ արագ կվերականգնեն, իրենց տները կորցրած մարդկանց էլ նոր տներ կան: Այդ Թուրքիայում չէ, որ 30 տարի անց դեռ երկրաշարժի հետևանքով անտուն մնացածներ մարդիկ կան: Դա Հայաստանն է»: Թարգմանում եմ հայերեն. «Կեցցեն թուրքերը, ես հիմանում եմ նրանցով. բա չէ,

դժբ, հայերդ. Էդ ղում հետք եք ուզում ոտ գցեք. սպասեք, հըլը գլխներիդ ինչեր են գալու»: Նույնիսկ չգիտես, դա անվանես «հարձակողականություն», թե՛ «հիվանդագին ինքնաստորացում», կամ մեկ այլ անվանում գտնես, մի երեւոյթին, երբ նման բաժակաճառ են ուղղում թշնամուն, մինչդեռ քո սեփական հայրենիքը (դե, տվյալ դեպքում՝ *Ճնդավայր* իմաստով) նման երկրաշարժից հետո դեռ վերջերս կարողացել է ուժ գտնել, եւ հենց իրեն, թուրքին դուրս շարտել մայր հողից: Չէ, սա իրոք «*հոգեզեղծում*» էլ չես անվանի, ոչ էլ *gaslighting*. սա իրոք «Էշի տեղ դնել» կարող է կոչվել միայն:

Բայց կա մեկ այլ կարելոր հանգամանք եւս. հոգեզեղծողի դերում հաճախ հանդես է գալիս մերձավորը: Մերձավորը առավել մեծ ազդեցություն ունի անձի (ազգի՝ բաղաբական կիրառման դեպքում) վրա: Գիտի Նրա թույլ, խոցելի տեղերը, Նրա հույզերը, եւ հեշտությամբ կարող է գործածել դրանք Նրան ի վնաս: Եւ մերձավորից էլ չեն սպասում հարված թիկունքից: Պատահական չէ, որ հիշյալ շարժանկարում հոգեզեղծողի դերում հենց կնոջ ամուսինն է:

Եւ ինչպէս անվանես երեւոյթը, երբ մի ազգ հայտարարում է իրեն քո «դաշնակիցը», ավելին՝ մերձավոր եղբայրը, գոյության գրավականը, հույսն ու ապավենը, դու էլ իր ասածը հալած եղի տեղ ես դնում. քո որդիները հարյուր հազարավոր զոհեր են տալիս հանուն Նրա, իսկ այդ ազգի կողմից լսվում են ձայներ, որ քո հողը իրենց անհրաժեշտ է առանց քո ազգի. որ իրենք կուզեն, որ քո ազգի վերջին նմուշը լինի դրա ներկայացուցչի խրտվիլակը՝ թանգարանում, երբ այդ ազգի մեծագույն բանաստեղծը հավասարության նշան է դնում քո ազգի եւ «ստրուկ, վախկոտ» հասկացությունների միջեւ:


Կամ մեկ այլ «դաշնակից», որ «մանդատով» իրեն հատկացված նախկին օսմանյան կայսրության հողակտորը (որն, ի դեպ, այսօր հենց կործանվեց երկրաշարժից) նախընտրում է հանձնել ոչ թե քեզ՝ իր դաշնակցին, մի փոքր պետություն վերակերտելու համար, այլ հանձնում է Նույն այդ օսմանյան կայսրության իրավահաջորդին:

Սա կարող է նշանակել, թերեւս, միայն մի բան. մեզ ոչ միայն հոգեզեղծում են այլեւ մենք արդեն իսկ հոգեզեղծված ենք: Իսկ դատելով աշխարհի վիճակից, այս հոգեզեղծվածների թիվը գերազանցում է 8 միլիարդը: Մենք սոսկ մի հասկն ենք այդ արտի...

Մխիթարում է միայն այն հանգամանքը, որ այդ հասկացությանը վերաբերող հարցումների քանակը ավելացել է 1740 տոկոսով. գուցե սկսել են ինչ-որ բան կասկածել...

09.02.2023

ՇՇԻ ՎՋԻԿԻ, ԱՐՑԱԽԻ ԵՒ ՀԱՅ ԱՉԳԻ ԱՊԱԳԱՅԻ ՄԱՍԻՆ



*Բաբելոնն է եղել մեր ախոյանը, տես -
Անհետ կորել, անցել է չար մշուշի պես:*

Անհետ կորել է Բաբելոնը, բայց ոչ միայն նա է կորել. շատերն են կորել, ու դեռ կորելու են: Իսկ շատերն էլ չեն կորել, բայց եղել են դրա եզրին. շփվողի եզրին...

Շփվողի երեսույթը կենսաբանական հասկացություն է, որը դրսևորվում է, երբ տվյալ ժողովուրդի թվաքանակը որոշակի ժամանակահատվածում ինչ-ինչ

պատճառներով կրճատվում է, ապա՝ վերականգնվում: Դա բերում է տարաբնույթ հետեւանքների, կապված դրա բազմազանության, կենսունակության հետ եւ այլն: Այդ երեւույթը համեմատում են շշի վզիկի հետ, քանի որ, եթե հորիզոնական գծով պատկերվեն տվյալ ժողովույթի առանձնյակների քանակը, իսկ ուղղաձիգ գծով՝ ժամանակը, ապա ժամանակի ընթացքում նվազող, եւ ապա՝ աճող այդ գծերի բազմությունը կկազմի շշի, կամ ավագի ժամացույցի ուրվագիծ (ինչպես այս նկարում է): Կենդանական ամենահայտնի տեսակը, որ անցել է այդպիսի վզիկով, թերեւս, գեպարդներն են. կա կարծիք, որ ինչ-որ պահ աշխարհում մնացել է այդ կենդանիների ընդամենը մեկ զույգ, բայց հիմա՝ փառք Աստծո... Իսկ, օրինակ, միջատները, անցնում են շշի վզիկով, ամեն տարի՝ ձմռանը. այդպիսի ճակատագիր է...

Պատճառները, որոնք բերում են տեսակներին, դրանց ժողովույթները շշի վզիկի եզրին, տարբեր են: Դա կարող է լինել սննդի պակասը, եղանակի փոփոխությունը, հրաբուխի ժայթքումը, երկնաքարի անկումը, բայց նաեւ՝ այլ տեսակների հետ անհաջող պայքարը, եւ արդյունքում՝ բնակության տարածքի եւ սննդի աղբյուրների կրճատումը: Բնականաբար, բոլոր տեսակներին չէ, որ հետո հաջողվում է հարմարվել նոր պայմաններին եւ վերականգնել թվաքանակը, այն է՝ դուրս գալ շշի վզիկից. հաճախ շիշն այդ, պատկերավոր ասած, հավերժ փակվում է դրանց առաջ եւ տվյալ տեսակը վերանում է:

Սովորաբար այդ հասկացությունը կիրառում են բուսական եւ կենդանական աշխարհի մասին խոսելիս: Սակայն այն միանգամայն կիրառելի է նաեւ ազգերի եւ առհասարակ՝ ցանկացած բազմացող համակարգերի դեպքում, օրինակ՝ բյուրեղների: Ցավոք, եթե կենսաբանական ժողովույթների մասին մեծաքանակ գրականություն կա, սակայն ազգերի մասին այն շատ քիչ է. ցավոտ նյութ է... Օրինակ, համեմատաբար հաճախ են գրում աշկենագ-հրեաների շշի վզիկով անցնելու մասին: Իսկ ի՞նչ կարելի է ասել, մյուս ազգերի մասին՝ պարզ չէ: Ավելի հեշտ է խոսել այն ազգերի մասին, որոնք չեն անցել... աքբադացիները, մարերը, Էտրուսկները... Նրանք արդեն չեն դժգոհի եւ իրենց մասին կարելի է խոսել...

Բայց մեզ հետաքրքրում են ոչ թե այլ ազգերը, այլ հենց մերը: Կարելի է չկասկածել, որ մեր ազգը պատմության ընթացքում անցել է այդպիսի առնվազն մեկ վզիկով. պարզ է, խոսքը Մեծ եղեռնի մասին է: Այսօր հայերի (կամ ավելի ճիշտ, նրանց, ովքեր ծագումով հայ են) թվաքանակը աշխարհում մոտավորապես նույնքան է, որքան եղեռնից առաջ. այսինքն, թվում է թե, վերականգնվել հաջողվել է, բայց... Որպեսզի ազգը (ոչ թե ծագումով այդ ազգից, այլ համապատասխան լեզվով խոսողների բազմությունը) գոյատեւի նրան անհրաժեշտ է տարածք, որի վրա այդ լեզվի կրողները կկազմակերպեն իրենց

առօրյան՝ հենց այդ լեզվի հիման վրա: Եւ ահա, եթե կենսաբանական միավորների՝ անհատների, կներեք՝ առանձնյակների մակարդակով հայ ազգը անցավ 22ի վզիկով, ապա տարածքի առումով՝ ոչ. այսօր հայ ազգը բնակվում է հինգ տոկոսի վրա այն տարածքի, որի այն ձեւավորվել է: Իսկ դա նշանակում է, որ հայ ազգը հիմա գտնվում է իր գոյությունը պահպանելու տեսակետից խիստ անբարենպաստ պայմաններում: Կրկնում եմ՝ որպես ազգ, այլ ոչ թե՝ ժողովուրդ: Որպես ժողովուրդ ոչ մի խնդիր չկա. տարածքը միշտ էլ ինչ-որ մարդիկ բնակեցնելու են. գուցե նույնիսկ «հայ» էլ կկոչվեն: Օրինակ, այսօրվա մակեդոնացիները սլավոններ են, ոչ թե Մեծ Ալեքսանդրի ցեղակիցները: Կամ այսօրվա բուլղարացիները Ասպարուխի ազգակիցները չեն: Հեռու չգնանք, այսօրվա ազերիները, ինչ կապ ունեն իրանական «ազերի» ցեղի հետ, բացի անունից եւ տարածքից, որի վրա այսօր բնակվել են: Ու եթե ինչ-որ ժամանակ հետո երբեմնի Արմենիայի տարածքում բնակվեն Էրմենիներ, դրանք իո հորենացու կամ Տերյանի լեզվով չեն խոսելու: Գլխի ընկնում եք թե, որ լեզվով... ԵՐԱՁՆԵՐԻ...

Այնպես որ ինքնախաբեությամբ չարժե տարվել. այսօր մենք Մեծ Եղեռնի արդյունքում ձեւավորված «22ի վզիկից» դեռ դուրս չեն եկել: Մի պահ, թվում էր, գուցե՝ հաջողվի: Բայց ահա, մենք (նկատի ունեմ՝ հայախոսներս), կորցնում ենք նաեւ Արցախը, այնպես որ, 22ի վզիկը մենք դեռ չենք անցել: Նայեք նկարին, որի վրա պատկերված են կենդանական աշխարհից նման օրինակներ. դրանցից մի մասին հաջողվել է նորից ընդլայնվել, մյուսներին՝ ոչ. նրանց թվաքանակի պատկերը նմանվել է ոչ թե 22ի վզիկի, կամ՝ ավազի ժամացույցի, այլ՝ իլիկի. նրանց ժամանակը սպառվել է:

Այսօր է լուծվում մեր հարցը. արդյո՞ք ապագայում կարձանագրեն, որ պատմության ընթացքում մեր բաշխումը նմանվել է այդպիսի իլիկի, թե, այնուամենայնիվ, 22ի վզիկի, կամ ավազի ժամացույցի, որը դեռ երկար կչափի մեր պատմության տեւողությունը:

21.01.2023

CAPITULATION.

ԱՐԴՅՈՔ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐՏՎԵԼ Ե ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Վերջին օրերին կրկին սկսեցին խոսել capitulation-ից: Ասում են, կրկին, քանի որ 2020 նոյեմբերի 10-ի հրադադարի մասին համաձայնագիրը նույնպես capitulation էր իր էությամբ: Ուստի իմաստ ունի հիշել, թե դա ինչ է: Ես գրում եմ այս բառը լատինատառ, քանի որ ներկայիս հայերենում դա չուրացված փոխառություն է, այսինքն, հայոց լեզվի կրողները ոչ միարժեք են այն ընկալում: Հենց դրանից է բխում այդ բառի իմաստը առանձին ներկայացնելու անհրաժեշտությունը (ի տարբերություն, օրինակ «տրակտոր», կամ «կոկտեյլ» բառերի, որոնց իմաստը հայախոսները ընկալում են միարժեքորեն): Սովորաբար, երբ հնչում է այդ բառը, միանգամից հիշվում է պարտված Գերմանիան, եւ Երրորդ ռեյխի գեներալ Վիլիելմ Կեյտելը, որը ստորագրում է Երկրորդ Աշխարհամարտում Գերմանիայի «անվերապահ capitulation-ը»: Իսկ թե դա ինչ է եւ ինչ է դրանից հետեւում, արդեն մշուշոտ է, եւ այդ հասկացությանը վատ ծանոթ մարդուն (կամ՝ ժողովրդին) հեշտ ու հանգիստ կարելի է «տերմինակոխ» անել:

Եւ այսպիսով, ինչ է capitulation-ը: Դա եւրոպական միջնադարյան հասկացություն է, որ նշանակում է «*համաձայնագիր՝ որոշակի պայմաններով*»: Ծագում է միջնադարյան լատին *capitulare* բայից, որն ունի «*կազմել՝ գլուխ առ գլուխ*» իմաստը, քանի որ լատիներեն *capitulum* նշանակում է «գլխիկ» (որպես նվազական՝ լատ. *caput* «գլուխ» բառի), այդ թվում եւ՝ «գրվածքի, գրքի գլուխ»: Ինչպես տեսնում ենք բավական չեզոք հասկացություն է: Սակայն 17-րդ դարից, մոտավորապես՝ Վեստֆալյան խաղաղ համաձայնագրից հետո այդ եզրույթի իմաստը նեղանում է, ստանալով «*համաձայնագիր՝ հաղթած թշնամուն որոշակի պայմաններով ենթարկվելու մասին*» իմաստը: Գոյություն ունի նաեւ անգլերեն՝ *unconditional surrender* «*անվերապահ հանձնում*» հասկացությունը (հապավումը՝ *US*՝ չփոթել *United States*-ի հետ): Այս դեպքում ոչ մի պայման՝ *condition*՝ լինել չի

կարող, եւ պարտված կողմը դառնում է հաղթած կողմի լիակատար սեփականությունը եւ կարող է միայն երերուն հույս ունենալ, որ իրեն չեն ոչնչացնի:

Իսկ այս պահից՝ ավելի ուշադիր: Այսինքն, երբ ասում են, որ Հայաստանը պիտի capitulation-ի ենթարկվի, նախ պետք է հասկանալ, թե. **ա.** ինչու, **բ.** ինչ capitulation-ի մասին է խոսքը. ինչ-որ որոշակի պայմաններով, թե՛ անվերապահ, այն է՝ US:

Նախ **ա.** կետի մասին, որ այնքան էլ ակնհայտ չէ, որքան կարող է թվալ: Արդյո՞ք Հայաստանը պարտվել է պատերազմում, որ պիտի հանձնվի: Թվում է թե՛ պարտվել է՝ 44-օրյա պատերազմում: Սակայն պարտության մասին կարելի էր խոսել միայն եթե գործադրվել էին բոլոր հնարավոր միջոցները, որոնք անգործ են եղել ետ մղել թշնամու հարձակումը: Սակայն Հայոց բանակը այդ պատերազմում ոչ միայն չի գործածել իր բոլոր առկա զինատեսակները եւ զինամթերքը, այլեւ երկրում նույնիսկ ռազմական դրություն եւ զորահավաք չի հայտարարել: Ինչպե՞ս կարելի է պարտվել իրավաբանորեն չկայացած պատերազմում: Հետեւապես տվյալ դեպքում մենք գործ ունենք հանձնման հետ ոչ թե թշնամուց պարտություն կրելու հետեւանքով, այլ՝ կանխավ՝ մինչեւ պարտություն կրելը: Իսկ այս երեւույթը արդեն այլ անուն ունի:

Այսպիսով, *թյուրիմացություն* է այն պնդումը, թե, իբր, Ադրբեջանը շահել է պատերազմը, եւ իրավունք ունի խոսել Հայաստանի capitulation պահանջելու մասին: Իրականում, Ադրբեջանը շահել է ոչ թե պատերազմը, այլ ճակատամարտը. պատերազմը շահում են միայն այն ժամանակ, երբ հակառակորդը capitulation-ի է ենթարկվում: Այսինքն, շփոթված են պատճառն ու հետեւանքը. ոչ թե Ադրբեջանը շահել էր պատերազմը, դրա հետեւանքով Հայաստանը ստորագրեց Նոյեմբերի 10-ի համաձայնագիրը (ըստ էության՝ capitulation-ը), այլ հակառակը. Ադրբեջանը համարեց, որ շահել է պատերազմը, քանի որ Հայաստանը ստորագրել էր այդ համաձայնագիրը:

Եւ ահա նոր զիջումների, նոր capitulation-ի մասին է խոսքը: Բայց կրկին. ոչ թե Ադրբեջանը հաղթել է պատերազմում, ուստի եւ կարող է Հայաստանին capitulation-ի ենթարկել, այլ հակառակը. եթե Հայաստանը ընդունի առաջարկած հերթական capitulation-ի պայմանները, ապա Ադրբեջանը (եւ նրանք, ովքեր Հայաստանին դրդել եւ դրդում են այդ քայլին) կարող են համարել, որ շահել են պատերազմը: Պատերազմի ու ճակատամարտի, ինչպես նաեւ՝ *պատճառի* եւ *հետեւանքի* շփոթությունը շատ շատերին է փորձանքի բերել, ու, ցավոք, շարունակում է բերել:

Ոչ պակաս կարեւոր է ք. կետը. ինչ capitulation են մեզ գուժում, ինչ պայմաններով. արդյո՞ք այն տարբերվում է ՍՏ-ից: Եթե չի տարբերվում, ապա դա պարզապես հավասարազոր է Հայաստանի պետականության ոչնչացմանը. գուցե՝ մի փոքր հետաձգված: Որովհետեւ, մի բան է, երբ Գերմանիան է ենթարկվում ՍՏ-ի՝ Ռուսաստանի կողմից, կամ Ճապոնիան է ենթարկվում ՍՏ-ի՝ ՍՏ-ի կողմից, եւ այլ բան՝ եթե Հայաստանը՝ թյուրքական պետությունների կողմից:

Եւ ահա պարզվում է, որ այդ պայմանների մասին ոչինչ հայտնի չէ:

Գուցե դրա պատճառն այն է, որ Հայաստանի հակառակորդը Ադրբեյջանը չէ (կամ՝ Թուրքիան), այլ միջազգային հանրությունն է, ուստի Հայաստանին ոչ ոք մտադիր չէ պարզաբանումներ տալու, իսկ Հայաստանն էլ անգործ է հակադրվելու ամբողջ աշխարհին: Բայց սա նույնպես *թյուրիմացություն* է: Գուցե մինչեւ 2022-ը այդպես էր, սակայն Ռուս-Ուկրաինական պատերազմից հետո պարզ դարձավ, որ միասնական «միջազգային հանրություն» այլեւս գոյություն չունի: Կարող են առարկել, որ, գուցե Ուկրաինայի մասով կան տարածայնություններ, բայց Հայաստանի հարցում ոչ մի տարածայնություն չկա: Գուցե: Իսկ գուցե՝ ոչ: Մենք այդ «միջազգային հանրության» ծրագրերի մասին ոչինչ չգիտենք. սա քաղաքականության ոլորտ է եւ տեղեկությունը փակ է. «Քաղաքականություն» կոչված ՄԵԾ ԽԱՂԸ բաց քարտերով չեն խաղում:

Սակայն դա նշանակում է, որ նրանք, ովքեր խոսում են Հայաստանի capitulation-ի անխուսափելիության մասին նույնպես ոչինչ չգիտեն: Ստացվում է, որ նրանք, ովքեր այդ ծրագրերի մասին ոչինչ չգիտեն, փորձում են համոզել մեզ (որ նույնպես ոչինչ չգիտենք), թե Հայաստանը այլ ելք չունի: Բայց, պարոնայք, եթե դուք ինքներդ չգիտեք, ինչպե՞ս կարող եք այդքան վստահորեն պնդել, որ Հայաստանը պիտի կատարի այսինչ ու այսինչ քայլերը, եւ որ այլ տարբերակ չկա: Ուրեմն դուք ինչ-որ բան այնուամենայնիվ գիտե՞ք:

Հիշ՞ում եք «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր» խաղը, երբ խաղավարը (որը գիտի հարցի պատասխանը) մրցանակային մեծ գումարներին հասնելուց հետո սկսում է մոլորեցնել խաղացողին, ու երբեմն կարողանում է (հոգուտ խաղի հովանավորներին) համոզել նրան հեռանալ խաղից՝ սոսկ նվազագույն շահումը վերցրած, կամ դրդում է սխալ պատասխանի ընտրության, եւ արդյունքում նրա ձեռքին մնում է սոսկ չնչին «անձեռնմխելի» գումարը, մինչդեռ նրանք մոտ էին բաղձալի միլիոնին: Ոչինչ չի հիշեցնում: Այդպես 1918 թվականին Հայաստանի կառավարությունը ստորագրեց Բաթումի պայմանագիրը, ըստ որի մեզ մնում էին միայն Երեւանն ու Էջմիածինը, եւ արգելվում էր բանակ ունենալ: Այլ կերպ. մեզ պիտի բռնաբարեին, իսկ մենք՝ դիմանայինք: Եւ դա ստորագրել էր Առաջին Հանրապետության «կառավարությունը»: Եւ դա այն դեպքում, երբ մինչեւ

Առաջին աշխարհամարտի ավարտը եւ Օսմանյան պետության կործանումը մտում էր ընդամենը 5 ամիս: Արդյոք այս անգամ եւս մեր «կառավարություն» եւ «иже с ними», չեն պատրաստվում ստորագրել այդ կարգի մի նոր փաստաթուղթ: Եւ իրավիճակն էլ աշխարհում, ասես, նույնն է, ինչ 104 տարի առաջ. աշխարհը մուտք է գործել անկանխատեսելի փոփոխությունների՝ turbulent-ության գոտի. ինչ էլ լինելու վաղը կամ մեկ ամիս անց, ոչ ոք չգիտի: Այսօր կարելի է ստանալ ամեն ինչ եւ կորցնել ամեն ինչ, իսկ մեզ հայտարարում են, որ չգիտեն ոչինչ, բայց չիմանալով ոչինչ, ուզում են մեզ առաջնորդել: Կամ վստահել այն միակին, ով արդեն ստորագրել է մի capitulation, եւ ինչ-որ բան գիտի (իրենց՝ չիմացողների կարծիքով): Իսկ թե՛ չգիտի: Կամ գիտի սոսկ այն ինչ իրենց թույլատրված է իմանալ: Կամ «գիտի» հակառակը:

Եւ ինչ է նշանակում, թե այլապես Հայաստանը կարող է ոչնչանալ: Ինչպես ասել է Լեոնիդը (ոչ Իլիչը)՝ հույն արքան՝ Μολών λαβέ — արի վերց(րու): Ճիշտ է, դրա համար Լեոնիդի կարգի մարդ պիտի կառավարի Հայքը, այլ ոչ թե... Եւ առհասարակ, այսօրվա միջազգային դրության պայմաններում դեռ պարզ չէ, թե՛ ո՞վ առաջինը կոչնչանա. Հայաստանը, թե՛ Նրանք, ովքեր դա պարտադրում են Հայաստանին, եւ կամ թե՛ հենց Երկիր մոլորակը:

Կա մեկ այլ *թյուրիմացություն* եւս. եթե մեզ մի քանի դար ոչինչ չէր հաջողվել, ապա այլեւս նույնպես չի հաջողվելու: Շատ էինք ուրախացել, որ կարողացել էինք ազատագրել Արցախը, բայց դա սոսկ պատահականություն էր. մեր ազգը «պետական մտածելակերպ չունի», «պետություն պահել ընդունակ չէ», առավել եւս՝ ուժեղ պետություն: Մենք հագիվ մի փոքր «մշակութային ինքնավարության ենք արժանի»: Ա՛յ այդպես. ուրիշ ազգեր կարող են դարեր առաջ կորցրած պետությունը վերականգնել, իսկ մենք՝ ոչ: Իրենք ունեն «պետական մտածելակերպ», մենք՝ ոչ (չես հասկանում, թե՛ այդ դեպքում Նրանք ինչու էին կորցրել իրենց պետականությունը, եթե այդքան խելոք էին): Սա թերեւս թյուրիմացություններից ամենավտանգավորն է, որովհետեւ երկրի հեռանկարը կախման մեջ է դրվում ոչ թե՛ այսօրվա կատարվելիք քայլերից, այլ անցյալի անհաջողություններից: Եւ ստացվում է, որ պիտի ընտրություն կատարենք ոչ թե՛ լավի ու վատի միջեւ, այլ վատի, եւ ավելի վատի:

Կան եւ այլ *թյուրիմացություններ*: Օրինակ, թե, իբր, չկան հարեւան պետություններ, որոնք չունեն հաշտության պայմանագրեր: Իսկ ղմ հետ են այդ դեպքում թշնամական հարաբերությունների մեջ լինում, եթե ոչ՝ հարեւանների: Հենց այսօրվա աշխարհում հաշտության պայմանագրեր չունեն Ռուսաստանը եւ Ճապոնիան, Իսրայելը եւ Սիրիան, Հարավային եւ Հյուսիսային Կորեաները, մի շարք այլ երկրներ: Տասնյակ հարեւաններ տասնամյակների ու դարերի ընթացքում չեն ունեցել խաղաղ պայմանագրեր: Ու ոչինչ, ապրել են: Ավելին, դա

սոսկ վերջին տասնամյակների անբնականորեն խաղաղ դարաշրջանի հատկությունն էին «բարի դրացիական» հարաբերությունները, մինչդեռ, դարեր շարունակ, Նույն Եւրոպայում ավելի սովորական էր պատերազմական վիճակը հարեւանների հետ, քան խաղաղը: Եւ, կարծես թէ, աշխարհը շարժվում է Նոր անկայունության ուղղությամբ, եւ շուտով հարեւանների միջեւ խաղաղ հարաբերություններն են զարմացնելու:

Եւ առհասարակ, պատերազմները (հատկապես՝ հարեւանների միջեւ) երբեք չեն դադարում: Յուրաքանչյուր պատերազմի ավարտ կարելի է դիտել սոսկ որպէս հրադադար՝ ճակատամարտից հետո, որը տեւում է մինչեւ հաջորդ պատերազմը (կամ երէ կուզե՞ճ՝ ճակատամարտը): Այդպէս, իրականում չեն եղել առանձին Առաջին եւ Երկրորդ Համաշխարհային պատերազմներ, այլ մեկ միասնական Համաշխարհային պատերազմ՝ հանուն համաշխարհային տիրապետության, «գլոբալ» աշխարհին տիրանալու, որը սոսկ ունեցել է մի հրադադար Առաջին համաշխարհային «ճակատամարտից» հետո, երբ 1918-ին Գերմանիան capitulation-ի ենթարկվեց: Ապա 1945-ին ԽՍՀՄ-ը շահեց քառամյա «ճակատամարտը» եւ Գերմանիան capitulation-ի ենթարկվեց: Ապա հաջորդեց եւս մի հրադադար, որը ստացավ «սառը պատերազմ» անվանումը, եւ որի արդյունքում Է՝ 1991-ին այդ «սառը ճակատամարտի» արդյունքում փլուզվեց ԽՍՀՄ-ը եւ, ի վերջո հաջողվեց հասնել միասնական համաշխարհային վերահսկողությանը, ըստ «կանոնների»:

«Կանոնների», որոնք մեր աչքի առաջ խախտում են հենց Նրանք, ովքեր դրանք հաստատել են: Իսկ դրա պատճառն այն է, որ «կանոնը» կամ «օրենքը» ուժ ունի միայն երէ այն անասան է: Հակառակ դրան, երբ ամեն քայլափոխին այն հարմարեցնում են քո շահերին (եւ դա բնական է արագ փոփոխվող SS-ով եւ ԱԲ-ով հագեցած դարում) օրենքը (կամ՝ կանոնը) արժեզրկվում է: Երբ ճանաչում են Կոսովոյի անկախությունը, ու չեն ճանաչում Ղրիմի ռուսաստանյան պատկանելությունը կամ Արցախի անկախությունը: Ընդ որում Ռուսաստանը, որ կուզեր, որ Ղրիմը իր անբաժանելի մասը ճանաչվեր այլ պետությունների կողմից, ինքն էլ չի ճանաչում Արցախի հայկական պատկանելությունը եւ փաստացիորեն աջակցում է Ադրբեջանին: Մինչդեռ, ինչպէս ասում է ռուս ժողովուրդը. «*Как аукнется, так и откликнется*»: Թեեւ ինչի մասին է խոսքը, երբ Նույնիսկ Մենք ինքներս չճանաչեցինք մեր իսկ Հայրենիքի այդ Նահանգը Հայոց պետության անբաժանելի մաս...

Եւ ահա այսօր արդեն մի պահ հաստատված «գլոբալ աշխարհը» տրոհվում է: Բնագիտությունից հայտնի է, որ որքան էլ միջավայրը համասեռ լինի, Նրանում միշտ էլ կգտնվեն աննշան անհամասեռություններ, որոնք դառնալով ձգողության կենտրոններ կբերեն անկայունության եւ միասնական միջավայրի

տրոհմանը առանձին հատվածների: Հենց այդ գործընթացի՝ *համաշխարհային միասնական քաղաքական միջավայրի տրոհման* սկզբին ենք մենք հիմա ակնատես դարձել: Միջավայրի, որը թվում էր, թե համասեռ է եւ վերահսկվում է միասնական «կանոններով» եւ ատյաններով: Տրոհման այդ գործընթացը կազմվելու է անթիվ ճակատամարտերի եւ հրադադարների շարանից՝ բոլոր երկրների միջեւ. հարեւան եւ ոչ հարեւան: Կազմվելու են նորանոր դաշինքներ ու փլուզվելու են, իրենց տեղը գիջելով նոր դաշինքների. հավերժական խաղաղություն երբեք չի լինելու. այն բոլորովին այլ աշխարհում պետք է որոնել... Եւ գոյատևելու համար ազգերը պիտի կարողանան մշտական պայքարի, մշտական ճակատամարտի պատրաստ լինել. չարաչար կսխալվեն նրանք, ովքեր կկարծեն, թե խաղաղությունը կարող է հավերժական լինել, հաստատվելով ինչ-որ թղթի ուժով...

Մենք արդեն տեսանք, որ capitulation-ը ընդամենը *«համաձայնագիր է որոշակի պայմանների մասին»*, այն է՝ թուղթ, որը միշտ կարելի է ճմռթել եւ դեն նետել: Սակայն հաղթած կողմին դա շատ ավելի հեշտ է անել, քան՝ պարտվածին: Եւ ոչ մի «երաշխավորի» «երաշխիք» լուծա չարժե: Ի վերջո, ինչո՞ւ վերջին ընդհարումների ժամանակ Հայաստանին *անվերապահորեն* չաջակցեց *դաշնակից* Ռուսաստանը: Կամ ո՞ր եւ Վիսունյան Հայաստանը եւ Սեւրի պայմանագիրը:

Այսպիսով, ասել, թե capitulation-ը անխուսափելի է, քանի դեռ երկիրը չի գործածել պաշտպանվելու բոլոր միջոցները, նշանակում է մոռանալ Չերչիլի խոսքը. *«Պատերազմի եւ պատվազրկման միջեւ դու նախընտրեցիր պատվազրկումը, եւ դու պատերազմ կունենաս»*. Նշանակում է չգիտակցել, որ վաղը մեր առջեւ կդնեն մի նոր capitulation-ի թուղթ, էլ ավելի խայտառակ պայմաններով. նշանակում է կորցնել պատմի ու բանականության բոլոր հետքերը:

Թեեւ... ի՞նչ իմաստ ունի խոսել այդ հասկացություններից մի դարում, երբ պատիվը ժամանակավրեպ է, իսկ բանականությունը՝ արհեստական: Նույնիսկ երբ ծնվում է *բնական* ուղեղում:

28.09.2022

ՈՐՆ Ե ՊԱՏՃԱՌԸ, ՈՐ...

Ինչպես հայտնի է (ասում են), Ռուսաստանը Հայաստանի գոյության երաշխավորն է, իսկ Հայաստանը՝ Ռուսաստանի առաջապահը: Եւ առհասարակ, մեր ազգերը եղբայրներ են. ռուսները ավագ եղբայրն են, հայերը՝ կրտսեր: Եւ ընթացող պատերազմները, որոնց մասնակցում են «եղբայրները», որքան նման են մի շարք մանրամասներով: Եւ նույնիսկ այն մանրամասները, որոնցով եղբայրները տարբերվում են, միեւնույն է բերում են արդյունքում ընդհանուր պատկերի նմանության: Եւ այսպես, հրն է պատճառը, որ.

Հայաստանում ասում են «Հաղթելու ենք», բայց պարտվում են:

Ռուսաստանում ասում են «Հաղթելու ենք», բայց պարտվում են:

Հայաստանում հարցնում են, ինչո՞ւ բանակը չի հարվածում թշնամու կարեւոր ռազմական կետերին՝ երկաթգծին, կամուրջներին եւ այլն: Ընդ որում, Հայաստանը չի արտադրում դրա համար անհրաժեշտ զինատեսակներ, բայց չի գործադրում նույնիսկ այն ինչ ունի:

Ռուսաստանում հարցնում են, ինչո՞ւ բանակը չի հարվածում թշնամու կարեւոր ռազմական կետերին՝ երկաթգծին, կամուրջներին եւ այլն: Ընդ որում, Ռուսաստանը արտադրում է դրա համար անհրաժեշտ զինատեսակներ, բայց չի գործադրում այն ինչ ունի:

Հայաստանում հարցնում են. ինչո՞ւ իշխանությունները չեն հայտարարում ռազմական դրություն, չեն խոստովանում, որ պատերազմ է ընթանում, այլ սոսկ խոսում են «սահմանային ընդհարումների» մասին:

Ռուսաստանում հարցնում են. ինչո՞ւ իշխանությունները չեն հայտարարում ռազմական դրություն, չեն խոստովանում, որ պատերազմ է, այլ սոսկ խոսում են «հատուկ ռազմական գործողություն» վարելու մասին:

Հայաստանում հարցնում են. ինչո՞ւ իշխանությունները չեն հայտարարում զորահավաք. առկա փոքր բանակով անհնար է դիմակայել գերազանցող

բանակին: Ընդ որում, Հայաստանը չունի բավարար ազգաբնակչություն բանակը անհրաժեշտ ծավալով համալրելու համար:

Ռուսաստանում հարցնում են. ինչո՞ւ իշխանությունները չեն հայտարարում զորահավաք. առկա փոքր բանակով անհնար է դիմակայել գերազանցող բանակին: Ընդ որում, Ռուսաստանը ունի բավարար ազգաբնակչություն բանակը անհրաժեշտ ծավալով համալրելու համար:

Հայաստանը ինքը չսկսեց ռազմական գործողությունները, բայց նրա պաշտպանական ծրագրերը տեղապտույտի մեջ են:

Ռուսաստանը ինքը սկսեց ռազմական գործողությունները, բայց նրա հարձակողական ծրագրերը տեղապտույտի մեջ են :

Ինչ ե՞ք կարծում, ինչո՞վ են բացատրվում այս զուգահեռները: Պատճառ պիտի լինի չէ՞: Պատահականություն չի, այդպես չէ՞:

15.09.2022

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐՈՅ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ



Այսպես են պատկերացնում Մաշտոցին, Եզնիկին եւ Կորյունին [Yelling](#)-ի «նկարիչները»:

Վերջերս ցանցային դաշտում նկատվեցին մի շարք նյութեր, որոնք ուղղված են հայ ինքնության խորհրդանիշների դեմ: Նման փաստեր եղել են եւ նախկինում: Պարբերաբար անհիմն քննադատության թիրախ են դառնում մեծանուն հայ առաջնորդներ, գիտնականներ, հոգեւորականներ, հայ ինքնության տեսակետից կարելուր գաղափարներ, պատմական իրադարձություններ, լեզուն: Ընդ որում, ի տարբերություն գիտական քննարկումների, որոնց շրջանակներում կարող են բարձրացվել ցանկացած խնդիրներ եւ վերլուծվել գիտական եղանակների կիրառմամբ, ինդրո առարկա դեպքերում նպատակ է դրվում պարզապես խայթել, ծանակել կամ անապացույց պնդումների հիման վրա մերժել այն, ինչը

մի ամբողջ ազգի հավաքական «ես»-ի մաս է կազմում: Երբեմն նման հարվածները կատարվում են նաեւ գիտական դաշտում, ու թեեւ դրանք գուցե նույնիսկ ավելի վտանգավոր են, բայց սովորաբար ստանում են բանիմաց գիտնականների հակահարվածը կամ գոնե մնում են նեղ գիտական հանրության շրջանակներում: Թեեւ, երբեմն, նաեւ գիտական ոլորտում դրանք հաջողության են հասնում եւ տեղ գտնելով գիտակրթական գրականության մեջ տասնամյակների ընթացքում ազդում են երիտասարդների աշխարհայացքի ձեւավորման վրա:

Այդ իմաստով, խնդրո՞ւ առարկա դեպքերը ոչնչով չեն տարբերվում նախորդներից: Սակայն այս անգամ դրանք կասկածելի զուգադիպությամբ դիտվեցին մեր ազգի համար ներկայիս՝ քաղաքական առումով դժվարագույն պահին, մի քանի օրվա ընթացքում ու նաեւ դրսեւորեցին նկատելի փոխկապվածություն արծարծվող նյութի, հիմնարկների եւ անձերի մասով, ասես ուղղորդված լինեին միեւնույն կետից: Ստորեւ փորձել եմ վերլուծել դրանք:

Վարդան Մամիկոնյանը եւ Ավարայրի ճակատամարտը

Ֆեյսբուքում Karen Sargsyan օգտվողը, զետեղել է հետեւյալ գրառումը (ոճը եւ ուղղագրությունը, ավելի ճիշտ դրա բացակայությունը, ըստ բնագրի)․

«Մահ չիմացյալ՝ մահ

Մահ իմացյալ՝ ԱԽՄԱԽՈՒԹՅՈՒՆ

*Արա, որ ասում եմ՝ Վարդան Մամիկոնյան կոչվածը մի
առանձապես հիշատակելու բան չի... 🤔*

*Ֆեյերիչեսկիյ դոլբոյոբ պտի լինես, որ 60(!) հազարանոց (տո լամբ
է) բանակը այս ձոր մտցնես: Չի տեղավորվի: Այնպես որ ճիշտ բանակը
10 անգամ պակաս:*

*Երկու ամենաստախոս ավանդույթները՝ եկեղեցական ու
ռուսոլմանական, միավորվեցին և մեզ համար ստեղծեցին կործանիչ
մի լեզուն: 🤔 Դրա համար էլ բան չի ստացվում: Որ երբեք չեղած
իրականության մոդելով ապրում ես դառնում ես հեքիաթային
դալբայոբ 🤔🤔🤔🤔»*

Այս գրառումը ուղեկցված է անհարթ եւ քարքարոտ հատակով մի նեղ կիրճի լուսանկարներով, որոնցում, իբր, պատկերված է Ավարայրի դաշտը: Ինչ հիմնավորմամբ է որոշվել, թե սա հենց այդ դաշտն է, չի նշված: Երբ նայում ես այդ կիրճին, հասկանում ես, որ նյութի հեղինակը միանգամայն իրավացի է. 60 հազարանոց զորք այդտեղ չէր տեղավորվի: Բայց նույնիսկ 6 հազարանոց զորքն

Էլ այդտեղ չէր մտնի, Էլ չեմ ասում՝ զորաշարժեր կատարի: Դեռ չհաշված, որ այդտեղ նաեւ պարսկական զորքն Էլ պիտի տեղավորվեր եւ տեղաշարժվեր, իսկ այն Էլ ավելի մեծ էր:

Բնչ պիտի աներ քարոզչական շղարշը աչքերին չունեցող եւ սթափ դատող մարդը: Պիտի արձանագրեր, որ ուրեմն, այդ կիրճը Ավարայրի դաշտի հետ ոչ մի կապ չունի: Իսկ Բնչ Է անում Karen Sargsyan-ը. կասկածի տակ չդնելով պնդումը, թե դա Ավարայրի դաշտն Է (այն դեպքում, երբ մասնագետ պատմաբանների շրջանում շարունակվում են այդ դաշտի տեղորոշմանն ուղղված հետազոտությունները), անմիջապես անցնում Է հայիոյանքների (որոնց հրապարակումը ֆեյսբուքյան աղբանոցից դուրս կարող Է խնդրահարույց լինել): Նա նողկալի հայիոյանք Է ուղղում հայ մեծանուն առաջնորդներից մեկին, ապա ստախոս Է հայտարարում հայ եկեղեցականներին, եւ վերջապես գործածում մի նորաբանություն, որով վիրավորում Է մի՛ կողմից ռուս ազգը, մյուս կողմից՝ մահմեդականներին: Այսինքն մեկ գրառման մեջ նա հասցնում Է վիրավորել հայերին (ոչ անպայման՝ քրիստոնյա), հավատացյալ քրիստոնյաներին, ռուսներին եւ մահմեդականներին: Այսինքն կատարել արարք, որի համար Հայաստանի օրենսդրությամբ չորս անգամ առանձին-առանձին կարելի Է պատժել (մասնավորապես, Քրեական օրենսգրքի 203 հոդվածով):

Բայց, ինչպես ասում են, սատանան մանրուքներում Է թաքնված: Պարզվում Է, որ նույն օգտվողը դեմ Է արտահայտվում նաեւ Հատիս լեռան վրա Հիսուսի արձանի կառուցմանը. թվում Է թե գործ ունենք պարզապես քրիստոնեության դեմ արտահայտվող անձի հետ: Սակայն, մի կողմից, ինչպես տեսանք, նա արհամարհանքով Է արտահայտվում նաեւ մահմեդականների հասցեով (գուցե նա, պարզապես, աբրահամյան կրոնների դեմ Է), իսկ մյուս կողմից, հայտնի Է, որ այդ կոթողի դեմ են արտահայտվում նաեւ հավատացյալ քրիստոնյաները, մասնավորապես, քանի որ 10 պատվիրաններից երկրորդում ասված Է. *«Վերևում՝ երկնքում, ներքևում՝ երկրի վրայ, և երկրի խորքի ջրերի մեջ եղած որևէ բանի նմանությամբ քեզ կոռքեր չպիտի կերտես»*: Այսպիսով, ստեղծվում Է գաղափարական բացահայտ խառնաշփոթ՝ պղտոր ջուր, որում ջուր պղտորողը ինչ ուզի կորսա, քանի որ ընթերցողները չեն հասկանա, թե, ի վերջո, այս հեղինակը ինչի կողմնակից Է:

Այս օգտվողին (որը հավանաբար հայագիտությամբ չի հետաքրքրվում, թեեւ խոսում Է դրա մասին) կարող եմ տեղեկացնել, որ վերջին երկու դարերի ընթացքում հայագիտության մեջ առաջարկվել Է Ավարայրի դաշտի տեղորոշման 10-ից ավելի տարբերակ: Իսկ արդի հայագիտության առավել հիմնարար հետազոտություններում Ավարայրի դաշտը նույնականացվում Է Կարազիադոքիի դաշտի հետ: Այդ դաշտն այնքան մեծ եւ միանգամայն հարթ Է,

որ դրա սահմաններում կարող էր ընթանալ ոչ միայն Ավարայրի ճակատամարտը, որին երկու կողմից մասնակցել է առնվազն մոտ 170 հազար զինվոր (չհաշված օժանդակ ուժերը), այլ նաեւ Մարաթոնի եւ Մազնեսիայի ճակատամարտերը միաժամանակ: Պարզ է, որ Karen Sargsyan օգտվողին այդ տարբերակը ձեռնտու չէ, քանի որ նրա նպատակն է հայիոյել հայ մեծ զորավարին, ինչպես նաեւ վիրավորական ձեւով հեզնել իր իսկ նախնիների «Մահ իմացյալ՝ անմահություն է» հորդորը: Այլապես, պատկերացնում եք ինչ կլինի, եթե հայերն առաջնորդվեն այդ կարգախոսով. բա որ հանկարծ այն բարձրացնի հայոց բանակի ոգին...

Մեսրոպ Մաշտոցը եւ հայոց տառերը

Սրանից մի քանի օր առաջ նույն Ֆեյսբուքովից տեղեկացանք Մեսրոպ Մաշտոցին վարկաբեկող մի նախաձեռնության մասին: Թումո կենտրոնում *ԱՄՆ դեսպանության, Եւրոպական Միության եւ Գյուլբանկյան հիմնադրամի* աջակցությամբ պատրաստվել է գծապատկերային վեպ՝ հայերեն ասած «կոմիքս», ոչ ավել ոչ պակաս՝ «**Մաշտոց. ոչ այնքան ճշգրիտ պատմություն**» վերնագրով: Այսինքն: Պետք է հասկանալ, թե այն ինչ մենք գիտենք Մաշտոցի մասին *այնքան էլ ճիշտ չէ*: Նախաձեռնողները պնդում են, թե՝ ոչ: Ու թեեւ մեր առջեւ շատ հստակ ձեւակերպված արտահայտություն է, որը հազիվ թե հնարավոր է այլ կերպ հասկանալ, նրանք ցավում են, որ, այո, իրենց ճիշտ չեն հասկացել. պարզապես, պետք է հասկանալ, որ իրենց «*վեպը կիսով չափ փաստագրական է, կիսով չափ՝ հորինվածք*»: Հետաքրքիր է, թե ինչ ուղղությամբ է հորինված. արդյո՞ք ոչ վերոհիշյալ՝ Ավարայրին վերաբերող գրառման սկզբունքներով: Մյուս կողմից, ցանկացած վեպի վերնագիր այդ վեպի սեղմված արտահայտությունն է, եւ առնվազն (եթե հեղինակները ետին միտք չունենին, եւ սոսկ «պատահաբար» էին վերնագիրն այդպես երկիմաստորեն ձեւակերպել) նրանք առաջին իսկ քննադատությունից հետո պիտի փոխեին անունը: Սակայն կարծես թե նման ծրագրեր նրանք չունեն:

Նկատեմ, խնդիրը մեզ հասած մատենագրական տվյալները գիտականորեն վերլուծելու մասին չէ. բնական է, որ գիտական վերլուծությունը միշտ էլ կարող հայտնաբերել ինչ-որ անճշտություններ ավելի քան մեկ եւ կես հազարամյակ առաջ եղած դեպքերի նկարագրության մեջ: Բայց գիտական գործը կարողում են գիտնականները, ովքեր ծանոթ են գիտական հետազոտությունների սկզբունքներին: Իսկ այս դեպքում, ունենք երիտասարդ սերունդներին ուղղված մի արտադրանք, որը կարող է արմատապես խեղաթյուրել իրենց աշխարհայացքը: Ի դեպ այդ «վեպը» ստեղծել է Թումո կենտրոնի նախաձեռնությունը հանդիսացող եւ հույժ «հայեցի» Yelling («Բղավելով»)

անունը կրող հիմնարկությունը, որի կայքը չունի նույնիսկ հայերեն տարբերակ: Եւ դա չի էլ զարմացնում, քանի որ գրառման մեջ նշված է, որ «*Այսօր Թումոյի և Անտարես մեդիա հոլդինգի միջև կնքվեց պայմանագիր, ըստ որի գալիք ամիսներին կտպագրվի գրաֆիկական վեպի արևելահայերեն տարբերակը*: Այսինքն, հավանաբար, այս հորինվածքի նյութը, նախապես գրվել է հենց անգլերեն (այլապես, կրկնում եմ, կայքը հայկական տարբերակ կունենար, զոնե՝ արեւմտահայերեն), բանիմաց հրահանգիչների վերահսկողության տակ, եւ նոր միայն թարգմանվում է արեւելահայերեն (գուցե նաեւ արեւմտահայերեն): Ի դեպ այս հիմնարկի նաեւ մյուս գործերը՝ նույնպես պատանի լսարանին ուղղված՝ չեն փայլում գեղագիտական որակով, սակայն լավ կծառայեն զանգվածների հոգեբանությունը խաթարելու եւ գեղեցիկի մասին թյուր պատկերացում ձեւավորելու գործին: Մեղմ ասած:

Կրկին Մաշտոցի մասին

Իսկ այն կասկածը, որ գործ ունենք ոչ թե պատահականության, այլ հայ ինքնության դեմ կազմակերպված ուժգին համազարկի հետ, ամրապնդվում է մեկ այլ գրառմամբ՝ «*Rearrange with Narek Amirkhanyan*» էջում: Հաղորդավարի հյուրն էր գեղագիր Ռուբեն Մալայանը, ում «Ազատություն» ռադիոկայանը անվանեց «*Հեղափոխության նկարիչ*»: Ռուբենին ես անձամբ ճանաչում եմ, որպես լավ գեղագրի, բայց այստեղ նա հանդես է գալիս բոլորովին այլ՝ գաղափարախոսի դերում եւ ես ցավում եմ, որ դերն այդ բացասական էր: Բայց ինչ արած. *Amicus Plato sed magis amica veritas*:

Եւ կարծես հաստատելու համար կասկածները, որ Վարդանի եւ Մաշտոցի դեմ ուղղված հարվածները պատահական չեն Ռուբեն Մալայանը իր զրույցում անդրադառնում է այդ երկու խնդիրներին միաժամանակ: Բերենք երկժամյա երկխոսությունից մի կարճ հատված, որպեսզի ընթերցողը պատկերացնի, ինչպես ասում են թատերագետները՝ «*mise en scène*»-ը .

«Ի միջի այլոց, Մաշտոցի մասին շատ մեծ թյուրիմացություն կա, որ արի հիմա «*set the records straight*» (այն է՝ «ներկայացնել փաստեր մի բանի մասին, որի մասին մարդիկ ունեն կեղծ պատկերացումներ»):

«OK», արձագանքում է հաղորդավարը: Ապա Ռուբեն Մալայանը հայտարարում է.

«Մաշտոցը տառի ֆորմաներ չի մշակել: Մաշտոցի ֆունկցիայի մեջ մտել ա ֆոնետիկ կարգը հայերենի դասավորել: Ինքը լեզվաբան ա եղել, ինքը գեղագիր չի եղել»:

«Բա տառերը ղվ ա մշակել»

*«Դրա համար կար պրոֆեսիոնալ, որին հրավիրել են, որը եղել և
հույն (ի միջի այլոց, հայ չի եղել)»*

«Այսինքն մեր այբուբենի տառերը...»

«Այո...»

«... հույն մասնագետն և գրել...»

«Այո...»: «Այո...» «Այո...» «Այո...»:

«Իմ կյանքը լրիվ փոխվեց»:

Կարծում եմ, հաղորդավարը մի փոքր չափազանցնում է. այդ պահին, իր կյանքը հագիվ թե փոխվեց, բանի որ հաստատ գրույցից առաջ իրենք քննարկել էին նյութը, բայց, հավանաբար, փոխվեց հազարավոր դյուրահավատ ունկնդիրների կյանքը եւ աշխարհայացքը: Ինչի համար էլ նախաձեռնվել էր այս գրույցը:

Հետաքրքիր է նաեւ այս գրույցի անմիջական շարունակությունը. չբավարարվելով Մաշտոցին հասցված հարվածով, գրուցակիցները անցնում են հայ գրատպության հարցերին.

*«Ու ոչ մի զարմանալի բան չկա դրա մեջ: Ոչ մի զարմանալի բան
չկա, որտեւ եթե դու մի բան լավ չգիտես...»*

«Հա...»

*«... դու կկանչես մեկին ուրիշին, որը դա լավ և անում: Ի միջի այլոց,
առաջին հայկական տպատառ, տպած տառեր գեղեցիկ տառերը, փորել
և հունգարացի մի հատ տղա. հայերը ընդհանրապես չեն կարողացել
դա լավ անել»:*

«Հըըը...»

Բնչ եք կարծում, բերված օրինակներից հետո, արդյոք անհիմն է սկզբում արված ենթադրությունը, որ իրոք գործ ունենք համակարգված հակահայկական համագարկի հետ: Բայց անցնենք այս կարճ երկխոսության ընթացքում հնչած «փաստերին»:

Այո Մաշտոցը գեղագիր չի եղել, եւ առաջին գրությունները իրագործելու համար դիմել է ազգությամբ հույն գեղագիր Հռոփանոսի օգնությանը: Սակայն դա հայտնի է *դպրոցական դասագրքից*. պարզ չէ, թե ինչու պիտի դրանից հաղորդավարի «կյանքը փոխվեր»: Կամ էլ այս գրույցը, իրոք, ամբողջովին ներկայացում է: Կատ բեմադրված: Բայց իր նպատակներին, միանգամայն, ծառայող:

Ինչպես ասում է Ռուբեն Մալայանը, եթե մի բան լավ չգիտես, ճիշտ կլինի կանչես իմացող մեկին. մի բան, ինչը նա իր դեպքում նախընտրել է չանել: Ի դեպ, այստեղ էլ, ինչպես եւ Ավարայրի դաշտի տեղորոշման հարցում հետազոտողները միակարծիք չեն, եւ տառաձեւերի (մասնագիտական եզրույթով՝ *գրույթներ*) ստեղծման հարցում Մաշտոցի ներդրման հաշվով կան բազմաթիվ կարծիքներ: Այդպիսին է գիտությունը. այդ միայն քարոզիչների մոտ է միայն մեկ կարծիք լինում՝ իրենց սեփականը: Բայց խնդիրն այս չափազանց ընդգրկուն է, որպեսզի հնարավոր լինի լրագրային հոդվածում ներկայացնել վերոհիշյալ գրույցում հնչած մյուս պնդումների անհիմաստությունը: Այնուամենայնիվ, որպես հետազոտող, ով մի ամբողջ ծավալուն [գիտական աշխատություն](#) է գրել այս մասին, համեմատելով հայոց տառերը տասնյակ այլ այբուբենների հետ, հիշատակեմ մի նկատելի փաստ. հայոց որոշ տառերի գրույթների ձեւավորման սկզբունքները, մենք տեսնում ենք կիրառված նաեւ աղվանական եւ վրացական այբուբեններում, որոնց ստեղծումը մեր պատմիչները նույնպես կապում են Մաշտոցի անվան հետ: Բայց Հռոփանոսը գործ է ունեցել միայն հայոց տառերի հետ, իսկ վրաց եւ աղվան տառերի հետ նա կապ չունի: Միակ մարդը, որ առնչություն է ունեցել բոլոր այդ երեք այբուբենների հետ՝ ինքը Մաշտոցն է, հետեւապես մեծ հավանականությամբ (կրկնում եմ՝ հավանականությամբ. սա գիտության տիրույթ է), Մաշտոցը ստեղծել է նաեւ մի շարք գրույթներ (տառեր): Եւ ոչ միայն՝ հայկական:

Իսկ ինչի հիման վրա է նա ստեղծել դրանք: Չարմանում եմ, որ Մալայանը չհիշատակեց Դանիելյան գրերի խնդիրը. դա հնարավորություն կտար ավելի համոզիչ երեւալ անտեղյակ ունկնդիրների աչքերում: Ինչպես հայտնի է, մինչեւ վերջնական այբուբենը կազմելը, Մաշտոցը սկսել էր գործածել Դանիել եպիսկոպոսից ստացված գրերը: Դարեր շարունակ հայ պատմիչները չէին կասկածում, որ մեր այբուբենը Մաշտոցը ստեղծել է հենց դրանց հիման վրա: Փակագծում նկատեմ, որ, *զգալի հավանականությամբ*, դրանք իրենցից ներկայացրել են *հին հայկական* առեւտրա-կենցաղային գիրը, որն իր հերթին ձեւավորվել է փյունիկյան գրի արագագրական տարբերակներից մեկի հետագա մշակման արդյունքում:

Եւ ահա կարող է հարց առաջանալ. իսկ այդ դեպքում արդյո՞ք կարելի է Մաշտոցին համարել հայոց տառաձեւերի հեղինակը, եթե նա հիմնվել է Դանիելյան գրերի վրա (թվով 22-ը), եւ սոսկ ավելացրել է 14 նոր նշան: Որոշ հետազոտողներ, այդ թվում այնպիսի մեծություն, ինչպիսին Աճառյանն էր, գտնում են, որ Դանիելյան գրերը Մաշտոցը չի օգտագործել, քանի որ դա, իբր, նսեմացնում է, նրա ներդրումը: Այստեղ դեր է խաղում գյուտարարության գործընթացին ծանոթ չլինելը: Ցանկացած գյուտ ունի նախօրինակներ: Չեն

լինում եւ չեն կարող լինել գյուտեր՝ առանց նախօրինակի: Մեր օրերում գյուտերը գրանցելիս այդ նախօրինակը գյուտարարը պարզապէս պարտավոր է նշել: Իսկ գրանշանների դեպքում, վերցնենք, օրինակ, գոթական այբուբենը, որի հեղինակն է համարվում եպիսկոպոս Վուլֆիլան: Տառերի հիմնական մասը նա վերցրել է հունական այբուբենից, ավելացնելով ընդամենը 4 տառ: Ընդ որում, այդ 4-ն էլ չի հորինել, այլ վերցրել է իր ազգի հին՝ ռունական գրից: Սակայն այդ 4 գրանշանի հավելման արդյունքում ձեւավորվել է նոր՝ գոթական այբուբենը, եւ այսօր ոչ մի խելամիտ հետազոտող չի համարի, թէ Ուլֆիլան ներդրում չունի եւ նրան չի կարելի համարել գոթական այբուբենի հեղինակը, քանի որ նոր տառ չի նկարել:

Հայոց տպատառերի մասին

Ինչ վերաբերում է տպատառերին, ապա լավ կլիներ, որ այս հարցում նույնպէս Մալայանը դիմեր իմացող մարդու, կամ գոնե հայոց տպատառերի եւ տպագրության պատմությանը վերաբերող գրքերի օգնությանը: Նախ եւ առաջ, այն վիրավորական արտահայտության մասին, թէ «*հայերը ընդհանրապէս չեն կարողացել դա լավ անել*»: Ինչո՞ւ եմ անվանում «վիրավորական»: Նախ, քանի որ եւրոպական տպագրության ձեւավորման ակունքները մեզնից շուրջ 580 տարվա հեռավորության վրա են, բազմաթիվ փաստեր կարող են արդեն կորած լինել, եւ նման անվերապահ ձեւով ասել «*հայերը ընդհանրապէս չեն կարողացել*» մենք իրավունք չունենք. ոչ ոք հաստատ չգիտի, թէ ինչ էին կարողացել եւ ինչ՝ ոչ: Եւ ապա, ինչ վիճակում էին հայերը 15—16-րդ դարերում. պետականություն չունեցող երկու կայսրությունների միջեւ բաժանված հայրենիքով մի ազգ: Արդյո՞ք արդարացի է այդպիսի վիճակում գտնվող ազգի նկատմամբ նման կշտամբանքի հնչեցումը: Ընդ որում մի ազգի, որն իր լեզվով առաջին գիրքը տպեց գրատպության ծնունդից ընդամենը մոտ 70 տարի անց՝ 1512 թվականին: Նկատեմ նաեւ՝ 21 տարով ավելի շուտ, քան դա արեցին հունգարացիները, որոնց ներկայացուցիչը, իբր «փորել» է առաջին հայկական տպատառերը:

Իրականում հունգարացի տառափորագրիչը (հավանաբար, Մալայանը նկատի ունի Նիկոլաս (Միկլոս) Քիշին), ում 17-րդ դարի վերջում Ամստերդամում *երրորդ* հայկական տպարանը հիմնելիս Մատթեոս Վանանդեցին պատվիրեց նոր տպատառերի պատրաստումը, առաջինը չէր, ով ստեղծել էր հայկական տպատառեր: Գոնե այն պարզ պատճառով, որ հայոց առաջին տպագիր գիրքը Հակոբ Մեղապարտը թողարկել էր դրանից գրեթե 2 դար առաջ: Նա չի ստեղծել նաեւ առաջին վրացական տպատառերը, քանի որ առաջին վրացերեն գիրքը լույս էր տեսել իր ծնվելուց քառորդ դար առաջ: Իր հայկական տպատառերը Քիշը ստեղծել էր Քրիստոֆել վան Դիյկի նմուշների հիման վրա, որոնք իրեն պատվիրել

Էր դրանից երկու տասնամյակ առաջ Մատթեոս Ծարեցին՝ հայերեն առաջին ամբողջական տպագիր աստվածաշնչի համար, որի տպագրումն, ի վերջո, ավարտեց Ոսկան Երեւանցին՝ 1668 թվականին, իսկ այդ տառատեսակը մնաց պատմության մեջ «Աստվածաշնչի տառատեսակ» անվամբ: Եւ այն մինչեւ մեր օրերը (ու նաեւ՝ Քիչի համար) եղավ հայկական բոլորգիր տառատեսակների փաստացի ստանդարտը: Այո, լավագույն հայկական տպատառերի ստեղծողը իրոք հայ չէր, թեեւ ոչ այն անձը, ում մասին խոսում է Մալայանը: Ու ի՞նչ: Սամսունգն էլ հայկական ընկերություն չի, հիմա ի՞նչ է ամեն քայլափոխին ասենք. «Իսկ դուք գիտե՞ք, որ Սամսունգը հայկական չէ»։ «Պահողո՞ր, իմ կյանքը բոլորովին փոխվեց»։ Մյուս կողմից, հետագայում տարբեր հայ վարպետներ ստեղծել են նաեւ բազմաթիվ լատինական տառատեսակներ: Ի՞նչ է, եւրոպացիներին դա պիտի հուզի: Կասե՞ք. ոչ իհարկե, դա ընդամենը տեխնոլոգիա է: Բանականաբար: Բայց այդ դեպքում ինչո՞ւ էր պետք կլոր աչքեր սարքելով շինծու զարմանք արտահայտել:

Եւ անշուշտ ճիշտ է. եթե ինչ-որ բնագավառում ինչ-որ բան չգիտեք, հարցրեք «պրոֆեսիոնալներին»: Եթե իհարկե ձեր նպատակը հակամաշտոցյան քարոզչությունը չէ, կամ առաջարկը՝ առհասարակ հրաժարվել Մաշտոցյան տառերից: Իրոք, քիչ անց հաղորդավարը նկատում է, որ «կլավիատուռաները ... չհասցրեցին ... ու սաղս սկսեցինք լատինատառ գրել» (ի դեպ սա էլ ճիշտ չէ. հայերեն աշխատելու համար ստեղծաշարերի սարքավարներ համակարգիչներում եղել են միշտ. ով ցանկություն ուներ՝ հայերեն էր գրում): Եւ Մալայանը հնչեցնում է փայլուն գաղափար. պարզվում է, որ եթե մենք գրում ենք հայատառ, թուրքերը կարող են կարդալ մեր գրածը, իսկ եթե գրենք «տրանսլիտով», չեն կարողանա: Պատկերացնո՞ւմ եք. ինչպիսի անօգնական ազգ են այդ թուրքերը, որ «տրանսլիտ» չեն կարող կարդալ, եւ ինչպիսի հանճարեղության աստիճանի պարզ լուծում՝ մեր կողմից. ինչպես կասեն քաղաքագետները՝ «ասիմետրիկ»: Հավանաբար, մեր ազգի վերջին անհաջողությունների պատճառը հենց մաշտոցյան տառերն էին, եւ իմաստ ունի անցնել secure, այն է՝ «ապահով» լատինական գրի:

Եւ կրկին՝ Ավարայրի մասին

Եւ վերջապես, ինչպես նշեցի, սա շատ բովանդակալից գրույց էր, որում շոշափվեց նաեւ մյուս հրատապ հարցը, որից սկսել էի հոդվածը, այն է՝ Ավարայրի ճակատամարտը: Սա էլ ավելի ծավալուն հարց է, եւ դրա մասին այնքան գրքեր են գրվել, որ մեկ գրույցի կամ մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ այն համակողմանիորեն քննել: Անդրադառնամ միայն մի քանի հարցի:

Նախ Մալայանը կրկնում է հայտնի միտքը, թե Ավարայրի ճակատամարտի մասին հայտնող միակ աղբյուրը հայկական է (մինչդեռ պիտի լիներ, չգիտես ինչու, երեք աղբյուր), հետեւապես, այն վստահելի չէ. իմա՛. գուցե եղել է ինչ-որ մի տեղական փոքր ընդհարում (մի 5—6 հազարանոց «գորթով», ինչպես կարծում է վերոհիշյալ Karen Sargsyan-ը), որը մեր պատմիչները ուռճացրել են եւ այլն, եւ այլն... Մի խոսքով՝ «fake ա»: Սա կրկին բացահայտում է իր անտեղյակությունը պատմագիտական մեթոդաբանության հարցում: Հետաքրքիր է, որ դա չի խանգարում իրեն պնդել, թե այդ աննշան ճակատամարտում ոչնչացվեց ամբողջ հայ ազնվականությունը. ինչպես կարող էր դա պատահել, չի բացատրվում: Կողմնորոշվել է պետք:

Սակայն եթե շարժվենք Նույն տրամաբանությամբ, ապա Մարաթոնի նշանավոր ճակատամարտը առհասարակ պիտի «fake» համարենք, որոնք հորինել են հույները, իրենց գովաբանելու համար: Այն (իբր) կայացել է մ.թ.ա. 490-ին, մինչդեռ դրա մասին հայտնող միակ քիչ թե շատ հուսալի աղբյուրը հույն Հերոդոտոսն է, որը ծնվել է այդ ճակատամարտից վեց տարի անց, եւ շարադրել է իր Պատմության մեջ ըստ ուրիշների պատմածի: Մինչդեռ մեր «միակ» աղբյուրը՝ Եղիշեն դեպքերի մասնակից էր («միակը» գրված է չակերտներում, քանի որ, Աբրահամ Խոստովանողի հաղորդածից քիչ բան է մնացել, իսկ Ղազար Փարպեցուն չենք հաշվում. նա ականատես չէր, Հերոդոտոսի պես ուրիշների պատմածներն էր գրում): Ի դեպ, Մարաթոնում Նույնպես մարտնչող կողմերից մեկը պարսիկներն էին: Վայ թե, այդ պարսիկները երբեք պատերազմներ չեն էլ մղել, իսկ հայերն ու հույները ամեն ինչ հորինել են:

Այլ հետաքրքիր պնդումներ եւս: Օրինակ, որ պարսից բանակը այնքան մեծ էր, որ հիմարություն էր դրա դեմ գնալը (հիշենք, որ խոսքը ինչ-որ մանր ընդհարման մասին է. այսինքն ընդհարումը փոքր էր, իսկ պարսից բանակը՝ շատ մեծ): Սակայն երբ բախվում են երկու բանակ, դրանք երբեք ոսկերչական ճշտությամբ հավասար չեն լինում, ինչպես ֆուտբոլային թիմեր. միշտ էլ մեկը մյուսից մեծ է լինում: Եւ կողմերից մեկը՝ հաղթում է, մյուսը՝ պարտվում: Հաղթողներին չեն դատում, իսկ պարտվողներին վերագրում են բոլոր մեղքերը: Արդյո՞ք Վարդանը այնքան վատ զորավար էր, որ չէր կարող ճիշտ գնահատել իր հնարավորությունները, երբ առաջնորդում էր հայոց բանակը ընդդեմ գերազանցող ուժերի: Արդյոք գիտի՞ Մալայանը, որ Ավարայրից մեկ տարի առաջ արդեն եղել էր ուժերի մոտավորապես Նույն հարաբերակցությամբ Խաղխաղի ճակատամարտը, ուր Վարդանը գլխովին ջախջախել էր պարսից բանակը: Ու ի՞նչ. այդ հաղթական դեպքում ճիշտ էր վարվել Վարդանը, թե՞ ոչ: Իսկ մ.թ.ա. 69 թվականին Տիգրանակերտի մոտ հայոց Տիգրան Բ արքան, ունենալով բառապատիկ առավելություն Լուկուլլոսի գլխավորած հռոմեական զորքի

Նկատմամբ տանուվ տվեց ճակատամարտը: Ու ի՛նչ: Լուկուլլոսը չպիտի՞ հարձակվեր Տիգրանի զորքի վրա: Թե՞ Տիգրանը պիտի անպայման հաղթած լիներ: Բայց արի ու տես, հաճախ հաղթում են փոքրաթիվ բանակները: Այլապես ճակատամարտ էլ պետք չէր լինի. ով ավելի մեծ զորք ունի նա էլ հաղթողն է: Ի դեպ, պարսկական բանակը այնքան էլ չէր գերազանցում հայոց բանակը. թերեւս մոտ 1.5 անգամ:

Այսպիսով, կրկին ակներեւ է հայի ինքնությանը հարված հասցնելու միտումը: Ընդ որում գրուցակիցներն իրենք էլ են ասում, որ Ավարայրի ճակատամարտը հայ ազգի ինքնության մասն է կազմում, հետեւապես գիտակցված, **իմացյալ** են հարվածում:

Այս հոդվածում բերված են հայ ինքնության հիմքերին հարված հասցնելու միայն վերջին օրերին նկատված սակավաթիվ օրինակները: Անշուշտ, դրանք կարելի է դիտել, սոսկ որպես բազմակարծության դրսեւորում: Ինչ խոսք կարծիք հայտնելու իրավունքը լավ բան է (այլապես չէր լինի նաեւ այս հոդվածը), սակայն կան հարցեր, որոնք պետք է զգուշորեն քննարկել, քանի որ դրանք շոշափում են միլիոնավոր մարդկանց զգացմունքները: Եւ սթափ վերլուծությունը բերում է եզրակացության, որ բերված օրինակներում մարդկանց (տվյալ դեպքում՝ հայ մարդկանց) զգացմունքները ոչ մեկին չեն հուզում, քանի որ սրանք մաս են կազմում գաղափարաբանական մի համակարգված գրոհի, որն իրականացնում են որոշակի արտաքին ուժեր՝ օգտագործելով իրենց հայաստանյան համախոհներին: Հուսով լինե՞նք՝ դեռեւս փոքրաթիվ:

11.07.2022

ԾԽԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

«Մարդու իրավունքներ» հասկացությունը կարելի է անվանել իրավաբանության եւ նույնիսկ՝ քաղաքակրթության հիմքը: Եւ հակառակ ձեւավորված պատկերացումների, դա նորագույն դարերի գյուտ չէ: Օրինակ, դրա դրույթներից առավել հայտնի «անմեղության կանխավարկածը»՝ Մարդու համընդհանուր իրավունքների հռչակագրի 11-րդ հոդվածի առաջին մասը. *«Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անմեղ համարվել, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցված օրենքով նախատեսված հրապարակային դատաքննությամբ...»* արձանագրված է համաժողովրդի օրենսդրության առաջին իսկ հոդվածներում, օրինակ. Հոդված 1. *«Եթե որեւէ մեկը, մեղադրելով մյուսին եւ նրա վրա կասկածանք տարածելով, չապացուցի դա, ապա նրան, որ մեղադրել է պետք է մահվան ենթարկել»:* Ինչպես տեսնում ենք, համաժողովրդի օրենքը նույնիսկ ավելի հստակ է, քանի որ մերօրյա հռչակագրից պարզ էլ չի, թե ինչ է սպասում նրան, ով զրպարտել է որեւէ մեկին:

Սակայն մարդու իրավունքների ամենահիմնական դրույթը վերոհիշյալ հռչակագրում առհասարակ հայտնվել է վերջում. Հոդված 29, մաս 2-րդ. *«Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս, յուրաքանչյուր ոք պետք է ենթակա լինի միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են ուրիշների իրավունքների ու ազատությունների համար պատշաճ ճանաչում ու հարգանք ապահովելու եւ բարոյականության, հասարակական կարգուկանոնի ու ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջները ժողովրդավարական հասարակարգում բավարարելու համար»:* Եթե մի կողմ թողնենք ժամանակակից իրավաբանական լեզվի «ջուրը» (ի տարբերություն նույն համաժողովրդի օրենքների հստակության), ապա այդ դրույթը ձեւակերպվում է շատ պարզ. *«Որեւէ մեկի իրավունքները ավարտվում են այնտեղ, ուր սկսվում են մյուսի իրավունքները»:*

Այժմ անցնենք բուն հարցին: Երեկ Երեւանի սննդի կետերից մեկում ես ականատես եղա մի խայտառակ միջադեպի, երբ հաճախորդին արգելեցին ծխել, վկայակոչելով ինչ-որ «օրենք»: Վերջին բառը ես դրել եմ չակերտների մեջ, քանի որ այն հակասում «Հոչակագրի» վերոհիշյալ հոդվածին, ուստի եւ անօրինական է ի սկզբանե. առոչինչ է՝ ընդունման պահից: Անշուշտ, ծխելը պետք է արգելվի, եթե շրջապատին դա տհաճ է: Կամ. *«Որեւէ մեկի «ծխելու իրավունքը» ավարտվում է այնտեղ, ուր սկսվում է մեկ այլ անձի «չծխելու իրավունքը»»*: Սակայն տվյալ դեպքում, որի ականատեսն էի ես, նախ. շրջապատում ոչ ոք չէր առարկում, որ տվյալ անձը ծխեր, ու, բացի այդ՝ դեպքը տեղի էր ունեցել բացօթյա վայրում եւ չէր կարող խանգարել նաեւ ավելի հեռու գտնվողներին:

Ես գրավոր բողոք ներկայացրեցի այդ հիմնարկի ղեկավարությանը, բացատրելով, որ Նրանք հետեւում են մի պահանջի, որն անօրինական է, հետեւապես, դրանով իսկ խախտում են Հայաստանի Հիմնական օրենքը: Նշեցի նաեւ, որ երբ մեր երկրում կհաղթի Օրենքը (իսկ ես թեւեւ ոչ մեծ, բայց հույս ունեմ այդ հաշվով), բոլոր Նրանք, ովքեր խախտել են մարդու իրավունքները պատժվելու են Օրենքի ուժով եւ ողջ խստությամբ: Բնականաբար իմ այդ դիմումը որեւէ հետեւանք չունեցավ. մարդիկ վախեցած են, եւ Նույնիսկ ի վիճակի չեն ոչ միայն սեփական իրավունքների համար պայքարել, այլ Նույնիսկ տրամաբանել:

Անկասկած այդ անօրինական սահմանափակումների կողմնակիցները կասեն, թե ծուխը Նույնիսկ բացօթյա վայրում կարող է հասնել հարեւան սեղաններին, ինչը միայն կվկայի, որ այդ «օրենքի» (եւ ոչ թե մարդու իրավունքների) պաշտպանները պարզապես դատարկաբանությամբ են զբաղված, քանի որ ակնհայտ է, որ քաղաքի մթնոլորտում առկա թունավոր արտանետումներում ծխախոտի ծխի ներդրումը հաստատ առաջիններից չէ, սակայն, օրինակ, վերջերս ներկրված այլանդակ ավտոբուսների արտանետումների դեմ ոչ մի «օրենսդիր» արգելանք դի դնում: Այսինքն գործ ունենք երկակի ստանդարտների հետ:

Կարող են եւ այլ առարկություններ հնչել. օրինակ, որ ներկաներից շատերին կարող է պարզապես տհաճ լինել ծխելու տեսարանը: Համաձայն եմ: Բայց այդտեղ էլ պետք է բացառվեն երկակի ստանդարտները: Շատերին էլ տհաճ են, օրինակ, ոմանց մարմնի դաջվածքները, սակայն հազարավոր այն մարդկանց զգացմունքների մասին, ում դա տհաճ է, ոչ մի «օրենսդիր» կամ «իրավապաշտպան» չի մտածում, ավելի ճիշտ, չի էլ ուզում մտածել: Տարբեր

տեսակի սկանդալային, այն է՝ «*հարգանք ապահովելու եւ բարոյականության ... արդարացի պահանջները*» ոտնահարող եւ «համերգների» ու «արվեստի» դիմակ դրած այլ դրսեւորումների մասին չենք էլ խոսում (ի դեպ, այդ ոլորտի «արվեստագետների» շրջանում ծխելը (եւ ոչ միայն ծխախոտ ծխելը), նման «օրենսդիրներին» չի մտահոգում): Որովհետեւ, ինչպես ասել է ԱՄՆ մի նախագահ, «*նրանք իրենց շան տղեքն են*»:

Նաեւ կարող է այսպիսի առարկություն հնչել. հնարավոր է, որ շրջապատի մարդիկ «անհարմար զգան» արտահայտվել տվյալ անձի ծխելու դեմ: Այո, հնարավոր է: Բայց դա այդ անձանց խնդիրն է: Գոյություն ունի մի փաստ. համակարգը, գործիքը, որը չի գործածվում՝ շարքից դուրս է գալիս: Այսպես, երկար ժամանակ հեռակներով տեղաշարժվող մարդու ոտքի մկանները թուլանում են, հետ են աճում: Մշտապես փափուկ մտնող օգտագործող մարդու ատամները վնասվում են: Տունը, որը չի շահագործվում՝ քայքայվում է: Եւ այլն: Գիշտ Նույն կերպ. մարդկանց մոտ, ովքեր շրջապատի հետ սեփական իրավունքների բնարկումը փոխարինում են «պոլիս ստեյշն» կամ դատարան դիմելով, վերանում է շրջապատի հետ հարաբերվելու ունակությունը: Ամենաչնչին իսկ խնդրի առաջ գալը բերում է անհամարժեք արձագանքի. հարձակման, կամ հակառակը՝ ընկճման: Նման երեւոյթները, այն է՝ «*շփման ու հաղորդակցման խախտումները*» բժշկության մեջ հայտնի են որպէս «աուտիզմ»: Ինչպէս հայտնի է, կան կարծիքներ, որ աուտիստների թիվը միտում ունի աճելու եւ այն ոչ թէ բժշկական այլ հանրայնային պատճառներ ունի: Եթէ հաշվի առնենք, թէ ինչ արագությամբ են «օրենսդիրները» «օրենքներ» «արտադրում», եւ հատկապէս Արեւմուտքում որքան է ընդլայնված փաստաբանների, այն է՝ տվյալ անձի փոխարեն հարցեր լուծողների թիվը, դժվար չէ նկատել դրա կապը աուտիզմի տարածման հետ, եւ տարօրինակ չէ, որ այն առավել տարածված է հենց արեւմտյան երկրներում. մեզ մոտ փաստաբանների ինստիտուտը դեռ այնքան էլ զարգացած չէ:

Այո, ամեն ինչ փոխկապված է, եւ, իբր, «բարի» մղումներով պայմանավորված, բայց իրավաբանության հիմնարար սկզբունքը խախտող մի «օրենք», կարող է սոսկալի հետեւանքների հանգեցնել բոլորովին այլ ոլորտներում:

Իսկ որտեղից կարող էր մեր ազգի մեջ, ուր ծխողները հսկայական տոկոս են կազմում, նման «օրենքի» գաղափար հղանար: Դա չի նշանակում, թէ հայերին հիացրել է ծխախոտ ծխելը: 17-րդ դարում, երբ դեռ Անգլիան հեղափոխության թոհուրեհից դուրս չէր եկել, իսկ Ֆրանսիան ու Ամերիկյան գաղութները (ԱՄՆ-ը

դեռ ծրագրում չկար) դեռ չէին ընկղմվել դրա մեջ, հայ հոգեւորական Յովհաննես Թուֆունջին արդեն արտահայտվում էր ծխելու դեմ: Սակայն անհատի փոխարեն որոշել, թե՛ նա ինչպես պիտի տնօրինի սեփական առողջությունը ոչ մեկի մտքով չէր անցնում:

Եւ իրոք, մարդիկ սիրում են իրենք իրենց թունավորել: Մեկը դա անում է ծխելով, մյուսը՝ խմելով, մյուսը՝ թմրադեղ ընդունելով, այլք՝ կծու, թթու, աղի, ճարպոտ սնունդ չարաշահելով: Ծատերն իրենց սպանում են անշարժ կյանք վարելով, մյուսները՝ ինքնաբուժությամբ (թեեւ սրանց կարելի է արդարացնել. մի դարում, երբ իշխում է ԱՅԿ-ն, ինչ բժշկության մասին կարող է խոսք լինել): Եւ ոչ մեկը սրանցից մյուսից լավ կամ վատ չէ: Սակայն այս բոլոր արատներից որպես պայթարի թիրախ ընտրվեց հենց ծխելը: Ինչհիւ հենց դա. աստված գիտի: Գուցե զառ էին գցել: Կամ առաջնորդվել էին մեզ անհայտ այն սկզբունքով, որով Համաշխարհային բանկի 2017 թ. հունիսի 27-ին ընդունված [«Համաճարակի արտակարգ ֆինանսավորման նախաձեռնություն»](#) շրջանակում հետեւյալ վեց վարակներից, այն է՝ Influenza A (հարբուխ Ա), Coronavirus (թագավարակ), Filovirus (թելավարակ), Lassa Fever (Լասսայի տենդ), Rift Valley Fever (Ռիֆտային հովտի տենդ), Crimean Congo Fever (Կոնգո-Ղրիմյան տենդ), ի վերջո ընտրվեց հենց թագավարակը: Թեեւ գուցե, պարզապես, թագավարակը առավել անշառն էր սրանցից:

Այո, ոչ մեկի համար էլ գաղտնիք չէ, որ ծխախոտի դեմ «պայթարի» ծրագիրը նույնպես գլոբալիստական ծագում ունի: Դեռեւս անցած դարի 90-ական թվականներին ամերիկացի ակտիվիստներ Ռուբ Ռյոմերը (Ռոզենբաումը), իր ամուսին Միլթոն Ռյոմերը եւ այլ ակտիվիստներ, առաջարկել էին պայթար սկսել *ծխախոտ ծխելու* դեմ, ինչը ՄԱԿ-ի հատուկ հիմնարկ համարվող տխրահռչակ ԱՅԿ-ն (հայերեն ասած՝ BO3-ը), չծիծաղեք, հայտարարել էր «համաճարակ». «Ծխախոտային համաճարակ»: Այդպես ծնվեց ԱՅԿ-ի համաձայնագիրը ծխախոտի վերահսկողության մասին (հենց այդպես՝ ծխախոտի, ոչ թե՛ ծխելու):

Կարող է հարց առաջանալ, իսկ ինչի համար էր դա անհրաժեշտ, կամ, ինչպես ասում էին հռոմեացիները. Cui prodest? Դե, ցանկացած «մեծ» նախաձեռնություն զբաղեցնում եւ կառավարելի է դարձնում ժողովուրդներին, լինեն դրանք Բաբելոնյան աշտարակի, Եգիպտական բուրգերի, թե՛ ռուսական կոմունիզմի կառուցումը: Բայց նախ եւ առաջ նպատակը, անշուշտ, փողն է: Ինչպես եւ թագավարակի դեպքում (որից եկող շահույթը բացահայտորեն առանց ամաչելու վերահսկում էր Համաշխարհային բանկը): Ցանկացած

պայթար, լինի դա սովորական պատերազմ (ինչպես այն, որ հիմա սանձազերծել են Ուկրաինայում), թե առողջապահական նախաձեռնություն, ենթադրում է ֆինանսական ահռելի հոսքերի գոյացում, որոնք բոլորն ունեն իրենց շահառուներին: Դա եւ քարոզիչների բանակի աջակցումն է, եւ գովազդը, եւ արտադրությունների վերամասնագիտացում. ի վերջո, եթե մարդիկ սկսեն իրենց ծխելով չբուժնավորել, հաստատ անցնելու են այլ թույլների. տես վերելում թվարկվածները: Եւ իրոք, այս նախաձեռնության շահավետությունը գնահատեցին բոլոր *կառավարությունները*. սա ամենաարագ վավերացված համաձայնագրերից մեկն էր: Շեշտում եմ «կառավարությունները», քանի որ *պետությունների* մասին այստեղ իմաստ չունի խոսել. սա փայլուն հաստատումն էր «պետությունների»՝ վաղուց արդեն մեկ կենտրոնից կառավարվելու փաստի, այն է՝ դրանց ինքնիշխանության բացակայության:

Եւ թագավարակի «համաճարակի» համեմատ սա ինչ խոսք, շատ ավելի տաղանդավոր նախաձեռնություն էր, քանի որ հազիվ թե գտնվի մեկը, ով ժխտի դրա «բարի» նպատակները, մոռանալով, որ հենց դրանցով է սալարկված դժոխքի ճանապարհը: Տվյալ դեպքում, Օրենքի (մեծատառով), այն է՝ Մարդու իրավունքի հռչակագրի խախտմամբ առաջ տարվող նախաձեռնությունը վնասից բացի այլ հետեւանք ունենալ չէր կարող: Եւ իրոք, այդ «բարի» ծրագրին հաջորդեց թագավարակի «համաճարակը», իսկ հիմա արդեն խոսում են կապիկի ծաղիկի «համաճարակի» մասին, տարեց տարի ինքնիշխանությունն ավելի ու ավելի կորցնող «պետությունները» այլեւս չեն կարողանում դիմադրել դրան...

Բայց հետաքրքիր է, այնուամենայնիվ, մեր ազգի շրջանում ծխողները մեծամասնությո՞ւն են կազմում, թե՞ փոքրամասնություն: Եթե՝ *մեծամասնություն*, եւ այդ անօրինական «օրենքը» «անցկացրել է» փոքրամասնությունը, ապա գործ ունենք փոքրամասնության դիկտատուրայի հետ, օլիգարխիայի: Եթե հակառակը՝ *փոքրամասնություն*, ապա սա ոչ այլ ինչ է, քան խտրականություն ըստ նախընտրությունների: Եւ հարց է առաջանում, այդ ինչպե՞ս է, որ այլ «փոքրամասնություններին» իրավունք է վերապահվում ոչ միայն չթաքնելու իրենց «նախընտրությունները», այլեւ պետական եւ հասարակական միջոցներ են կիրառվում այդ «նախընտրությունները» գովազդելու համար: Փաստորեն, կրկին գործ ունենք երկակի ստանդարտների հետ.

Այսպիսով, ծխելն արգելող «օրենքը» սոսկ իրավաբանական թյուրիմացություն չէ, այլ մեր պետության (եւ ոչ միայն մեր) ոչ ինքնիշխանության վկայություն: Այն, որ նաեւ մեր ազգի մեջ չգտնվեցին ուժեր, որոնք ծայն

կբարձրացնեին արեւմտյան գլոբալիզմի քարոզչական մեքենայի խամաճիկները հանդիսացող մեր «օրենսդիրների» այս խայտառակ «օրենքի» դեմ, նշանակում է, որ մեր ազգը կարող է հասնել արեւմտյան ժողովուրդների անգորության աստիճանին: Իսկ այդ վիճակում գտնվող ժողովրդին միշտ էլ կարելի խաբել ոչ միայն թագավարակի մասին հեքիաթներով, այլեւ, օրինակ, համոզել, որ մեր բարեկեցության համար մենք պետք է հրաժարվենք մեր տարածքների պաշտպանությունից եւ զիջենք դրանք դարավոր թշնամիներին... Հիշեք մարմանդ կրակի վրա եփող գորտին, որը չի նկատում, թե որ պահին է սկզբնապես հաճելի եւ օգտակար թվացող ջերմությունը եփում եւ սպանում իրեն:

Այո, ծխելը լավ բան չէ: Սակայն յուրաքանչյուրն ինքնուրույն պետք է որոշի, ծխելու է, շարունակելով թունավորել իրեն, թե՞ ոչ: Եւ պիտի իրավունք ունենա ծխելու, եթե շրջապատում ոչ ոք դրան դեմ չէ: Վիրավորական է նաեւ, երբ հեռուստահաղորդումների ընթացքում գրություններ են հայտնվում ծխելու վնասակարության մասին (կարծես թե այլ վնասակար բաներ հեռուստատեսությունը չի ցուցադրում), կամ խանութներում թաքցվում են ծխախոտային ապրանքները, կամ այլանդակում են ծխախոտի տուփերը, դրանց վրա ծխելու վնասակարության մասին գրություններ տպելով: Ծխողը մարդ է եւ քաղաքացի եւ իրավունք ունի գեղեցիկ ապրանքներ գնել եւ հարգված լինել հանրության կողմից:

Այսպիսով, ի դեմս այս «օրենքի» չեղարկման անհրաժեշտության մենք գործ ունենք լուրջ փորձաքարի հետ. ի վիճակի՞նք ենք արդյոք մեր ազգը գիտակցել իր իրավունքները, պայքարել դրանց համար, իրավական պետություն կերտել, թե՞ պիտի կուրորեն մարսի անօրեն եւ օր օրի դեգրադացվող Արեւմուտքից թելադրվող քարոզչությունը, հավերժ մնալով դրա գերին:

Յ.Գ. Այսօր ականատեսը դարձա, թե ինչպես էին մորթում Ագրարային համալսարանին հարող պուրակի հսկայական ու միանգամայն առողջ ծառերը: Անկասկած Հայաստանի կառավարիչների տեսակետից այդ բարբարոսությունը կնպաստի բնակչության պաշտպանությանը ծխախոտի ծխից:

02.07.2022

ՏՈՒԳԱՆՔԸ ՇԱՀՈՒՅԹ Է. ՏՈՒԳԱՆՔՆԵՐ ՇԱՏ ՎՃԱՐԵՔ, ԵՒ ԿՅԱՐՍԱՆԱՔ

Սկսել եմ ուզում լեզվաբանությունից. ինչ եք կարծում, ինչ է նշանակում «շահառու»: Ես կարծում էի, թե գիտեմ, բայց երբ այցելեցի քաղաքապետարանի կայքի «**Պետական վճարումների էլեկտրոնային համակարգ**» Եջը՝ վճարելու համար տուգանքը, որը ինձ նշանակել էր վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետ Արամ Աբովյանը, սկսեցի կասկածել: Բանն այն է, որ այդ կայքէջում ինձնից պահանջվում էր նշել «Շահառուի անուն ազգանունը» ու նաեւ «Շահառուի ՀԾԸ»-ն (նախկին՝ սոց քարտի անունը): Բայց հիվ է «շահառու»: Թվում է, թե շահառուն, տվյալ դեպքում այն մարմինն է, ում օգտին գանձվում է տուգանքը, տվյալ դեպքում՝ «Փարկինգ սիթի սերվիս» ՓԲԸ-ն՝ մասնավոր ընկերությունը, որը «*իրականացնում է Երեւան քաղաքի ավտոկայանատեղերի կազմակերպում*», եւ քաղաքապետարանը, որի հաշվեհամարին «*միմիայն անկանխիկ եղանակով*» կատարվում է «*ավտոկայանատեղիների տուրքի հավաքագրում*»: Ուրեմն հում անունը պիտի ես նշեի: Նշված հիմնարկների կազմից միակ անձը, ում անունը ինձ հայտնի էր, դա հենց Արամ Աբովյանն էր: Սակայն որտեղից ինձ կարող էր հայտնի լինել նրա սոց քարտի համարը: Ես սկսեցի կասկածել եւ դիմեցի Ա. Հ. Բայադյանի, Ֆինանսական բացատրական բառարանի օգնությանը: Այնտեղ ես կարդացի, որ շահառուն է «*երրորդ անձ, որի օգտին կամ որի հրամանով կատարվում է վճարումը*»: Չէ, ամեն ինչ ճիշտ է. միակ անձը, ով «*հրամայել*» է ինձ տուգանք վճարել դա հենց Արամ Աբովյանն է: Ի վերջո, համաձայնեք, որ դա չէր կարող լինել տուգանք վճարողը. հազիվ թե տուգանք ՎՃԱՐԵԼԸ կարող է շահույթի աղբյուր լինել. համենայն դեպս՝ ոչ վճարողի համար:

Արդյունքում, չուզենալով դիսկի դիմել ես գնացի բանկ (կորցնելով լրացուցիչ ժամանակ, որն, ինչպես հայտնի է, նույնպես՝ փող է) եւ այնտեղ ինձ բացատրեցին, որ այնուամենայնիվ շահառուն ես եմ: Մի խոսքով Օրուելը անելիք չունի. «*պատերազմը՝ խաղաղություն է, ազատությունը՝ ստրկություն*»: Դե իսկ,

շնորհիվ Երեւանի քաղաքապետարանի իմանում ենք, որ տուգանքը՝ շահույթ Ե. տուգանքներ շատ վճարեք եւ կհարստանաք:

Բայց, ինչպես ասում են գովազդներում, դա դեռ ամենը չէ: Այն գրության մեջ, որը հորջորջված է «որոշում», «Հաստատված հանգամանքները» տողում նշված է. «Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանվել է համայնքային վճարովի ավտոկայանատեղիում, որի համար բացակայում է Երեւան քաղաքի ավագանու 28.12.2021թ. հ. 493-Ն որոշմամբ սահմանված տեղական վճարի վճարումը»: Հենց այդպես, ոսկեղենիկ հայերենով. «վճարի վճարումը»: Այդ ինչ «վճարի վճարում» է բացակայում: Ստացվում է, որ վճարովի ավտոկայանատեղիի համար բացակայում էր «վճարի վճարում», իսկ «ավտոտրանսպորտային միջոցը» ԱՅԴ ՊԱՀԻՆ (երբ այն բացակայում էր) կայանել է այդտեղ: Թող չբացակայեր: Սա ինչ շարադրանք է: Սրա կազմող միջնակարգ դպրոց ավարտել է (Էլ բուհի մասին չեմ խոսում): Իսկ ղր է այսպես կոչված «Լեզվի կոմիտեն» (նախկին, հայերեն անվամբ՝ «Լեզվի տեսչությունը»): այն փորձաքննության ենթարկել է այդ «փաստաթուղթը» (եւ առհասարակ՝ երբեւէ փորձաքննության ենթարկում է այդ կարգի փաստաթղթերը): Այստեղ փաստաթուղթ բառը եւ վերցրել եմ չակերտների մեջ, քանի որ ըստ ՀՀ Սահմանադրության, Հայաստանի պետական լեզուն հայերենն է, իսկ եթե կազմված ձեւակերպումը չի համապատասխանում հայոց լեզվի կանոններին (այդ թվում եւ՝ շարահյուսական, ոճաբանական եւ այլն), ապա այն արդեն հայերեն չէ, ուստի եւ **փաստաթուղթ համարվել չի կարող**:

Ես հիմա բոլորովին անկեղծ եմ ասում. ես իրոք երկար ժամանակ չեի հասկանում, թե ինչի մասին է խոսքն այդ «փաստաթղթում»: Իմ առաջին մղումն էր, այդ պաշտոնյային զանգահարելը եւ հարցնելը, թե ղրն է իմ «իրավախախտման» Երկրորդը. քանի որ, մի պահ, ինձ թվաց, որ ես կայանել եմ մի տեղ, ուր իրավունք չունեի կայանել (քանի որ *այնտեղ* «բացակայում է ... վճարի վճարումը»): Սակայն նշված «փաստաթղթում» նշված չէր որեւէ հեռախոսահամար: Ավելին՝ չէր նշված եւ որեւէ հետադարձ հասցե: Բայց երբ ես համոզվեցի, որ խնդիրը վճարովի կայանատեղիի համար չվճարելն է, ես զարմացա, քանի որ կանոնավոր վճարում եմ: Եւ որոշեցի պարզել, թե այդ որտեղ եմ ես թույլ տվել «իրավախախտումը», սակայն պարզվեց, որ այդ վայրը «փաստաթղթում» ծածկագրված է որպես «CAM 9/4/3»: Եւ ոչ մի հասցե, որի միջոցով ես կարողանայի պարզել իմ «իրավախախտման» վայրը, գոնե՝ հետազայում նման «իրավախախտման» համար «շահառու» չդառնալու համար:

Նկատեմ, որ երբ նման կարգի ծանուցում գալիս է Ոստիկանությունից, այնտեղ նշված է լինում ցանցային հացեն տվյալ խախտման տեսագրության, որը ես կարող եմ առցանց դիտել եւ համոզվել կատարված իրավախախտման թե՛

հանգամանքների եւ թե՛ վայրի հաշվով: Մինչդեռ այս դեպքում նման տվյալ նույնպես չկա: Սակայն փաստաթուղթը օժտված է տեսախցիկներից ստացված երկու լուսանկարով, որոնք պիտի որ հաստատեին իմ «իրավախախտումը»: Դրանցից առաջինի վրա կարելի է մի կերպ կարդալ ամսաթիվը եւ ժամը. 2022-05.-16 12:06:39, իսկ երկրորդի վրա՝ 2022-05.-16 12:25:04: Ընդ որում, երկու դեպքում էլ իմ ավտոմեքենան դեռ/արդեն ԿԱՅԱՆԱԾ ՉԷ: Արձանագրված երկու պահերի միջև անցել է 18 րոպե 25 վայրկյան: Ինչպես հայտնի է, կայանելու 15 րոպեն՝ անվճար է եւ այդ լրացուցիչ 3 րոպե 25 վայրկյանի համար *«Փարկինգ սիթի սերվիս»* ՓԲԸ-ն եւ Քաղաքապետարանը (չգիտեմ ինչպես են իրենք իրար մեջ բաշխում տուգանքներից ստացված «շահույթը») ստացել են 5000 դրամ: Սակայն, կրկնում եմ, ինձ հասանելի 2 նկարներից ոչ մեկի վրա իմ ավտոմեքենան ԿԱՅԱՆԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ ՉԷ: Իսկ ինչ է տեղի ունեցել այդ 3 րոպե 25 վայրկյանի ընթացքում ինձ հայտնի չէ. այդ օրվա դեպքերը իմ հիշողության մեջ չեն մնացել, իսկ ինձ տրամադրված նյութերը դա չեն պարզաբանում: Գուցե այդ ընթացքում իմ ճանապարհը փակել էր որեւէ արգելք, գուցե ես այդ ընթացքում դեռ կայանում էի, կամ փորձում էի դուրս գալ կայանատեղիից. համաձայնե՞ք, որ եթե իմ ավտոմեքենան դեռ/արդեն շարժման մեջ էր, համապատասխան ժամանակամիջոցը չի կարող կայանման տեղողության մեջ ներառվել: Ուրեմն ես իրավունք ունե՞մ պարզելու, թե ինչ է այդտեղ տեղի ունեցել: Բայց ինչպե՞ս պարզեմ, եթե չկա ոչ մի լրացուցիչ տվյալ, չկա վերոհիշյալ պաշտոնյայի հետ կապվելու որեւէ հեռախոսահամար կամ հասցե. գոնե՝ Էլեկտրոնային (րժ դարում ենք ապրում):

Ինձ հասած այդ որոշման մեջ նշված է, որ ես կարող եմ երկամսյա ժամկետում բողոքարկել այն: Կա հավանականություն, որ ես կօգտվեմ իմ այդ իրավունքից: Հիմքերը հետեւյալն են.

1. Որոշումը կազմված է պետական փաստաթղթին ոչ վայել լեզվով, որը պարունակում է անըմբռնելի, ոչ հայեցի ձեւակերպումներ, հետեւապես, կարող է համարվել **ոչ պետական լեզվով** կազմված, ուստի եւ չհամարվել պաշտոնական փաստաթուղթ՝ իրավաբանական բոլոր հետեւանքներով հանդերձ:
2. Նույնը վերաբերում է նաեւ Քաղաքապետարանի *«Պետական վճարումների Էլեկտրոնային համակարգ»* կայքէջին:
3. Նշված գրության մեջ բացակայում են իրավախախտման մասին պնդումները ապացուցող անհրաժեշտ նյութերը, այն է. տեսանյութը, իրավախախտման հասցեն եւ այլն, հետեւապես կարելի է համարել, որ իրավախախտում տեղի չի ունեցել:

4. Բացակայում են պաշտոնատար անձի հետադարձ կապի տվյալները.
հեռախոսահամար, հասցե, էլ. հասցե:

Բայց ես թողնում եմ խնդրի արտադատարանային լուծման տարբերակ.
բավական է, որ Երեւան քաղաքի քաղաքապետարանը տեսանյութի հիման վրա
ապացուցի, որ ես իրոք իրավախախտում եմ կատարել, ապա պաշտոնական
ներողություն հայտնի նման վիրավորական մակարդակի հայերենով ինձ հետ
հաղորդակցվելու դիմաց եւ խոստանա, որ այսուհետ կբարելավի իր արձակած
փաստաթղթերի լեզվական որակը: Իսկ վճարված գումարը (եթե նույնիսկ իմ
կողմից իրավախախտումը ապացուցել չհաջողվի) խնդիր չէ. ընդամենը իմ`
դասախոսիս` մի օրվա աշխատավարձն է, որ ես պատրաստ եմ համարել
ծախսված իմ քաղաքի կառավարման մակարդակը բարձրացնելու վրա:

Յ.Գ. Դեռ չեմ խոսում հանրային տարածքում կայանելու համար վարձ
գանձելու իրավական հիմքերի մասին առհասարակ. չէ որ, որպես այս քաղաքի
բնակիչներ երեւանցիները հարկեր են մուծում, որոնցից մասնաբաժին է
ստանում նաեւ քաղաքապետարանը (որին ոչինչ չի խանգարում նաեւ վճարել
«Փարկինգ սիրի սերվիս» ՓԲԸ-ին` *«քաղաքակիրթ ավտոկայանատեղերի»*
կազմակերպման դիմաց): Նույնիսկ տարբեր պետություններ պայմանագրեր են
կնքում կրկնակի հարկավորման բացառման մասին, իսկ մեր երկրի
քաղաքացիները իրենց իսկ երկրի ներսում ենթարկվում են կրկնակի եւ
բազմակի հարկավորման: Հա, հաշվի չէի առել. երեւի Եւրոպայում այդպես է
ընդունված, իսկ ես ինչ-որ «իրավական հիմքերից» եմ խոսում...

12.06.2022

ՕՏԱՐԱՄՈՒԹՅԱՆ ՆՈՒՐԲ ՀԱՄԸ

Վաղուց էի ուզում գրել այս նյութը: Չգիտեի ինչից սկսեմ: Երբ սկսվեց Ուկրաինական պատերազմը պարզ դարձավ, որ գրել պետք է, իսկ թե ինչից սկսել՝ այնքան էլ կարելուր չէ: Գուցե նրանից, որ ծայրահեղությունները, ինչպես հայտնի է, իրար են հանդիպում: Երբ տեսնում եմ ուկրաինական ազգայնականների հիվանդագին թշնամանքն ու գազանությունները անխտիր բոլոր այլազգիների նկատմամբ, նույնիսկ՝ տվյալ պահին իրենց աջակցող գերմանացիների, ռումինացիների, լեհերի եւ այլոց դեմ, այն ազգայնականությունը, որը տվյալ պահին աշխատում է իրենց իսկ դեմ, հիշում եմ մեր ազգի հիվանդագին ԱՊազգայությունը, որը նույնպես աշխատում է մեր դեմ: Երկու երեւոյթներն էլ զգվելի են. թե սեփական ազգի սրբացումը եւ մյուսների պախարակումը, եւ թե մյուսների սրբացումը եւ սեփական ազգի նկատմամբ արհամարհանքը:

Երբ ատում ես ուրիշներին, նրանք ատում են քեզ, բայց քեզ ատում են նաեւ եթե դու ես ատում ինքդ քեզ. սեփական ինքնության նկատմամբ արհամարհանքը գարշելի է նույնքան, որքան եւ այդ ինքնության անարգելակ մեծարումը:

Իսկ դուք գիտե՞ք, որ հայոց պետությունը միակն է աշխարհում, ում պետական օրհներգը, այն է՝ հիմնը, նվիրված է ոչ թե տվյալ պետության ժողովրդի՝ հայերի, այլ մեկ այլ ժողովրդի ազատագրական պայքարի գովաբանմանը: Մեր օրհներգը նվիրված չէ, ոչ թուրք նվաճողների դեմ պատերազմների հերոսներին, ոչ արաբ, ոչ պարսիկ, ոչ էլ ավելի վաղ շրջանի ասորեստանցիների դեմ պայքարողներին: Այն նվիրված է... իտալացիների ազատագրական պայքարին: Կրկնում եմ. **հայոց պետության օրհներգը նվիրված է իտալացի հերոսներին**: Վարագույր: Ո՛չ, ես չեմ նսեմացնում իտալացիների սխրանքը. ես չեմ ցանկանում նմանվել ուկրաինացիներին: Բայց մեր պետական այրերը, երբ օրհներգ էին ընտրում մի՞թե չունեին ձեռքի տակ մի երգ, որը գովերգում էր մե՛ր հերոսներին: Հաստատ ունեին: Համենայն դեպս, Արամ

Խաչատրյանի՝ Խորհրդային Հայաստանի օրհներգը գրվել էր «Ձայն մը հնչեց Երզրումի...» ժողովրդական երգի հիման վրա: Ինչո՞ւ մեր Նոր պետության հիմնադիրները հրաժարվեցին մեծագույն հայ երգահանի օրհներգից (բավական էր, պարզապես, մի փոքր փոխել բառերը, ինչպես դա արեցին ռուսները ժառանգելով Խորհրդային օրհներգը): Ինչո՞ւ:

Մի փոքր հետ գնամ, փորձելու համար պատասխանել, թե ինչու հայոց օրհներգը չի նվիրված, օրինակ ասորեստանցի նվաճողների դեմ պայքարող հայ հերոսներին: Շատ պարզ պատճառով. որովհետեւ, պարզվում է, պետք է գովերգել ոչ թե հայ զինվորներին, այլ... հենց ասորեստանցիներին: Համենայն դեպս, կարծես թե այդպես են կարծում Իջեւանի գինու գործարանում, ուր արտադրվում է **Սարգոն** անունով գինին: Եթե կան մարդիկ, ովքեր չգիտեն. Սարգոնը (ասուրերեն՝ Շարրուքին, այն է՝ «օրինական արքա») դա Ասորեստանի այն թագավորն էր, ով մ. թ. ա. 8-րդ դարում անցնելով Հայաստանի կենտրոնական մարզերով եւ պարտության մատնելով մեր երկրի բանակը ավերեց եւ կողոպտեց մեր խոշորագույն քաղաքները, այդ թվում երկրի հոգեւոր կենտրոնը՝ Արդինին եւ դրա գլխավոր տաճարը: Այդ ժամանակվա մեր թագավոր Ռուսան, ըստ որոշ տվյալների, Նույնիսկ ինքնասպան եղավ, չկարողանալով տեսնել իր երկրի պարտության հետեւանքները (այդ, եղել են այդպիսի ղեկավարներ): Լավ, ձոնել գինին պարտված հայ թագավորին երեւի չարժեր, բայց սեփական արտադրության գինին ձոնել դաժան թշնամի Սարգոնին: Իսկ ինչո՞ւ ոչ Թալեաթին, կամ Զեմալին. ինչո՞ւ են սրանք Սարգոնից պակաս:

Կասե՞ք՝ չափազանցությո՞ւն է: Կասե՞ք պատահականությո՞ւն է: Չեմ կարծում: Ահա եւս մի օրինակ. Ավշարի արտադրության օղի (водка) «IMPERSKAYA», ռուսական կայսրության զինանշանով հանդերձ, որ ոչ մեկի մոտ կասկած չառաջանա, թե, գուցե, Տիգրան Մեծի «իմպերիայի» մասին է խոսքը: Կրկին բացահայտ մղում գովերգելու քո հայրենիքը նվաճած պետությունը: Կասե՞ք Ռուսաստանը հո Ասորեստան չի: Բնականաբար. Ռուսաստանը Ռուսաստան է: Դա այն պետությունն է, որը 19-րդ դարասկզբից մեր երկրում հայտնվելուց հետո այնպիսի եռանդով էր «ազատագրում» այն թուրքերից, որ արդյունքում մեր հայրենիքի մեծագույն մասում ոչ մի հայ չմնաց: Դա հենց այն պետությունն է, որի ներկայացուցիչը Կովկասում իշխան Գրիգորի Գոլիցինը խոստանում էր. «Доведу до того, что единственным армянином в Тифлисе останется чучело армянина в Тифлисском музее!» (ըստ Ա. Ամֆիտատովի)՝ արտահայտություն, որը Պարույր Սեւակը վերագրեց թուրքերին. հետաքրքիր է, Նրան հայտնի էր այդ արտահայտության աղբյուրը: Վերջապես դա հենց այն պետությունն է, որն անցած դարի 20-ական թվականներին Նախիջեւանի մարզն ու Արցախը հանձնեց թուրքին: Իսկ այսօր ռուս քարոզիչները դեռ խոսում են այն

մասին, որ հենց Ռուսաստանն է մեր երկրի գոյության երաշխավորը: Եւ ամենազավեշտականն այն է, որ դա իրոք այդպես է. Ռուսաստանի վերջին երկու հարյուր տարվա ընթացքում այս տարածաշրջանում վարած քաղաքականության եւ մեր ազգայն առաջնորդների միամտության արդյունքում մենք այն աստիճանի ենք հակադրվել շրջապատին, որ առանց Ռուսաստանի մեր երկրի գոյատևումը իրոք չափազանց մեծ հարցականի տակ կլինի:

Քավ լիցի, չեմ ուզում, որ մեկի մոտ կարծիք ձեւավորվի, թե ընթացող պատերազմում ես պաշտպանում եմ ուկրաինացիներին: ՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ: Ոչ միայն, քանի որ նրանց *գռեհիկ* ազգայնականությունը զազրելի է, այլեւ այն պարզ պատճառով, որ Ուկրաինան միշտ աջակցել է Ադրբեջանին մեր դեմ պատերազմում: Բայց չեմ կարող լինել եւ Ռուսաստանի կողմակիցը. Նախ եւ առաջ վերոհիշյալ պատճառներով, բայց նաեւ, քանի որ իրեն իրավունք վերապահելով վերադարձնել իր երբեմնի տարածքները, Ռուսաստանը չի ցանկանում ճանաչել նաեւ մեր իրավունքը՝ վերադարձնելու մեր կորցրած հայրենիքը, թեեւ հայտարարվում է, թե մեր միակ դաշնակիցն է եւ գոյության երաշխավորը: Եւ առհասարակ. ինչ գործ ունի հայը ընտրություն կատարելու դրանց երկուսի միջեւ կամ ցույցեր անցկացնելու մեկի կամ մյուսի օգտին:

Եւ Աստված նրանց հետ. այստեղ ես այլ բանի մասին եմ խոսում: Ես ուզում եմ հասկանալ, թե ինչիւմ մենք չենք կարող այլ ազգերի հետ հարաբերվելիս պահպանել ոսկի միջինը: Կամ գոնե ձգտել դրան: Ինչիւմ ենք մենք այդ աստիճանի ապագային: Ինչիւմ ենք մենք, օրինակ, ամենուրեք գործածում մեր երկրի՝ օտարների մոտ ընդունված անունները. Արմենիա, Ուրարտու, Նաիրի: Այդ անուններով մենք կոչում ենք մեր երեխաներին, հիմնարկները, ապրանքները: Նույնիսկ մեծագույն բանաստեղծը այդպես է կոչել իր բանաստեղծական հայտնի ժողովածուն՝ «Երկիր Նաիրի»: Բայց ինչիւմ: Այո, մենք գործածում ենք նաեւ մեր Հայք, Հայաստան անունները, բայց ինչիւմ *առհասարակ* գոնե մեկի մտքով պիտի անցնեն անվանել իր երեխային կամ հիմնարկը օտար բառով: Մնում է միայն արտադրել Երմենիստան անունով գինի, կամ ստեղծել Երմենիստան հեռուստաընկերություն եւ ամեն ինչ իր տեղը կընկնի:

Կարող են ասել, թե սրանք բոլորը մանրուքներ են, կարող են ասել, թե նման բան գրելը վնաս է մեր ազգային շահերին: Իսկ դաժան թշնամուն գովազդելը երեւի մեծապես նպաստում է մեր երկրի ծաղկմանը:

Ծայրահեղություններն, ի վերջո, միավորվում են: Հիշե՛ք այդ մասին:

18.04.2022

DEJÀ VU՝ ՀԱԿԱԴԱՐՁ ՆՇԱՆՈՎ

Հարյուր տարի առաջ քաղտնտեսական իրավիճակն աշխարհում, այն է՝ առանձին ազգային շուկաների լիակատար հազեցումը՝ բերեց դրանց միավորման անհրաժեշտության: Հասկանալի է, որ հաղթած երկիրը պարզապես յուրացնելու էր պարտվածների շուկաները, ոչնչացնելով այն վերահսկող վերնախավը: Արդյունքում սկսվեց, այսպես կոչված, Առաջին աշխարհամարտը: «Այսպես կոչված», քանի որ իրականում «երկրորդ» կոչված աշխարհամարտը սոսկ «առաջինի» շարունակությունն էր՝ մոտ քսանամյակ տեւած հրադադարից հետո: Բայց նաեւ այդ «երկրորդով» աշխարհամարտը չավարտվեց, քանի որ Ստալինյան վերնախավը թույլ չտվեց, որ ԽՍՀՄ-ը դառնա համաշխարհային միասնական (գլոբալ) շուկայի մի մասը, այլ պահպանեց անկախություն: Իրականում աշխարհամարտը ավարտվեց միայն 1991 թվականին, երբ ԽՍՀՄ-ը, որի գերիզոր գինուժը անհնար էր տապալել մեկ այլ գինուժով, ի վերջո տապալվեց քարոզչական զենքով, որը Ստալինից հետո առհասարակ չէր թարմացվել:

Սակայն ԽՍՀՄ-ի, այն է Ռուսաստանի կոմունիստական կայսրության շուկայական պաշարները բավարարեցին հագիվ մի 20 տարի. 2008 թվականի ճգնաժամը ցույց տվեց, որ համաշխարհային դարձած եւ մեկ վայրից կառավարվող վերազգային շուկան այլեւս նույնպես սպառված է. երկիր մոլորակը վերջավոր է: Սակայն այս պահի գլոբալ շուկան միայն այն իմաստով է միասնական, որ այլեւս բաժանված չէ ազգային համարվող (թեեւ ազգային ամեն ինչից հետեւողականորեն մաքրվող) սահմաններով: Սակայն սահմաններ կան, քանի դեռ կան միասնական շուկայի առանձին հատվածների բազմաթիվ տերեր՝ անհատներ, ընտանիքներ, գերդաստաններ, ընկերություններ եւ այլն: Եւ հաղթողների ճամբարում սկսվեցին գործընթացներ, որոնք հիշեցնում են նույն այն երեւոյթները, որոնք ընթանում էին նախքան 1914 թվականը. համաշխարհային շուկայի առանձին հատվածների տերերը սկսեցին պայքարը տիրանալու համար ամբողջ շուկային:

Սակայն, ի տարբերություն Առաջին աշխարհամարտից (որը տեւեց, այսպիսով 1914-ից 1991 թվականը) այս, իրականապես երկրորդ աշխարհամարտում մարտնչող կողմերը աներեւոյթ են: Միայն ուշադիր վերլուծությամբ կարող են բացահայտվել (այն էլ ոչ հուսալիորեն) դրանց առանձին մասնակիցները: Չկան բացահայտ դաշինքներ՝ տարբեր տեսակի «անտանտաներ»: Այսօր դաշինքները շատ հաճախ անցնում են միեւնոյն, դեռեւս «ազգային» համարվող պետությունների միջով, եւ հաճախ էլ այս կամ այն դաշինքը կարող է որպէս դաշնակից ներգրավել նաեւ այդ պետությունների ազգային ուժերին: Ընդ որում տարբեր ուժեր կարող են գործել միեւնոյն ազգի դրոշը ծածանելով եւ պետք է հասկանալ, որ նրանցից ոչ մեկը մտադրություն էլ չունի հաղթանակի դէպքում աջակցել ազգային շահերին. իրական ազգային շահերով առաջնորդվող անհատների մոտքը նման միավորումներ բացառված է:

Ինչպէս ասվեց, Նոր աշխարհամարտի անհրաժեշտությունը բացահայտվեց 2008 թվականի ճգնաժամից հետո, ինչպէս Առաջին աշխարհամարտի անխուսափելիությունը ազդարարեց 1900 թվականի ճգնաժամը: Ինչպէս եւ Նախորդ անգամ, երբ Նոյնիսկ casus belli դարձած Սարյեյան սպանությունից հետո շուրջ մեկ ամիս ոչ ոք չէր խիզախում օգտվել այդ առիթից, այդպէս էլ այսօր էր, երբ թե Ուկրայինայի եւ թե Ռուսաստանի վերնախավերը ամեն կերպ փորձում էին խուսափել պատերազմից, հայտարարելով, որ չեն հասկանում ԱՄՆ-ի կամ Մեծ Բրիտանիայի պնդումները, թե Ռուսաստանը պատրաստվում է հարձակման: Այդպէս էր եւ Նախորդ աշխարհամարտի երկրորդ փուլից՝ երկրորդ աշխարհամարտից առաջ, երբ այն ժամանակ դեռեւս ազգային արեւմտյան պետությունները անում էին ամեն ինչ հրահրելու համար Գերմանիայի եւ ԽՍՀՄի (Ռուսաստանի) բախումը, սակայն այդ երկուսը ամեն գնով փորձում էին դրանից խուսափել:

Այն ժամանակ հրահրումների «կուտը» կերպով Գերմանիան, այս անգամ առաջին քայլն արեց Ռուսաստանը: Պետք է նկատել, որ համաձայն որոշ կարծիքների Ստալինի կառավարությունը ցանկանում էր, որ հենց Գերմանիան հարձակվի առաջինը, քանի որ դա իրեն (թեկուզ եւ թանկ գնով) հնարավորություն կտար «արդարի» կերպար ձեռք բերել եւ հույս ունենալ, որ պատերազմի իրական դրոշմները կօգնեն իրեն, կամ գոնե՝ չեն հակադրվի: Եւ այդպէս էլ եղավ. որքան էլ Ռուսաստանին ատում էին, բայց ստիպված էին թեկուզ եւ ուշացումով «երկրորդ ճակատ» բացել Գերմանիայի դէմ:

Այս անգամ Ռուսաստանը կորցրեց այդ առավելությունը՝ բացահայտորեն սկսելով պատերազմը: Ինչհիւ՛. Թերեւս, պատճառն այն է, որ Պուտինը չունի ինքնուրույնության այն աստիճանը, որը հատուկ էր Ստալինին: Գուցե


Ռուսաստանում մնացած դեռևս ազգային ուժերը որոշեցին, որ առիթը պետք է բաց չթողնել: Կարող են լինել եւ բազմաթիվ այլ պատճառներ: Ի վերջո, պատերազմները անկանխատեսելի են, բոլոր տարբերակները անհնար է հաշվարկել, եւ չի կարելի պնդել, որ պատերազմ սկսողը անպայման կպարտվի. եթե այդպես լիներ, ոչ ոք պատերազմ չէր էլ սկսի:

Ինչեւէ. նոր աշխարհամարտը, որը ազգային դրոշների ներքո վարում են անդրազգային միավորումները, թերեւս, սկսված է: Ճիշտ է, ինչ-որ ուժերի միջամտությամբ եւ ինչ-որ հանգամանքների բերումով պատերազմը կարող է եւ մարել, եւ այն հրահրողները ստիպված պիտի լինեն այլ casus belli-ներ հայթայթել: Առայժմ կարծես թե առիթը չի ուզում բաց թողնել նաեւ Չինաստանը: Եթե նա էլ փորձի լուծել Թայվանի խնդիրը պատերազմը էլ ավելի դժվար կլինի սառեցնել: Քաղտնտեսական օրենքները սովորական բնական օրենքներ են եւ չեն կարող չեղյալ հայտարարվել «խորհրդարանների» կամ արքաների որոշմամբ. որքան էլ տհաճ լինեն, ինչպես չեն կարող չեղարկվել շփման կամ ձգողության ուժերը:

Իսկ սովորական մարդկանց անհրաժեշտ է ավելի սթափ դատել եւ չենթարկվել կողմերից ոչ մեկի քարոզչությանը՝ խաբվածի վիճակում չհայտնվելու համար:

24.02.2022

ՈՍԿԻ ՄԻԼԻԱՐԴԻ ՄԱՍԻՆ



Թագավարակային խարդախության նպատակները բացատրելու համար (ովքեր գիտակցում են, որ գործ ունենք իրոք խարդախության, այլ ոչ թե ինչ-որ նոր, մինչ այդ գոյություն չունեցած հիվանդության հետ) առաջարկում են տարբեր բացատրությունները: Դրանք այս կամ այն կերպ կապվում են ընթացող համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետ: Ոմանք դրանում տեսնում են արտադրական նոր կացութաձեւի անցման միջոց, ոմանք՝ շուկաների եւ տնտեսական ոլորտների վերաբաշխման միջոց, ոմանք՝ քաղաքական վերնախավերի համար պատրվակ, «քաղության նոխագ», որի վրա կարելի է բարդել ընտրողների կենսամակարդակի անկումը, նաեւ պատրվակ, որը կարդարացներ սղաճը՝ պայմանավորված տրիվիոնավոր դոլարների «տպումով»՝ ճգնաժամի հետեւանքները մեղմելու համար, եւ, վերջապես, ամենապարզ բացատրությունը. որոշ ազդեցիկ անձանց կողմից հարուցված շուկայագիտական քայլ՝ պետական բյուջեները «սղոցելուն» ուղղված:

Թերեւս, թվարկված բացատրություններից յուրաքանչյուրը այս կամ այն չափով իր ներդրումն ունի: Սակայն կա եւս մեկը, որը էապես տարբերվում է վերոթվարկյալներից, թեեւ, նույնպես կապվում է դրանց հետ: Խոսքը, այսպես

կոչված «ոսկի միլիարդի» մասին է: Սովորաբար ասելով «ոսկի միլիարդ» հասկանում են «զարգացած» երկրների բնակչությունը, ի տարբերություն, «զարգացող» երկրների բնակչության: Բայց կա այդ եզրույթի մեկ այլ իմաստ եւս, հիմնված այն պնդման վրա, որ, իբր, երկրագնդի էկոլոգիական հնարավորությունները կարող են ապահովել միայն 1 միլիարդ (կամ մի քիչ ավել) մարդու գոյությունը, եւ մարդկանց թվի հետագա աճը կարող է կործանել երկրագնդի բնությունը, ու, հետեւապես, բնակչության թիվը պետք է կրճատել, սահմանափակելով այն 1 միլիարդով: Այսինքն, իբր, այս «համաճարակով» ուզում են կրճատել աշխարհի բնակչությունը:

Այս վերջին գաղափարը սովորաբար դիտում են, որպես «դավադրության տեսության» դրոյթներից մեկը: Նախորդ հոդվածներում եւ մի քանի անգամ արտահայտել եմ իմ վերաբերմունքը, այսպես կոչված, «դավադրության տեսություն» հասկացության մասին: Բայց նկատեմ, որ բուն «կոմիդը» ոչ մի կերպ չի կարող լինել բնակչության նվազեցման միջոց, քանի որ նույնիսկ պաշտոնական տվյալների համաձայն, դրանով պայմանավորված մահացությունը զիջում է բազմաթիվ այլ օդակաթիլային վարակներին: Այլ հարց է, թե ինչ հետեւանքների կարող են բերել պարտադրված «պատվաստումները», բայց դրանք կարող են նկատելի դառնալ միայն տարիների ընթացքում:

Այստեղ եւ ուզում եմ ընթերցողների ուշադրությունը գրավել աշխարհի բնակչության կրճատման ծրագրերի (գոյություն ունեցող, թե՛ չունեցող) բոլորովին այլ հետեւանքների վրա: Կրկնում եմ, եւ չեմ խոսում այն մասին, թե նման ծրագրեր գոյություն ունեն, թե՛ ոչ, այլ այն մասին, թե դա ինչի կարող է հանգեցնել: Առաջին հայացքից թվում է, թե իրոք, բնակչության շարունակվող աճի դեպքում մարդկությունը կարող է պարզապես ոչնչացնել մոլորակի պաշարները, ինչը, ի վերջո, կբերի նաեւ մարդկության վերացմանը: Սակայն, ներկայումս աշխարհում դիտվում են ժողովրդագրական կայունացման բացահայտ նշաններ, եւ եթե դրանք իրական լինեն, ապա խնդիրը առհասարակ կվերանա:

Բայց այնուամենայնիվ, եթե աշխարհի բնակչությունը կրճատվի, ինչի դա կարող է հանգեցնել: Թվում է, որ եթե այսօրվա արտադրական միջոցները, գիտությունը, արտադրածները կիրարկվեն ավելի փոքր բազմության համար ապա մարդիկ ավելի բարեկեցիկ կլինեն: Սակայն դա մոլորություն է: Դեռ մի կողմ թողնենք բարոյական կողմը, որ միլիարդավոր մարդիկ, ստացվում է, ստեղծել են այդ ամենը՝ գիտությունը, արվեստը, արհեստը եւ այլն, բայց պիտի հեռանան կյանքի թատերաբեմից, որ իրենց ժառանգները դրանք վայելեն: Ոչ, խնդիրը ավելի խորն է: Հասկանալու համար պետք է պարզել. իսկ ինչի հաշվին են առհասարակ ստեղծվել այն բարիքները, որոնք հիմա կազմում են մեր երկրային

բաղաբակրթության եռությունը: Եւ իրոք, ինչհիւ են հնարավոր դարձել վիրաբուժության, էլեկտրոնիկայի կամ քիմիայի երբեմն հեքիաթային թվացող ձեռքբերումները: Պատասխանը տնտեսության «կապիտալիստական» բնույթի մեջ է (փակագծերում նկատենք, որ այսպես կոչված «սոցիալիստական» տնտեսությունը իր խորքում նույն եռությունն ունի, պարզապես այն ներկայանում է, որպես մեկ միասնական, յուրատեսակ «պետություն-ընկերություն»): Իսկ դրա զարգացման շարժիչ ուժը շուկաների շարունակական ընդլայնումն է:

Եւ իրոք, եթե շուկան փոքր է, ապա նեղ մասնագիտացումների անհրաժեշտություն չի լինում: Օրինակ, եթե մի գյուղում վարպետը պատրաստում է, ասենք, բահ, ապա նա պատրաստում է դրա եւ փայտե կոթը, եւ երկաթե թիակը եւ մեխը, որով միացվում են առաջին երկու մասերը: Նա, այսպես ասենք, «բահագործ» է, մինչդեռ առանձին «կոթագործ», «թիագործ» եւ «մեխագործ» գյուղին պետք չեն: Նրանք եթե նույնիսկ լինեն, ապա հում պիտի վաճառեն իրենց արտադրանքը: Այլ եթե նրանք դուրս գան «արտաքին» շուկաներ եւ սկսեն վաճառել իրենց արտադրանքը հարյուրավոր այլ գյուղերում, նրանք կկարողանան խորանալ մասնագիտան իրենց նեղ ոլորտներում եւ ոչ միայն կսկսեն արտադրել բացառապես կոթեր, թիակներ ու մեխեր, այլեւ կսկսեն պատրաստել դրանք ավելի ու ավելի բարձր հմտությամբ, քանի որ այլ բան ու գործ նրանք չունեն: Իսկ եթե շուկաներն էլ ավելի ընդլայնվեն, նրանք կկարողանան արտադրել յուրաքանչյուր արտադրանքի ենթաձեւեր՝ տարբեր ձեւերի եւ տարբեր նյութերից: Իսկ հետո նույնիսկ գուցե գոյանան նոր, էլ ավելի նեղ մասնագիտություններ. «մեխագործեր», «պտուտակագործեր» եւ այլն:

Ե՛ւ շտ նույն ձեւով են գոյացել բոլոր այն նեղ մասնագիտությունները, առանց որոնց չէին ստեղծվի ժամանակակից ավտոմեքենաները, ինքնաթիռները կամ խելախոսները. դրանք չէին լինի, եթե իրենց արտադրող ընկերությունների շուկաները չունենային գլոբալ՝ միլիարդավոր չափեր: Եւ այսօրվա համաշխարհային ճգնաժամի հիմքը հենց դրանում է. այլեւ շուկաները չեն կարող աճել, որովհետեւ երկրագունդը սահմանափակ է, եւ սահմանափակ է գնորդների թիվը... Նույնիսկ՝ Չինաստանում ու Ռուսաստանում...

Այժմ պատկերացնենք, որ աշխարհի բնակչության թիվը սկսել է նվազել: Հնարավոր կլինի՞ նույն այն ապրանքների արտադրությունը, որոնք մենք տեսնում ենք այսօր շուկայում: Որոշ ժամանակ՝ այո. քանի դեռ կան այն նեղ մասնագետները, որոնք անհրաժեշտ են այդ ապրանքները ստեղծելու կամ նորոգելու համար: Սակայն եթե շուկաները փոքրանան, դրանք արդեն չեն կարողանա աշխատատեղեր ապահովել նեղ մասնագետների համար: Արդյունքում երիտասարդներն արդեն չեն ուզենա զբաղվել մի գործով, որը չի ապահովելու իրենց ապրուստը: Որոշ ժամանակ դեռեւս մնացած տարեց

մասնագետները ավելի բարձր վարձով մի կերպ կկրեն իրենց ուսերին նվազող շուկան, սակայն իրենցից հետո դրանով զբաղվողներ այլևս չեն լինի եւ բարդ համակարգերը դուրս կգան արտադրությունից: Շուկաների հետագա կրճատման դեպքում հերթը կգա ավելի ցածր մակարդակի մասնագետների հերթը (որոնք նեղ մասնագետներ կդիտվեն նոր պայմաններում), եւ այդպես շարունակ: Ճիշտ է, գրականությունը դեռ պահելու է գիտելիքները, սակայն շատ շուտով չեն գտնվելու մասնագետներ, որոնք կհասկանան, թե ինչ է գրված այդ գրքերում:

Արդյունքում, որոշ հապաղմամբ, բայց անշեղորեն արտադրությունն ու գիտությունը սկսելու են հարմարվել շուկաների նոր չափին: Գիտության մեջ ընդունված է հունարեն հիստերեզիս *ὁστέρησις* «հապաղում» եզրույթը: Այդ երեւույթը նկատվում է գիտության ամենատարբեր ճյուղերում՝ ֆիզիկայում, կենսաբանությունում, նաեւ՝ տնտեսագիտությունում: Մասնավորապես, այս վերջին ոլորտում այն դիտվում է գործազրկության մակարդակի պահպանման մեջ, շուկաների գրավման եւ այլն: Եւ, ինչպես տեսնում ենք նաեւ՝ աշխատանքի բաժանման մակարդակի մեջ:

Սրանից հետեւում է, որ եթե ինչ-ինչ պատճառներով (բնական, թե արհեստական՝ էական չէ) մարդկանց թվաքանակը իջնի 1 միլիարդի մակարդակի, այսինքն այնքան, որքան եղել է նապոլեոնական դարաշրջանում, ապա երկու-երեք սերունդ հետո մենք կունենանք քաղաքակրթություն՝ նապոլեոնական դարաշրջանի արտադրական մակարդակով: Երբ ավտոմեքենաների փոխարեն մարդիկ շրջում էին ձիերով, շոգեքարշն ու շոգենավը նոր էին հայտնագործվել, իսկ արհեստական լուսավորության ձեւերը սահմանափակվում էին քահերով, մոմերով ու ճրագներով: Եւ վերականգնելու համար այժմյան մակարդակը մարդկությանը անհրաժեշտ կլինի այն երկու հարյուր տարին, որն անցել է Նապոլեոնի օրերից, մինչեւ որ աշխարհի բնակչությունը կրկին հասնի 8 միլիարդի:

Գուցե մի փոքր պակաս, եթե պահպանված լինի գրականությունը: Բայց Ալեքսանդրիայի գրադարանի օրինակը հուշում է, որ այդ հավանականությունը այնքան էլ մեծ չէ...

21.02.2022

ԿԱՆԱԴԱԿԱՆ ԽՈՌԿՈՒԹՅԱՆ ԿԱԴԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Խորհրդային Միությունը, այն է՝ Սովետը, ինչպես հայտնի է, շատ փիս երկիր էր: Այդ հրեշավոր երկրի ղեկավարությունը հասել էր այնպիսի ստորության, որ իր յուրաքանչյուր քաղաքացուն ապահովում էին վճարովի աշխատանքով, անվճար տրամադրում էր բնակարաններ, անվճար բժշկություն, անվճար կրթություն (ներեցե՛ք՝ վճարովի. ուսանողներին սովորելու դիմաց վճարում էին), ինչպես նաեւ *գրեթե* անվճար ջուր, էլեկտրաէներգիա, հեռախոսակապ: Դրա դիմաց պարտադրում էին, որ բոլորը հիացմունքով եւ «խոր բավարարությամբ» արտահայտվեն այդ ղեկավարության նկատմամբ եւ, եթե դա չէր արվում, անշնորհակալներին կարող էին վտարել Արեւելք (այն է՝ Սիբիր) կամ Արեւմուտք (այն է՝ Նահանգներ), ուր նրանք հաճույքով կարող էին ճաշակել կյանքն առանց վերոհիշյալ հնարավորությունների: Իսկ երբ պատահում էր, որ քաղաքացիները չբավարարվելով եղածով զանգվածաբար պահանջում էին ավելին, այն է՝ ապստամբում էին (ինչպես եղավ, օրինակ, Նովոչեռնկասկում) իշխանությունները ոչ միայն ճնշում էին այդ ապստամբությունները, այլեւ թաքցնում էին փաստերը ժողովրդից, արգելելով ՉԼՄ-ներին հաղորդել այդ մասին:

Բարեբախտաբար կար Արեւմուտքը, որտեղից բազմաթիվ ազատ ՉԼՄ-ներ՝ Ազատություն, Ազատ Եւրոպա, Գերմանական ալիք, Ամերիկայի ձայն եւ այլք անվախ տեղեկացնում էին Սովետի այլախոհ (այն է՝ առաջադեմ) անձանց, թե ինչ նոր ճնշումներ էր գործադրել այդ երկրի զառամյալ ղեկավարությունը: Եւ թե որքան քաղցր բան է ազատությունը, որքան լավ են մարդիկ ապրում Արեւմուտքում, երբ բնակարանդ պետք է վարձակալես, իսկ վարձը չվճարելու դեպքում կարող ես փողոցում հայտնվել (ներողություն՝ ավտոմեքենայում, քանի որ այնտեղ բոլորը ավտոմեքենա ունեն), իսկ քո երեխաներին քո ձեռքից իսկույն կվերցնեն եւ կհանձնեն ապահով ընտանիք (բա հո երեխան չպիտի անտուն մնա), թե որքան հաճելի է գործազուրկ լինելը (ոչինչ չես անում, իսկ քեզ առոք-

փառոք պահում են նրանք, ում բախտ չի վիճակվել գործազուրկ մնալ, երբ բժշկի գնալու համար պետք է ապահովագրություն ունենաս, երբ ուսման վարձը քո փոխարեն վճարում է բանկը, իսկ հետո դու մինչև թոշակի տարիքը վճարում ես դրա տոկոսները, երբ թմրադեղերը մեծահոգաբար մատուցում են անմիջապես դպրոց եւ երեխաները կարիք չունեն անհայտ վայրերում դրանք հայթայթել: Մի խոսքով, բազմաթիվ «պլուսեր», եւ ոչ մի «մինուս»:

Այսօր չկա էլ փիս Սովետը, աշխարհը «գլոբալ» է, ՉԼՄ-ներ բոլորն անխտիր ազատ են (հատկապես՝ հեռուստատեսությունը) եւ մենք հանգիստ կարող ենք տեղեկանալ, թե ինչ սոսկալի բան է թագավարակը (նույն ինքը՝ կորոնավիրուսը) հազարներով հնծում է մարդկանց (ազատ ՉԼՄ-ներն են տեղեկացրել), թե ինչ լավ բան է դիմակ կրելը, եւ պարզապես երանություն է պատվաստվելը:

Բնականաբար, բոլորովին ազատ եւ կամավոր սկզբունքներով: Միայն այդպես: Ճիշտ է, ինչ-որ տեղերում, ասում են, ՉՐ-կող չունենալու դեպքում կարող է խանութ չթողնեն, աշխատանքից հեռացնեն կամ տուգանեն: Բայց... չէ... սուտ կլինի. ազատ աշխարհում խտրականություն (այն է՝ ֆաշիզմ) չկա: Ավստրիա ... Համ Ադոլֆ Շիկլգրուբերի հայրենիքը... Լսել ենք (ինչ-որ ՉԼՄ-ներ հաղորդել են), բայց չէ, դեռ նախագահը չի ստորագրել. միայն կամավոր:

Իսկ վերջերս աշխարհի բոլոր-բոլոր (թե՛ ոչ բոլորը) ՉԼՄ-ները հաղորդում են, որ Կանադայում (դա, եթե չգիտեք, Մեծ Բրիտանիայի գաղութներից մեկն է) բեռնատարների ապստամբ վարորդները պայթարելով պարտադիր պատվաստումների դեմ մեկ շաբաթ շարունակ փակում են երկրի գլխավոր ավտոմայրուղիները: Սակայն իրենց այդ արարքները, անօրինական են. դատարանը արգելել է բնակչությանը կերակրել ապստամբներին, կամ որեւէ այլ կերպ աջակցել, հարյուրավոր աջակիցների ձերբակալել են խտրականություն սերմանելու եւ հասարակական կարգը խախտելու համար (ինչպես մեզ մոտ չորս տարի առաջ, հիշում եք): Իսկ վարչապետը հայտարարել է, որ խռովությունը ճնշելու համար դեռեւս չի նախատեսվում գործադրել զորքերը:

Այո, ամբողջ առաջադեմ աշխարհը համոզված է, որ խռովարարները կպատժվեն, կարգը կվերահաստատվի եւ ազատ քաղաքացիները կկարողանան ազատորեն պատվաստվել ընթացիկ եւ գալիք բոլոր շտամների դեմ:

Ո՛չ Սովետի մնացուկներին: Կեցցե՛ ազատ գլոբալիզմը եւ կորչեն թագավարակի գորությունը կասկածի տակ դնող անհավատները:

09.02.2022

ԱԶԱՐՏ, ԹԵ՛ ԱՆԱԶԱՏ ՀԱՄԱՑԱՆՑ

Ինչպես հաղորդում է [Դոյլեվելլե](#)-ն Գերմանիայի Ներքին գործերի նախարար Նենսի Ֆեգերը սպառնացել է արգելափակել հանրահայտ **Տելեգրամ** ուղերձիչը: Հայտնի է, որ Տելեգրամի հիմնադիր Պավել Դուրովը ազատական տեսակետների կրող է եւ հրաժարվում է համագործակցել տարբեր երկրների հատուկ ծառայությունների հետ: Արդյունքում Տելեգրամը սկսում է ավելի ու ավելի մեծ հեղինակություն վայելել, Գուգլի, Ֆեյսբուքի եւ նման այլ ընկերությունների կողքին, եւ Տելեգրամ եւ անցնում բոլոր նրանք, ում համար կարելու է գաղտնիությունը: Բնականաբար, դրանից օգտվում են նաեւ տարբեր տեսակի հանցավոր տարրերը, այդ թվում եւ՝ ահաբեկիչները: Ինքը, Դուրովը, այն հարցին, թե արդյո՞ք նրան չի մտահոգում այդ հանգամանքը, պատասխանել է, որ իր համար մարդու ազատ արտահայտվելու իրավունքը ավելի մեծ արժեք է ներկայացնում: Կարելի էր եւ այլ կերպ պատասխանել. որ, եթե, օրինակ, խոհանոցային դանակները օգտագործվում են հանցագործների կողմից, արդյո՞ք դա նշանակում է, որ պետք է դադարեցնել այդ դանակների արտադրությունը, կամ էլ դրանք բոլորը հաշվառման դնել:

Ինչ խոսք, միամտություն կլիներ կարծել, թե Տելեգրամը առհասարակ չի վերահսկվում հատուկ ծառայությունների կողմից: Բայց երեւի դա իրենցից որոշ ջանքեր է խլում, քանի որ Տելեգրամը բոլոր պետությունների կառավարությունների կոկորդի փուշն է, բոլորը ձգտում են ամեն գնով արգելափակել այն: Եւ հատկապես զավեշտական է դա լսել Գերմանական կառավարությունից: Նախարարը գիտակցում է, որ Տելեգրամի արգելափակումը տեխնիկապես դժվար է եւ առհասարակ՝ անօրինական է, եւ որ դա կնմանեցնի Գերմանիան «ավտորիտար» պետություններին (կարծես թե գոյություն ունեն այլ տեսակի պետություններ): Բայց առավել զավեշտական է, որ նախարարը չի էլ նկատում, որ հենց իր պետության դեպքում այդ ամոթխած «ավտորիտար» եզրույթը բոլորովին այլ բան է հիշեցնում, այն է՝ ֆաշիզմը:

Եւ արդէն ոչ թէ զավեշտական այլ մտահոգիչ է այն, որ Նախարարը միեւնոյն շարքում է դիտում ծայրահեղական ահաբեկիչներին եւ պարտադիր պատվաստման հակառակորդներին, որոնց պայքարը մարդու իրավունքների հարգման շրջանակներում է գտնվում: Չավեշտական է նաեւ, որ Նախարարը դժգոհում է, որ Տելեգրամը գործածում են նաեւ «դավադրության տեսության կողմնակիցները»: Ես իմ [հոդվածներից մեկում](#) նկատել էի, որ «դավադրության տեսություն» եզրույթով պիտակավորվում են բաղաձայնական գործընթացների էությունը բացահայտող դատողությունները: Բայց չէ՞ որ կառավարական շրջանակներում ընդունված է համարել, որ «դավադրության տեսության կողմնակիցները», կամ պարզապէս «դավադրամուլերը» պարզապէս շեղված մարդիկ են, չունեն լսարան, եւ նրանց ոչ ոք լուրջ չի ընդունում: Եւ հանկարծ, պարզվում է, որ նրանք լուրջ վտանգ են ներկայացնում իշխանավորների համար: Այնքան լուրջ, որ հայտնվում են բացահայտ հանցագործների, ահաբեկիչների հետ մեկ շարքում:

Ես միշտ համարել եմ, որ աշխարհը վերահսկող ուժերը այնքան ժամանակ են հանդուրժելու ազատ Համացանցը, քանի դեռ դրանից բխող վնասը, ի դեմս դրա միջոցով մարդկանց ազատ լրատվություն ստանալու եւ կազմակերպվելու հնարավորության, չի գերազանցի այն օգուտը, որը նրանք ստանում են քաղաքացիների ուղեղների լվացման եւ վերահսկում ապահովելու արդյունքում: Այն որ, Համացանցի ազատ հատվածները արգելափակելու մասին սկսել են մտածել ոչ միայն Ռուսաստանը, Չինաստանն ու Իրանը, այլեւ «ազատ» եւ «իրավական» պետությունները, խոսում է այն մասին, որ այն իրոք կարող է փակվել, ինչը կազդարարի չար եւ բարի ուժերի հավասարակշիռ վիճակի հասնելը:

13.01.2022

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ, ԹՔՑ ՄՈԳՈՒԹՅՈՒՆ

Նախորդ հոդվածում, որը վերնագրել էի «Բժշկությունը, որպես սպասարկման ոլորտ», ես անդրադարձա բժշկական սպասարկման գնագոյացման հարցերին: Այն մասին, որ սպասառու (հիվանդը) վճարում է սպասարկողին (բժշկին) ոչ թե իր խնդիրները լուծելու դիմաց, այն է՝ բուժվելու, այլ սոսկ բժշկի ծախսած ժամանակի եւ «հոգետրության»: Նաեւ նկատել էի, որ նման առանձնահատկություն ունի նաեւ մեկ այլ «սպասարկման» ոլորտ՝ գուշակների, հմայողների ծառայությունը:

Բայց հիմա է պատճառը, որ այդ երկու՝ իրարից շատ հեռու թվացող ոլորտները այդքան նմանվում են: Նախ, ինչհիւ է այդպիսին գուշակությունը: Պատճառն այն է, որ գուշակողի նպատակը ոչ թե հաճախորդի խնդրի լուծումն է, այլ նրա վրա տպավորություն թողնելը, քանի որ ապագան պատկերացնելու որեւէ վստահելի եղանակ նա չունի եւ կարող է առաջնորդվել միայն այս կամ այն աստիճանի հավանականության ենթադրություններով, հիմնված իր նախորդ փորձի վրա: Դատելով հաճախորդի արտաքինից եւ նրա հետ զրուցելով գուշակը կարող է լրացուցիչ տեղեկություն ստանալ, թե ինչ է հաճախորդը ակնկալում եւ ասել հենց այն, ինչ նա ակնկալում էր լսել: Ի դեպ, եթե խոսքը վերաբերում է հաճախորդի առողջական վիճակին, ապա հմուտ գուշակը բավարար փորձի եւ գիտելիքների առկայության դեպքում կարող է նաեւ տպավորիչ հավանականությամբ կանխատեսել նաեւ այդ հեռանկարը՝ փաստորեն, մուտք գործելով բժշկի մասնագիտական տիրույթ:

Բայց չէ՞ որ բժիշկը մեր օրերում առաջնորդվում է ոչ թե հիվանդի գեղեցիկ աչքերով, այլ քիմիական, ծայնային, էլեկտրական եւ այլ արտանձնային (օբյեկտիվ) հետազոտություններով, եւ պիտի որ կարողանա չափազանց մեծ ճշտությամբ գնահատել հիվանդի վիճակը: Դա այդպես է, սակայն նաեւ այսօր բժշկի գործը մեծապես հավանականական բնույթ է կրում: Նույնիսկ ամենահասարակ, բազմիցս իրագործված եւ առօրյա դարձած միջամտությունները թեկուզ եւ շատ հազվադեպ կարող են անհաջող ընթացք

ստանալ՝ անկանխատեսելի հեռանկարներով: Ու ի՞նչ, բժիշկը պիտի պատասխանատվություն կրի յուրաքանչյուր նման դեպքում: Ոչ իհարկե: Բայց Նույնիսկ բժշկի իրավացիությունը հաստատվելու դեպքում, ինքնին այդ հաստատման գործընթացը ունենալու է հյուժող եւ անիմաստ ընթացք: Իսկ բարդ դեպքերում անհաջող ընթացքը էլ ավելի հավանական է:

Մինչդեռ դեպքերի մեծագույն մասով մինչ այսօր բժշկական գիտությունը լուծումներ չունի առհասարակ: Իսկ հաջող լուծումները ոչ միշտ են բացատրելի կամ կրկնելի: Հատկապես դա վերաբերում է դեղագործությանը: Այսօր արտադրվում եւ վաճառվում են հազարավոր դեղեր, մինչդեռ դրանցից շատերի ազդեցության մեխանիզմը մնում է չհաստատված: Բավական է կարդալ դրանց նկարագրությունները: Մի քանի օրինակ (իմ թարգմանությամբ).

Հակաբակտերիալից բացի ստրեպտոցիդը եւ մյուս սուլֆանիլամիդները ցուցաբերում են հակաբորբոքային գործողության, որը կապում են լեյկոցիտների շարժը սահմանափակելու դրանց կարողությամբ...

***Ըստ երեւոյթին**, \$ԴԷ-4-ը գործառուօրեն շատ կարեւոր է հարթ մկանների կծկողական ունակությունը նվազեցնելու համար, ուստի եւ \$ԴԷ ընտրական արգելակիչներ **կարող են** արդյունավետ լինել գերշարժողական հիվանդությունների բուժման համար, ինչպես նաեւ աղետամոքսային համակարգի ջղաձգային վիճակների հետ կապված հիվանդությունների...*

*Ցավագրկող արդյունը առաջանում է, **հավանաբար**, տալամուսի միջուկի վրա անալգիկի ազդեցության արդյունքում...*

Օրինակները կարող են բազմապատկվել:

Պատկերացնո՞ւմ եք նմանօրինակ ձեւակերպումներ, օրինակ, երկրաչափության կամ ֆիզիկայի բնագավառից:

*«Ներթնածիզի վրա կառուցված քառակուսու մակերեսը, **հավանաբար**, հավասար է էջերի վրա կառուցված քառակուսիների մակերեսների գումարին»:*

*«Իներցիալ համակարգում արագացումը, որը ստանում է հաստատուն զանգվածով Նյութանյան կետը **ըստ երեւոյթին** ուղիղ համեմատական է դրա վրա գործադրված բոլոր ուժերի համագործին եւ հակառակ համեմատական է դրա զանգվածին»:*

Ինչպես նկատեցիք, առաջին ձեւակերպման մեջ շարադրված է Պյութագորասի թեորեմը, իսկ մյուսում՝ Նյութոնի երկրորդ օրենքը, որոնք հայտնի եւ հաստատապես, այլ ոչ ենթադրաբար: Սա, անշուշտ, կատակ է: Անշուշտ, դա չի նշանակում, թե այսպես կոչված «ճշգրիտ» գիտություններում չկան խնդիրներ, կամ որ թե՛ առաջին, եւ թե՛ երկրորդ ձեւակերպումների

հարցում չկան խորքային՝ նեղ մասնագետներին հայտնի անորոշություններ: Անշուշտ կան, սակայն թե՛ երկրաչափության եւ թե՛ մեխանիկայի բնագավառում հստակորեն սահմանվում են այդ օրենքների գործողության *տիրույթները*, եւ այդ տիրույթներում դրանք ոչ մի կասկած չեն հարուցում: Մինչդեռ բժշկության մեջ ոչ մի տիրույթ չի հիշատակվում. դեղերի ազդեցության մասին վերոբերյալ ձեւակերպումները զուտ ենթադրական են: Կարելի է առարկել, որ թե՛ ֆիզիկայի, թե՛ մաթեմատիկայի բնագավառներում նույնպես կան բազմաթիվ պնդումներ, որոնք մինչ օրս չեն ապացուցված, կամ դրանց ապացույցները կասկածելի են թվում: Այդպիսին են Հիլբերտի որոշ խնդիրները, Ֆերմայի թեորեմը եւ այլն: Սակայն այս խնդիրների չլուծված լինելուց կախված չէ մարդու կյանքը. դրանց հարցում սխալվելը զուտ գիտական հետեւանքներ կարող է ունենալ: Մինչդեռ բժշկության մեջ սխալ վարկածով կամ պնդմամբ առաջնորդվելը կյանքի գին կարող է ունենալ, ինչպես նաեւ՝ իրավաբանական հետեւանքներ:

Ուրեմն ի՞նչ անել: Թվում է, պետք է նախապես զգուշացնել հիվանդին այդ մասին: Ի վերջո, դա եւ ազնիվ կլիներ, ու նաեւ՝ զգալիորեն կնվազեցներ բժշկի պատասխանատվությունը հնարավոր անհաջողության դեպքում: Բայց եւ դա կթուլացներ բժիշկի դիրքը. հիվանդը չի դիմի մի մասնագետի օգնությանը, ով վստահորեն չի գործում: Եւ բժշկությունը շարժվեց ավելի հասարակ ճանապարհով. ոչ թե բացատրել հաճախորդներին (հիվանդներին) իր դժվարությունները, այլ հեռու պահել հիվանդներին այդ դժվարություններից եւ ձեւացնել, թե բժիշկը հաստատապես գիտի, թե ինչ է անում:

Դպրոցական եւ բուհական ուսումնական ծրագրերի համաձայն երեխաները ստանում են բազմաթիվ գիտելիքներ, որոնք հետագա կյանքում հազվադեպ են անհրաժեշտ լինում, եթե նրանք չեն մասնագիտանում տվյալ բնագավառում: Նրանք սովորում են լուծել քիմիական եւ մաթեմատիկական հավասարումներ, պարզեցնել արտահայտություններ, հաշվում են երկրաչափական մարմինների ծավալը, իմանում են միջատների եւ բույսերի, հրաբուխների ու ջրաբուխների, մոլորակների ու աստղերի կառուցվածքը, եւ այլն եւ այլն: Իսկ տարրական գիտելիքներ այն մասին, թե՛ դեղը որ դեպքում կարելի է ընդունել կամ մարմնի ինչպիսի վիճակներն են վտանգավոր եւ դրանց դեպքում պետք է դիմել անհապաղ բուժօգնության, իսկ որոնք՝ անվտանգ՝ այդ մասին ոչ մի տեղեկություն: Ինքնաբուժումը վտանգավոր է, ասում են բժիշկները եւ տարածում կարծիք, թե ինքնաբուժման դեպքում հիվանդը ինքն իրեն կվնասի: Ինչ խոսք, այդ վտանգը կա: Բայց չէ՞ որ միամտություն է կարծելը, թե ինքնաբուժման դիմողների թիվը արդյունքում կնվազի. նրանք միշտ էլ լինելու են եւ ջայլամի վարքագիծը այստեղ ավելի վտանգավոր է: Ուրեմն, առավել եւս պետք է դպրոցական եւ բուհական ծրագրերում ներառել գիտելիքներ, որոնք

կօզնեն հասկանալ, արդյո՞ք տվյալ ախտանիշները վտանգավոր են, թե՞ ոչ: Թե երբ կարելի է խնդիրը լուծել պարզ *անալզիս* կամ *պարացետամոլ* կամ *նո-շպա* ընդունելով (ընդ որում, նաեւ թե ինչպե՞ս, եւ որքա՞ն), իսկ դեպքում պետք է անհապաղ դիմել մասնագետի օգնությանը: Եւ պետք չէ վիրավորել մարդկանց արժանապատվությունը ենթադրությամբ, թե իրենք ի վիճակի չեն ճիշտ օգտագործել այդ գիտելիքները, կամ վախենալ, թե կցկտուր գիտելիքներով զինված հիվանդը չի վստահի բժշկին: Հակառակը. երբ մարդիկ տեսնեն, որ իրենց վերաբերում են ոչ որպես մանկիկների ու հիմարիկների, այլ վստահում իրենց, իրենք էլ կվստահեն բժշկին: Թեեւ, ինչ խոսք, այդ դեպքում ամեն մի բայլը բժիշկը ստիպված պիտի լինի հիմնավորել եւ բացատրել հիվանդին, մինչդեռ հիմա նա կարող է երկնային բարձունքներից դիտել ներքեւում գտնվող հիվանդներին:

Բայց ո՞չ. մեր օրերում բժշկությունը էլ ավելի է շարժվում դեպի մասնագիտական մեկուսացում, եւ վերածում այն գաղտնապաշտական տիրույթի: Հատկապես դրան նպաստեց թագավարակային խարդախությունը, երբ ակնհայտ դարձավ պառակտումը հենց բժիշկների ճամբարում: Երբ բժիշկների մի մասը հրաժարվեց պարել բժշկության կառավարող մարմնի՝ ԱՀԿ-ի դուդուկի տակ, եւ ի պատասխան այդ պառակտման խարդախության պարագլուխները որոշեցին դիմել պետությունների պատժիչ ուժի օգնությանը: Դրա հետ մեկտեղ, ընդլայնվեց «սխեմատիկ բուժման» կիրառումը, երբ բուժ ծառայողները (բժիշկ դրանց չես էլ անվանի), իրենց գործում պարտավոր են առաջնորդվել ոչ թե իրենց մասնագիտական գիտելիքներով (եթե այդպիսիք նույնիսկ մնացել են), այլ վերադասի կողմից նախապես հաստատված գործողությունների հաջորդականությամբ՝ սխեմայով: Դա սկսում է հիշեցնել կենդանական աշխարհին բնորոշ բնագրական դրսեւորումները, երբ կենդանին անում է բնությամբ կանխորոշված գործողություններ, որոնք ոչ մի իմաստ չունեն տվյալ իրավիճակում: Բժշկությունն ավելի ու ավելի է հեռանում գիտական ուղուց եւ վերածվում մոգության: Ընդ որում, մոգության՝ որի թիկունքում պետության ողջ պատժիչ ուժն է:

Այսօր բժշկության հեղինակությունը սրընթաց կործանվում է ամբողջ աշխարհում: Փրկել կարող է միայն վերադարձը գիտության տիրույթ: Այդ թվում նաեւ դրա հիմնարար տեղեկությունների եւ հմտությունների ներառումը ուսումնական ծրագրերում բոլոր անխտիր մասնագիտությունների համար: Ինչպես ցանկացած կիրթ մարդ պիտի իմանա Պյութագորասի թեորեմը, Նյութոնի, Օհմի օրենքները, քառակուսի հավասարման լուծումը, ատոմի կառուցվածքը, Բանզլադեշի մայրաքաղաքը եւ Ավարայրի ճակատամարտի

Նկարագրությունը, այդպես էլ պիտի իմանա հիվանդությունների ու դեղամիջոցների դասակարգումը, բուժելու եղանակները եւ հետեւանքները:

Հակառակ դեպքում մարդիկ ավելի ու ավելի քիչ են վստահելու բժիշկներին ու ավելի հաճախ են դիմելու ինքնաբուժմանը, ինչը գիտելիքների բացակայության դեպքում իրոք վտանգավոր է: Դա կբերի նրան, որ պետությունները կսկսեն սաստկացնել կարգերը, արգելելու համար ինքնաբուժումը. կսկսեն արգելել նույնիսկ պարզագույն դեղերի վաճառքը առանց «դեղատոմսերի» եւ սահմանելով խախտումների համար նորանոր պատիժներ, ինչպես դա արվում եւրոպայում, ուր ժողովուրդը հասցված է լիակատար բժշկական տգիտության աստիճանի: Թվում է, թե դա հեռու է պահելու մարդկանց սխալ քայլերից, սակայն դա թվացյալ՝ Պյուռոսյան հաղթանակ է: Միեւնույն է մարդիկ նախընտրելու են դիմել արգելված եղանակների, քան թե գնալ լիովին հեղինակազրկված բժիշկների մոտ: Այդ արատավոր շրջանը կբերի մի՛ կողմից բժիշկների եկամուտների նվազմանը եւ բժշկական ծառայությունների թանկացմանը, ինչը էլ ավելի կնվազեցնի բժիշկների դիմողների թիվը: Դա էլ իր հերթի կնվազեցնի բժշկի մասնագիտությունը ընտրել ցանկացողների թիվը, ապա՝ բժշկագիտության լիակատար դեգրադացիայի եւ, որպես վերջնական արդյունք՝ կբերի ընդհանուր առողջապահական կոլլապսի:

23.12.2021

ԿԱՅԱՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Իլյա Իլֆն ու Եւգենի Պետրովը «Ոսկի հորթ»-ում նկատել էին, որ «ավտոմեքենան ստեղծել են հետիոտնները, բայց ավտոմեքենայավորները դրա մասին, մի տեսակ, անմիջապես մոռացան: Համեստ ու խելացի հետիոտններին սկսեցին ճզմել: Հետիոտնների ստեղծած փողոցները անցան ավտոմեքենայավորների իշխանության տակ»:

Մեծանուն հեղինակները երեւի հաճեցիորեն կգարմանային, եթե իմանային, որ իրենց անմահ գրքի աշխարհ գալուց մոտ մեկ դար հետո հետիոտնների վիճակը կտրուկ բարելավվելու միտում է դրսևորելու առնվազն Հայաստան երկրի մայրաքաղաք Երեւանում: Այստեղ հետիոտններին, կարծես թե, հաջողվում է որոշ չափով նեղել ավտոմեքենայավորներին: Գնալով կրճատվում են ավտոմեքենաների կայանման համար թույլատրելի տարածքները: Նախկինում վարորդները անամոթաբար կանգնեցնում էին իրենց ավտոմեքենաները մայրթերի վրա, դրանով, ոչ միայն նեղելով հետիոտններին, այլեւ անամոթաբար տեղ ազատելով բանուկ մասով շարժվող իրենց կուսակիցների համար: Այսօր շատ մայրթերի եզրերով տեղադրվում են ցանկապատեր, եւ վարորդներն այլեւս չեն կարողանում դիմել նման խորամանկությունների, իսկ իրենց գործընկերները (հատկապես՝ նեղ փողոցներում) ստիպված են կայանել մայրթերի եզրերով, արգելակելով շարժումն ամբողջ փողոցում: Ոչինչ, որ այդ մայրթերով հետիոտններ գրեթե չեն էլ անցնում. կարելորդ, որ վերականգնված է կարգն, արդարությունը եւ հետիոտնների ոտնահարված պատիվը: Եթե խոսենք բառակուսի մետրերով, ապա հատկապես մեծ հաղթանակ են տարել հետիոտնները (ամբողջ 1300 քմ չափով), օրինակ՝ Մերգելյանի ինստիտուտի դիմացի եռանկյունաձեւ հրապարակում: Նախկինում այստեղ կայանում էին 30-ից 40 ավտոմեքենա: Այժմ՝ տարածքը ցանկապատված է, եւ էլ ոչ մի ավտոմեքենա այնտեղ չի կայանի. հաղթանակ:

Կարող է հարց առաջանալ. լավ, բայց որտեղ են այժմ կայանում այդ ավտոմեքենաները: Ի վերջո տարեկան հազարավոր մեքենաներ են ներկրվում

երկիր եւ դրանք պիտի մի տեղ կայանեն. նկատենք, որ ավտոմեքենայի իմաստը ոչ միայն շարժման մեջ է, այլ նաեւ՝ անհրաժեշտության դեպքում որեւէ տեղ կայանելու: Սակայն հետիոտնների առաջնորդներին այդ հարցը ամենեւին չի հուզում (որոնք, անկասկած, նույնպես ավտոմեքենայավորներ են, բայց, շնորհիվ պաշտոնների, կայանելու ինդիքն իրենց համար վաղուց ի վեր լուծած է): Նրանք շարժվում են հաղթանակից՝ հաղթանակ:

Վերջերս պայթար է սկսվել Մատենադարան տանող թեթուղու վրա կայանելն արգելելու համար, ուր կայանում էին իրենց ավտոմեքենաները, մասնավորապես, Պոլիտեխնիկական եւ ճարտարապետաշինարարական համալսարանների աշխատակիցները: Հետաքրքիր է, որ կանգառն արգելող նշաններն այստեղ տեղադրված են թեթուղու համեմատաբար լայն հատվածում, ուր կայանած մեքենաների կողքով, թեեւ դժվարությամբ, բայց եւ այնպես կարող են անցել հանդիպակաց շարժվող երկու այլ ավտոմեքենա, մինչդեռ ուղրանների հատվածում, ուր ճանապարհը նեղ է, կայանելը չի արգելվում: Հավանաբար, դա արվում է Մատենադարանի մոտակայքում զբոսաշրջիկների աչքը շոյող տեսարաններ ապահովելու համար, կարծես թե զբոսաշրջիկներն իրենց հայրենիքներում երբեք չեն տեսել կայանող ավտոմեքենաներ:

Այդ պայթարն ընթանում է նախկին Երիտասարդական պալատի հարեանությամբ ծավալված շինարարության արդյունքում այնտեղ եղած կայանատեղիի վերացման ֆոնի վրա: Բացի այդ գրոհը զուգորդվում է մերձակա բոլոր բակերի մուտքերում ուղեփակոցների տեղադրմամբ, ինչի արդյունքում ավտոմեքենայով համալսարան շտապող դասախոսները ստիպված են կամ զգալիորեն վաղորոք գալ գործի՝ կայանատեղ գտնելու համար, կամ էլ՝ որոնել այն համալսարաններից օրըստօրե ավելի ու ավելի հեռու վայրերում: Կամ... անցնել ավելի գորեղ բանակի՝ հետիոտնների շարքերը...

Կարելի է ենթադրել, թե քաղաքային իշխանությունները մտահոգված են քաղաքացիների առողջության հարցերով. քայլելը, ինչպես հայտնի է, առողջարար է: Բայց ինչ-որ բան հուշում է, որ դա արվում է սոսկ բռն զործունեության տպավորություն ստեղծելու համար՝ այլ նախաձեռնությունների, մասնավորապես՝ մետրոպոլիտենի խոստացած ընդլայնման ծրագրերի տապալումը քողարկելու համար:

Երեւանին վաղուց արդեն անհրաժեշտ են ոչ թե մեկ-երկու փոքր, այլ հարյուրավոր մեծ՝ հարյուրավոր մեքենաների համար նախատեսված ստորգետնյա կամ վերգետնյա բազմահարկ ավտոկայանատեղիներ: Ընդ որում, դրանք պետք է լինեն *բոլորովին* անվճար, առանց ուղեփակոցների եւ այլ սահմանափակումների, քանի որ ավտոմեքենաների տերերը գույքահարկ են վճարում պետությանը, որը լիովին կարող է ծածկել կայանատեղիների

սպասարկման ծախսերը: Իսկ մինչ դրանց իրագործելը քաղաքային իշխանությունները ոչ մի բարոյական իրավունք չունեն խանգարելու քաղաքացիներին (իսկ ավտոմեքենայով աշխատանքի գնացողները նույնպես քաղաքացիներ են) կայանել այն վայրերում, ուր նրանք *համեմատաբար* չեն խանգարում շրջապատին: Եւ հակառակը՝ ամեն ինչ պետք է անեն, բացառելու համար կայանելն այնպիսի վայրերում, ուր նրանք խոչընդոտում են երթևեկությունը: Օրինակ՝ խաչմերուկներին հարող հատվածներում, ուր երեք-չորս կայանած մեքենաները կարող են 2-ից 3 անգամ նվազեցնել խաչմերուկի թողունակությունը: Մինչդեռ այս ուղղությամբ ճանապարհային ոստիկանությունը եռանդ չի դրսևորում:

21.12.2021

Ե.Գ. Հեղինակն այս նյութը գրել է ընտրված քաղաքապետ Հայկ Մարությանին անվստահություն հայտնելուց առաջ եւ ոչ մի կերպ չի կապում դա այդ միջոցառման հետ:

ԹԱԳԱՎԱՐԱԿԸ ՈՐՊԵՍ ԿՐՈՆ

Անցած երկու «թագավարակային» տարիների ընթացքում եղած իրադարձությունների վերհիշումը բերում է եզրակացության, որ թագավարակի մասին ժողովուրդների մոտ ձեւավորված պատկերացումները կարող են դիտվել, որպես **Նոր կրոնի** դրսևորումներ: Իրոք, գիտության ներկայացուցիչների մոտ չափազանց իրարամերժ է վերաբերմունքը այդ հիվանդության նկատմամբ, մինչդեռ դա չի խանգարում, որպեսզի աշխարհի գրեթե բոլոր պետությունները եւ դրանց քաղաքացիների զգալի մասը միանման եւ համաձայնեցված կերպով կազմակերպեն իրենց վարքագիծը, կապված դրա հետ, կարծես թե հարցի գիտական կողմը արդեն պարզաբանված է: Իզուր չէ, որ ժողովրդի այն մասը, որը չի ընդունում (*չի հավատում*) այդ հիվանդության մասին պաշտոնապես տարածվող պնդումներին, դրանց հավատացողներին սկսել է անվանել **«թագավարակի վկաներ»:**

Համաձայն Թովմա Աբվինացու հակիրճ եւ դիպուկ ձեւակերպման, **«կրոնը հավատքի դավանանքն է՝ արտաքին նշանների միջոցով»:**

Հետեւապես, եթե իրոք գործ ունենք Նոր կրոնի հետ, ապա պիտի լինեն դրա արտաքին նշանները: Ստորեւ ես կփորձեմ ներկայացնել դրանք: Ցանկացողները հեշտությամբ կարող են հիշել եւ մտովի համադրել դրանք հայտնի կրոնների՝ քրիստոնեության, կոմունիզմի, լիբերալիզմի եւ մյուսներին բնորոշ նշանների հետ: Դրանք կարելի էր բերել շատ հստակ համադրական աղյուսակի տեսքով, սակայն ես դա այստեղ չեմ անում՝ համապատասխան կրոնների հետեւորդների զգացմունքներին չդիպչելու համար: Չէի ցանկանա վիրավորել նաեւ **թագավարակի վկաների** զգացմունքները, սակայն առայժմ «կորոնավիրուսի» երկրպագումը պաշտոնապես կրոն չի համարվում: Հենց որ դա պաշտոնապես արվի, ես այլեւս ինձ թույլ չեմ տա նման բնույթի հոդվածներ հրապարակել, իսկ օրենքն էլ, հուսով եմ, հետադարձ ուժ պիտի չունենա:

Նկատենք, որ կրոնները կարելի է բաժանել երկու հստակ տեսակի. պայմանականորեն՝ *նւղիղ գործողության*, որոնց դեպքում հավատացյալը

հավատում է բարի ուժի գոյությանը, եւ ապավինում դրա օգնությանը, եւ՝ *հակառակ գործողության*, որոնց դեպքում հավատացյալը հավատում է չար ուժի գոյությանը, եւ ապրում հույսով, որ այդ ուժն իրեն չի վնասի: Թագավարակի վկայությունը, որպես կրոն անկնհայտորեն պատկանում է երկրորդ տեսակին:

Ստորեւ դիտարկված են որեւէ կրոնին հատուկ նշանները (պաշտամունքի բաղադրիչները) եւ դրանց մարմնավորումը «*Թագավարակի վկայություն*» դեռեւս պայմանական անվանումը կրող կրոնում:

Հավատի առարկա.

**Գոյություն ունի ԹՀ (Թագավարակային Հիվանդության)՝
առանձնահատուկ վտանգավորության հիվանդություն, որի հարուցիչը՝ 2019 թվին բացահայտված ՆՈՐ թագավարակն է:**

Թագավարակները հայտնաբերվել են անցած դարի 50-ական թվականներին: Դրանք, այսպես կոչված, «սեզոնային» օդակաթիլային շնչառական վարակներից են: Սովորաբար դրանցով հարուցված հիվանդությունները վտանգավոր չեն եւ հաճախ անցնում են առանց լուրջ հետեւանքների, թեեւ (եւ դա միշտ էլ հայտնի է եղել) այլ հարակից հիվանդությունների առկայության դեպքում, ինչպես նաեւ մեծ տարիքի դեպքում, կարող են բերել ծանր բարդացումների: Այսպիսով դիտարկվող հավատքի հիմքում այն պնդումն է, որ *այս մի թագավարակը էապես տարբերվում է բոլոր այլ՝ նախկինում դիտված թագավարակներից*, եւ բոլորովին **ՆՈՐ** է եւ սրա հարուցած հիվանդությունը չափազանց ավելի ծանր է: Առաջին անգամ այն դիտվել է Չինաստանում: Ծագման մասին կա երկու կարծիք. 1. *ունի բնական ծագում եւ մարդուն է անցել չղջիկներից* 2. *ունի արհեստական բնույթ*: Առաջին տարբերակը որպես հավատքի առարկա քիչ հրապուրիչ է, քանի որ պարզ չէ, ինչու թագավարակների բազմաթիվ տարբերակներից հենց այս մեկը պիտի առանձնահատուկ վտանգավոր լիներ, ուստի եւ առավել հաճախ աջակցվում է երկրորդ տարբերակը: Այդպես է համարում օրինակ, Գարրի Կասպարովը. «Ամբողջ առկա տեղեկության մանրագնին եւ անաչառ վերլուծությունը ցույց է տալիս, որ վարկածն այն մասին, որ այդ վարակը ինչ-որ կերպ «դուրս է թռել» Ուհանի աշխատանոցից, ունի ավելի շատ իրական փաստական նյութ»: Ինչպես տեսնում ենք աշխարհի նախկին չեմպիոնը ունի «*ամբողջ առկա տեղեկությունը*» եւ վստահ է, որ այս մի թագավարակը արհեստական է:

Կառավարող մարմին.

Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն (ԱՀԿ): Ինչպես եւ այլ կրոնների դեպքում տեղական կազմակերպությունները, որոնց դերում հանդես են գալիս պետությունների *Առողջապահության Նախարարությունները*,

կարող են ունենալ ԱՅԿ-ից որոշ չափով տարբերվող գործելակերպ, սակայն հիմնական դրույթի՝ հավատի առարկայի հարցում համակարծիք են:

Սուրբ գիրք.

Դիտարկվող կրոնի դեպքում սուրբ գրվածքների դեր են խաղում **ԱՅԿ-ի որոշումները** եւ ԹՅ-ի դեմ պայքարելու ձեւերին նվիրված մեթոդական ձեռնարկները: Այդ թվում՝ ԱՅԿ-ի պաշտոնական կայքը, որի գլխավոր էջի կարեւորագույն մասը նվիրված է բացառապես ԹՅ-ին:

Պետական ճանաչում.

Առկա է: Այլապես կարելի էր խոսել ոչ թե նոր *կրոնի*, այլ, ընդամենը, *աղանդի* մասին: Ավելին, այսօր շատ քիչ են պետությունները, որոնցում ավանդական կրոնները ունեն պետական կարգավիճակ: Ներկայումս նոր ԹՅ-ի գոյությունը ճանաչված է աշխարհի **բոլոր** պետությունների կողմից, ինչը *թագավարակի վկայությունը* դարձնում է բացարձակ ընդգրկում ունեցող կրոն, որով այն գերազանցում է մնացյալ բոլոր կրոնները, որոնք չեն էլ փորձում հակադրվել դրան: Հայտնի է, որ պետական կրոնները գերակա ազդեցություն ունեն պետությունների եւ պետական կառավարման վրա, եւ **իրավունքի աղբյուր** են հանդիսանում: Եւ իրոք, այսօր դիտարկվում են [տարբերակներ](#), որոնց էությունն այն է, որ ԱՅԿ-ի որոշումները պիտի գերակա ուժ ունենան պետությունների օրենսդրության նկատմամբ, այդ թվում՝ «մարդու իրավունքների»: Որոնց վրա, մեր մեջ ասած, առանց այն էլ վաղուց արդեն աշխարհի ԲՈՒՈՐ կառավարությունները «թեքած ունեն»:

Կրոնական կենտրոններ.

Այդ դերում հանդես են գալիս **առանձնացված հիվանդանոցները**: Ի տարբերություն այլ հիվանդանոցների, որոնցում կարող են բուժօգնություն ցուցաբերել մի շարք տարբեր հիվանդություններով տառապողներին, թագավարակի համար հատկացվում են առանձին բուժփմանարկներ: Դա բացատրվում է այդ հիվանդության բացառիկ վարակելիությամբ եւ վտանգավորությամբ, սակայն փաստացիորեն դարձնում է դրանք նոր կրոնի հատուկ կենտրոններ:

Նահատակներ.

Ցանկացած կրոնում կան նահատակներ՝ տվյալ կրոնի առաջամարտիկներ: Այս դեպքում դրանք **հիվանդներն են: Չափազանց ցավալի է**, բայց ԹՅ-ով տառապող ցանկացած հիվանդի, առավել եւս, եթե հիվանդը հանրային անձ է, այս կրոնի հետևորդները ներկայացնում են որպես նահատակի, եւ ներառում սեփական քարոզչության մեջ:

Տարբերիչ նշան.

Դիմակ: Յուրաքանչյուր կրոն ունի նման մի նշան: Դա կարող է լինել հագուստի պարագա (օրինակ՝ գլխարկ), ինչ-որ դրոշ, կամ, պարզապես՝ գույն, կամ հենց երկրաչափական մի ձև (յուրաքանչյուրը կհիշի, թե ինչ կրոնը ինչ նշաններ ունի: Դիմակը ներկայանում է, որպես հագուստի պարագա, առանց որի թագավարակի նվիրյալ վկան պարզապես իրեն մերկ կզգա հանրության մեջ: Այն, որ ի դեմս դիմակի (ակամա բառախաղ) գործ ունենք հագուստի կրոնական պարագայի հետ հաստատում է հենց ԱՅԿ-ի կայքը, ուր բերված է դիմակի մասին իրարամերժ տեղեկություն: Օրինակ, նշված է, որ *դիմակ ՊԵՏԸ ՉԷ կրել վարժություններ կատարելիս, քանի որ այն կարող է «խոչընդոտել հարմարավետ շնչառությանը»*, իսկ մի քանի տող անց նշված է, որ *դրանց ճիշտ գործածումը ՉԻ ԲԵՐՈՒՄ ածխաթթու գազով թունավորմանը կամ թթվածնային քաղցին:* Ինչպես ասում են՝ կողմնորոշվեք: Հատկանշական է նաեւ այն, որ մարդիկ հաճախ դիմակը կրում են ծնոտի տակ. այն իրենց խանգարում է, բայց չկրել դիմակ, կնշանակի այլախոհի կեցվածք ընդունել, իսկ դա հղի է անախորժություններով, ինչպես ցանկացած այլախոհություն:

Մաքրագործում.

Տեստավորում: Պատվաստում: Ցանկացած կրոն ունի այս կամ այն կերպ ձեւակերպված մաքրագործման եղանակ: Դրա հիմքում կասկածն է, որ դու թույլ ես տվել ինչ-որ սխալ, կամ որ քո մեջ կա մի թերության սաղմ (մեղք): Այն կարող է վերացվել կրոնական պաշտոնյայի որոշակի գործողությունների արդյունքում: Բնականաբար, դա *միշտ չէ, որ կարող է փրկել* անձին, ում մեջ բուն է դրել այդ թերությունը: Թագավարակը պաշտամունքի առարկա դարձրած պաշտոնյաները հստակորեն շեշտում են այս հանգամանքը. պատվաստումը չի ապահովագրում հիվանդանալուց: Սակայն մաքրագործման արարողությունը կարող է փրկության *հույս* տալ:

Բարեպաշտներ.

Նոր կրոնի բարեպաշտ հետեւորդները *ԱՅԿ-ի ցուցումներ կատարողներ են:* Մասնավորապես դա ենթադրում է դիմակների (բացառիկ բարեպաշտության դեպքում՝ նաեւ ձեռնոցների կրում), առիթով եւ առանց առիթի «ալկոզելով» «վճացում», տեստավորում, եւ անշուշտ՝ մաքրագործում, այն է՝ պատվաստում՝ մեկից ավելի անգամ):

Գիտության դերը.

Ցանկացած կրոնի հիմնական թշնամին գիտությունն է, ու, միաժամանակ, ցանկացած կրոն պնդում է, որ իր դրույթները գիտական են: Կամ հակառակը. եթե որեւէ պնդում հակասում է տվյալ կրոնի պնդումներին, ապա այն գիտական

չէ: Թագավարակի վկաները համառորեն անտեսում են այն գիտնականների պնդումները, որոնք վկայում են դրա դեմ: Միեւնոյն ժամանակ թաքցվում են թագավարակային հիվանդության տարածման եւ մահացության մասին վիճակագրական տվյալները կամ ներկայացվում են դրանք **հարմար ձեւով**:

Անշուշտ կան նաեւ բազմաթիվ այլ նշաններ, բայց եւ այսքանից ակնհայտ է, որ ի դեմս «**ՆՈՐ**» թագավարակի գործ ունենք զուտ կրոնական պաշտամունքի հետ, եւ ինչպէս ցանկացած կրոն, այս մեկը նույնպէս կոչված է **վերահսկելու մարդկանց գիտակցությունը, իրավունքներն ու սեփականությունը**:

Վերջում, թյուրըբոնումը բացառելու համար ցանկանում եմ կրկին շեշտել, որ **ես ամենեւին չեմ ժխտում թագավարակային հիվանդությունների գոյությունը** (դրանց գոյությունը հաստատված գիտական փաստ է), կամ այն, որ **դրանց հետեւանքները կարող են շատ ծանր լինել, ընդհուպ՝ մինչեւ մահ**. դա նույնպէս փաստ է: Ես միայն պնդում եմ, որ գոյություն չունի ինչ-որ **առանձնահատուկ** կերպով վտանգավոր եւ մինչեւ վերջերս գոյություն չունեցած **բոլորովին ՆՈՐ** մի թագավարակ, որը կարող է մարդու իրավունքներ ոտնահարման հիմք դառնալ: Ուստի եւ չեմ ընդունում **թագավարակի վկայության հավատո հանգանակը**:

01.12.2021

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Եւ այսպիսով դասերը կրկին դարձել են «հեռավար»: (Երկիրը համակենտրոնացման ճամբար դարձնելու մյուս *քայլերի* մասին այստեղ չեմ խոսում. դրանք համաշխարհային բնույթ ունեն, թեեւ այն հարվածները, որոնք գուցե վերապրեն հարուստ երկրները, կարող են մահացու լինել մեր երկրի համար:)

Դեռեւս մոտ մեկ ամիս առաջ ես նամակ ստացա, որում առաջարկվում էր մասնակցել «հեռավար» ուսուցման քննարկմանը: Ես հրաժարվեցի, նշելով, որ անիմաստ է քննարկել մի բան, որը չի կարող գոյություն ունենալ: Ինչպես գոյություն չունեն *եռագլուխ վիշապներ*, կամ *կենդանի դիակներ*: Թեեւ, ինչ վերաբերում է վերջինին, ապա եթե այդ «հեռավար» կրթությունը շարունակվի մեր երկրում կրթության վիճակը հնարավոր կլինի բնութագրել միայն այդ բառակապակցությամբ:

Սեզոնային համաճարակները բնական երեւոյթ են եւ եղել են միշտ, եւ լինելու են միշտ: Նախկինում էլ հաճախ ուսումնական տարին կարող էր կրճատվել մի քանի շաբաթով՝ համաճարակի վերելքի պահերին: Սակայն ոչ ոք դա տիեզերական խնդիր չէր դարձնում, իսկ բաց թողնված օրերը որպես կանոն լրացվում էին ամառային կամ այլ արձակուրդների հաշվին. եւ ոչ ոք չէր տուժում:

Այլ է վիճակն այսօր: Զինվելով *սեզոնային շնչառական հիվանդությունների*, իբր, «*նոր*», «*աննախադեպ*» լինելու պնդումով, այսօր պարզապես կրճատում են ուսուցման օրերի քանակը, ոչնչով դրանք չլրացնելով, քանի որ, իբր, կազմակերպում են «հեռավար» ուսուցում: Ես դասավանդում եմ կերպարվեստի ոլորտին վերաբերող առարկաներ եւ գիտեմ, որ դրանք սկզբունքորեն չեն կարող «հեռավար» լինել՝ ըստ սահմանման. դասախոսը անձամբ պիտի աշխատի ուսանողի աշխատանքի վրա եւ ուսանողի աչքի առաջ, որպեսզի կարողանա փոխանցել իրեն իր հմտությունները: Սա միարժեքորեն ակնհայտ է արվեստի նաեւ մյուս ճյուղերի դեպքում: Բայց միամտություն է կարծել, թե, օրինակ, լեզվի կամ մաթեմատիկայի դասավանդման դեպքում այդ «հեռավարը» հնարավոր է:

Ոչ, հնարավոր չէ, քանի որ աշակերտը (ուսանողը) յուրացնում է գիտելիքը ոչ միայն դասատուի (դասախոսի) խոսքի միջոցով, այլև այն հոգեբանական կապի շնորհիվ, որը հաստատվում է դասավանդողի, սովորողի, ամբողջ խմբի միջև անմիջական շփման արդյունքում՝ շարժմունքների, հայացքների միջոցով:

Այսպիսով, «հեռավար» ուսուցումը սոսկ **խեղաթյուրում** է: Մինչդեռ այդ խեղաթյուրման եւ խեղկատակության դիմաց ուսանողները վճարում են **իրական գումարներ**: Եթե դուք *իրոք* կարծում եք, թե այնքան սոսկալի վտանգ է սպառնում դասախոսներին եւ ուսանողներին, որ դասերը պետք է դադարեցվեն, ուրեմն **լրացրեք դասաժամերը արձակուրդների հաշվին**: Կամ հայտարարեք (եթե անկեղծ եք ձեր պնդումներում), որ **ոչ անկա ուսուցման օրերի դիմաց ուսանողները չպիտի վճարեն**: Կամ՝ վճարեն պայմանագրային գումարի, ասենք, **20 տոկոսը**. չի բացառվում, որ ինչ-որ գիտելիք սովորողները «հեռավար» ձեւով գուցե եւ կարող են յուրացնել, սակայն դա սոսկ չնչին քանակի եւ որակի գիտելիք կարող է լինել: Եւ նույն տոկոսով պետք է վարձատրել դասախոսներին, քանի որ իրենք էլ նույն մասով են իրագործում իրենց պարտականությունները, այն է՝ գիտելիքների եւ հմտությունների հաղորդումը ուսանողներին: Իսկ ուսման վերջում էլ **դիպլոմներում թող նշում կատարվի**, որ տվյալ շրջանավարտը «գիտելիքների» որոշակի մասը ստացել է «հեռավար». դրանով սոսկ կարձանագրվի փաստը: Թե՞ դուք կուզեիք այն թաքցնել:

Ի վերջո, այսօր Համացանցում կան բազմաթիվ դասընթացներ, որոնք հաճախ վարում են բավական լավ վարպետներ եւ հաճախ էլ՝ շատ ավելի հաջող եւ խորը ծրագրերով: Ընդ որում՝ հաճախ՝ բոլորովին անվճար: Եթե իրոք դրանց միջոցով հնարավոր է գիտելիք եւ հմտություն ձեռք բերել, ապա ինչո՞ւ պիտի առհասարակ ուսանողը վճարի որեւէ բուհի այդ «հեռավար» դասընթացների համար: Ընդամենը «դիպլոմ» ստանալու համար: Այդ դեպքում էլ արիություն դրսևորեք եւ խոստովանեք, որ ձեր ապահոված «կրթությունը» ոչ թե գիտելիք է տալիս, այլ դիպլոմ է վաճառում. պարզապես՝ վաճառքի գործընթացը տեւում է 4-ից 6 տարի (կամ ավելի երկար):

29.10.2021

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1 ՌՈՒՍԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԴԻՄԱՑ՝ 50 ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ. ԻՆՉ ԿԱՐԾԻՔԻ ԵՔ, ՊԱՐՈՆ ԼԱՎՐՈՎ

News.am-ը հայտնում է, որ Ռուսաստանցի հայրենակիցների յոթերորդ համաշխարհային համագումարին իր ելույթում Ռուսաստանի արտգործնախարար Լավրովը հայտնել է, որ շուտով Տաջիկստանում բացվելու է հինգ ռուսական դպրոց: Որ նման ծրագիր կա նաեւ Ուզբեկստանի համար: Որ Հայաստանի ղեկավարությունը նույնպես հետաքրքրություն է հայտնել նման ծրագրի հաշվով: Եւ որ առհասարակ պետք է այդ ծրագիրը հիմնօրինակային դարձնել Ռուսաստանի բոլոր դաշնակիցների համար:

Ինչ խոսք տրամաբանական է, որ դաշնակից պետությունների քաղաքացիները տիրապետեն միմյանց լեզուներին: Բայց տիրապետել, չի նշանակում կործանություն ստանալ այդ լեզվով: Հիմա էլ Հայաստանյան բոլոր դպրոցներում ռուսաց լեզուն դասավանդում է: Մինչդեռ «ռուսական դպրոց» նշանակում է, որ ռուսերեն են դասավանդվում բոլոր առարկաները, իսկ մայրենի լեզուն ուսումնասիրվում է դրանցում որպես օտար լեզու: Այն է՝ հենց ռուսերենն է դրանցում «մայրենին»։ մենք դա շատ լավ գիտենք խորհրդային ժամանակներից:

Թեեւ... գուցե սա էլ կարող է դիտվել որպես տարբերակ (դաշնակից երկրների դեպքում): Սակայն, թվում է, որ այս դեպքում անհրաժեշտ է (դիվանագիտական եզրույթներով ասած)՝ «պարիտետ»: Կարծում եմ, տրամաբանական եւ ընդունելի կլիներ, որ եթե Հայաստանում «Էթնիկ» հայ (կամ Տաջիկստանում՝ «Էթնիկ» տաջիկ) երեխաները պիտի կործանվեն երիտասարդ ռուսաց լեզվով, ապա Ռուսաստանում էլ «Էթնիկ» ռուս երեխաները պիտի կործանվեն ստանան դարավոր հայոց եւ տաջիկ լեզուներով: Թերեւս նրանց ավելորդ չէր լինի բնագրով կարդալ Նարեկացու կամ Ֆիրդուսու երկերը եւ

համապատասխան լեզուներով յուրացնել մաթեմատիկական, կենսաբանական կամ տնտեսագիտական եզրույթները:

Ու թերեւս բնական է, որ եթե, օրինակ, Ռուսաց պետության բնակչությունը մոտ 50 անգամ գերազանցում է Հայոց պետության բնակչությունը, ապա «պարիտետը» կպահանջի, որ ռուսական դպրոցում կրթվող յուրաքանչյուր մեկ հայ երեխայի դիմաց Ռուսաստանում հայոց լեզվով (բնականաբար՝ պետական ֆինանսավորմամբ) կրթություն ստանա 50 «Էթնիկ» ռուս երեխա: Եւ, օրինակ, հայաստանյան մեկ ռուսական դպրոցի դիմաց, Ռուսաստանում բացվեն 50 հայկական դպրոց՝ բոլոր խոշոր քաղաքներում: Տաջիկերենի դեպքում բավական կլինի, որ բացվելիք 5 ռուսական դպրոցների դիմաց Ռուսաստանում բացվեն 75 տաջիկերեն դպրոցներ. Տաջիկստանի բնակչությունը ընդամենը 15 անգամ է գիջում Ռուսաստանի բնակչությանը:

Համաձայն չե՞ք այս համամասնական եւ դիվանագիտական թվաբանությանը պարոն Լավրով: Ի դեպ, խոսում են, որ դուք էլ եք ծագումով հայ, պարզապես ռուսական կրթություն եք ստացել: Դուք ձեզ հայ եք զգում, թե՞ ռուս:

Հ.Գ. Հետաքրքիր կլիներ իմանալ այս հարցի կապակցությամբ Նաեւ կրթության նախկին նախարար Արայիկ Հարությունյանի կարծիքը (որպես «Հայաստանի ղեկավարության» ներկայացուցիչներից մեկի), որը տարիներ առաջ «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» շարժման կողմնակիցներից մեկն էր:

15.10.2021

ԱՅԴ Ո՞Ր ԱԶԳՆ Է, ՈՐ...

1. Իր անվտանգության համակարգը կազմում է, ոչ թե սեփական բանակին ապավինելով, այլ սոսկ՝ այն «դաշնակից» երկրներին, որոնք նախկինում իրեն բազմիցս դավաճանել են:

2. Հանձնում է իր պատմական հայրենիքից իրեն հրաշքով մնացած 10 տոկոսի մի հսկայական հատված եւս նույն դարավոր թշնամուն, հույս ունենալով, որ այ՛ սրանից հետո խաղաղություն կլինի:

3. Նախընտրում է նոր կաշառակեր իշխանություններին հներին, համարելով, որ դրանք նախընտրելի են, քանի որ նոր են:

4. Հարբուխից վախեցած եւ դիմակով պինդ կապված անցնում է մայրուղին ամենավտանգավոր տեղում՝ խախտելով երթեւեկության կանոնները:

5. Իր համակարգչի եւ հեռախոսի անգլերեն համակարգի փոխարեն տեղադրում է ոչ թե իր մայրենի լեզվով, այն մեկ այլ օտար լեզվով համակարգ:

Շարունակելի....

08.10.2021

ՀԱՅԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ (ARMENOCENTRISM)



Ինչպես եւ մարդը, յուրաքանչյուր ազգ ունի սեփական աշխարհայացքը, շահեր եւ այլ ազգերի հետ հարաբերություններում հանդես է գալիս *եսակներորոն* դիրքերից: Ազգերի դեպքում նույնպես գործածում են *-կենտրոնություն* բաղադրիչով եզրեր. *եկրակենտրոնություն, իրանակենտրոնություն* եւ այլն: Կա եւ *հայակենտրոնություն* եզրը, թեեւ այն հազվադեպ է գործածվում: Մենք, հայերս, ամաչում ենք դրանից, իսկ այլոց այն, բնականաբար, չի հետաքրքրում:

Բանն այն է, որ եթե յուրաքանչյուր ազգ կարող է իրեն աշխարհի կենտրոն համարել, ապա հայտարարել այդ մասին կարող են ոչ բոլորը. համենայն դեպս, որպեսզի նման հայտարարությունը զավեշտորեն չհնչի: Եւ հնում, եւ հիմա դա

կարող է անել միայն ուժեղը: Կամ նույնիսկ այսպես. եթե ուժեղ ես, ուրեմն հենց աշխարհի կենտրոնում ես: Իսկ քանի որ ուժն անցողիկ է, պատմության ընթացքում աշխարհի կենտրոնը բազմիցս փոխվել է: Ավելի ճիշտ՝ «կենտրոնները» (հիմա ավելի մոդայիկ է ասել «բեւեռներ»): Չոռմ եւ Իրան, ԱՄՆ եւ ԽՍՀՄ եւ այլն:

Իսկ գոյություն չունի ուժի եւ դիրքի հակադարձ կապ: Արդյո՞ք կենտրոնում գտնվելը չի նպաստում երկրի ուժեղացմանը: Բայց ինչի կենտրոնում. չէ որ Երկիրը կտոր է: Սակայն Երկրի մակերեսը բաժանված ջրային եւ ցամաքային տարածքների, իսկ դրանք արդեն բարդ ձեւ ունեն, ու նաեւ՝ կենտրոններ: Եւ հենց այդ ձեւի ազդեցությունը այս կամ այն պետության ուժի վրա ուսումնասիրում է աշխարհաբաղադականությունը:

Եւ այսպիսով, ի՞նչ ենք տեսնում մեր մոլորակին նայելով: Նախ, որ դրա բնակեցված տարածքը բաղկացած է երեք խոշոր մասերից, որոնցից մեկը կոչվում է Հին Աշխարհամաս (Աֆրա-Եւրասիական մայր ցամաքը՝ 84 մլն. կմ²), մյուսը՝ Նոր Աշխարհամաս (Ամերիկաներ՝ 42 մլն. կմ²) եւ Ավստրալիան՝ 13 մլն. կմ²: Վերջինս այնքան փոքր է, որ գրեթե դեր չի խաղում համաշխարհային քաղաքականության մեջ: Մյուս երկուսից առաջինը տարածքով գերազանցելով մյուսին երկու անգամ (դեռ չհաշված ավելի նպաստավոր՝ համամասնական ձեւը) քաղաքական հիմնական թատերաբեմն է: Պետք է հաշվի առնել նաեւ ջրային տարածքների գործոնը: Համաշխարհային օվկիանոսը միավորում է մոլորակը եւ լինելով չեզոք, ապահովում շահավետ, թեեւ դանդաղ բեռնափոխադրման հնարավորություն: Սակայն մարդն, ինչպես հայտնի, է ցամաքային էակ է, եւ երկու կետերի միջեւ ցամաքային կապի բացակայությունը անհնար է դարձնում դրանց միջեւ արագ տեղափոխումը: Նոր եւ Հին Աշխարհամասերի միջեւ չկա ցամաքային կապ եւ դա, մասնավորապես, նշանակում է, որ Նոր Աշխարհամասում գտնվող «բեւեռը» որոշակի դժվարություններ պիտի ունենա Հին Աշխարհամասի վրա իր ազդեցությունը տարածելիս: Օդային փոխադրամիջոցների զարգացման հետ այն իհարկե կարող է աճել, բայց միեւնույն է, գոյություն կունենա որոշակի շեմ, որից այն կողմ ազդեցությունն այդ չի կարող տարածվել: Թերազնահատել այդ ազդեցությունն, իհարկե, պետք չէ, վկա՝ Բելգրադն ու Բաղդադը, բայց գերազնահատել էլ չարժե:

Այժմ ուշադրությամբ նայենք Հին Աշխարհամասի պատկերներին (նկ. 1 եւ 2), որոնք վերցված են Էնկարտա աշխարհացույցից (չափումները կատարվել են Գուգլ-Երկիր համակարգի օգնությամբ): Այն զգալիորեն կտրատված եզրագիծ ունի, եւ մի շարք ներքին ծովերով ու դժվար հաղթահարելի լեռնաշղթաներով բաժանված է այս կամ այն աստիճանի մեկուսացված հատվածների՝ սեփական երկրաչափական ենթակենտրոններով: Միջինացված եզրագիծը մոտ է

Անկասկած այստեղ որոշ ընթերցողներ կասեն. «Հետո՞ ինչ. ի՞նչ է դրանից հետեւում մեզ համար, հո չի ծաղկելու մեր տնտեսությունը նրանից, որ մենք աշխարհի կենտրոնում ենք գտնվում»: Ի՞նչ կարելի է պատասխանել: Նախ, եթե այդ ընթերցողներից նման միտք ինչի, դա արդեն քիչ բան չէ, քանի որ կնշանակի, որ վերելում բերված պատկերը նրանք արդեն գոնե ընդունել են, որպես փաստ: Մինչդեռ, անկասկած, ոմանք կպնդեն, թե պատկերն այդ համոզիչ չէ եւ Հայաստանը Հին Աշխարհամասի կենտրոնում չէ: Նույնիսկ կգտնվեն այնպիսիները, ովքեր կասեն, թե առհասարակ Հին Աշխարհամասի կենտրոն գոյություն չունի, քանի որ առհասարակ չի էլ կարող գոյություն ունենալ: Այնուամենայնիվ, շարունակենք դատողություններն այն խմբի ընթերցողների համար, ովքեր չեն հրաժարվում հավատալ սեփական աչքերին, եւ փորձենք պատասխանել իրենց հռետորական (ինչպես իրենց է թվում) հարցին:

Բայց նախ անդրադառնանք մի փոքրիկ հանգամանքի եւս: Եթե ձգտում են վերահսկել որեւէ տարածք, դրա հր հատվածին են ձգտում տիրանալ: Կարծում եմ բոլորը կհամաձայնեն, որ դրա համար պետք է տիրանալ տարածքի այն հատվածին, որը սահմանագծի բոլոր կետերից մոտավորապես հավասար հեռավորության վրա է գտնվում, այսինքն՝ կենտրոնական մասին: Տվյալ դեպքում, դա նշանակում է, որ եթե կան ուժեր, որոնք ցանկանում են տիրանալ ամբողջ Հին Աշխարհամասին, ապա դրանք պիտի ցանկանան տիրանալ դրա կենտրոնական մասին, ուր, ինչպես տեսանք, գտնվում է հենց մեր երկիրը: Իսկ դրանից հետեւում է մեզ համար արդեն բավական որոշակի իրողություն. եթե մինչ այժմ համաշխարհային նվաճողական շարժումների ուղղությունները տարերային եւ պատահական էին թվում, ապա այսուհետ պարզվում է, որ համաշխարհային քաղաքականությունն ունի որոշակի սլաք, եւ նրա նպատակը Հայաստանին՝ Հայկական բարձրավանդակին տիրանալն է (հաջորդ շարադրանքում մեծատառ *Կենտրոն, Հայկական բարձրավանդակ, Հայաստան* հասկացությունները գործածվելու են որպես համանիշներ): Դեռ դպրոցական դասագրքերից մեզ հայտնի է, որ Հայաստանը միշտ *կռվախնձոր* է եղել. Հռոմի եւ Իրանի, Բյուզանդիայի եւ Իրանի, Օսմանյան կայսրության եւ Իրանի միջեւ: Դա պատահականություն էր թվում: Մինչդեռ, ահա, պարզվում է, որ դա որոշակի աշխարհաքաղաքական օրինաչափության հետեւանք է: Եւ իրոք, երկրագնդի վրա չկա մեկ այլ տարածք, որ նվաճողների այսքան շատ *հեռահար* հարձակումների թիրախ եղած լինի, սկսած վաղնջական ժամանակներից մինչեւ մեր օրերը (նկ. 3):




3. Դեպի Կենտրոն ուղղված կարեւորագույն արշավանքները

1. Եգիպտոսի
2. Ասորեստանի
3. Ալեքսանդր Մեծի
4. Հռոմի
5. Սկյութների
6. Բյուզանդիայի
7. Արաբների
8. Խաչակիրների
9. Մոնղոլների
10. Թուրքերի
11. Լենկ Թեմուրի
12. Ռուսների
13. Գերմանացիների
14. Ամերիկացիների

Փորձենք վերլուծել: Պատկերացնենք մի վերացական մայր ցամաք (նկ. 4)՝ շրջանաձև, համեմատաբար համասեռ մակերեսայնությամբ, այսինքն՝ հարթ, առանց բարձր սարերի եւ անանցանելի ջրերի (ստորեւ այս գծագրերը կանվանենք «ճառագայթաձեւ տրամագրեր»): Սկզբում՝ նրա տարածքում գոյանում են բազմաթիվ ցեղային միավորումներ՝ պետություններ (0), որոնք պայքարելով միմյանց դեմ, դաշնակցելով եւ խոշորանալով, կազմում են փչ թե շատ կայուն սահմանագծով՝ ուռուցիկ երկրաչափական ձեւերով մի քանի (մայր ցամաքի բավարար խոշորության դեպքում) գերտերություններ (կայսրություններ): Այդպիսի մի կայսրություն կարող է գոյանալ եւ մայր ցամաքի կարեւորագույն՝ կենտրոնական մասում: Պետք է նկատել, որ այդ երկիրը ունենալու է, սակայն, մի խոցելի հատկություն. այն զուրկ է լինելու ելքից դեպի ծով, այսինքն այն հեշտությամբ հնարավոր կլինի շրջափակել, զրկելով նրան առեւտրական ուղիներից, ինչը կարգելակի նրա տնտեսական զարգացումը: Եւ հնարավոր է երկու տարբերակ. կենտրոնական կայսրությունը կարող է այնքան փոքրիկ ստացվել (1), որ հեշտությամբ կնվաճվի եւ կբաժանվի շրջակա խոշոր տերությունների կողմից եւ մեր վերացական մայր ցամաքի քաղաքական քարտեզը կվերածվի (1') տարբերակի: Չի բացառվում, որ առավել զորեղը կփորձի իր վերահսկողության տակ վերցնել ամբողջ Կենտրոնը (1''), որը սակայն թերակղզու ուրվագծով կցված լինելով նրա հիմնական տարածքին հեշտությամբ կվերանվաճվի հարեւանների կողմից, այսինքն՝ անկայուն կլինի եւ պատկերը կձգտի (1') տարբերակին: Մյուս դեպքում կենտրոնական պետությունն

ամենասկզբից կարող է այնքան խոշոր լինել (2), որ նույնիսկ ծովի ելք չունենալով կարող է բավարար չափով հզոր գտնվել, որպեսզի ոչ միայն չնվաճվել ծովափնյա կայսրությունների կողմից, այլ նույնիսկ՝ նվաճելով նրանցից ամենաթույլին՝ «պատուհան» բացել դեպի ծով (2'): Մյուս կողմից, մայր ցամաքի զգալի մասին տիրացած երկիրը ի վիճակի չի պահել կենտրոնը, եթե չի տիրանում նրան բավարար ընդգրկմամբ:



4. ճառագայթաձև տրամագրեր

Պարզ է, որ դրանից հետո այդ կայսրությունը մի՛ կողմից՝ վերահսկելով մայր ցամաքի կենտրոնը, մյուս կողմից՝ ունենալով ելք դեպի ծով կդառնա գերակայող գերտերություն, եւ արդյունքում աշխարհին, ինչպես ասում են, միաբեւեռ կդառնա: Դրանից հետո հնարավոր է երկու տարբերակ. կամ այս վիճակը կպահպանվի անորոշ չափով երկար ժամանակ, կամ՝ կենտրոնական տերությունը կնվաճի նաեւ մնացած կայսրությունները դառնալով ամբողջ մայր ցամաքի միակ տերը: Սակայն, թերեւս, այս վիճակն անկայուն կլինի, քանի որ ավելի մեծ տարածքում կարող են գերակշռող դառնալ կենտրոնախույզ ուժերը եւ բերել միացյալ կայսրության նոր մասնատման: Այնպես որ առավել կայունը պետք է համարել բազմակայսերական տարբերակը՝ ծովի ելք ունեցող կենտրոնական գերկայսրությամբ: Կայուն չի լինի նաեւ (1') տարբերակը. բոլոր կայսրությունները շարունակելու են գայթակղվել Կենտրոնին տիրանալու ցանկությամբ, եւ Կենտրոնամետ տարածքը մշտական բախումների թատերաբեմ է մնալու, քանի դեռ պետություններից մեկն ու մեկը չի տիրել կենտրոնին ամբողջությամբ եւ այնպիսի ընդգրկմամբ (2'), որպեսզի բացառվի մյուսների ցանկացած ոտնձգություն այս մեկի նկատմամբ: Մի բան, որն այս դեպքում բավական կասկածելի է թվում, քանի որ բոլոր կայսրություններն էլ գրեթե հավասար ուժեր ունեն: Եւ եթե նույնիսկ դրանցից երկուսը դաշնակցեն

Կենտրոնին տիրանալու համար, նպատակին հասնելուց հետո շարունակելու են պայքարել միմյանց դեմ՝ Կենտրոնին լիարժեքորեն տիրանալու համար: Այսինքն, (1) եւ (2) դեպքերը, թերեւս անդառնալի բաժանվում են քաղաքական պատմության սկզբնական փուլերում:

Բնականաբար, իրական մոլորակի, տվյալ դեպքում՝ մեր երկրի անհամասեռ մայր ցամաքների վրա պատկերն ավելի բարդ կլինի: Սակայն վերելում նկարագրված տարբերակները միեւնույն է նկատելի են:

Կարող է հարց առաջանալ, թե ինչո՞ւ մինչ այժմ քաղաքագիտության մեջ ուշադրություն չի դարձվել Հայաստանի վրա, որպես Հին Աշխարհի կենտրոնի եւ համաշխարհային քաղաքականության համար դրա հանգուցային դերի վրա: Մասամբ նկատվել է: Դեռեւս 20-րդ դարի սկզբում աշխարհամասերի կենտրոնական տարածքների (սրտերի) ռազմավարական նշանակության մասին գրել է, օրինակ, Յ. Մաքքինդերը իր «Պատմության աշխարհագրական առանցքը» հոդվածում: Սակայն համաշխարհային քաղաքականության սիրտը նա համարում էր ոչ թե միացյալ Հին Աշխարհամասի, այլ միայն Ասիայի՝ արեւելյան Ռուսաստանում գտնվող կենտրոնը: Հավանաբար այդ սխալի պատճառը, մի՛ կողմից, Աֆրիկայի՝ համաշխարհային քաղաքական պայքարից հեռու գտնվելն էր, իսկ մյուս կողմից՝ այն հսկայական դերը, որն ունի համաշխարհային քաղաքականության մեջ Ռուսաստանը: Իսկ Հին Աշխարհամասի Կենտրոնին հարակից տարածքը Կարմիր, Միջերկրական, Սեւ, Կասպից ծովերի, եւ Պարսից ծոցի միջեւ ընկած հնգաճյուղ երկրամասը, որը նա անվանեց Հնգածովք (Մերձավոր Արեւելքը), համարեց սոսկ աշխարհի սրտի շրջակայքերից մեկը, թեեւ դրանցից ամենակարեւորը: Մինչդեռ, ինչպես տեսանք Հնգածովքի ակնհայտորեն կարեւորագույն դիրքը բացատրվում է պարզապես նրա հյուսիսում Հին Աշխարհամասի երկրաչափական կենտրոնի գոյության փաստով:

Միայն պայմանականորեն կարելի է պատկերացնել, թե ինչպիսին կլիներ Հին Աշխարհամասը, եթե վաղնջական ժամանակներում ոչ միայն ամբողջ Հայաստանը, այլեւ հարակից երկրները կազմեին մեկ միասնական պետություն, որը կվերահսկեր Հին Աշխարհամասի ամբողջ միջնամասը: Կայուն լինելու համար հավանաբար, այն պիտի ընդգրկեր Հին Աշխարհամասի բոլոր երեք երկրամասերի հարակից հատվածները եւ ելք ունենար եւ հյուսիսային, եւ հարավային օվկիանոսներ (տես՝ նկ. 5, կարմիր սահմանագիծը):

Սակայն դա չեղավ, ինչի *հիմնական պատճառը այդ կենտրոնական մասի լեռնային տեղանքն է*, որ, թեեւ ջրային տարածքներից պակաս չափով, բայց միեւնույն է խոչընդոտում է հաղորդակցությունը կառավարման մեկ

միասնական մարմին՝ պետություն գոյացնելու տեսակետից: Մեր պատմությունն ընթացավ (1) ուղով:

Հնում Կենտրոնը՝ Հայկական բարձրավանդակը (ինչպես եւ մնացյալ Աշխարհը) մասնատված էր հարյուրավոր մանր պետությունների՝ ցեղային միությունների: Հարթավայրերում, ուր հաղորդակցումն ավելի հեշտ էր առանձին փոքրիկ պետությունները միավորվեցին ավելի վաղ, ստեղծելով հնագույն կայսրությունները՝ Եգիպտոսը, Ասորեստանը, Բաբելոնը եւ այլն, որոնք սկսեցին գրոհել Կենտրոնը. սկսվեց պայթարը համաշխարհային տիրապետության համար:

Քանի դեռ փոխադրամիջոցները զարգացած չէին, նվաճողները ավելի շատ ժամանակ էին ծախսում հեռավոր, եւ հատկապես՝ լեռնային երկրներին հասնելու համար, քան թե նվաճվողները՝ ուժերը վերականգնելու համար, եւ արդյունքում, միեւնույն տարածքը անհրաժեշտություն էր լինում հնազանդեցնել մի քանի անգամ: Նվաճումները հիշեցնում էին ավազակային հարձակումներ եւ տեւական վերահսկում չէր հաստատվում:

Երբ ընտելացվեց ձին, ստեղծվեց մարտակառքը եւ ապա յուրացվեց երկաթի մշակումը, հնարավոր դարձավ նաեւ լեռնային տարածքների միավորումը: Ճակատագրի բերումով Կենտրոնում ձեւավորվեցին հենց հայերի միավորումները: Գոյացավ տարբեր՝ Նաիրի, Արմենիա, Բիայնա, Ուրարտու, Խայասա եւ այլ անուններով հայտնի Կենտրոնական պետությունը, որն իր չափերով համապատասխանում էր վերոհիշյալ (1) դեպքին: Այս կամ այն աստիճանի ինքնիշխանությամբ այն գոյատևեց մինչեւ մ. թ. ա. 6 դարը, երբ մտավ հարակից տարածքում կազմավորված Իրանի կայսրության կազմի մեջ, որը Կենտրոնին հավակնող ամենաերկարակյաց կայսրությունը եղավ: Արդյունքում Իրանը դարձավ Կենտրոնի եւ հարակից շրջանների լիիրավ տերը (1''): Սակայն ամբողջ Հին Աշխարհամասի տերը լինելու հավակնություն ներկայացնելու համար Իրանը պիտի նվաճեր Կենտրոնին հարակից ավելի մեծ տարածք, հասնելու համար (2') վիճակին: Դրա համար Իրանը պիտի ընդարձակվեր դեպի արեւմուտք: Բայց Հունաստանը, որը նույնպես ուներ աշխարհակալ նպատակներ կանգնեցրեց Իրանին: Թերեւս պատճառը Բոսֆորի ջրային արգելքն էր, որը կոտրեց Իրանի թափը, ապացուցելով եւս մեկ անգամ, որ անդրծովյա ուժերին կրկնակի դժվար է տիրանալ որեւէ տարածքի: Հակահարձակման անցած հունական ուժը՝ Ալեքսանդր Մակեդոնացու գլխավորությամբ միավորեց Հին Աշխարհամասի կենտրոնական կարեւորագույն տարածքները՝ Ներառյալ Իրանի, ու դրանից առաջ՝ Ասորեստանի եւ Բաբելոնի ողջ նվաճածը (Տես՝ նկ.5, դեղին սահմանագիծը): Ոչ դրանից առաջ, ոչ դրանից հետո, երբեք այնքան հնարավոր չէր միաբերել

աշխարհի գոյացումը: Ալեքսանդրին մնում էր միայն գրավել հյուսիսկովկասյան դաշտերը, հասնելու համար կարմիր սահմանագծին, ինչը որ պիտի այնքան էլ դժվար չլիներ... Սակայն... Մի կողմից խանգարեց Կովկասը, մյուս կողմից՝ Ալեքսանդրի առեղծվածային մահը:

Արդյունքում, կենտրոնական տարածքները կրկին տրոհվեցին: Մի պահ աշխարհակալության փորձ կատարեց ինքը Կենտրոնը, ի դեմս Հայոց Տիգրանի (դա կրկին վերադարձ էր (1) վիճակին եւ որոշ հայտ՝ (2') վիճակին անցնելու), սակայն Կենտրոնի փոքր լեռնոտ տարածքը չէր կարող ապահովել անհրաժեշտ ռազմատնտեսական ներուժ, եւ շուտով այն կրկին հայտնվեց Իրանի վերահսկողության տակ: Իսկ մեր թվականության 4-րդ դարում իրագործվեց (1') տարբերակը. Կենտրոնը բաժանվեց արեւմտյան եւ արեւելյան կայսրությունների՝ Հռոմի եւ Իրանի միջեւ, ընդմիշտ խորտակելով միացյալ Կենտրոնական գերտերության հաստատման, ուստի եւ նաեւ համաշխարհային կայունության հաստատման հույսը (նկ. 6):



5.



6.



7.

Նկ. 6-ում չեն պատկերված այլ ցեղերի եւ պետությունների տարածքները, բանի որ այն դարերում դրանք, կամ դեռեւս կազմավորված չէին կամ՝ հեռու էին Կենտրոնից: Շնորհիվ Կենտրոնից հեռու դիրքի այստեղ համեմատաբար մեղմ էր մրցակցությունը, եւ այս տարածքներում ստեղծվեցին հսկայական տերություններ (մոնղոլական, չինական), սակայն նույն այդ հեռավորությունը նրանց մի մասին հնարավորություն չտվեց լրջորեն պայքարել Կենտրոնի համար. մոնղոլական կայսրությունը հետագայում քայքայվեց, իսկ չինական եւ հնդկական պետությունները մինչեւ վերջերս գրեթե չէին մասնակցում Կենտրոնի համար մղվող պայքարին: Ալեքսանդրից հետո ամենից մոտ էր վերջնական նպատակին Ռուսաստանը, որին պատմության մեջ առաջին անգամ հաջողվեց ներառել Կովկասի երկու լանջերը մեկ պետության կազմում եւ նույնիսկ մի պահ հավակնել Միջերկրական ծովի ափերին եւ գրավել

Կենտրոնի զգալի մասը (Ռուս-թուրքական պատերազմների արդյունքում): Բայց դա իրոք սոսկ մի պահ էր. լիովին $(1) > (1'') > (1')$ շարժման շրջանակներում, որ եւս մեկ անգամ հաստատեց, որ (1) -ից (2) անցումը պատմության ուշ փուլերում անհնար է:

Ներկայիս վիճակը պատկերված է նկ. 7-ում: Հին Աշխարհամասում կարելի է նկատել, այս կամ այն աստիճանի ձեւավորված եւ այս կամ այն աստիճանի մասնատված 7 համեմատաբար ինքնուրույն աշխարհաբաղաձախական տարածք. իրանական, հնդկական, չինական, ռուսական, եւրոպական, արաբական, աֆրիկական (փակագծերում նկատենք, որ եւրոպական տարածքն իրականում հյուսիսատլանտյան (ՆԱՏՈ), այսինքն՝ միասնական, ԱՄՆ-ի գերակայությամբ՝ ամերիկա-եւրոպական կայսրության եւրոպական մասն է միայն): Կենտրոնն այսպիսով բաժանված է եւրոպական, ռուսական եւ իրանական հատվածների:

Ելնելով «ճառագայթաձեւ տրամագրերից» կարելի է առաջարկել հետեւյալ վարկածը (քաղաքագիտությունն, ի վերջո գիտությունն է, եւ նրա շրջանակներում կարող են եւ վարկածներ լինել). մայր ցամաքի կենտրոնական մասի (տվյալ դեպքում՝ Հայաստանի) որքան մասն է վերահսկում այս կամ այն կայսրությունը, այդքան քաղաքական կշիռ ունի այն աշխարհում: Ներկայումս պատմական Հայաստանի զգալի մասը (շուրջ 60 տոկոսը) ի դեմս Թուրքիայի վերահսկում է ՆԱՏՈ-ն, հետեւապես հենց այսպիսին է աշխարհում այս ուժի քաշը: Հայաստանի մի որոշ մասը (մոտ 25 տոկոսը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության եւ մասամբ՝ Վրաստանի եւ Ադրբեյջանի հայկական տարածքների) դեռ որոշ չափով շարունակում է վերահսկել Ռուսաստանը, եւ մնացած մոտ 15 տոկոսի տերը Իրանն է: Ներկայիս սահմանները հաստատվել են Առաջին աշխարհամարտից հետո եւ մինչ այսօր ըստ էության չեն փոխվել, իսկ փաստացի պատկանելությունը՝ Երկրորդ աշխարհամարտից հետո: Եթե համեմատենք նույն ժամանակահատվածում աշխարհում ուժերի հարաբերակցությանը, ապա կտեսնենք, որ այն իրոք արտահայտված է նշված տոկոսներով: Աշխարհի ամենաազդեցիկ ուժը ԱՄՆ-ն է՝ դաշնակիցներով, որոնց ազդեցությունն իրոք նման է 60%-ի, երկրորդը՝ Ռուսաստանն է իր 25%-անոց ազդեցությամբ եւ վերջապես 15%-անոց Իրանը: Ընդ որում ԱՄՆ-ը թուրքական 60%-ից օգտվում է միայն երկրորդ աշխարհամարտից հետո՝ ՆԱՏՈ-ի կազմավորումից հետո, մինչդեռ դրանից առաջ այն, իրոք, չուներ ազդեցություն Հին Աշխարհամասի վրա: Միեւից գերազնահատված կարող է թվալ Իրանի դերը: Սակայն Իրանի քաշն աննկատ էր, քանի դեռ այդ երկիրը ելնելով իր տնտեսական եւ ռազմական ցածր հնարավորություններից խուսափողական քաղաքականության էր վարում, իսկ մեր օրերում, երբ ԱՄՆ-ը բացահայտորեն փորձում է Իրանին դուրս մղել համաշխարհային խաղից, վերջինս, պաշտպանելով իր դիրքերն, սկսեց

դրսեւորել իրեն որպէս միջազգային խաղորդ, եւ նրա քաշը պարզորոշ երեւաց. համեմայն դեպս վերջին զարգացումները վկայում են, որ ԱՄՆ-ի հետ առնակատման մեջ Իրանը դրսեւորում է 15%-ից նույնիսկ ավելի մեծ քաշ (ճիշտ է վարպետորեն օգտվելով նաեւ դաշնակից Ռուսաստանի 25%-ից): Սակայն այս հարաբերակցությունը ցանկացած պահին կարող է փոխվել: ԱՄՆ-ն առայժմ հաջողությամբ անջատում են Վրաստանն ու Ադրբեջանը ռուսական ազդեցության ոլորտից*, որի արդյունքում Կենտրոնի ռուսաստանյան մասնաբաժինը Էապես նվազել է, հավասարվելով Իրանի մասնաբաժնին: Եթէ նաեւ Հայաստանին հաջողվի շրջել դեպի Արեւմուտք Ռուսաստանն առհասարակ խաղից դուրս կմնա եւ արդեն սոսկ չնչին Իրանյան մասը կմնա ոչ արեւմտյան: Այդ դեպքում Իրանի շանսերը ԱՄՆ-ի հետ առնակատման մեջ գրեթէ ի չիք դառնան. Հայկական բարձրավանդակի, ուստի եւ ամբողջ աշխարհի միակ տերը կդառնա Արեւմուտքը: Թեեւ, իրավիճակն Արեւմուտքի համար կվերածվի (1") դեպքի, որն ինչպէս գիտենք, անկայուն է եւ հարեւան կայսրությունները կրկին շանսեր կպահպանեն վերականգնելու Կենտրոնի իրենց մասնաբաժինները:

Սակայն ամեն ինչ այնքան պարզ չէ: Ներկայումս, մի՛ կողմից տրոհվում է արեւմտյան ճամբարը՝ Եւրոպայի եւ ԱՄՆ-ի տարածայնությունների պատճառով, եւ առավելությունն, ինչպէս ասվեց ունենալու է Հին Աշխարհամասի ուժը, այսինքն՝ Եւրոպան: Մյուս կողմից բարձրանում է Չինաստանի եւ Հնդկաստանի հզորությունը, եւ որպէս համաշխարհային քաղաքականության նոր խաղորդներ նրանք փորձ կանեն իրենց թաթը դնել տարածաշրջանի վրա: Օրինակ՝ զարգացնելով Համագործակցության Շանխայյան Կազմակերպությունը, որն իր անդամների ու դիտորդների սահմաններով գրեթէ վերականգնում է երբեւէ եղածների շարքում կայսրություններից մեծագույնը՝ Մոնղոլականը:

Ինչ է այս ամենը նշանակում մեզ համար: Նախ, մեր ճիշտ տեղն աշխարհում գիտակցելը միայն օգուտ կարող է բերել: Աշխարհի կենտրոնում մեր գտնվելը պետք է դիտել ոչ որպէս առավելություն կամ պատուհաս, այլ սոսկ որպէս փաստ, որի հետ մենք պիտի հաշվի նստենք, փորձելով քաղել նաեւ եղած օգուտները, որոնք, կարծում եմ, նույնպէս կլինեն. հազիվ թէ միայն վնասներ լինեն: Ամենակարեւոր հետեւությունն այն է, որ *մի՛ կողմից մեր հայոց հայրենիքը համաշխարհային քաղաքականության նպատակակետն է, եւ մյուս կողմից՝ ինքը հայ ազգը՝ այդ քաղաքականության համար որեւէ հետաքրքրություն չի ներկայացնում*: Եւ սա հաստատվում է պատմության ամբողջ ընթացքով:

Սակայն, մինչ այժմ մենք դիտարկում էինք աշխարհաքաղաքական երեւոյթները դրանց բնական ընթացքում, այսպէս ասած՝ առաջին աստիճանում, երբ հարստությունը հիմնականում ուղիղ համեմատական է վերահսկվող տարածքին: Արդյունաբերության եւ առեւտրի զարգացումը բերում

Ե նրան, որ աստիճանաբար հարստությունը սկսում է կախված լինել ոչ այնքան տարածքից, այլ հիմնականում՝ առեւտրից. տնտեսությունը բարձրանում է երկրորդ աստիճանի վրա: Պատմության ընթացքում այդ աստիճանին հասել են բազմաթիվ ազգեր եւ ստեղծվել են պայմաններ առեւտրա-արդյունաբերական ճանապարհով երկարատեւ զարգացման համար: Սակայն միշտ էլ ինչ-որ մի գործոն շեղել է այդ ուղուց: Որպես կանոն դրանք եղել են երկուսը. դեռեւս զարգացման առաջին աստիճանին գտնվող ազգերի՝ *բարբարոսների* հարվածները (դասական օրինակ՝ Յոմի անկումը), կամ՝ թեեւ զարգացած, սակայն հենց այդ պատճառով իր ուժերը գերազնահատած ազգի գայթակղությունը հարստանալ նաեւ ընդարձակման հաշվին: Ինչը կարելի է հասկանալ. որքան էլ, օրինակ, Սինգապուրի նման երկիրը հարուստ լինի իր արդյունաբերությամբ եւ առեւտրով, միեւնոյն է լրացուցիչ տարածքում այն էլ ավելի լավ կզարգանար: Այս դեպքի փայլուն օրինակն է Հիտլերական Գերմանիան: Սակայն բարբարոսներ (համենայն դեպս՝ զորեղ) ներկայումս էլ չկան, իսկ երկրորդ տիպի ինքնավստահ արկածախնդրությունների անհեռանկարությունը ներկայիս աշխարհում պատկերավոր կերպով ապացուցեց ԱՄՆ-ը իր իրաքյան պատերազմով, որը *անլոգ* պատվաստի դեր կատարի մյուս գերտերությունների (եւ, աստված տա՝ հենց ԱՄՆ-ի) համար:

Հետեւապես այն, որ (1') տարբերակը *բնականորեն* անկայուն է, դեռ չի նշանակում, որ այն չի կարող վերածվել *համեմատաբար* կայուն վիճակի՝ *բաղաբական* եղանակներով: Դա կարող է լինել եթե Կենտրոնը դառնա *ինքնիշխան, սակայն աշխարհի համար բաց* բաղաբական միավոր: Սա կարող է հակասություն թվալ, բայց միայն առաջին հայացքից:

Իրոք, ինչպես տեսանք, (1') տարբերակում գերտերությունների առջեւ միշտ կա Կենտրոնի նվաճման գայթակղությունը: Սակայն այն կվերանա, եթե ստեղծվի վիճակ, երբ Կենտրոնի նվաճման ձգտումն իսկ՝ ոչ միայն օգուտ չբերի նվաճողին, այլեւ անմիջապես թուլացնի նրան (ինչպես թուլացրեց ԱՄՆ-ին Իրաքի գրավումը), եւ նույնիսկ՝ ուժեղացնի հակառակորդներին: Դա հնարավոր չէր առաջներում, երբ Կենտրոնը սոսկ *ռազմական հարթակ* էր, մայր ցամաքի երկրները հնազանդ պահելու համար: Սակայն երբ առեւտրի եւ արդյունաբերության ստեղծած հարստությունը սկսում է գերազանցել պարզ նվաճումներից ստացված հարստությունը, վիճակը կտրուկ փոխվում է. Կենտրոնը դառնում է գերտերությունները ամենակարճ *կապող ճանապարհը*, եւ դրա խաղաղությունն ու ապահովությունը ավելի կարեւոր են դառնում, քան դրա (հարաբերականորեն, աննշան տարածքի) պատկանելության հարցերը:

Նշված տարբերակի գործնականում իրագործման տեղական՝ եւրոպական սանդղաչափով՝ մի օրինակ է Շվեյցարական դաշնության գոյացումը: Եւրոպայի

գրեթե երկրաչափական կենտրոնում, կարեւորագույն առեւտրային ուղիների հատման կետում գտնվող այս երկրամասը մշտապես հայտնվում էր տարբեր մարտնչող իշխանությունների՝ Չաբսբուրգների եւ այլոց բախման գոտում: Սակայն երբ այդ երկրամասի բնակչությունը իրեն ապահովագրվելու համար այդ ավերիչ բախումներից միավորվեց, կազմելով կենտրոնական միասնական դաշնություն, որոշ ժամանակ անց պարզվեց, որ այդ երկրի գոյությունը, վերջին հաշվով ձեռնտու է բոլոր կողմերին, քանի որ դրա գոյացմամբ ստեղծվում էր փոխշահավետ համագործակցության, այդ թվում՝ առեւտրի համար հարմար գոտի: Այնքան հարմար, որ Նույնիսկ երկու համաշխարհային պատերազմների ընթացքում մարտնչող կողմերին ձեռնտու չեղավ այդ երկրի գրավումը:

Մեր քաղաքական դաշտում այս վիճակը միայն վերջին տասնամյակների ընթացքում է հաստատվել՝ համաշխարհային առեւտրի *պայթյունային աճի* եւ պետությունների համակարգային բարդացման արդյունքում: Դա նշանակում է, որ *տեսականորեն* գերտերությունները կարող են համաձայնության հասնել Կենտրոնի միացյալ շահագործման հարցում: (Բնականաբար, եթե չլինի որեւէ արհավիրք, այդ թվում եւ ինչ-որ ուժերի կողմից այնուամենայնիվ սանձազերծված համաշխարհային պատերազմ, որն իջեցնի համաշխարհային պետական համակարգերի մակարդակը միջնադարյան մակարդակի եւ Նորից շահավետ դարձնի Կենտրոնի համար ռազմական պայքարը:)

Այս դեպքում անհրաժեշտ կլինի Կենտրոնի բարեկարգում, տնտեսության, հատկապես՝ սպասարկող ոլորտի եւ կապուղիների զարգացում: Դրա համար անհրաժեշտ կլինի որոշել այս տարածքում բնակվողների խնդիրը: Բնականաբար, այն պիտի ազատ լինի հիմնական գերտերությունների անվանադիր ազգերի՝ եւրոպացիների, ռուսների, չինացիների, պարսիկների, արաբների բնակվելու համար: Բայց անհնար է, որ դրանցից որեւէ մի ազգ Կենտրոնում հասնի գերակշռման, քանի որ դա կնշանակի տվյալ գերտերության կողմից Կենտրոնի նվաճում: Մյուս կողմից, գերակշռող ազգ պիտի լինի, այլապես անհնար կլինի Կենտրոնի միասնականության, ուստի եւ բնականոն գործունեության ապահովումը: Հետեւապես, գերակշռող ազգի դերը պիտի հանձնվի տեղաբնիկ որեւէ ազգի: Օրինակ, ընդունվի 1:4 հարաբերություն գերտերությունների անվանադիր ազգերի եւ տեղաբնիկ պետություննաստեղծ ազգի միջեւ:

Այստեղ մոտենում ենք մեզ՝ հայերիս համար կարեւորագույն եւ ցավոտ հարցին: Մինչ այժմ մենք պայմանավորվել էինք, որ շարադրանքում «Կենտրոն» աշխարհաքաղաքական հասկացությունը կիրառվելու է Հայաստան, Հայկական բարձրավանդակ իմաստով: Սակայն նայենք նկ. 8-ին, որում բաց մանիշակագույնով պատկերված է բրդերի բնակեցման հիմնական տարածքը,

նարնջագույնով՝ հայերի, իսկ սեւ կետագծով՝ Կենտրոնի պայմանական սահմանը (սրա համամասնությունները եւ ուղղվածությունը համապատասխանում են Հին Աշխարհամասի միջինացված ձեւին): Ինչպես տեսնում ենք, հայերի կողմից այս կամ այն կերպ վերահսկվող տարածքը կազմում է շուրջ 50 հազար կմ², ինչը կազմում է Պատմական տարածքի մոտ 10 տոկոսը: Մնացյալ 90 տոկոսը վերահսկում են թուրքերը եւ քրդերը: Բնակչության թվաքանակով հաշված կունենանք առավելագույնը մոտ 5 մլն հայ,, մոտ 30 մլն. քուրդ եւ մոտ 20 մլն թուրք (ներառյալ ազերի թուրքերին), այն է՝ կրկին մոտ 10 տոկոս:

Բայց որպես Կենտրոնի պետությունաստեղծ ազգ կարող է հանդես գալ միայն մեկը, այլապես դա կբերի անկայունության, ինչը տվյալ ծրագրի տրամաբանությունից դուրս է: Այդ դերը չի տրվի թուրքերին, քանի որ ունենալով զգալի տարածք Կենտրոնից դուրս նրանք կդիտվեն, որպես եւս մի գերտերություն, որի ստեղծումը աշխարհի ներկայիս գերտերությունների ծրագրերի մեջ հազիվ թե մտնի:

Մնում են հայերն ու քրդերը: Եւ այստեղ պարզվում է, որ տարածաշրջանային այս պայթարում հայերի հակառակորդները ամենեւին էլ թուրքերը չեն, այլ հենց քրդերը: Բայց իմն է առավելությունը: Հայերի օգտին է խոսում դարավոր մշակութային հարստությունը, ներկայումս էլ արդեն իսկ պետություն՝ ուստի եւ պետական կառավարման փորձ ունենալը եւ սեփական տանը կարգուկանոն հաստատելու ունակությունը, ինչպես նաեւ քաղաքականությունում որոշակի ազդեցություն եւ ավելի հանգիստ ազգի համբավ ունենալը: Նաեւ, դրական կարող է համարվել ամենատարբեր ազգերի հետ համագործակցելու փորձը: Բացասականը՝ փաստացի հայաբնակ տարածքների փոքրությունն է: Քրդերի օգտին խոսում է քանակական գերազանցումը եւ ներկայիս դե-ֆակտո քրդստանի՝ Կենտրոնին առավել համապատասխանությունը: Բացասականը՝ պետականության փորձի բացակայությունը, «անհանգիստ» ժողովրդի համբավը եւ մշակութապես անհայտ լինելը:



8.



9.

Նկ. 9-ում, առաջարկված է Կենտրոնի եւ կենտրոնամերձ երկրների սահմանների այնպիսի վերաձեւում, որը կապահովեր կենտրոնական երկրի կայուն գոյությունը՝ մի՛ կողմից, դրա՝ որպէս կապող օղակ ծառայելու հարմարությունը՝ մյուս կողմից: Չոգեւորվելու համար նկատենք, որ այստեղ այդ երկիրը անվանված է Հայաստան (Armenia) միայն աշխարհագրական իմաստով. **էթէ մենք չորսերորեք մեզ որպէս ազգ, որն ի գորու է վերահսկել եւ շենագնել այն, այդտեղ կարող է հայտնվել եւ այլ անվանում (կամ՝ այդ անվամբ հանդէս կգա մեկ այլ ազգ (յեզու), ինչպէս ունենք սլավոնական «Մակեդոնիայի» պարագայում):** Դա մենք պետք է սթափ գիտակցենք:

Ոմանց նման բարտեզի ստեղծումը կարող է անլուրջ թվալ: Ցավոք, մեր մեջ, ի տարբերություն շատ ու շատ այլ ազգերի, ազգային հեռանկարների մասին խոսելը, որպէս կանոն ծաղրի է արժանանում: Իրոք, այսպէս կոչված «Ծովից ծով Հայաստանի» մասին խոհանոցային զրոյցները արժեգրկել են այդ գաղափարը: Սակայն վերոշարադրյալից հետեւում է, որ այդ հեռանկարների ծրագրումը եւ ապա՝ հետապնդումը, չի բացառվում, որ մեր ազգի հետագա գոյատեւման, առհասարակ, միակ գրավականը լինի: Նկատենք նաեւ, որ ներկայումս բազմաթիվ ազգեր արտահայտում են իրենց տարածքային պահանջները եւ նույնիսկ ձգտում հասնել դրանց կատարմանը:



10.



11.



12.



13.



14.



15.



16.

Օրինակ, ալբանացիները փորձում են կերտել Մեծ Ալբանիա (նկ. 10), թուրքերը՝ Մեծ Թուրան (նկ. 11): Եստուհացիները (նկ. 12) ներկայացնում են իրենց տարածքային պահանջները՝ Ռուսաստանին, վրացիները (նկ. 13) ծրագրում են վերադարձնել իբր երբեմնի իրենցը եղած հողերը, քրդերը՝ ստեղծել Ազատ Զրդստան (նկ. 14) եւ այլն: Ի դեպ, թվարկվածներից երեքը իրենց ապագա տարածքներն անձա են տեսնում հենց մեր հաշվին: Դրանից բացի, մեր տարածաշրջանի ապագան փորձում են վերագծել եւ այլ ուժեր, ինչը միանգամայն հասկանալի է՝ վերոշարադրյալի շրջանակներում: Օրինակ, ԱՄՆ փորձագետ, գնդապետ Ռալֆ Պետերսն այսպես է տեսնում մեր ապագան. (նկ. 15): Մի քուրդ հեղինակ՝ այսպես. (նկ. 16):

Երկու խոսք՝ առաջարկվող սահմանագծերի սկզբունքի մասին: Դրանց հիմքում ոչ միայն ազգերի փաստացի բնակեցման սահմաններն են, այլեւ ազգային մտածելակերպում դրանց պատկանելությունը, տեղանքի առանձնահատկությունները, հաղորդակցման ուղիների անցկացման հնարավորությունը, տարածաշրջանային ուժերի առավել կայուն հարաբերությունը եւ այլն: Տարածաշրջանային կայունության տեսակետից նպատակահարմար է գտնվել մի շարք տարածությունների ձեւավորումը (անվանումները՝ պայմանական են): Դրանք են. շիա մահմեդականների պետությունը՝ Շումերը՝ Բասրա մայրաքաղաքով, քրիստոնյա ասորիների

պետությունը՝ Ասորեստանը (Մոսուլ), Քրդստանը (Քիրքուկ), Աբխազիան (Սուխում)*: Իրանի սահմանագիծը ենթարկվել է որոշ փոփոխության, մասամբ՝ տարածք տրամադրելով Կենտրոնին եւ Քրդստանին, սակայն փոխհատուցելով՝ Տիգրիսի հովիտի տարածքների հաշվին:

Եզրակացություններ:

1. Որեւէ տարածաշրջանի վերահսկման համար անհրաժեշտ է վերահսկել դրա կենտրոնը եւ կենտրոնաձիգ կապուղիները: Մարդը ցամաքային էակ է, եւ հիմնական նշանակություն ունեն ցամաքային կենտրոնները եւ ուղիները: Ամենամեծ, ուստի եւ ամենաազդեցիկ մայր ցամաքի՝ Հին Աշխարհամասի Կենտրոնը գտնվում է Հայկական բարձրավանդակում, հետեւապես դրա գրավումը՝ ցանկացած գերտերության նպատակն է, իսկ համաշխարհային բաղաբաղանդության էությունը՝ *հայաստանակենտրոնությունն է*: Հայաստանն այժմ բաժանված է երեք գերտերությունների՝ Արեւմուտքի, Ռուսաստանի եւ Իրանի միջեւ, ընդ որում՝ մեծագույն մասը Արեւմուտքի վերահսկողության տակ է: Շեշտենք նաեւ, այդ տարածքում փաստացիորեն բնակվող ազգը այդ բաղաբաղանդության մեջ ինքնին հետաքրքրություն չի ներկայացնում:

2. Վերլուծությունից հետեւում է, որ հնարավոր է Կենտրոնի երկու հիմնական վիճակ. բաժանված այլ գերտերությունների միջեւ, եւ կենտրոնական գերտերության կազմում: Առաջին տարբերակում Կենտրոնն անկայուն է, քանի որ մշտական ռազմական բախումների թատերաբեմի դերում է գտնվում, երկրորդը՝ կայուն: Երկու տարբերակներից արդեն իսկ իրագործվել է առաջին՝ անկայուն տարբերակը: Արտադրության եւ առեւտրի պայթյունային զարգացման արդյունքում մոտ ապագայում որոշ հավանականությամբ կարող է ստեղծվել վիճակ, երբ Կենտրոնի, որպես կայուն առեւտրային կապուղի օգտագործումն ավելի շահավետ դառնա, քան թե դրա ռազմական վերահսկումը: Մենք պիտի *պատրաստ* լինենք դրան:

3. Մեր ազգն անգոր է *ուժային* դեր խաղալ իր իսկ տարածքի համար մղվող պայքարում, սակայն ռազմական ուժն *անհրաժեշտ է* Կենտրոնի տարածքում հայկական գերակայության ապահովման համար (հիշենք Շվեյցարիայի օրինակը): Ընդ որում, ուժն այդ պիտի բավարար լինի ամբողջ Կենտրոնի՝ Հայկական բարձրավանդակի վերահսկման համար: Այսինքն մեզ անհրաժեշտ է դեռ շատ ավելի հզոր զինուժ, քան կա: Ներկայումս մեր ռազմական ներկայությունը տարածվում է միայն Ռուսաստանի հատվածում: Սակայն մենք պիտի պատրաստ լինենք տեղափոխել այն նաեւ մյուս երկու հատվածները, եթե դրա համար բարենպաստ պայմաններ ի հայտ գան: Այն որ, *տեսականորեն* նման


* Հոդվածը գրվել է Ռուս-Վրացական՝ «08.08.08» ընդհարումից առաջ:

պայմաններ կարող են ստեղծվել եւ մյուս գերտերությունները կարող են շահավետ գտնել հայկական ներկայությունը Կենտրոնի՝ իրենց կողմից վերահսկվող հատվածներում, վերջինս միասնական դարձնելու նպատակով, արտահայտվում է նրանում, որ վերջին 15 տարիների ընթացքում *փաստացիորեն* հայկական ռազմական գերազանցումը տարածաշրջանում նրանք հանդուրժել են: Եւ հակառակը, եթե գերտերությունները տեսնեն, որ մենք ի վիճակի չենք տիրություն անել մեր վերահսկողության տակ հայտնված տարածքում նրանք կարող են հենվել այլ ուժերի վրա: Ու հատկապես՝ քրդական ուժի, եւ հենց սրան կհանձնեն Կենտրոնի վերահսկումը: Վերջնական որոշումը մերը չէ, սակայն մենք *կարող ենք ազդել* այդ որոշման վրա, *համոզիչ հայտ* ներկայացնելով: Ընդ որում այդ կարողությունը պիտի ունենա թե՛ ռազմական, թե՛ կազմակերպական եւ թե՛ մշակութային բաղադրիչ: Այսինքն մենք պիտի ապացուցենք, որ կարող ենք ոչ միայն ուժով պահել մեզ տրված տարածքը, այլեւ՝ շենացնել այն, քանի որ չի կարող լինել արդյունավետ կապուղի, եթե այն չի սպասարկվում: Այլ կերպ ասած, Հայաստանը կարող է միայն զարգացած լինել. հետամնաց Հայաստանը չի կարող գոյատևել: Մինչդեռ ներկայումս մեր երկրի ենթակառուցվածքները շատ դանդաղ են զարգանում, իսկ ռազմա-տարածքային հարցերում ոմանք պարզապես ցանկանում են հրաժարվել ունեցածից, ենթարկվելով *իբր* մեծ տերությունների պահանջներին: Դրանով իսկ նմանվելով «Ռ՝վ Է ուզում դառնալ միլիոնատեր» խաղի այն մասնակիցներին, որոնք չկարողանալով կռահել, թե վարողը երբ է օգնում իրենց, իսկ երբ՝ մոլորեցնում, ակնհայտ եւ ճիշտ քայլերի փոխարեն նախապատվությունը տալիս են սխալ լուծումներին: Այն տարբերությամբ միայն, որ քաղաքականության դեպքում մեզ ոչ ոք «անձեռնմխելի գումար» չի տրամադրի:

4. Մենք կարող ենք գոյատևել միայն ու միայն գիտակցելով այն փաստը եւ հաշտվելով դրա հետ, որ մեր հայրենիքը աշխարհի կենտրոնն է: Հայաստանի քաղաքականության հիմքում պիտի լինի գիտակցումը, որ Հայաստանը որպես համաշխարհային կենտրոն պիտի լինի միասնական, եւ պատկանի *մեզ*, պայմանով, որ այն կծառայի բոլորին: Հաշտվել, այլ ոչ թե ուրախանալ դրանով, քանի որ դա վտանգում է մեր ազգային ինքնությունը, ներքաշում շատ երերուն եւ վտանգավոր, բայց՝ *անխուսափելի* խաղի մեջ: Հետեւապես, եթե համաշխարհային քաղաքականության Էությունը *հայաստանակենտրոնությունն* է, ապա Հայաստանի քաղաքականության Էությունը պիտի լինի *հայակենտրոնությունը*: Այն է՝ հայկական ինքնության պահպանումը:

24.06.2006-17.01.2008

ՀԱՅՈՑ ԳԻՐԸ ԵՒ ԹԻԹԵՈՒԸ ԿԱՄ՝ ՀԱՅԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ-2



Նա ընկավ հատակին՝ մի նրբագեղ արարած, մի փոքր բան, որ ընդունակ էր խախտելու հավասարակշռությունը, եւ շրջվեց շարանը փոքրիկ դոմինոների, մեծ դոմինոների, եւ ապա՝ հսկա դոմինոների. վայր ընկան ժամանակով շաղկապված բոլոր տարիները:

Ռեյ Բրեդբերի,
«Եւ ամպրոպ որոտաց»

Լորենցի եւ Բրեդբերիի թիթեռները

Ասում են, թե պատմությունը պայմանական եղանակ չի սիրում: Սակայն, թերեւս, դա վերաբերում է միայն պատմության *շարադրմանը*, բայց ոչ պատմագիտության շրջանակներում դրա օրինաչափությունների *ուսումնասիրմանը*: Ենթադրույթներ առաջ քաշելը, վերլուծվող *համակարգի*

տարբեր հատկանիշների փոփոխման հետեւանքների հետազոտումը գիտական եղանակի անբաժան մասն են կազմում, նույնիսկ եթե դրանք երբեմն չափազանց վերացական արդյունքների են հանգեցնում:

Համակարգերը լինում են, մասնավորապես, *կանխորոշ*, այսինքն պատահականությունների ազդեցությունից զերծ (դրանք ուսումնասիրում է դասական մեխանիկան. որքան էլ շատ լինեն այդպիսի համակարգի տարրերը եւ բարդ լինեն դրանց միջեւ կապերը, համապատասխան հաշվիչ հզորության առկայության դեպքում այն կարող է միարժեքորեն նկարագրվել) եւ *անկանխորոշ* (որոնց դեպքում մեծ է քվանտային երեւոյթների դերը): Սրանք անորոշ են սկզբունքորեն, քանի որ դրանց դեպքում գործում է Հայգենբերգի անորոշության սկզբունքը (անհնար է իմանալ քվանտային մասնիկի եւ արագությունը եւ տեղը՝ միաժամանակ):

Կենցաղային իմաստով անկանխորոշ (անկանխատեսելի) համակարգերի ամենաբնորոշ օրինակը եղանակն է: Եղանակի կանխատեսումը միշտ եղել է անորոշության եւ անլուծելի խնդրի խորհրդանիշ. «հույսը դնել եղանակին»: Սակայն եղանակային համակարգը՝ մթնոլորտը քվանտային չէ, եւ թվում էր, որ որոշակի հաշվարկային հզորությունների առկայության դեպքում եղանակի կանխատեսումը կարող է եւ հնարավոր դառնալ: Եւ հենց որ այդ հզորությունները քիչ թե շատ աճեցին, այսինքն՝ հաշվիչ մեքենաների՝ համակարգիչների ստեղծման հետ՝ փորձ արվեց նոր ձեւերով լուծել այդ խնդիրը:

Անցած դարի 60-ական թվականների սկզբում ամերիկացի մաթեմատիկոս *Էդվարդ Նորթոն Լորենցը* փորձելով եղանակի կանխատեսման միջոցներ գտնել, ստեղծեց եղանակի մաթեմատիկական նմուշ՝ թվերի մի լրակազմ, որոնք ներկայացնում էին մի քանի փոփոխականների՝ ջերմաստիճանի, մթնոլորտային ճնշման, քամու արագությանը եւ այլ գործոնների արժեքները՝ տվյալ պահին: Դրանց միջեւ կապը Լորենցը ներկայացրել էր տասներկու հավասարումների միջոցով: Յուրաքանչյուր փոփոխականի արժեքը հաջորդ պահին պայմանավորված էր դրանց նախորդ պահի արժեքով եւ հաշվարկվում էր այդ հավասարումներով: Հետեւապես համակարգը լիովին կանխորոշված էր:


Մեքենային տրվում էին սկզբնական վիճակներին համապատասխանող թվեր, եւ այն արտածում էր թվերի շարքեր (հետագայում՝ կորերի տեսքով), որոնք չափազանց հիշեցնում էին իրական եղանակի անկայունությունը:

1961 թվականի ձմռանը Լորենցը որոշեց ավելի մանրամասն ուսումնասիրել փոփոխականներից մեկի՝ մեքենայով արդեն իսկ կառուցված կորը: Որպես սկզբնական տվյալ նա ներմուծեց փոփոխականի արժեքը՝ կորի միջին մասից: Մեքենան պիտի ճշտորեն վերարտադրեր կորի երկրորդ մասը եւ կառուցեր դրա

շարունակությունը: Սակայն մեքենան կառուցեց բոլորովին այլ կորապատկեր. եթե սկզբում այն դեռ *որոշ մոտավորությամբ* կրկնում էր նախկին կորը, ապա վերջում արդեն *լիովին տարբերվում էր*:

Ստացվում էր, որ համակարգը, որում բոլորովին բացակայում էր պատահականությունը *միեւնույն* սկզբնական արժեքների դեպքում տվել էր բոլորովին *տարբեր* արդյունքներ: Սակայն մեքենան սարքին էր եւ Լորենցի մոտեցագրած տվյալները՝ ճիշտ:

Լուծումը գտնվեց շատ արագ. պարզվեց, որ մեքենայի հիշողության մեջ փոփոխականները պահվում էին ստորակետից հետո *վեցերորորդ* նշանի ճշտությամբ (...506217), իսկ արտատպվում էր դրանցից միայն *երեքը* (...506): Լորենցը ներմուծել էր դրանց կլորացված արժեքները, *ենթադրելով*, որ այդ ճշտությունը միանգամայն բավարար է: Պարզվեց՝ ոչ: Պարզվեց, որ համակարգը չափազանց զգայուն է սկզբնական պայմանների նույնիսկ աննշան փոփոխման նկատմամբ:



Եղանակի՝ միեւնույն կետից սկիզբ առած երկու գծապատկերների փոխադարձ հեռացումը: Լորենցի՝ 1961 թվականի արտատպվածքը, վերարտադրված Ջեյմս Գլեյկի «Քաոս. Նոր գիտության ստեղծումը» գրքում:

Մեկ այլ խնդիր լուծելիս՝ այսպես կոչվող «Լորենցի անիվի» նկարագրման համար, նա կազմել էր ընդամենը երեք հավասարում: Այս համակարգն այնպիսին էր, որ եթե անիվն աստիճանաբար կայունանար, մեքենան պիտի դադարեր կետեր հավելել կորապատկերին: Եթե գործընթացը պարբերական դառնար՝ պիտի գոյանար օղակ, եթե դրանում չլիներ ոչ մի օրինաչափության, կարող էր գծվել մի որեւէ անձեւ գիծ: Արդյունքում սակայն մեքենան գծեց մի անսպասելի՝ միջին տարբերակը. կորը ուներ որոշակի կառուցվածք, նմանվելով թիթեռնիկի թւեր հիշեցնող երկու շոշափվող ձվածրի, որոնցից յուրաքանչյուրի սահմաններում այն բոլորովին անկանխատեսելի էր: Նման առարկաները, որոնք պատկանում են այսպես կոչվող «*տարօրինակ ձգիչների*» (*strange attractor*) շարքին մեծ տեղ գտան Նոր գիտությունների՝ *տրոհարդային* (*fractal*) երկրաչափության եւ *քաոսի* տեսության մեջ:

Պարզվեց, որ շատ համակարգեր, որոնք կանխորոշ են թվում, իրականում չափազանց զգայուն են պայմանների աննշան փոփոխության, մանրութների նկատմամբ: Կամ հակառակը, որ նման համակարգերի ապագայի տեսակետից մանրութ չկա: Իսկ 1972 թվականին լույս տեսավ Լորենցի «Կանխատեսելիություն. կարո՞ղ է արդյոք թիթեռի թռելիքի թափահարումը Բրազիլիայում՝ փոթորիկ առաջացնել Տեխասում» հոդվածը, եւ գիտական ու ոչ գիտական գրականության մեջ հայտնվեց «*թիթեռի արդյուն (effect)*» հասկացությունը, որը զարմանալիորեն կապվում էր նաեւ դրանից մի քանի տարի առաջ Ռեյ Բրեդբերիի գրած «*Եւ ամպրոպ որոտաց*» պատմվածքի հետ, որի տողերից մեկը բերված է այս հոդվածի բնաբանում: Այնտեղ դեպի անցյալը կատարած ուղեւորության ընթացքում պատմվածքի հերոսը պատահմամբ տրորում է մի թիթեռ, եւ արդյունքում, հետագա *պատմության* ընթացքը որոշ չափով փոխվում է:

Պատմությունը

Այդպիսի համակարգերից է նաեւ մարդկության պատմությունը, որին նվիրված է այս հոդվածը: Ավելի ճիշտ՝ պատմական զարգացումները: Պատմական զարգացումներն իրենց անկանխատեսելիությանմբ չափազանց հիշեցնում են եղանակը: Իհարկե, երբ մեծ պետությունը հայտարարում է, որ փոքր պետությունը խախտել է աստծո պատվիրանները (միջազգային օրենքը, մարդու իրավունքները, եւ այլն), ապա շարունակությունը քիչ թե շատ կանխատեսելի է: Սակայն մանրութներում...

Առաջին աշխարհամարտի մերանը եղավ Գավրիլո Պրինցիպի կրակոցը, սակայն այն պատերազմը կարող էր սկսել եւ ցանկացած այլ առիթով. այդպիսին էր այդ պահի քաղաքական տրամաբանությունը: Սա նման է Լորենցի ստացած կորերի այն հատվածին, որում երկու կորերը դեռ *գրեթե համընթաց են*, կամ տարբերվում են մանրութներում: Հավանականությունը, որ պատերազմը չէր սկսվի առհասարակ, շատ փոքր էր: Բայց արդեն Ֆանսի Կապլանի կրակոցի հետեւանքների տարբերակները այնքան էլ հեշտ չէ հաշվարկել: Մենք գիտենք ինչ եղավ արդյունքում, բայց դժվար է ասել, թե ինչ կարող էր լինել, եթե Նա. ա. սպաներ Լենինին, բ. եթե վրիպեր, կամ գ. եթե առհասարակ չկրակեր: Լորենցի կորերի վրա սա հավանաբար կհամապատասխաներ այն կետին, որից հետո դրանք *վերջնականապես հեռանում են*:

Այսպիսով կան պատմական իրադարձություններ, որոնք կարելի է հետագա պատմության ձգանք համարել, որոնք գուցե կանխորոշել են այսօրվա մեզ հայտնի աշխարհին իր գաղափարախոսություններով, ազգագրությամբ եւ քաղաքական քարտեզով: Այդպիսի ձգանքներից են եւ նշվածներին նման

դեպքերը, եւ վճռորոշ բախումները (օրինակ՝ են Արբելայի կամ Ստալինգրադի ճակատամարտերը), եւ բնական երեւոյթները (օրինակ՝ Սանտորին հրաբխի ժայթքումը, որը կործանեց Կրտէի քաղաքակրթութիւնը, կամ մ. թ. ա. 585 թ. մայիսի 29-ի արեւի խավարումը, որի ահից հաշտութիւն կնքեցին Լյուդիայի եւ Մարաստանի բանակները): Դրանց շարքում կան եւ գիտատեխնիկական նվաճումներ՝ հատիչի ստեղծումը, երկաթի արդյունահանումը, միջուկային տրոհման հայտնագործումը: Նաեւ՝ գրի ու գրչութեան ստեղծումը...

Մեզ, հայերիս համար մեր այբուբենի հայտնագործման նշանակութիւնը լավ է հայտնի: Իսկ արդոյթ այդ իրադարձութիւնը շրջադարձային էր միայն մեզ համար: Նման հարցադրումն իսկ կարող անհեթեթ թվալ. ինչ դեր կարող էր ունենալ հայալեզու գրչութեան ստեղծումը որեւէ մեկի համար՝ հայերից բացի: Սակայն այդ տպավորութիւնը խափուսիկ է, եւ ես կփորձեմ ներկայացնել Մաշտոցի գործունեութեան այն հետեւանքները, որոնք ազդեցին *ամբողջ աշխարհի* պատմութեան վրա: Ընդ որում, խոսքը հայ մատենագրութեան մշակութային դերին չի վերաբերում, այլ հենց քաղաքական հետեւանքներին:

Բայց իրոք. ինչ ազդեցութիւն կարող էր թողնել Հայքի պէս փոքրիկ (նույնիսկ Մեծ Հայքի սամաններում վերցված՝ աշխարհի համեմատ) երկրում կատարված ներազգային մշակութային հայտնագործութիւնը աշխարհի վրա: Սակայն կարելի է ոչ միայն իրադարձութեան *Եռթիւնը*, այլեւ դրա *վայրը*. մի՞ բան է լուծիկ վառէս խոհանուցում, եւ այլ բան՝ զինամթերքի պահեստում... Իսկ եթէ հիշենք, որ Հայքը գտնվում է Հին աշխարհամասի երկրաչափական կենտրոնում (այդ փաստին էր նվիրված նախորդ «Հայականտրոնութիւն» հոդվածը), ապա մաշտոցյան թիթեռնիկի հնարավորութիւնները արդէն չեն թվա այդքան աննշան...

Եւ այսպէս: Հիշենք, որ Մաշտոցը հանգել էր հայկական գրերի անհրաժեշտութեան գաղափարին այն բանից հետո, երբ գիտակցել էր, որ առանց հայալեզու գրականութեան անհնար է իրականացնել արդյունավետ *քրիստոնեական քարոզչութիւն*: Երբ համոզվել էր, որ քրիստոնեութիւնը երկրում ուներ միայն վերնախավային բնոյթ, մինչդեռ հայ ազգն իր հիմնական զանգվածով քրիստոնյա չէր, իսկ հարավից՝ Իրանից գալիս էին հին կրոնը վերականգնելու ազդակներ:

Սովորաբար քրիստոնեութեան տարածումը աշխարհում ներկայացնում են, որպէս հաղթարշավ, որը կանխորոշված էր առնվազն դրա ձեւավորման պահից, կամ նույնիսկ՝ վկայակոչելով Հին կտակարանի մարգարեութիւնները՝ *դրանից էլ առաջ*: Իրականում ամեն ինչ այնքան էլ հարթ չէր ընթանում, եւ նույնիսկ քրիստոնեական համայնքների գոյացումից հետո այն առնվազն երեք դար գոյատեւում էր սոսկ որպէս հռոմեական կայսրութեան բազմաթիվ եւ ամենեւին

ոչ ազդեցիկ կրոններից մեկը: Ընդ որում, լինելով իր էությունը *անհանդուրժողական* (քանի որ սկզբունքորեն մերժում էր *Սուրբ Երրորդությունից բացի այստվածային* որեւէ այլ *Էության գոյությունը*), այն տրամադրում էր իր դեմ քաղաքական ուժերի հիմնական մասը եւ ժամանակ առ ժամանակ ենթարկվում էր դաժան հետապնդումների: Իսկ քիչ թե շատ տարածվելուց հետո էլ այն էապես զիջում էր Կայսրությունում տարածված այլ կրոններին, օրինակ՝ միհրականությանը: Ու եթե չլինեին Գալերիոսի 311 թ. Նիկոմեդյան հրովարտակը, որով քրիստոնեությունը *հանդուրժելի* կրոն հռչակվեց եւ ապա Կոստանդինի եւ Լիկինիոսի 313 թ. Միլանյան հրովարտակը, որոով այն զգալի *արտոնություններ* ստացավ, ապա դրա տարածումը կարող էր եւ չընդլայնվել: (Ի դեպ, թեեւ հայերիս մեջ ընդունված է Հայոց քրիստոնեացումը թվագրել 301 թվականով, ակնհայտ է, որ Հայքում, որն այն պահին Հռոմի քաղաքական *լիակատար վերահսկողության* տակ էր գտնվում, նշված այդ 311-ից շուտ քրիստոնեությունը չէր կարող հաստատվել: Դա Նույնն է, եթե, օրինակ, Նախ ստեղծվեր Սովետական Հայաստանը, եւ հետո Նոր Ռուսաստանում իշխանության գալիս բոլշեւիկները, կամ սկզբում ընդունվեր Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագիրը, եւ հետո Նոր իշխանության գար Գորբաչովը:)

Սակայն Նույնիսկ այդ հրովարտակներից եւ քրիստոնեությունը փաստացիորեն հիմնական կրոնը դառնալուց հետո հին կրոնները չէին վերացել, ինչի արտահայտությունը եղավ 361-ին Հուլիանոս Բ-ի (Ուրացողի) հաստատումը, որի սպանությունից հետո միայն քրիստոնյաները կարողացան վերջնականապես արգելել հին կրոնները: Բայց Նույնիսկ դրանից հետո էլ, ինչպես կտեսնենք, հին կրոնը վերականգնելու փորձեր արվում էին: Իսկ Հայքում, պատմիչների վկայությամբ, Նույնիսկ մեկ դար անց էլ՝ Կոստանդանուպոլիսի, Սահակի եւ Մաշտոցի օրոք քրիստոնեությունը սոսկ վերնախավային բնույթ էր կրում:

Եւ Մաշտոցը ստեղծեց հայոց գիրը. թարգմանվեց քրիստոնեական գրականությունը, եւ մինչեւ Ավարայրի պահը հաջողվեց ծավալել այնպիսի քարոզչություն, որ Նույնիսկ Ավարայրում նվաճած հաղթանակով Իրանին չհաջողվեց վերահաստատել Հայքում Արամազդի պաշտամունքը:

Այսպիսով 451 թվականին *Մեծ Արեւելյան կայսրությունը* (Հայքն իրար միջեւ բաժանած երկու կայսրություններից մեկը՝ Իրանը) վերջնականապես կորցրեց Հայքը: Փաստացիորեն, Հայոց պետության մեծ մասը հետագայում էլ էր մնում Նրա կազմում, սակայն կարեւորագույն՝ հոգեւոր ոլորտում, որն այնքան կարեւոր է քաղաքական ամբողջականության եւ անկախության համար, Հայքը դարձել էր *Մեծ Արեւմտյան կայսրության* (Հռոմ, Բյուզանդիա եւ այլն) մասը:

Հայքը՝ *Հին աշխարհամասի կենտրոնը* քիչ թե շատ անկախ էր եղել միայն հնագույն ժամանակներում: Երբեմն Հայքը հայտնվում էր Բաբելոնի, Ասորեստանի ազդեցության տակ (տես «Հայակենտրոնություն»), բայց դա երբեք երկարատև չէր լինում, ինչը բնական էր աշխարհի այն ժամանակվա տնտեսական եւ տեխնիկական զարգացման մակարդակի պայմաններում: Երբ մարկարդակը բարձրացավ եւ այդքան մեծ տարածքը վերահսկողության տակ պահելու տեխնիկական հնարավորություն առաջացավ, առաջին անգամ Հայքը հիմնովին հայտնվեց այլ երկրի կազմում մ. թ. ա. 6-րդ դարում, երբ նվաճվեց Իրանի կողմից: Իրանը (մարական, պարսկական, պարթեւական, եւ կրկին՝ պարսկական) իր գերիշխանության տակ պահեց Հայքը շուրջ *հազար* տարի:

Պետք է նկատել, որ Հայքի համար Իրանի գերիշխանության տակ գտնվելը որակապես տարբերվում էր Ասորեստանի, Յոնի կամ Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվելուց, քանի որ Իրանի հետ դարավոր հարեւանության ու, թերեւ, նաեւ ծագումնային ընդհանրության բերումով երկու երկրների հակասությունները (որոնք հիմնականում վերնախավին էին վերաբերում) մինչ այդ երբեք չէին հանգեցնում ազգամիջյան առելության եւ սկզբունքային թշնամության արմատավորմանը: Երկու երկրների հարաբերությունները թեեւ բարեկամական չէին (ինչն առհասարակ տարօրինակ կլիներ հարեւանների դեպքում), ապա գոնե միջին հաշվով հավասարակշռված էին, երբեմն նույնիսկ համադաշնական. օրինակ՝ պարթեւական շրջանում (դրա աննշան հետքերը պահպանվել են նույնիսկ մինջեւ մեր օրերը): Իսկ Իրանը վերահսկելով Հայքը՝ *Հին աշխարհի կենտրոնը*՝ այսինքն գլխավոր առեւտրային եւ ռազմական ճանապարհները՝ վայելում էր *համաշխարհային* տերության կարգավիճակ, եւ կարող էր իր քաղաքական կամքը թելադրել մյուս կայսրություններին:

Կորցնելով Հայքը Իրանը վերածվեց շարքային պետության, եւ ընդամենը երկու դար անց տապալվեց նորածագ արաբական կայսրության կողմից: Եւս երկու-երեք տարի, եւ արաբները նվաճեցին նաեւ միայնակ մնացած Հայքը: Այսպիսով իսլամական կրոնի համար *ճանապարհ բացվեց դեպի արեւելք*՝ Յնդկաստան, Միջին Ասիա, Ինդոնեզիա: Ինչ վերաբերում է արեւմտյան ուղղությանը, ապա, նույն պահին արաբներից պարտություն կրեց եւ Բյուզանդիան, զիջելով արաբներին Եգիպտոսը. բացվեց արաբական ցեղերի եւ իսլամի տարածման ճանապարհը դեպի Աֆրիկայի *արեւմուտքը եւ հարավը*: Կորցնելով դեպի հարավ եւ արեւելք զարգանալու հնարավորությունը քրիստոնեությունը սկսեց տարածվել դեպի հյուսիս: Քրիստոնեացվեցին գերմանական եւ սլավոնական ազգերը... 1492 թվականին *Քրիստոփոր Կոլումբոսը «հայտնագործեց» Ամերիկան...*

Չհայտնագործված ամերիկյան

Իսկ ի՞նչ կարող էր տեղի ունենալ, եթե հայոց այբուբենը չստեղծվեր: Պարզ է, որ Ավարայրը, կամ դրան համապատասխանող մեկ այլ ընդհարում միեւնույն է կլիներ (սա պատմական ընթացքի այն փուլն էր, որում իրադարձությունները՝ ինչպես Լորենցի երկու կորերի ընթացքները՝ իրար շատ նման կլինեին): Սակայն ավելի հստակ կլիներ ճակատամարտի ավարտը. առանց արդյունավետ *քարոզչական* նախապատրաստման՝ հայկական բանակը կպարտվեր. այս անգամ՝ դա կլիներ առանց ռազմագիտական վերապահումների եւ *անխուսափելիորեն*: Սակայն անկասկած ընդհարումն այդ անհամեմատ փոքր ընդգրկում կունենար: Հավանաբար հայկական կողմը նույնիսկ 60 հազարանոց բանակ էլ չէր կարողանա հանել, եւ այդ ճակատամարտը կմնար պատմության մեջ, որպես մի շարքային բախում, կամ նույնիսկ չէր էլ հիշատակվի: Հիշատակվելու դեպքում էլ՝ պատմիչի համակրանքը լինելու էր հաղթողի կողմը:

Իսկ արդյունքում Իրանը կվերականգներ իր քաղաքական, ռազմական եւ կրոնական-գաղափարաբանական գերիշխանությունը Հայքում: Դա ամենեւին չի նշանակում, որ հայ ազգը կծուվներ պարսիկների մեջ, ինչպես սովորաբար փորձում են ներկայացնել: Ոչ իհարկե: Հայ եւ իրանական ազգերը *բաժանվել էին* միեւնույն հնդեւրոպական արմատից դրանից շուրջ 4—5 հազարամյակ առաջ եւ նույնիսկ իրանական տիրապետության նախորդ *հազար* տարիները *չէին բերել ծուլման* եւ *չկա* որեւէ տրամաբանական հիմք պնդելու, թե դա պիտի լիներ *հենց այս* պահից հետո: Դա նաեւ չի նշանակում, թե հայոց գիր այլեւս չէր էլ ստեղծվելու: Այն ավելի ուշ էլ կարող էր ստեղծվել, բայց, ամենայն հավանականությամբ, արդեն ոչ թե հունական, այլ պարսկական (թերեւս՝ ավեստայի) գրի ազդեցության տակ, հատկապես, որ ինչ-որ տեղական գիր (որը մեզ հայտնի է, որպես Դանիելյան), այսպես թե այնպես արդեն եղել էր:

Բայց սա՝ ինչ վերաբերում է Հայքին: Ինչ վերաբերում է Իրանին, ապա վերականգնելով իր ազդեցությունը տարածաշրջանում, եւ մասնավորապես, չեզոքացնելով մերձկասպյան տարածքի հոներին, այն կմնար լուրջ հավակնություններով ու նաեւ՝ հզոր տնտեսական հնարավորություններով երկիր, քանի որ կշարունակեր վերահսկել մայրցամաքի կենտրոնը: Ու հազիվ թե նա բավարարվեր եղած վիճակով: Ամենայն հավանականությամբ այն կփորձեր ընդարձակվել նաեւ դեպի արեւմուտք՝ Բյուզանդիայի հաշվին: Առնվազն, տիրանալով նաեւ Հայքի արեւմտյան մասին՝ վերականգնելով Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ Աթենքյան դարաշրջանի սահմանը:

Մյուս կողմից, պետք է գիտակցել, որ այն պահին աշխարհում դեռ չափազանց խախուտ էին քրիստոնեության դիրքերը: *Գործնականում* կար *երկու* քրիստոնեական պետություն. Հայքը՝ մազդեական Իրանի տիրապետության տակ եւ ինքը՝ Բյուզանդիան: Նույնիսկ Արեւմտյան Հռոմեական կայսրությունը Հռոմով հանդերձ, չէր կարող այդ պահին քրիստոնեության պատվար լինել, քանի որ հայտնվել էր գերմանական եւ հունական ցեղերի հարվածների տակ, իսկ կայսր Եւգենի (392—394), նույնիսկ փորձում էր շարունակել Յուլիանոս Բ-ի ավանդական կրոնի վերականգնման քաղաքականությունը: *Հայքի՝ քրիստոնեական ոլորտից դուրս մնալը կարող էր կտրուկ փոխել ուժերի հարաբերակցությունը հոգուտ, օրինակ՝ միհրականության, ինչը կարող էր շրջադարձային լինել*: Հնարավոր է, որ Իրանական արմատներ ունեցող միհրականությունը աջակցություն գտներ հզորացած Իրանի կողմից եւ տապալեր Հայքի կորուստից բարոյալքված քրիստոնեությունը, ինչը կբերեր ուժերի վերախմբավորմանը Արեւելյան կայսրության ներսում եւ կնպաստեր վերելքին եւ ապա՝ Արեւմտյան կայսրության հետ վերամիավորմանը: Արդյունքում դա կարող էր կանխել Հռոմի գրավումը գերմանացիների կողմից եւ միասնական դարձած Հռոմեական կայսրությունը կարող էր կրկին վերադառնալ քաղաքական ասպարեզ: Իսկ սա արդեն վճռորոշ կլիներ համաշխարհային պատմության համար:

Անկասկած, դրանից հետո Հռոմի եւ Իրանի ավանդական հակամարտությունը կվերսկսվեր, ինչը թեեւ որոշ չափով շարունակելու էր հյուծել երկու երկրները, բայց ինչպես եւ նախկինում դա չափավոր էր լինելու եւ նույնիսկ կարող էր նպաստել էր երկու կայսրությունների ռազմա-տնտեսական զարգացմանը եւ յուրաքանչյուրի միասնականացմանը:

Իսկ եթե 7-րդ դարում արաբական միջավայրում ծնվեր իսլամը (դա դեռ հարց է. կարճ էր այն առհասարակ ծնվել, առանց քրիստոնեության հարեւանության), դրա գաղափարներով զինված արաբները հազիվ թե կարողանային ճեղքել *միասնական Իրան-Հայքի* պաշտպանությունը՝ դեպի արեւելք ծավալվելու նպատակով, ինչպես նաեւ՝ ոտքի կանգնած Հռոմի դիրքերը՝ դեպի Աֆրիկա տարածվելու նպատակով: Արդյունքում, եթե իսլամը ծագեր, այն կմնար, որպես ներարաբական, ազգայնական, Արաբական թերակղզում սահմանափակված եւ ամենեւին ոչ համաշխարհային մի կրոն:

Մյուս կողմից հզորացած Իրանական աշխարհի սահմանները *չէին կարողանա անցնել* նաեւ թուրքական ցեղերը (բացի նրանցից, որոնք ժողովուրդների մեծ տեղաշարժի արդյունքում հունական հոսանքով արդեն իսկ հայտնվել էին արեւմուտքում, բայց հետագայում՝ ծովվել եւրոպական մյուս ազգերի զանգվածում), մնալով իրենց սկզբնական հայրենիքի մատույցներում՝

Իրանական Թուրանից (Ներկայիս Միջին Ասիային եւ Ղազախստանի հարավային մասերը) արեւելք: Ավելին, հավանաբար հենց Հռոմի քաղաքական թուլացմամբ պայմանավորված ժողովուրդների այդ տեղաշարժը թերեւս կանգ կառներ: Ձգտելով իրենց տարածքների ընդլայնմանը թուրքական ցեղերը կտարածվեին առավելապես դեպի հյուսիս, զբաղեցնելով ավելի ընդարձակ Սիբիրի տարածքները եւ կուժեղացնեին ճնշումը իրենց ցեղակից մոնղոլների վրա: Արդյունքում վերջիններս չէին կարողանա անարգել ընդլայնվել եւ Մոնղոլական կայսրությունը նույնպես չէր *ուներևա* այն թափը, որպեսզի ճեղքեր իրանական աշխարհի սահմանները, այս անգամ, արեւելքից՝ կազմելու համար ժամանակի խոշորագույն կայսրությունը: Թերեւս առավելագույնը, որին մոնղոլները կհասնեին, դա Ներկայիս Չինաստանի որոշ տարածքների գրավումը կլիներ: Սակայն շնորհիվ նրա, որ կայսրությունն ավելի սեղմ կլիներ, այն թերեւս այդքան արագ չէր կազմալուծվի, ու չի բացառվում որ այսօր մոնղոլները ավելի զարգացած ազգ կլինեին ու կզբաղեցնեին Ներկայիս Չինաստանի ամբողջ հյուսիսն ու արեւմուտքը:


Եթե վերադառնանք Հռոմին, ապա ժամանակի ընթացքում նրա ընդարձակ տարածքը առավել միատարր կդառնար եւ հավանաբար չէին գոյանա առանձին իսպանական, ֆրանսական, իտալական ազգերը, այլ կձեւավորվեր մեկ միասնական հռոմեական (լատինական) ազգ՝ թեեւ բազմաթիվ բարբառային տարբերություններով: Գերմանական ցեղերը չէին նվաճի ոչ միայն Հռոմը այլեւ Բրիտանիան, եւ վերջինիս տարածքում չէր ձեւավորվի անգլական ազգը այլ կշարունակեին բնակվել հռոմեացիների դեմ մշտապես մարտնչող ու անկախությանը ձգտող կելտերը: Անգլասակս ցեղերը թերեւս կծուվեին գերմանական մյուս ցեղերի հետ, որոնք իրենց պետությունը կստեղծեին Ներկայիս Գերմանիայի, Չեխիայի եւ Լեհաստանի արեւմտյան մասի վրա: Սկանդինավյան լեզուներ կրողների տարածումը թերեւս կլիներ այսօրվանը, այն տարբերությամբ, որ չունենալով խոչընդոտ, ի դեմս անգլացիների, նրանց հնարավոր է որ կհաջողվեր զարգացնել իրենց միջնադարյան Նախնիների՝ վիկինգների նվաճումները եւ տարածվել ամբողջ ժամանակակից Կանադայի տարածքով: Ինչ վերաբերում է Ամերիկյան մայրցամաքի մնացած մասերին, ապա Հռոմը, Գերմանիան ու Սկանդինավիան չլինելով քրիստոնեական երկրներ հնարավոր է, որ այնքան անհանդուրժողական չգտնվեին, եւ Ամերիկան «հայտնագործելուց» հետո կամ կբավարարվեին Նոր երկրների հետ առեւտրով, կամ նվաճելու դեպքում էլ, հազիվ թե բնաջնջեին բնիկներին (նրանց մարդ չհամարելով) եւ մինչեւ մեր օրերը վերջիններս գուցե հասնեին իրենց զարգացմամբ Հին աշխարհի երկրներին եւ այսօր մենք կունենայինք այնտեղ ոչ թե եւրոպական քաղաքակրթության տեղական պատճենները, այլ մեծ եւ ուրույն քաղաքակրթություններ եւ այսօրվա աշխարհը լիներ ավելի բազմազան եւ

գեղեցիկ: Դա վերաբերում է նաեւ Ավստրալական մայրցամաքին եւ հարավային Աֆրիկային: Վերջինիս տարածքում, հաշվի առնելով այստեղի բազմազան բնակլիմայական եւ ազգային պատկերը կարող էին ձեւավորվել մի քանի ուրույն պետություններ՝ քաղաքակրթություններ:

Վերջապես, արեւելքից թուրքական ազգերով սահմանափակված սլավոններին չէր հաջողվի անարգել տարածվել դեպի արեւելք եւ նրանք էլ ստիպված կլինեին շարժվել ներքին զարգացման ուղիով: Այդ դեպքում սլավոնական հողերը թերեւս կընդարձակվեին միայն մինչեւ Ուրալ, ընդ որում Եւրոպայի հյուսիսը կմնար ֆիննական ցեղերին:

Շարադրված սցենարի շրջանակներում ձեւավորված աշխարհի հնարավոր քարտեզը ներկայացված է ստորեւ: Այն կազմված է քաղաքակրթությունների մակարդակով, որոնք իրենց հերթին կարող էին բաղկացած լինել բազմաթիվ ազգերից: Ծագումնաբանորեն կամ քաղաքականապես մոտիկ քաղաքակրթությունները ներկայացված են նույն գույնի երանգներով: Սահմանները մեծ մասամբ պայմանականորեն գծված են ներկայիս քաղաքական սահմաններով (որոնք հաճախ ունեն բնակլիմայական իմաստ եւ կամայական չեն):

Կրոնական տեսակետից աշխարհում կլինեւ մի քանի տարածք. Եւրոպայում եւ Աֆրիկայի հյուսիսում, ինչպես նաեւ Կանադայում տարածված կլինեին *միհրականության տարբեր ճյուղերը*, Ամերիկայի եւ Աֆրիկայի մնացած մասում՝ *տեղական կրոնները*, Արաբական թերակղզում *իսլամը*, Իրանում ու Թուրանում՝ *մազդեականության/զրադաշտության* հոսանքները, Հնդկաստանում՝ *հնդկականությունը*, եւ մնացյալ տարածքներում՝ *բուդդայականությունը*: Այս աշխարհի պատմությունում չէին լինի *եւրոպական* երկրների հետ կապված այնպիսի *հանցագործությունները*, ինչպիսին են հնդկացիների ցեղասպանությունը, Ալեքսանդրիայի գրադարանի այրումը, խաչակրաց արշավանքները, եւրոպական հավատաքննությունն ու ֆաշիզմը եւ խորհրդային աքսորները, ինչպես նաեւ ճապոնական քաղաքների միջուկային ռմբակոծումը: Դա բնավ չի նշանակում, որ պատմության *այս մի տարբերակի* մեջ տեղ չէին գտնի այլ հանցագործություններ, թեեւ այն չնչին տեղեկությունները, որոնք պահպանվել են միհրականության մասին վկայում են, որ համաաշխարհային կրոն դառնալու դեպքում այն *միջին հաշվով* ավելի հանդուրժողական կլիներ:



Աշխարհի բաղաբաղադրությունները շարադրված վարկածի դեպքում. 1. Հունգարիա, 2. Իրանա-թուրանական, 3. Արաբական, 4. Գերմանական, 5. Սկանդինավյան, 6. Ֆիննական, 7. Սլավոնական, 8. Ացտեկական, 9. Կելթական, 10. Աֆրիկական, 11. Հնդկական, 12. Թուրքական, 13. Մոնղոլական, 14. Չինական, 15. Հնդկաչինական, 16. Մալայական:

Բայց դա արդեն այլ խնդիր է. հնարավոր են բազմաթիվ այլ տարբերակներ (հատկապես, եթե հաշվի առնենք այս շարադրանքում անկասկած տեղ գտած անճշտությունները), որոնք կարող են քննարկվել: Եւ քննարկումներն այդ, թեեւ ումանց անօգուտ զբաղմունք կթվան, սակայն իրականում կարող են նպաստել մեր պատմության ավելի խորը ընկալմանը, առանց որի գիտությունը չի կարող կատարել իր հիմնական դերը՝ ապագայի կանխատեսման եղանակների կատարելագործումը եւ նախորդ սխալներից խուսափելու միջոցների ձեւակերպումը:

Իսկ այս հոդվածի խնդիրն էր միայն ցույց տալ, որ 1600 տարի առաջ ստեղծելով հայկական այբուբենը եւ հիմնադրելով թարգմանչաց քարոզչական շարժումը Մեսրոպ Մաշտոցը կանխորոշեց ոչ միայն հայ ազգի, այլեւ ամբողջ աշխարհի ապագան եւ այսօրվա բաղաբաղադրական քարտեզը:

06.07.2012

Հայակենտրոնության գաղափարին վերաբերող այս երկրորդ հոդվածը լույս չէր տեսել Լրագրում, սակայն որոշեցի ներգրավել այն ժողովածուի մեջ ամբողջականության համար եւ քանի որ կարծում եմ, որ եթե օրաթերթը շարունակեր իր գոյություն, հնարավոր է, որ իրոք հրապարակվեր դրա էջերին:

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ



Ցանկացած մասնագետ գործադրում է իր հմտությունները, սպասարկելու համար մյուսներին, եւ վարձատրվում է դրա դիմաց: Սպասարկում է մատուցողը՝ սրճարանում, սպասարկում է վարորդը՝ փոխադրամիջոցներում, հացթուփը՝ փռում, սպասարկում է վաճառողը՝ գնորդներին... Այնուամենայնիվ «սպասարկել» բառն ինչ-որ բացասական երանգ ունի, եւ որոշ մասնագիտությունների՝ «բարձր» մասնագիտությունների դեպքում, օրինակ՝ ուսուցիչների, բժիշկների կիրառմամբ՝ այդ բառը, մի տեսակ, կարծես, տեղին չէ: Ուսուցիչը չի սպասարկում աշակերտներին. նա «երկրորդ ծնող է», բժիշկը չի սպասարկում հիվանդներին. նա «կյանքեր է փրկում»... Թեեւ... Նոր ժամանակների «մեյնսթրիմային» գաղափարաբանությունը եւ «բարոյականությունը» այս մասնագիտություններն էլ սպասարկողների վերածեցին: Ինչ արած՝ իրողություն է:

Սակայն, եթե սպասարկման մյուս ոլորտները (մասամբ նաեւ՝ դպրոցը) ենթարկվում են սպասարկման գործընթացին բնորոշ օրենքներին, ապա բժշկության ոլորտը բոլորովին վեր է մնում այդ օրենքներից: Հատկապես սա

պարզ դարձավ «թագավարակային» խարդախության արդյունքում, երբ պարզվեց, որ բժիշկները եւ դեղագործները ի տարբերություն այլ մասնագետների *իրավունք ունեն* անպատժելիորեն խախտել մարդու սահմանադրական *իրավունքները*: Ընդ որում միայն մարդու իրավունքները չէ, որ նրանք խախտում են. դեռ մինչեւ «թագավարակային» արկածախնդրությունը բժիշկները խախտում էին սպասարկման այն տարրական, բնական, եւ կասեի՝ բնագդական կարգը, ըստ որի հաճախորդը իրավունք ունի չվճարել ոչ որակյալ սպասարկման դիմաց:

Կարող է հարց առաջանալ. իսկ բժշկության դեպքում ինչպե՞ս պիտի որոշվի սպասարկման որակը եւ դրանից շեղման աստիճանը: Իրոք, եթե, օրինակ, գնահատվում է սրճարանի սպասարկումը, ապա, եթե, սուրճը մատուցվում է ճանճով հանդերձ, կամ նեխած կարկանդակներով, ապա ամեն ինչ պարզ է. գուցե նույնիսկ հետո սրճարանը ստիպված լինի վճարել բարոյական վնասի դիմաց: Կամ՝ սուրճը մատուցվել է, սակայն պատվերն ընդունելուց մի կես ժամ ուշացումով. դուք հանգիստ կարող եք հեռանալ, եւ թող այդ սուրճը խմեն նույն այդ «սպասարկողները»: Կամ, մեկ այլ, բայց դիտարկվող ոլորտին ավելի մոտիկ օրինակ. դուք ձեր ավտոմեքենան բերել եք վարպետի մոտ. դուք կվճարե՞ք վարպետին, եթե ձեր խնդիրը լուծված չլինի, կամ լուծված լինի անորակ, կամ լուծված լինի մեքենային մեկ այլ վնաս հասցնելու միջոցով, օրինակ՝ ներկածածկույթը վնասելով: Անշուշտ, ինչ-որ գումար դուք գուցե եւ վճարեք (հատկապես եթե հիմնական խնդիրը, գոնե լուծված լինի), բայց դա ամբողջովին ձեր ցանկությունից կախված կլինի:

Իսկ ի՞նչ ունենք բժշկության ոլորտում: Այստեղ դուք վճարում եք բոլոր դեպքերում. եւ եթե բուժումը ձեզ բավարարել է, եւ եթե՝ չի բավարարել: Եւ նույնիսկ այն դեպքում, երբ, բառի բուն իմաստով, ունքը տեղը դնելու փոխարեն՝ աչքն են հանել: Բնականաբար, ծայրագույն դեպքերում, հատկապես, երբ ոչ միայն աչքն է հանվել, այլեւ կյանքն է խլվել, տուժածներից ոմանք կարող են եւ գործը դատարան հասցնել, բայց, համաձայնվե՞ք՝ առանց որեւէ լուրջ հույսի, եւ որպես կանոն՝ պարտվելու հեռանկարով: Առավելագույնը՝ «բժիշկը» կարող է հեռացվել աշխատանքից կամ արտոնագրից զրկվել (ինչ-որ ժամկետով): Մինչդեռ հայտնի է, որ բժշկական սխալներով պայմանավորված մահացության ծավալը համեմատելի է սրտային հիվանդություններով պայմանավորված մահացության հետ. <https://tehinginiring.ru/a-blood-test/oshibki-pri-lechenii-patologii-lor-organov-kommentiruet.html>:

Բայց սա էլ դեռ ամենը չէ: Հիվանդը վճարում է նույնիսկ ոչ թե կատարված աշխատանքի դիմաց, այլ, պարզապես՝ բժշկի *խոսելու* դիմաց: Կրկին հիշենք ավտոմեքենայի օրինակը: Պատկերացրեք, դուք բերել եք մեքենան վարպետի

մոտ, իսկ նա թեթևակի նայելով մեքենային ասում է. «Պետք է փոխել, այսինչ ու այնինչ մասերը, յուրը, մարտկոցը եւ այլն», եւ պահանջում է դրա դիմաց վճարել 10 հազար դրամ: Այսինքն վճարել ոչ թե փոխելու համար, այլ վերոհիշյալ նախադասությունը ասելու դիմաց, մինչդեռ դուք դեռ պիտի գնաք, հայթայթեք պահանջվող պահեստամասերը, գնաք համապատասխան այլ մասնագետների մոտ, որոնք գործը կանեն ու դրա դիմաց նույնպես վճարում կպահանջեն: Բայց այդ դեպքում ի՞նչ եր այն առաջինի գործառույթը: Ինչի՞ համար դուք պիտի նրան վճարեիք, եթե բուն գործը պետք է այլ մարդիկ անեին:

Բնականաբար ավտոմեքենա նորոգելու դեպքում նման բան չի լինում. դուք վճարում եք ոչ թե վարպետի խոսելու եւ տերմինակոխ անելու դիմաց, եւ նույնիսկ՝ ոչ թե նրա աշխատանքի դիմաց, այլ ձեր ավտոմեքենայի նորոգման դիմաց: Որովհետեւ, եթե արդյունքում այն թերությունը, որի պատճառով դուք եկել էիք այդ վարպետի մոտ վերացված չլինի, դուք կհամարեք գործը չարված, իսկ չարված գործի դիմաց չեն վճարում:

Իսկ ի՞նչ է տեղի ունենում բժշկին այցելելու դեպքում: Պատահում է, որ նա նույնիսկ չի էլ խոսում հիվանդի հետ եւ առանձնապես չի էլ հետազոտում, այլ անմիջապես ուղարկում է ռենտգենի, սրտագրության, ստամոքսաղիտման, արյան հետազոտման եւ այլն, եւ ստանալով այդ հետազոտումների արդյունքները մի-երկու դեղ է նշանակում (որոնք հաճախ դուք ստիպված եք գնել իր իսկ գործընկեր դեղագործից), եւ դրա դիմաց ստանում վերոհիշյալ 10 հազարը: Գուցե մյուս հետազոտողների որակավորումը ավելի ցածր է: Ոչ. նրանք բոլորը բժիշկներ են. այո, ռենտգենյան ճառագայթներում լուսանկարելը այնքան էլ դժվար գործ չէ, բայց այն գնահատել եւ վերծանել կարող է արդեն միայն բժիշկը, այն էլ՝ շատ հմուտ բժիշկը: Նույնը վերաբերում է եւ ստամոքսաղիտմանը, վերծայնային զննմանը եւ այլն. դրանք կարող է կատարել միայն բարձրահմուտ բժիշկ մասնագետները:

Կարող են ասել, թե նեղ մասնագիտական հետազոտությունները բավարար չեն ախտորոշելու համար, եւ անհրաժեշտ է ի մի բերել դրանց արդյունքները, իսկ դա կարող է անել միայն առանձին բժիշկ: Կամ որ դա, պարզապես, բխում է բազմաթիվ հաճախորդների զուգահեռ սպասարկման անհրաժեշտությունից (չէ՞ որ սա սպասարկման ոլորտ է): Ընդունենք: Բայց նույնիսկ այդ դեպքում, ինչի՞ դիմաց պիտի վճարի հիվանդը: Հավանաբար՝ ապաքինվելու դիմաց. հիվանդը եկել է բժշկի մոտ հենց այդ հույսով: Սակայն հիվանդը վճարում է ընդամենը վերոհիշյալ հետազոտությունների արդյունքները «ի մի բերելու» դիմաց: Անկախ նրանից, թե արդյո՞ք դրանք ճիշտ են «ի մի բերվել», թե ոչ: Եւ ապաքինվելու մասին չենք էլ խոսում:

Բոլոր այլ դեպքերում (բացի բժշկի, ու մեկ էլ՝ գուշակի մոտ գնալուց), հաճախորդը չի վճարում, չստանալով այն, ինչի համար եկել է. ապրանքը կամ ծառայությունը: Հացն ու կարագը առնելուց մենք վճարում ենք, երբ մեր ձեռքում են արդեն այդ հացն ու կարագը: Սրճարանի հաշիվը մեզ բերում են, երբ մենք արդեն խմել ենք սուրճը եւ ճաշակել կարկանդակները: Ավտոմեքենան նորոգման հանձնելու դեպքում մենք վճարում ենք, երբ վարպետը ցուցադրում է թերությունների վերացման փաստը: Միայն բժիշկներին ու գուշակներին ենք մենք վճարում խոսելու դիմաց: Ընդ որում, բուժման ընթացքում՝ յուրաքանչյուր այցելության դիմաց, որոնք կարող են բազմաթիվ լինել:

Պատճառը պարզ է. բժշկության դեպքում արդյունքը վիճակագրական բնույթ ունի: Նույնիսկ երբ 99 հիվանդին տվյալ բուժումը օգնել է, 100-րդին կարող է այն չօգնել: Բայց 99 տոկոսանոց դրական արդյունքը բավական բարձր ցուցանիշ է եւ հազվադեպ է պատահում. հիմնականում այն կարելի է տեսնել ատամնաբույժների ու որոշ վիրաբուժական միջամտությունների դեպքում: Սովորաբար, նույնիսկ 80 տոկոսանոց ապաքինումը (այն է՝ 5-ից՝ 4-ը) գերազանց ցուցանիշ է: Հատկապես, երբ հիվանդություններից շատերի (նույնիսկ բավարար հաջողությամբ բուժվողների) դեպքում հստակորեն հայտնի չէ նույնիսկ դրանց *պատճառաբանությունը* (etiology):

Ուրեմն ի՞նչ. բժիշկը պիտի ձեւ անի, թե հասկանում է ինչի հետ գործ ունի եւ վճար վերցնի հիվանդից, իսկ նշանակված բուժումը հիվանդի համար օգտակար կլինի, թե ոչ՝ աստված գիտի: Գուցե դա է պատճառը, որ մեր օրերում բժիշկները խուսափում են «բժիշկ» եւ «հիվանդ» եզրույթներից: Իրոք. *բժիշկը* պիտի *բուժի*, իսկ *հիվանդն* արդյունքում՝ *ապաքինվի*, այն է՝ դադարի հիվանդ լինել: Այդ իսկ պատճառով էլ նախընտրում են «դոկտոր» (լատիներեն՝ «ուսուցիչ») եւ «պացիենտ» (լատիներեն՝ «դիմացող») եզրույթները: Ասել է թե՛ բժիշկը «իմաստուն» է, գիտի թե ինչ է ասում, իսկ հիվանդը՝ թող *դիմանա*. Իրեն դա է հասնում: Իսկ թե որքան պիտի դիմանա՝ անորոշ է:

Այսպիսին է վիճակը: Հատկապես վերջին երկու տարիներին, երբ համաշխարհային մաֆիայի վերնախավում իշխանությունը նախագործներից անցավ բժիշկներին ու դեղագործներին, որոնք իրենց կողմից վերահսկվող կառավարությունների (գրեթե բոլոր) եւ ֆինանսավորվող ՉԼՄ-ների միջոցով անմիջապես իրագործեցին «թագավարակային» խարդախությունը, ստանալով տրիլիոնավոր դոլարների շահույթ եւ «դիմացող» ժողովուրդներ:

Բայց այսպես չպետք է շարունակվի: Բժիշկների (հատկապես տպավորիչ է ռուսերեն համարժեքը. врачъ врачъ «խաբել» արմատից) իշխանությունը ժողովուրդները պետք է վերահսկողության տակ առնեն: Այո, բժշկության մեջ 100-տոկոսանոց երաշխիք անհնար է ապահովել: Սակայն այդ դեպքում նրանց

աշխատանքի դիմաց վճարումը նույնպես չպետք է 100-տոկոսով երաշխավորված լինի: Բժիշկը պիտի գիտակցի, որ կվարձատրվի միայն դրական արդյունքի դեպքում: Մի կողմից, դա արդար կլինի, իսկ մյուս կողմից՝ կնպաստի ոլորտի զարգացմանը: Իրոք, ինչո՞ւ պետք է զարգանա մի ոլորտ, ուր «սպասարկողները» վարձատրվում են անկախ արդյունքից: Ընդ որում՝ կանխավ: Իսկ այսօր նաեւ՝ պարտադրված. պարտադիր դիմակների, թեստերի եւ նման այլ հնարքների արդյունքում:

Բնականաբար, ստեղծված իրավիճակից դուրս գալու գործնական լուծումները պիտի դեռ գտնվեն: Գուցե օրենքով պետք է սահմանվի, որ բժշկի մոտ յուրաքանչյուր այցելություն պիտի սկսվի պայմանագիր կազմելուց (թեկուզե՛լ բանավոր, «ջենտլմենական»), որում հստակ նշված կլինեն պայմանները, որոնց դեպքում նրա ծառայությունը կվարձատրվի: Բժիշկը պետք է իրավունք ունենա հիվանդի *որոշակի խնդրի* հետ կապված վարձ պահանջել միայն *մեկ անգամ*, ընդ որում, միայն երբ հիվանդը զգա, որ արդեն առողջ է, եւ հետազոտությունները դա կհաստատեն: Իսկ եթե բուժումից ինչ-որ ժամանակ անց (երբ բուժման դիմաց վարձը արդեն ստացված էր) պարզ դառնա, որ խնդիրը չի վերացվել (այլ ոչ թե սկսվել է կրկին՝ նախորդից անկախ պատճառներով) բժիշկը պետք է պարտավորվի շարունակել բուժումն անվճար կամ վերադարձնել բուժման դիմաց ստացված գումարը՝ տոկոսներով: Տոկոսներն էլ այն բանի դիմաց, որ ժամանակ է կորցվել, իսկ բժշկության մեջ դա հաճախ կարող է ճակատագրական լինել:

Խնդրի կարող է առաջանալ տեւական (chronic) հիվանդությունների դեպքում, երբ բժիշկը սկզբունքորեն չի կարող խոստանալ ապաքինում, բայց կարող է թերեւսցնել հիվանդության ընթացքը: Թերեւս, այդ դեպքում, բժիշկը պարտավոր է ավելի փոքր վարձատրություն պահանջել այդ խնդրի հետ կապված յուրաքանչյուր այցելության եւ խորհրդատվության դիմաց, կամ, օրինակ, մեկ տարվա ընթացքում միայն մեկ անգամ:

Համենայն դեպս, մեր առջեւ լրջագույն խնդիր է, եւ այն պիտի քննարկվի, մինչեւ որ գտնվի դրա լուծումը:

27.05.2021

ԲԱՐՈՎԱՅԱԼ ՊՈՂՈՏԱՅԻ 8-ՐԴ ՀԱՏՎԱԾԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

2021 թվականի ապրիլի 7-ին ես, Ռուբեն Խաչատուրի Հակոբյանս ստացել եմ «Որոշում վարչական տույժ նշանակելու մասին» Հմ. Վ-0521247 09.03.2021 թ. որի համաձայն Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետ Արամ Աբովյանը հայտնում է, որ որոշել է ինձ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամի չափով:

Ինչպե՞ս է նա հիմնավորել իր այդ որոշումը: Պարզվում է (սա հենց Որոշման «Պարզեցի» մասից է), որ «**35DO990 պետհամարանիշով «NISSAN PRIMERA 1.8» մակնիշի տրանսպորտային միջոցը 27.01.2021 թ. ժամը 17:13-ից մինչև ժամը 17:45-ի ընթացքում 15 րոպեից ավելի ժամանակահատվածով կայանված է եղել ք. Երեւան, Բաղրամյան պող., հատված 8-ում գտնվող համայնքային վճարովի ավտոկայանետեղում, սակայն մեքենայի սեփականատեր ՌՈՒԲԵՆ ՀԱՎՈՐՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ կողմից վճարված չի եղել «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղի տեղական վճարի մասին» օրենքի 10-րդ հոդվածով եւ Երեւան քաղաքի ավագանու 22.12.2020 թվականի հ. 305-Ա որոշմամբ նախատեսված տրանսպորտային միջոցների կայանատեղերի համար սահմանված պարտադիր գանձույթը:**

Հայտնաբերված իրավախախտումների փաստով Երեւանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ»:

Հետո գալիս են շատ հետաքրքիր տեղեկություններ:

1. Պարզվում է, ես, Ռուբեն Խաչատուրի Հակոբյանս, «պատշաճ ծանուցված լինելով 09.03.2021 թվականին կայանալիք վարչական գործի քննության տեղի եւ ժամանակի մասին, չի ներկայացել, ուստի Վարչական իրավախախտումների

վերաբերյալ օրենսգրքի 267-րդ հոդված 1-ին մասի համաձայն գործը քննվել է առանց վերջինիս (այն է՝ իմ) բացակայությամբ»:

Խնչ ասեմ: Չեմ կասկածում, որ ծանուցելու փորձ գուցե եւ արվել է, սակայն, թերեւս ոչ *պատշաճ* կերպով, քանի որ այդ մասին ես իմանում (կարդում) եմ առաջին անգամ: Գուցե քաղաքապետարանի ինչ-որ աշխատակիցներ թերացել են, եւ ՊԱՏՇԱԾ չեն կատարել իրենց պարտականությունները, սակայն, կրկնում եմ, ինձ որեւէ մեկը որեւէ կերպ ոչինչ չի ծանուցել: Անհնար է բերել մի որեւէ փաստ, որը կվկայի, որ ես տեղյակ եմ եղել, եւ չեմ վճարել, չեմ ներկայացել եւ այլն: Չեմ կասկածում, ավելին՝ համոզված եմ, որ համաշխարհային օրինաստեղծության մեծ փորձը սերտած «իրավաբանները» կարող են «ապացուցել» ինչ ասես, բայց, կրկնում եմ. ես տեղեկացված չեմ եղել. ոչ պատշաճ, ոչ որեւէ այլ որակով:

2. Նաեւ «պարզվել» են հետեւյալ փաստերը:

«Համաձայն «Փարկինք Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից (փակագծերում նկատեմ, որ այս ընկերության անվան բոլոր երեք բաղադրիչները ոչ հայկական են, ինչը կարելի է դիտել, որպես արտահայտված չարամիտ արհամարհանք ՀՀ պետական լեզվի, ուստի նաեւ՝ պետության նկատմամբ) **տրամադրված տեղեկության՝ ք. Երեւան, Բաղրամյան պող., հատված 8-ում գտնվող կայանատեղում** (երեւի նկատի ունեն «կայանատեղի» եզրույթը) **27.01.2021 թվականի դրությամբ (իրավախախտման օր) տեղադրված են օրենքով սահմանված ճանապարհային նշաններն ու համապատասխան տեղեկատվական ցուցանակը»:**

Հասկացմբ. «Բաղրամյան պող., **հատված 8**». այդ ինչ բան է այդ **հատվածը**: Այդ ինչ հասկացություն է: Դա որտեղ է: Ես արդեն շուրջ 45 տարի է բնակվում եմ Բաղրամյան պողոտայում, բայց ոչ մի «հատվածի» մասին չեմ լսել. չեմ լսել, որ մեր պողոտան (թե՞ քաղաքը) բաժանված է ինչ-որ «հատվածների» (բայց երեւի՝ բաժանված է): Եւ հիմա քաղաքապետարանը, ի դեմս քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետ Արամ Աբովյանի, պնդում է, որ ես իրավախախտում եմ կատարել այդ անհայտ վայրում:

Բայց դա էլ դեռ ամենը չէ: Եթե քաղաքացուն մեղադրում են իրավախախտման համար, երեւի ինչ-որ ապացույցներ կան: Պարզվում է, որ.

«Հիմք ընդունելով գործի քննության ընթացքում ձեռք բերված ապացույցները, այդ թվում՝ վերը նշված իրավախախտումների լուսանկարների (որոնցում արտացոլված պետհամարանիշի պատկերները ապացուցում են ՌՈՒԲԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ-ին պատկանող NISSAN PRIMERA 1.8 մականիշի

35D0990 պետհամարանիշով տրանսպորտային միջոցի՝ հ. 0540973 արձանագրությամբ նշված ժամերին կայանված լինելու փաստը) եւ 27.01.2021 թվականին կատարված տեսազրույթյան (որով հաստատվում է, ՌՈՒԲԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ին պատկանող եւ հիշյալ լուսանկարներում արտացոլված NISSAN PRIMERA 1.8 մակնիշի տրանսպորտային միջոցի՝ 27.01.2021 թ. ժամը 17:13-ից մինչեւ 27.01.2021 թ. ժամը 17:45-ի ընթացքում վճարովի ավտոկայանատեղում 15 րոպեից ավելի ժամանակով կայանված լինելու փաստը) համադրմամբ ստացված տեղեկությունները՝ հիմնավորվել է ՌՈՒԲԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ-ի կողմից իրավախախտման կատարման հանգամանքը»:

Նման պնդումից հետո սպասելի էր, որ ինձ ուղարկած նամակում ներառված կլինեին այդ լուսանկարները, ինչպես նաեւ տեսահոլովակի ցանցային հասցեն (ինչպես դա արվում է, օրինակ, ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման դեպքերում), որով ես կկարողանայի հասկանալ, թե այդ երբ եւ որտեղ եմ կատարել վերոհիշյալ իրավախախտումը եւ, ի վերջո, որտեղ է գտնվում **հատված 8-ը**: Սակայն որեւէ լուսանկար կամ ցանցային հասցե նամակը չի պարունակում: Պարզապես որոշումը կազմողը ուզում է, որ ես, Ռուբեն Խաչատուրի Հակոբյանս հավատամ իրեն:

3. «Որոշման «Որոշեցի» մասի 3-րդ կետում գրված է. «Եթե սույն որոշումը ստանալուց առաջ «02» 02 2021թ թվականի (այդպես է գրված, Ռ.Թ.) հ. 0540973 արձանագրության հիման վրա N 900015211619 հաշվեհամարին վճարվել է 5.000 ՀՀ դրամ, եւ վճարման արդյունքում տրված անդորրագրում ամբողջությամբ նշված է i340սhmvnej2 ծածկագիրը, ապա վերը նշված 5.000 ՀՀ դրամ տուգանքը համարվում է վճարված եւ լրացուցիչ վճարում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է»:

Պատկերացնում եմ. Որոշման մասին ինձ տեղեկացնող նամակը թվագրված է 09.03.2021 թ., սակայն այս կետով քաղաքապետարանը տուգանվողին «ընդառաջ է գնում». եթե տուգանքը մուծվել է դրանից շուրջ 5 (հինգ) շաբաթ առաջ, ապա լրացուցիչ վճարում կատարու անհրաժեշտություն չկա: Թե չէ՝ պարզ է չէ. կարող էր եւ լինել անհրաժեշտություն: Իսկ մյուս կողմից, ստացվում է, որ նամակը կազմողը չի բարեհաճել տեղեկանալ, արդյո՞ք 5 շաբաթ առաջ տուգանքը մուծվել է, թե՞ ոչ:

Ահա այսպիսի վիճակ է տիրում Երեւանի քաղաքապետարանում: Ես չեմ բացառում, որ ինչ-որ կայանատեղիում 15 րոպեից ավելի կայանած լինեմ, թեեւ միշտ կանոնավոր վճարում եմ կայանելու դիմաց, որպեսզի «Փարկինգ Սիթի

Սերվիս» ՓԲԸ-ն, որն օրենքի ուժով գանձումներ է ստանում (չգիտեմ ղի ծառայության դիմաց), հանկարծ վնաս չկրի. դա կարելի է ստուգել իմ նախորդ վճարումների պատմությունից: Այսինքն ես պարտաճանաչ քաղաքացի եմ: Փոխանակ ինձ պարզ մի հեռախոսազանգով հիշեցնեին (վստահ եմ, որ իմ հեռախոսահամարը իրենց հայտնի է) եւ խնդրեին վճարել (ինչպես դա անում են, օրինակ, հեռախոսային ընկերությունները), ինձ ուղարկում են այսպիսի նամակ՝ «պատշաճ» ծանուցումից հետո:

Միեւնույն ժամանակ, ստորեւ բերված եւ նմանօրինակ հարյուրավոր այլ փաստերը քաղաքապետարանին, թերեւս, չեն հուզում. համեմայն դեպս այդ խնդիրների լուծման ուղղությամբ ոչինչ չի արվում.

- որ երեւանցիների փոխադրամիջոցները շարժվում են քաղաքապետարանի կողմից շաբաթներ շարունակ ՊԱՏՇԱԾ չվերանորոգվող փողոցների փոսերով եւ վնասվում (ո՞վ է վճարելու վնասված մեղմիչների դիմաց, արդյո՞ք քաղաքապետարանը),
- որ բազմաթիվ լուսացույցների լույսերը կամ խամրած են, կամ՝ չեն գործում,
- որ բացակայում են երթեւեկությունը կարգավորող բազմաթիվ ճանապարհային նշաններ,
- որ բացակայում է նշագծումը,
- որ բացակայում են կամ չեն գործում հետադարձ վայրկյանաչափերը,
- որ մեքենաները որոշ փողոցներում երկու շարքով են կայանում (օրինակ՝ Հակոբյան փողոցում),
- որ խաչմերուկներին հարող տարածքում «Կանգառն արգելված է» նշանի տակ կանգնում են փոխադրամիջոցներ (երբեմն՝ ամիսներ շարունակ. հավանաբար, իրենց տերերը կամ տուգանք չեն մուծում, կամ այդ տուգանքը իրենց համար մոծակի խայթոց է) եւ դանդաղեցնում երթեւեկությունը, երբեմն էլ խցանումների հանգեցնում,
- որ, օրինակ, պոլիտեխնիկական ինստիտուտի հարեւանությամբ (ուսանողական թաղամասում) չկա ոչ մի ավտոկայան, իսկ եղածն էլ հիմա կառուցապատվում է, իսկ շինհրապարակը զավթել է նաեւ մոտակա փողոցի մայրերը, իսկ նոր մայր ստեղծելու փոխարեն քաղաքապետարանը պարզապես ցուցանակ է փակցրել, հայտնելով որ հետիոտնային ճանապարհ չկա՝ առաջարկելով հետիոտններին անցնել շրջանցիկ արահետով,

- որ խաչմերուկների տարածքում գործում են կրպակներ, բենզալցակայաններ, որոնք փակում են տեսադաշտը, ստեղծելով վթարային վիճակ,
- եւ այլն, եւ այլն, եւ այլն:

Նկատեմ նաեւ, որ մեր այս հույժ թվայնացված դարում պետ մարմնի կողմից գրված նամակը չի պարունակում նույնիսկ էլեկտրոնային հասցե (նույնիսկ՝ հեռախոսահամար), որով հնարավոր կլիներ ուղարկել պատասխանը կամ տեղեկանալ գործի մանրամասներից, եւ ես ստիպված եմ պատասխանն ուղարկել պապական փոստով (որով եւ ստացել եմ «Որոշումը»): Տպավորություն է ստեղծվում, որ քաղաքապետարանում սովոր չեն, որ իրենց «որոշումները» կարող են բողոքարկվել: Իրոք. ապացույցները ներկայացված չեն, հասցե եւ հեռախոս չկա. որոշեցին որ 5000, ուրեմն 5000: Դժգոհող լինի՝ իր համար ավելի վատ կլինի: Ինչպես այն դառը կատակում. «Բժիշկն ասել է՝ տանել դիարան, ուրեմն՝ դիարան»:

Ավարտելով տեղյակ եմ պահում, որ.

- այս պահից արդեն ինձ ծանուցված եմ համարում,
- սպասում եմ ապացույցներին, եթե դրանք իրոք կան. ես չեմ գլանա, եւ ուշադրությամբ կդիտեմ իմ ավտոմեքենայի կայանման մասին պատմող տեսանյութի բոլոր այն 15 րոպեները (որոնց ընթացքում ես կարող էի ոչինչ չվճարել), եւ մնացած 17 րոպեները կազմող այն մասը, որն իմ մայրաքաղաքի կառավարությունը 5000 դրամ է գնահատել՝ հօգուտ՝ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի,
- քաղաքապետարանի էլեկտրոնային հասցեի բացակայության պատճառով պատասխանը նախ հրապարակում եմ մամուլում (որ արագ ստացվի), իսկ հետո կուղարկեմ թղթային ձեւով՝ ավանդական փոստով,
- պատրաստ եմ ընդունել քաղաքապետարանի պաշտոնական ներողությունը՝ սույն բաց նամակում ներկայացված ճշացող թերացումները գոնե խոստովանելու դեպքում:

08.04.2021

ԱՐԴԻ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ ՉԱՓՆ ՈՒ ԻՆՏԵԼԵԿՏԸ

Սկսեմ մի հաղորդումից. վերջերս պարզվել է, որ Հովհաննես Թումանյանը նախատեսում էր գրել «Գիթորը» անունով պոեմ: Գտնվել են դրա մի քանի սեւագիր պատառիկներ, այդ թվում՝ անավարտ պոեմի սկիզբը.

<i>Գյուղացի Համբոյի</i>	<i>որ մարդ դառնա,</i>
<i>տունը</i>	<i>աշխատանք անի: Կինը</i>
<i>կռիվ էր ընկել:</i>	<i>չէր համաձայնում:</i>
<i>Համբոն ուզում էր իր</i>	<i>- Չեմ ուզում, իմ</i>
<i>տասներկու տարեկան</i>	<i>քորփա երեխին</i>
<i>Գիթորին</i>	<i>էն անիրավ աշխարքը</i>
<i>տանի քաղաք</i>	<i>մի գցի, չեմ ուզում,-</i>
<i>մի գործի տա,</i>	<i>լալիս էր կինը:</i>

Չե՞ք հավատում: Իսկ հատկապես ինչի՞նչ չե՞ք հավատում. որ Թումանյանը «Գիթորի» այդպիսի տարբերակ է ունեցել, թե՞ չե՞ք հավատում, որ բերված տողերը բանաստեղծական են: Այո, առավել բծախնդիրները կասեն, որ այստեղ պարզապես հայտնի պատմվածքի տողերը կտրատված են պատահական տեղերում՝ ստացված կարճ տողերը սյունակաձև դասավորելու նպատակով: Խոստովանում եմ. դա իրոք այդպես է: Բայց ի՞նչ պակաս բանաստեղծություն է: Ի վերջո՝ մեծ բանաստեղծի գրածն է. ուրեմն՝ բանաստեղծություն է:

Վերջերս «Գրական թերթ»-ում արդի հայ բանաստեղծությանը վերաբերող մի վերլուծության մեջ պատահեցի տարօրինակ բառակապակցություն. «Չափական բանաստեղծություն»: Ինչի՞ մասին է խոսքը: Ինչ մեղքս թաքցնեմ. խորհրդային տարիներից հետո «Գրական թերթ»-ի գոյության մասին մոռացել էի. պարզապես Համացանցում մի որոնում կատարելիս գտա այն՝ բոլորովին պատահաբար: Պարզվեց, որ «չափական բանաստեղծություն»-ը հայկական արդի բանաստեղծության (պոեզիայի) այն ուղղությունն է, որը «դասական

պոեզիայի ձեւային-կառուցվածքային և բովանդակային սահմանների մեջ է փորձում կայանալ»։ Ընդ որում, այդ «ձեւային»-ը եւ «փորձում կայանալ»-ը կարծես թէ ոչ այնքան դրական էին հնչում։ Բայց ինչ իմաստով է կիրառված «չափական» եզրը։ Հագիվ թե՛ տաղաչափական համակարգերի շրջանակում, քանի որ այդ դեպքում հաջորդ ուղղություններում, թերեւս, դրան պետք է հակադրվեին, ասենք, վանկաշեշտական կամ վանկական բանաստեղծությունները։ Սակայն դրա փոխարեն առանձնացված էին, օրինակ, «քրիստոնեական ավանդույթից եկող», «առասպելաբանական կամ բանահյուսական» եւ «ինտելեկտուալ» ուղղությունները։ Դրանից հետեւում է, որ «չափական» եզրույթը կիրառված էր ընդամենը որպես «չափածո»-ի հոմանիշ։ Այսինքն, ստացվում է, որ բանաստեղծությունը կարող է լինել նաեւ ոչ «չափական» (չափածո)։ Միթե լինում է ոչ չափական (չափածո) բանաստեղծություն. այդ դեպքում այն ինչո՞վ է տարբերվում արձակից։ Եթե լինում է, ապա ինչո՞ւ բանաստեղծությունն չէ վերելում բերված նմուշը, պատրաստված «Գիքորի» տողերից։ Եւ կամ էլ, ստացվում է, բանաստեղծությունը կարող է լինել «ոչ ինտելեկտուալ»։ Այդ ինչպէս այսինքն։ Որո՞ք եւն այդ «ոչ ինտելեկտուալ» բանաստեղծությունները։ Թեւեւ նույն վերլուծության մեջ ճշտվում է, որ «... ըստ ուղղությունների դասակարգումը պայմանական...» է, «...մանավանդ որ կան բանաստեղծներ, որոնց ստեղծագործական ճանապարհը կարելի է դիտարկել մի քանի ուղղություններով»։

Բայց, ինչ է, վերջապես, բանաստեղծությունը։ Իրականում այն կարելի է հեշտությամբ սահմանել. դա գրականության ճյուղ է, ուր հեղինակի խոսքը համակարգված է ոչ միայն իմաստային դաշտում, այլեւ իմաստը կրող կրիչի, այն է՝ հնչյունների դաշտում։ Ընդամենը։ Այսինքն, եթե խոսքը համակարգված չէ հնչյունային մակարդակում, գործ ունենք ոչ թե բանաստեղծության, այլ սոսկ արձակի հետ։ Օրինակ, այսպիսի.

*«Ովքեր անթարթ, անվախ, ուղիղ կտրել-անցել ու մտել են մահվան
Արքայությունն այն մի, հիշեք մեզ (թե կհիշեք իրոք) ոչ թե որպես կորած, անզուսպ
հոգիների, այլ լոկ որպես մարդկանց սնամեջ ու թերի, ծղոտով լցունված փուչ
խրտվիլակների»։*

Կրկին չեք հավատում։ Այո, չեն հավատում։ Իմ նույն բծախնդիր ընդդիմախոսները պնդում են, որ սա արձակ չէ, այլ բանաստեղծություն է։ Ավելին, որ սա հատված է Թոմաս Սթըրնզ Էլիոթի «Սնամեջ մարդիկ» բանաստեղծության հայերեն թարգմանությունից (հրապարակված նույն այդ «Գրական թերթ»-ում)։ պարզապես, տողերը իրար տակ չեն դրվել։ Ի՞նչ ասեմ. կրկին իրավացի եք։ Բայց մի՞թե սա արձակ չէ։ Իսկ ինչո՞ւ ոչ։ Արդյո՞ք այն

պատճառով, որ բնագրում (նաեւ անգլական բնագրում) տողերը կտրատված են եւ շարված իրար տակ: Ստացվում է, արձակը բանաստեղծությունից տարբերվում է սոսկ տողերի երկարությամբ. օրինակ, եթե տողերի երկարությունը $\pm 60-70$ գրանշան է, ապա դա՝ արձակ է, իսկ եթե $10-40$ է, ապա՝ բանաստեղծություն: Բայց այդ դեպքում ինչո՞ւ բանաստեղծություն չհամարենք «Գիթորի»՝ վերելում բերված «տարբերակը»: Կրկին համաձայն չեք:

Եւ լավ է, որ համաձայն չեք: Որովհետեւ իրոք, բանաստեղծությունը արձակից տարբերվում է ոչ թե տողերի երկարությամբ, այլ հնչյունային պատկերով, *հնչյունային նախշով*: Թե ինչպիսին պիտի լինի այդ նախշը, կարելու չէ. այն կարող է ամենատարբեր տեսակների լինել: Կարող է հիմնված լինել վանկերի քանակի վրա, կամ շեշտված վանկերի քանակի, կամ շեշտակիր եւ անշեշտ վանկերի հաջորդականության վրա: Կարող է լինել *մեծավերջ* եւ *մեծասար*, *ստեղն* եւ *վերջատանջ* եւ բազում այլ տեսակների: Տողերը կարող են լինել հանգավոր եւ անհանգ, կարող են խմբվել երկտող, եռատող, քառատող եւ այլ տներում: Կարող են կազմել *ռուբայի*, *տրիոլետ*, *սոնետ*: Սոնետները կարող են լինել *ֆրանսական*, *անգլական*, *օնեգինյան* եւ այլն, եւ այլն, եւ այլն. տասնյակ եւ հարյուրավոր տեսակների: Բայց նախշն այդ պետք է լինի: Չկա՝ արձակ է: Կա՝ բանաստեղծություն է: Այն է՝ «չափական» (չափածո) է:

Միտս եկան Բուլգակովի հերոսի բառերը. «*Միայն մեկ թարմություն է լինում. առաջին, որը եւ վերջինն է: Իսկ եթե ծուկը երկրորդ թարմության է, նշանակում է այն հոտած է*»: Նույն բանաձեւով. «*Մեկ տեսակի բանաստեղծություն է լինում. չափածո, իսկ եթե չափածո չէ...*» Դեե..., եւ այլն:

... Եւ օրվա հրամայականը

Այնպես չէ, որ հայ արդի «պոեզիայի» այդ «ինտելեկտուալ» հատկությունը նորություն էր. չլիներ այն, «Գրական թերթ»-ը չէր մոռացվի: Բայց «Գրական թերթ»-ը մեկ երեկոյի ընթացքում երկրորդ անգամ ինձ ապշեցրեց: Պարզվեց, որ կայքի հիմնական հինգ բաժիններից մեկը կոչվում է «Քովիդ-բրոնխիտ»:
«Ինտելեկտուալ» այս հարվածից ես երբեք էլ ուշքի չեմ գա. հայ գրողներն ընդդեմ «բովիդի», այն է՝ *թոբաբորբի*. դարակազմիկ արշավ: Հայ գրողները (հավանաբար թոբաբորբի զոհ դարձած խեղճ Գիթորի ճակատագիրը մյուս քաղաքացիներից ավելի սրտամոտ ընդունած) բժիշկների կողքին են կանգնել եւ ուս-ուսի տված պայքարում են, հրապարակելով սրտաճմիկ ինտելեկտուալ ակնարկներ: Իսկ գուցե գրականագետի գիտելիքները բավարար չեն համաճարակային վիճակը ճիշտ գնահատելու համար: Ինչո՞ւ եք որոշել, որ այսօր թոբաբորբերը ավելի հաճախ են պատահում, քան Գիթորի օրոք:
Կառավարությանն է ասել: Իսկ այդ հոր օրվանից եք սկսել հավատալ իշխանությունների ամեն մի ասածին: Այն իշխանությունների, որոնք միշտ ձեզ

խաբել են, կողոպտել են, ստորացրել են, իսկ հիմա հարստանում են դիմակներ, թեստեր ու պատվաստանյութեր վաճառելով: Կասեք դա մերոնք են, իսկ այլ արդար եւրոպաներում կառավարությունները սփրք են: Իսկ դուք հետեւեք, օրինակ, գերմանական կորուսացիոն սկանդալներին...

Ես չեմ ուզում երկար խոսել այդ «աղետի» մասին. այդ մասին ես բազմիցս արտահայտվել եմ, օրինակ [«Հայաստանի ներկայիս վարչախմբին»](#), [«Համընդհանուր մարտահրավերները եւ դավադրության տեսությունը»](#) հոդվածներում: Հարցն այլ է. անկախ այս հիվանդության վտանգավոր լինել-չլինելուց պարզ է, որ դրա դեմ այսպես կոչված «պայքարը» վաղուց հանգեցրել է համաշխարհային տնտեսության անկմանը, որն իր հերթին դարձել է միլիարդավոր մարդկանց կյանքի որակի անկման եւ մահացության աճի պատճառը: Եւ կյանքի որակի անկումը արտահայտվում է նաեւ խաբված մարդկանց հոգեկան լարվածության աճով, ինչը կարող է հանգեցնել նաեւ հոգեկան հիվանդությունների տարածմանը: Չի կարելի տան հատակի մաքրությունն ապահովելու համար կոշիկները մաքրել թեյի սրբիչով: Չի կարելի բուժել ստամոքսը՝ թոքերի հաշվին, իսկ թոքերը՝ լեղապարկի կամ մեկ այլ օրգանի: Մի վնասիր. այս է բժշկության սկզբունքը: Իսկ տվյալ դեպքում թոքերը բուժում են ի հաշիվ մարդկանց հոգեկան առողջության:

Եւ ահա այդ փսիխոզի տարածման գործին լծվել են հայ գրողները, ովքեր պիտի որ լինեին ազգի ոգու առողջության պահապանները: Մինչդեռ անում են ճիշտ հակառակը. աջակցելով կառավարություններին եւ օլիգարխներին ձեռնառու քարոզչությանը՝ նպաստում են առանց այն էլ մեծագույն հարված ստացած ազգի ոգու հետագա ընկճմանը:

Եւտուշենկոն ասել է. *«Բանաստեղծը Ռուսաստանում ավելին է քան բանաստեղծ»*: Ցավոք, ինչպես պարզվեց, Հայաստանում՝ ճիշտ հակառակն է:

02.04.2021

ԹԱԳԱՎԱՐԱԿԻ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ԱՐԺԱՆԱԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Թագավարակի կեղծաճարակը շատերին հիշեցրեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը վերջին ժամանակներում սկսել էր դիտվել, որպես շատ վերացական մի փաստաթուղթ, եւ առհասարակ՝ գրեթե մոռացվել: Մասամբ դա լավ էր. նշանակում էր, որ այդ իրավունքների հետ ընդհանուր առմամբ վիճակը վատ չէր. սովորաբար մարդիկ չեն պարծենում իրենց որեւէ գործարանի առողջությամբ, բայց հիշում են, երբ այն տկարանում է:

Ինչեւէ, կեղծաճարակի պատրվակով մտցված եւ մտցվելիք սահմանափակումները հիշեցրեցին, որ կան այնպիսի բնական իրավունքներ, ինչպիսիք են ազատ տեղաշարժվելու իրավունքը, կրթություն ստանալու իրավունքը եւ այլն:

Եւ դա այն դեպքում, երբ այդ հռչակագիրը, որպես այդպիսին այնքան էլ կատարյալ չէ: Ավելին, նրանում կան բազմաթիվ կասկածելի պնդումներ եւ ավելորդություններ: Բավական է հիշել հենց առաջին Նախադասությունը.

«Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով»: Միթե: Սրանք սոսկ բարի ցանկություններ են: Այն էլ՝ վիճելի: Օրինակ, ինչ վերաբերում է հավասար արժանապատվությանը... մեկի համար իրեն թարս նայելը արդեն իսկ մահացու վիրավորանք է, իսկ մյուսին կարող ես կարգադրել իր առողջությանը վնասող դիմակ կրել, եւ ոչինչ. հնազանդորեն կրում է...

Բայց ես ուզում եմ խոսել հատկապես մեկ հոդվածի մասին, որը, թերեւս հռչակագրի ամենակարեւորներից է, եթե ոչ՝ ամենակարեւորը, եւ որն օրինաչափորեն հայտնվել է պատվավոր Նախավերջին տեղում: Ահա այն.

Հոդված 29

2. Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք պետք է ենթակա լինի միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք

օրենքով սահմանված են բացառապես ուրիշների իրավունքների եւ ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքն ապահովելու եւ ժողովրդավարական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը եւ ընդհանուր բարեկեցությունը բարելավելու նպատակով:

Սովորաբար այս դրույթը ներկայացվում է մեկ այլ, ավելի պարզ եւ հակիրճ ձեւակերպմամբ. «Անձի ազատությունն ավարտվում է այնտեղ, որտեղ սկսում է մեկ այլ անձի ազատությունը»: Այս պարզ եւ կարեւոր դրույթը սակայն ոչ միայն հայտնվել է Նախավերջին տեղում, այլեւ առհասարակ մոռացության մատնվել: Եւ պարզ է թե ինչու. քանի որ «յուրաքանչյուր ոք»-ին «սահմանափակումների» ենթարկել կարող է միայն հանրությունը, ի դեմս պետության, եւ, հետեւաբար, այս դրույթը պետության (եւ այլ «մարդկանց խմբերի») համար ամենատհաճն է: Եւ ամեն ինչ արվում է այս դրույթը շրջանցելու համար:

Թեեւ այդ միտումները Հռչակագրի հեղինակները Նախատեսել էին, եւ այդ փորձերը կանխելու համար հավելել էին էլ ավելի կարեւոր, եւ՝ վերջին հոդվածը, որից հետեւում է, որ հենց նման շրջանցման փորձն իսկ անթույլատրելի է.

Հոդված 30

Սույն Հռչակագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որեւէ պետության, մարդկանց խմբի կամ առանձին անհատների ընդեռված իրավունք՝ զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի արարք, որոնք նպատակաուղղված լինեն սույն Հռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատություններն ի չիք դարձնելուն:

Իսկ ինչպե՞ս են հարդարվում նման շրջանցման փորձերը: Շատ տրամաբանական ձեւով. ապացուցելու միջոցով, թե անհատի տվյալ ազատությունը, իբր, վնաս է շրջապատին, իսկ հետո արդեն դիմելով մոլորեցված անձանց խղճին, առաջարկում են հրաժարվել սեփական բնական իրավունքից: Բնականաբար դա արվում է քարոզչության, այն է՝ ՉԼՄ-ների միջոցով: Ու բնականաբար դա արվում է օգտագործելով մարդկանց անտեղյակությունը, միամտությունը եւ հիստերիայի հայտնի սկզբունքը, ըստ որի մարդիկ տրամադրված են ավելի շատ հավատալ մեծագույն ստերին, քան ենթարկվել մանր խաբեությանը: Եւ, օրինակ, պարզվում է, որ «պասիվ» ծխողի համար ծուխն ավելի վնաս է, քան անմիջապես ծխողին (թեեւ դա ակնհայտ զավեշտ է), որ ավտոմեքենաների ամրագոտիները չկապելը, իբր վտանգ է ներկայացնում նրա կողքին նստածին (թեեւ պարզ է, որ ամրագոտին կարող է պաշտպանել միայն համընթաց ազդակներից, եւ ոչ՝ կողային) եւ այլն:

Ինչհ՞ն է դա արվում: Որպես կանոն, դրա հիմքում շուկաների եւ միջոցների, դրամական հոսքերի վերահսկումն է: Օրինակ, շնորհիվ պետական օրենքով

պարտադրված ամրագրոտիների (որոնց օգուտը բավական կասկածելի է, իսկ վնասների մասին նախընտրում են չխոսել) դրանց արտադրողները ունեն կայուն ահռելի շուկա...

Եւ ահա հասանք դիմակներին: Պետությունները սկսեցին պարտադրել դիմակները պնդմամբ, թե, իբր, դիմակ կրելը «փրկում է կյանքեր»: Իրոք, եթե դիմակը պաշտպաներ շրջապատում գտնվողներին, ապա Հռչակագրի 29-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն պետությունը պարտադրելու իրավունքը կունենար: Բայց... Բազմաթիվ մասնագետներ բացատրում են, որ առնվազն թագավարակի դեպքում, եթե մարդը անաղտանիշ վարակակիր է, նա վարակիչ չէ, եւ դիմակ դնել-չդնելը ոչինչ չի փոխում: Սակայն պետությանը «վիզ» պետք է, որ աշխատի 29-րդ հոդվածը, եւ պետական այրերը իրենց, ներեցեք, «ռետինափողի» տեղ են դնում եւ անամոթաբար շարունակում են իրենց մանտրաները «կյանքեր փրկելու» մասին:

Փաստորեն այդպիսով պետությունը խախտում է նաեւ 30-րդ հոդվածը, քանի որ մեկնաբանում է 29-րդ հոդվածը այնպես, որպեսզի «*ի չիք դարձնի*» «*Հռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատությունները*»:

Իսկ ի՞նչ է պետության օգուտը: Պետության՝ առհասարակ, ոչ միայն հայոց «պետության»: Օգուտները մի քանիսն են, բայց հիմքում կրկին շուկաների վերահսկումն է: Միայն դիմակների շուկան աշխարհում տրիլիոնավոր դոլարների է հասնում (չհաշված ձեռնոցների, ալկոհոլի եւ նման այլ ապրանքների շուկաները): Բնականաբար պետությունները անմիջականորեն դրանից օգուտ չունեն (չհաշված՝ հարկային մուծումները), բայց ի՞նչ գիտի, թե ինչպես կարող են խոշոր արտադրողները լոբբիավորել իրենց շահերը: Իսկ եթե արտադրողը շաաաատ մեծ է, իսկ պետությունը՝ շաաաատ փոքր... Կարծում եմ, կարելի է չշարունակել. ամեն ինչ պարզ է:

Բայց (ինչպես ասում են գովազդներում), դա դեռ ամենը չէ. դիմակների շուկան իր ետեւից քաշում բերում է պատվաստանյութերի շուկան, որը շաաաատ ավելի մեծ է, եւ հասնում է տասը տրիլիոնի շեմին: Բայց եւ ավելի խնդրահարույց է: Սովորական մարդը կարող է համաձայնվել դեմքին դնել ինչ-որ կասկածելի նյութից լաթի կտոր, բայց թույլ տալ, որ իրեն ներարկեն էլ ավելի կասկածելի քիմիա... Նման բան ամեն մեկը չէ, որ կհամաձայնվի (նույնիսկ այն տեսակի մեկը, որին հիշատակեցի վերեւում): Սակայն եթե մարդուն նախնական մշակման ենթարկել (ինչպես այն գորտին, որին եփում են մարմանդ կրակի վրա), ապա նա կարող է եւ չնկատել այն պահը, երբ մեկ, անմեղ թվացող, պարտադրանքից (*ամրագրուտ*՝ որի օգտակարությունը այսօր արդեն թվում է ապացույց չպահանջող, *դիմակի*, *ձեռնոցի*՝ որոնց օգտակարության մասին առասպելը այսօր եռանդորեն ներարկվում է դպրոցական գիտելիքները

յուրացված անձանց ուղեղների մեջ), անցում կկատարվի ավելի վտանգավորին: Հատկապես, եթե զուտ բարոյախրատական քարոզների կարկանդակին հավելվի նաեւ պարտադրանքի ճիպոտը, եւ պարզվի, որ առանց այդ պատվաստման մարդը ոչ միայն չի կարողանա մտնել խանութ, հաց առնելու (ինչպես արդեն հիմա Է՝ առանց դիմակի), այլեւ չի կարողանա այցելել բժշկի, սովորել, աշխատանքի ընդունվել եւ այլն: Բացի այդ կգործադրվի նաեւ շաատ մեծ ստի մոգությունը, եւ մարդիկ կասեն. «դե լաաավ, թող պատվաստեն, ինչ պիտի լինի որ, հո չէն կարող թույն ներարկեն ամբողջով աշխարհին. հեեեն ա «զարգացած» երկրներում անում են, ուրեմն ինչ կա որ»: Բնականաբար, վերահսկվող ՉԼՄ-ները հո չեն պատմելու այն հազարավոր դժբախտ դեպքերի մասին, որոնք արդեն եղել են աշխարհով մեկ անորակ պատվաստանյութերից: Ով էլ իմանա դրանց մասին, կհուսա, թե հենց իր եւ իր երեխաների բախտը կբերի... Փոխարենը, կմտածի, թե հետո նա արդեն «վերականգնված» կլինի իր իրավունքներում եւ կկարողանա աշխատել, առեւտուր անել, մի խոսքով՝ սովորական կյանքով ապրել...

Բայց... Կամ արդյոք երաշխիք, որ սա միակ կեղծաճարակն է եւ «հավեսի ընկած» դեղագործական ընկերությունները չեն սկսի ահաբեկել մարդկությունը եւս մի «բոլորովին նոր» վարակով, կամ եղածի «նոր ալիքով» եւ նոր «շտամմով»... Եւ ապա՝ չեն անցնի էլ ավելի հեռու հորիզոններ բացող ծրագրին, այն է՝ «կրելի եւ ներաճեցված բժշկական թվանշային սարքերի» ներպատվաստմանը, որը հնարավորություն կտա լրիվ վերահսկելի եւ կառավարելի դարձնել «մարդկային կապիտալը», այն է՝ հին լեզվով ասած՝ «ժողովուրդը»:

Իսկ պե՞տք է արդյոք այդ «մարդկային կապիտալին» Հռչակագրի 29-րդ, կամ՝ որեւէ այլ հոդվածը, կամ հենց 1-ին հոդվածում հիշատակված «արժանապատվությունը»: Ինչ-ինչ... Այդ ինչ հնաբանություն է... Տղա ջան, չեմ հիշում, մի հատ նայիր բառարանում.... Ինչ է «բառարանը».... Դեեե, դասագրքի վերջում լինում է չէ՞ անձանոթ բառերի ցուցակ... Ինչ է «դասագրքերը»... Դեեե... դա... այդպիսի մի գիրք էր՝ սովորելու համար... Գիրք... սովորելու... Դեեե... հնում, երբ որ համակարգչի հիշողությունը չէր բավարարում, ինչ-որ բաներ գրում էին թղթի վրա... եւ սովորում... դպրոցներում... Դպրոց... Դե, այդպիսի շենքեր էին, ուր բոլոր երեխաները հավաքվում էին եւ կողք-կողքի նստած... ը-ըըը, սովորում էին... Ու խախտում էին սոցիալական հեռավորությունը... Հա խախտում էին... Ինչ հետամնաց կյանքով եք ապրել...

27.06.2020

ԳԼԽԱՎՈՐ ԽԱՂԱՅՈՂԸ. ԴԵՄ ԵՒ ԹԵՐ

Նախորդ հոդվածում ես փորձել էի վերլուծել Մոսկվայի կողմից՝ ընթացող պատերազմում այս կամ այն կերպ մասնակցող ուժերը «ներքին», թե՛ «արտաքին» համարվելու հարցը, գալով եզրակացության, որ այդ դասակարգման մեջ հաշվի չի առնվում ներկա փուլում աշխարհի համար մեկ ուժը՝ «խորքային պետությունը», որի ներուժի համեմատ դասական ազգային պետությունների գործոնը (համարենք դրանք «ներքին», թե՛ «արտաքին»)՝ երկրորդական է եւ հույս ունենալ, թե դրանք կարող են ինքնուրույն լուծել Արցախյան խնդիրը՝ միամտությունը է:

Մյուս կողմից ես նկատել էի, որ ազգային պետություններն այնուամենայնիվ ինչ-որ ներուժ դեռեւս պահպանում են: Պայմանականորեն (եւլենով սեփական զգացողությունից) կարող եմ ասել, որ խորքային պետությունն այսօր աշխարհում ունի «սահմանադրական մեծամասնության» ուժ, մինչդեռ «ազգային» պետությունների հավաքական ներուժը կազմում է մնացյալ մեկ երրորդը: Բայց այն կա, եւ հաշվից հանել այն ճիշտ չէ: Եւ ակնհայտ է, որ առավել մեծ է այն պետությունների դերը, որոնք աշխարհագրորեն մոտ են մեր տարածաշրջանին: Այդ իսկ պատճառով, կարելի է ասել, որ մնացյալ մեկ երրորդի կեսը հասնում է Ռուսաստանին, որը ոչ միայն մոտ է տարածաշրջանին, այլեւ, փաստորեն, ներառում է այն իր մեջ, քանի որ այստեղ այն ներկայացված է իր զինված ուժերով: Այդ իմաստով 1828 թվականի համեմատ **առայժմ** ոչինչ չի փոխվել. Ռուսական կայսրության սահմանը **դեռեւս** անցնում է Արաքսով՝ ինչ էլ նկարեն կարտեզագրերը:

Բայց ուժերի վերոհիշյալ բաշխման պայմաններում դա չի նշանակում, որ Ռուսաստանից կարելի է ակնկալել, որ այն կխաղա իր դերը՝ Նոյնիսկ իրեն մնացած համաշխարհային քաղաքական ուժի մեկ վեցերորդի չափով: Առավել եւս՝ որ այդ դերը կլինի հայանպաստ: Եւ ահա թե ինչու:

Հայաստանը գոյություն ունի Ռուսաստանի շնորհիվ

«Թավշյայի» օրերին Ռուսաստանի պաշտոնական քարոզիչները եւ այսպես կոչված «հայ համայնքի» չափազանց գրգռված ներկայացուցիչները փոշոտ գզրոցներից հանեցին քարոզչական այս դրույթը (որի կարկառուն քարոզողներից էր «ռսի օրինած ոտի» հեղինակը), եւ ում արձանը հիմա ցցված է «պլանի գլխում»:

Դրանցից մեկն էր օդիոգ լրագրող Միխայիլ Լեոնտյեւը, որն իր ելույթներից մեկում ասեց հետեւյալը. «... *Հայաստանը, հանուն որի ... **հակառակ մեր շահերի մենք հայտնվել ենք Անդրկովկասում, քանի որ մենք փրկում էինք քրիստոնյաների հոգիները...***» (https://www.youtube.com/watch?time_continue=4175&v=De5MMBiIF7w): Այն օրերին այդ անհեթեթ պնդմանը եւ պատասխանեցի մի հոդվածում (<https://www.aravot.ru.am/2018/05/10/273204/>), որի դրույթների մի մասը բերված է ստորեւ: Անշուշտ, կարելի է ասել, թե իմաստ ունեւ արդյոք, թե այն ժամանակ եւ թե՛ այսօր անդրադառնալ այդ մասնավոր կարծիքին: Այո, քանի որ դա ամենեւին էլ մասնավոր կարծիք չէ. դա ոչ միայն իշխող կարծիքն է ռուսական վերնախավի շրջանում, այլեւ՝ ինչն ավելի կարեւոր է՝ հայերի զգալի մասի կողմից Ռուսաստանի դերի ընկալման հիմքն է: Մինչդեռ:

Հայոց պատմության հազարամյակների ընթացքում պատահել է, որ Հայաստանը ամբողջովին կամ մասնակիորեն գրավել են Ասորեստանը, Իրանը, Հռոմը, արաբները, տարբեր թուրքական պետություններ... Բայց հետաքրքիր է, որ այդ՝ շուրջ երեք հազար տարիների ընթացքում չնայած այդ նվաճումների, Հայաստանի տարածքը մնում էր զգալիորեն հայալեզու, այն է՝ հայերով բնակեցված, թեեւ այլազգիների ներմուծումները աստիճանաբար ավելի ու ավելի էին շատանում:

Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ տարածաշրջանում հայտնվեց նոր խաղացող՝ Ռուսաստանը: Այն հայտնվեց այստեղ 18-րդ դարի սկզբում եւ եռանդաբար սկսեց «փրկել» քրիստոնյաներին: Արդեն 1722 թվականին դա իր վրա զգաց քրիստոնյա Վրաստանը, որը Ռուսաստանի եւ Իրանի հակամարտության ընթացքում ընդունեց նրա կողմը, բայց նեղ պահին սառնասրտորեն լքեց, իսկ շուտով գրավեց թուրքերի կողմից: 1783 թվականին Ռուսաստանը կատարեց վրացիներին «փրկելու» եւս մի քայլ. ստորագրվեց Գեորգիեւսկի դաշնագիրը, ըստ որի Վրաստանը անցնում էր Ռուսաստանի հովանավորության տակ, եւ նա պարտավորվում էր նրան պաշտպանել: Պաշտպանեց ամբողջ 4 տարի, մինչեւ որ Թուրքիայի ճնշման տակ դուրս բերեց իր զորքերը Վրաստանից (բնականաբար՝ գտնելով դրա համար իրավաբանական հիմքեր): Փրկության հաջորդ արարը սկսվեց 1800 թվականին, եւ շուտով, չնայած վրաց թագավորական հարստության պահպանման

խոստումի, Վրաստանը որպես պետություն վերացվեց եւ միացվեց ռուսական կայսրությանը՝ հերթական գավառի կարգավիճակով (այս է՝ բռնակցվեց):

Իսկ սկսած 1805 թվականից, երբ ստորագրվեց Քյուրաքչայի պայմանագիրը, Ռուսաստանի «հովանավորության» պտուղները սկսեցին զգալ նաեւ Արցախում: Թեեւ հայ մեյիքները ակնկալում էին, որ «քրիստոնյա» Ռուսաստանի կազմում իրենց վիճակը կբարելավվի, եղավ ճիշտ հակառակը, քանի որ Ռուսաստանը նախընտրեց գործ ունենալ մահմեդական կառավարիչների հետ եւ դարձավ հենց իրենց հովանավորը: Արդյունքը եղավ Արցախի զգալի հայաթափումը: Բնականաբար կրկին գտնվեցին նման քաղաքականության հիմնավորումներ: Իսկ Թուրքմենչայի պայմանագրից հետո եւ Երեւանի ու Նախիջեւանի «խանությունների» նվաճումից հետո նույն քաղաքականությունը տարածվեց նաեւ այս հողերում: Բացի այդ՝ մտրակի, կարկանդակի եւ քարոզչության գործադրմամբ կազմակերպվեցին հայ բնակչության կամավոր-ստիպողական տեղահանություններ Վրաստան եւ Ռուսաստանի խորքը, որի արդյունքում հայաթափվեցին Արարատյան դաշտի եւ Արցախի զգալի քանակությամբ տարածքներ, ուր հետո բնակեցվեցին Պարսկահայքից տեղահանված հայերը (ինչը հետո թույլ տվեց թուրք գաղափարախոսներին պնդել, որ «հայերը այստեղ եկվոր են»): Իսկ Նախիջեւանը եւ Պարսկահայքը (կրկին՝ ոչ առանց Ռուսաստանի միջամտության) վերջնականապես հայաթափվեցին արդեն Երկրորդ Աշխարհամարտից հետո:

Հայերի «փրկության» հաջորդ դրվագը կապված է ռուս-թուրքական պատերազմների հետ, որոնց ընթացքում հայ կամավորականները, որոնք չէին սերտել ինչ վրացիների, ինչ արցախահայության դառը փորձը, դարձան սեփական ոյլուրահավատության պատանդը եւ թնդանոթի միս՝ ռուսական բանակի համար, որը պարբերաբար գրավում էր Արեւմտյան Հայաստանի ընդարձակ տարածքներ, եւ ապա՝ հերթական խաղաղ դաշնագրից հետո նահանջում էր, թողնելով հայերին զայրացած թուրքերի եւ քրդերի ձեռքում: Այսինքն հենց հայերն էին օգնում Ռուսաստանին, եւ ոչ թե՛ հակառակը (այդ մասին տես, մասնավորապես՝ Donald Bloxham, The Armenian Genocide of 1915-1916..., էջ 158—159): Հայերի «փրկության» գագաթնակետը դարձավ Առաջին Աշխարհամարտը, երբ հերթական անգամ ոտքը դնելով նույն փոցիսի վրա հայերը աջակցեցին ռուսներին, բայց այս անգամ արդեն կանխավ ենթարկվեցին ցեղասպանության, իսկ «միեիչ ուշացած» Ռուսաստանը կրկին գրավեց պատմական Հայաստանի զգալի մասը եւ ապա հերթական անգամ իր նահանջող բանակի հետ մեծահոգաբար հեռացրեց ցեղասպանությունից եւ ռազմական գործողություններից հետո մնացած հայ բնակչությանը: Փրկեց այսինքն: Եւ այս կարգի դրվագները բազմաթիվ են:

Այդ շարքում վերջիններից էր (հուսով եմ) «Կուցո» գործողությունը՝ ԽՍՀՄ-ի վերջին օրերին, որի արդյունքում ռուսական զորքը հայաթափեց Յուսիսային Արցախի հատ ու կենտ մնացած հայկական գյուղերը:

Այս պահին Հայաստանը փաստացիորեն բաժանված է երեք «ազգային» պետությունների՝ Թուրքիայի, Իրանի եւ Ռուսաստանի միջեւ, եւ վերջինի փաստացի վերահսկողության տակ է գտնվում Հայաստանի Հանրապետությունը, որը նշված հաղորդման մեջ մասնակից երեք ռուս փրկիչ «ոյուցագուկները» առաջարկում էին *«խեղդել արյան մեջ»*, «... կրելով հայոց պետականության պահպանման երաշխիքների ծանր բեռը»: Չէ որ «Հայաստանն այսօրվա տեսքով առաջացել է միայն Ռուսաստանի շնորհիվ եւ շարունակում է գոյություն պահպանել իր շնորհիվ»: Այսպիսին է մեր դաշնակցի վերաբերմունքը մեր նկատմամբ: Դա փաստ է, որը մեր նկատմամբ տարվող ռուսական քաղաքականության հիմքում է:

Այս կապակցությամբ կարելի է լսել այսպիսի դատողություն. տեսնք, հայոց երկրի այդ երեք հատվածներից միայն ռուսական մասում են դեռ պահպանվել հայեր, հետեւապես, Ռուսաստանն ապահովել է հայերի անվտանգությունն իր տարածքում: Ցավոք այդ եզրակացությունը շատ մակերեսային է: Եւ ոչ միայն այն պատճառով, որ մինչեւ Ռուսաստանի այստեղ հայտնվելը հայ ազգը կարողանում էր ինքնուրույն (լավ թե՛ վատ) հոգալ սեփական անվտանգության հարցերը: Փորձենք կատարել այսպիսի մի մտավոր գիտափորձ: Ունենք ջրատարածք, որը պետք է ցամաքեցնել: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել ջրի մի արտահոսք՝ որեւէ առվի կամ պոմպի միջոցով: Հարց. ջրատարածքի ղր մասում մինչեւ վերջնական ցամաքումը դեռ մնալու է ջրի որոշ քանակ: Բնականաբար՝ ջրահեռացման անցքի անմիջական հարեւանությամբ: Մեր դեպքում պատմական Հայաստանի տարածքից հայ բնակչության «արտամղման» անցքը գտնվում է հենց Հայաստանի Հանրապետությունում (այսօր, շրջափակման պայմաններում, այդ դեր կատարում է Չվարթնոց օդանավակայանը): Եւ դեռ այսօր ռուսական աջակցությամբ ամբողջական հայ ընտանիքներ մեկնում են Երեւանից «Հայրենակիցներ» ծրագրի շրջանակներում: Կասեք, թե այդ ծրագիրը գործում է ղի միայն Հայաստանում: Իսկ ես հակառակը չեմ էլ պնդում, բայց դա լին է փոխում:

Հատկապես, որ մեր ազգի դեպքում այս մոտեցումը ունի նաեւ նախապատմություն: Հայ ազգի միակ «փրկիչ» գաղփարախոսները չեն սիրում հիշել Ռուսաստանի արտագործնախարար, Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկու խոսքերը. *«Մեզ Հայաստանը պետք է առանց հայերի»*: Իսկ մեկ այլ նշանավոր պաշտոնյա՝ Կովկասի կառավարչապետ Գ. Ս. Գոլիցինը ասել է. *«Կհասնեմ նրան, որ միակ հայը թիֆլիսում կլինի հայի խորտվիլակը թիֆլիսի թանգարանում»*: Հետաքրքիր է,

որ Պարույր Սեւակն այս արտահայտությունը գործածել է թուրքերի գործած ցեղասպանության կիրառությամբ, մինչդեռ, ինչպես տեսնում ենք, թուրք դահիճը սոսկ ռուս գեներալի երազանքն է իրականացրել: Իհարկե, կարելի է առարկել, որ ռուս գեներալը գուցե նկատի չուներ հայերի ֆիզիկական ոչնչացումը, այլ ցանկություն ուներ պարզապես աքսորելու հայերին, ասենք, Սիբիր... Եթե այդ գաղափարախոսների համար այս մեկնությունը միախառնվում է, թող այդպես լինի...

Կան նաև կարծիքներ, թե ռուսները նման մտքեր երբեք չեն արտահայտել, այլ դա իրենց վերագրել են ռուսների եւ հայերի միջեւ թշնամանք սերմանողները. այսինքն փիս լրտեսները... Գուցե: Բայց ինչո՞ւ այդ դեպքում, հենց այդպես էլ եղավ, եւ Հայաստանում ռուսների հայտնվելուց հետո իրոք հայաթափվեց հայոց բնօրրանի 90 տոկոսը: Կրկին կարող են առարկել, թե *«տվյալ բանից հետո, չի նշանակում այդ բանի հետեւանքով»*: Եւ կրկին. եթե դա իրենց միախառնում է, թող հավատան...

Եւ ամենակարեւոր հարցը. ի՞նչ էր դա տալիս ռուսներին: Կարելի է բազմաթիվ բացատրություններ առաջարկել: Բայց մի բանը հաստատ է. Ռուսաստանը, որը որպես կայսրություն ձգտում էր դուրս գալ Միջերկրական ծով եւ Պարսից ծոց իր նպատակին չհասավ, հետեւապես կարելի է ենթադրել, որ պատճառներից մեկը (ըստ իս՝ հիմնականը), եղավ այն, որ ռուսը չհասկացավ, որ *«Վաստոկ դելո տոնկոե»*, եւ սխալվեց դաշնակցի ընտրության հարցում:

Իհարկե, կարելի է պնդել նաեւ, որ եթե այսօրվա Թուրքիայի տեղում լինեւր Մեծ Հայք՝ Կիլիկիայով եւ Ծիրվանով հանդերձ, դեռ ակնհայտ չէ, որ այդ ուժեղ Հայաստանը Ռուսաստանի դաշնակիցը կլինեւր: Պատմությունը պայմանական եղանակ չի ճանաչում, բայց եթե նույնիսկ ռուսների վերջին երկու դարերի դավաճանությունների այն շարանից հետո, որից կազմված է հայ-ռուսական «բարեկամությունը», հայերը դեռ հավատում են ռուսներին եւ չեն դավաճանում նրանց, կարելի է վստահ լինել, որ այդ Հայաստանը առնվազն *հավասարակշռված* քաղաքականություն կվարեր Ռուսաստանի հետ:

Ռուսաստանը կփրկվի Հայաստանի շնորհիվ

Կարող է հարց առաջանալ. իսկ ինչի՞ համար եմ ես սա գրում: Հատկապես, որ այս կարգի բան գրելով ես անձնապես միայն տուժում եմ: Պատճառները մի բանիսն են:

Նախ շեշտեմ, որ այս գրվածքը նպատակ չունի հակառուսական տրամադրություններ հարուցելու. ես միայն ուզում եմ, որ մենք սթափ նայենք իրականությանը: Ավելին, ես դատապարտում եմ բոլոր նրանց, ովքեր այսօր խոսում են հակառուսական դիրքերից. մեր վիճակում հզորագույն ուժին

բացահայտ հակադրվելը ինքնասպանություն է: Բնական է, որ շատերին նույնիսկ փաստերի շարադրանքը կարող է հակառուսական քարոզչություն թվալ, բայց այդպիսին են փաստերը. պետք է կարողանալ զանազանել փաստերի անաչառ վերլուծությունը եւ քարոզչությունը: Տվյալ դեպքում շարադրված տեղեկությունները կեղծ չեն եւ վերցված են բաց եւ վերստուգելի (թեեւ, որպես կանոն անտեսվող) աղբյուրներից, իսկ գործընկերները (առավել եւս՝ դաշնակիցները) պետք է իրար լավ ճանաչեն: Քաղաքականության մեջ կեղծ ամոթխածությունը կարող է միայն խանգարել: Հակառակ դրա, իրականության անաչառ ներկայացումը կարող է օգնել առողջ, հավասարազոր հարաբերությունների հաստատմանը, մինչդեռ այսօր ռուսը հայի համար «փրկիչ» է, իսկ հայը ռուսի համար «()»։ չբացեմ փակագծերը. բոլորս գիտենք, ինչ մակդիրներ են գործածվում մեր հայցեին: Եւ առհասարակ, այսօր քաղաքագիտական վերլուծությունները հաճախ սահմանափակվում են տվյալ պահի՝ ժամերի, լավագույն դեպքում՝ օրերի ընդգրկմամբ, մինչդեռ ժամանակային այդ սահմաններում դրանք վերածվում են լրատվական կարծրատիպերի կրկնման: Այո, հեռու տանող դատողությունները կարող են սխալ լինել, միամիտ լինել, բայց դրանք պիտի լինեն. միայն դատողությունների մրցակցությունը եւ փոխհարստացումը կարող է խնդրի լուծման հանգեցնել: Եւ աշխարհը նույնպես պետք է տեսնի, որ Հայաստանը տարբերակներ է քննարկում:

Երկրորդը. որքան էլ անիմաստ է թվում մեծ տերությանը մատնանշել իր շահը, բայց փորձ անել պետք է. մեկ էլ տեսար ու երկու հարյուր տարի անց հասկացան: Դա փրկության խնդրանք չէ, ոչ էլ ավելի հավատարիմ «ֆորպոստ» լինելու խոստում, այլ գործարքի առաջարկ, օֆերտա. Ռուսաստանը պետք է հասկանա, որ ինչպես եւ երկու դար առաջ Հարավային Կովկասում մեկ դաշնակից ունի եւ դա Հայաստանն է: Ավելին, այսօր վիճակն այլ է, քան մեկ դար առաջ. այս պահին Հայաստանը Ռուսաստանի համար արդեն ոչ միայն տարածաշրջանի միակ դաշնակիցն է, այլեւ *միակ փրկությունը*, եթե, իհարկե, Ռուսաստանը չի ուզում իսպառ կորցնել ազդեցությունն այս տարածաշրջանում: Այո, պատկերացրեք. Հայաստանը կարող է փրկել Ռուսաստանին, փրկել նրա կայսերական նկրտումները: Բայց անհնար է փրկել մեկին, ով չի ուզում փրկվել: Եւ դժվար է փոխել դարավոր ավանդույթները եւ նախապատվությունները: Այսօր Ռուսաստանը շարունակելով 19-րդ, 20-րդ դարի իր ավանդական քաղաքականությունը, ուզում է (դա միայն կոչյրը չի տեսնում) կաշառել թուրքերին, նպաստելով նրանց կողմից նորանոր հայկական հողերի գրավմանը: Սակայն Ռուսաստանի երկդարյա այս «մյունխենականությունը» արդեն ապացուցել է իր սնանկությունը: Հակառակ դրա, բավական է ռուսները նպաստեն, որ հայերը վերահաստատվեն իրենց հայրենիքի գոնե մի չնչին

մասում՝ Կուր-Արաքսյան միջագետքում՝ 70 հազ. քկմ տարածքով (իսկ հիմա դրա առիթը կա), եւ դրա արդյունքում ինքնաբար կապահովվի ռուսական վերահսկողությունը նաեւ Շիրվանի (միայն ու միայն այդ անվամբ) նկատմամբ: Դե, իսկ եթե Ռուսաստանը հրաժարվում է իրեն նետված փրկօղիկից Չայաստանը ազատ է իր պարտավորություններից մի երկրի հանդեպ, որի նկատմամբ սերը եղել է, ինչպես տեսանք վերելում, խիստ միակողմանի: Ինչ խոսք, մենք շատ երկար ենք հավատացել, սիրել, վստահել, զոհաբերվել հանուն Նրա. գուցե նույնիսկ ուշացել ենք, եւ փրկվելու այլ ուղիները կորած են, բայց կործանվել՝ հետեւելով ինքնասպանին, ամտություն է: Եւ սա պիտի դառնա մեր պետական քաղաքական սլաքը եւ վարդապետությունը:

Բնականաբար, դա պիտի ասվի ոչ թե երբեմնի «քաղաքական դիտորդի» բերանով, այլ երկրի քաղաքական ղեկավարության (եթե այն առհասարակ գոյություն ունի): Բնականաբար, ինչպես նշեցի հոդվածի սկզբում, Ռուսաստանից բացի կան նաեւ այլ «ազգային» գերտերություններ, վերջապես կա վերոհիշյալ զորեղ «խորքային պետությունը»: Բայց դա արդեն Ռուսաստանի գործն է, թե ինչպես է նա դրանց հետ կառուցելու իր հարաբերությունները: Եթե ուզում է մնալ Չարավային Կովկասում՝ պետք է լուծի այդ խնդիրը:

Իհարկե, դժվար է պատկերացնել, որ այս գաղափարը կհնչեցվի Չայաստանի ղեկավարության բերանով եւ հստակ կներկայացվեն մեր պատկերացումները Չարավային Կովկասի ապագայի վերաբերյալ: Դժվար է պատկերացնել նաեւ, որ այս միտքը կտեղավորվի Ռուսաստանի քաղաքական ղեկավարության գլխում (կրկին՝ եթե այդպիսին դեռ կա, եւ դեռ ամբողջովին չի կլանվել «խորքային պետության» կողմից):

Բայց, խնդրի դժվարությունը չի կարող պատճառ լինել, որ բանակցային ճակատում մեր դիվանագետները չգործեն այն սխրանքները, որոնք գործում են ռազմի դաշտում մեր զինվորները: Եւ փառք ասած՝ Բալկանների Նախադեպը աչքերիս առաջ է, եւ այն պիտի մեր հիմնական փաստարկը լինի այս օրերին:

29.10.2020

ԱՐՏԱՔԻՆՆԵՐՆ ՈՒ ՆԵՐՔԻՆՆԵՐԸ

*Ո՞վ էր որսորդը, հով էր որսը...
Ո՞վ համ ձեռքում էր սոսկ գնդակ...*

Մարինա Տվետայեւա

Դաշնակցի կոչը

Պատերազմի առաջին օրերին «արտաքին եւ ներքին բոլոր խաղացողներին» ուղղված Մոսկվայի կոչը բազմաթիվ մեկնաբանությունների արժանացավ. վերլուծողները փորձում էին կռահել, թե որոնք են «ներքինները», որոնք՝ «արտաքինները»: Գուցե «ներքին» են համարվել Մինսկի խմբի անդամները եւ «արտաքին»՝ մյուսները: Գուցե՝ խոսքը պատերազմող կողմերի եւ մնացած բոլորի մասին է: Եւ պարզ չեղավ, տվյալ հայտարարությամբ Մոսկվան ինքն իրեն այդ երկու խմբերից որին է դասում...

Սակայն փորձենք պատասխանել մի տիպի հարցի. երբ առհասարակ որեւէ երկուսի կռիվացում են ովքեր են «ներքինները», ովքեր՝ «արտաքինները»... Կռվողները, անշուշտ, «ներքին» են, կասեք, իսկ դիտողները՝ «արտաքին»:
Գուցե: Բայց կան նաեւ դրանց համար դրույթներ կատարածներ, եւ չկատարածներ... Համաձայնեք, որ նրանք, ովքեր, օրինակ, մասնակցում են այդ «գրազախաղին» կարող են «ներքին» համարվել, համեմատած նրանց հետ, ովքեր պարզապես «թամաշա» են անում...

Իսկ մեր դեպքում ովքեր են դրույթ կատարել: Այլ կերպ ասած, ովքեր են լինելու շահառուները, եւ հորն է լինելու պարգեւը: Առանց այս հարցերի պատասխանների անհնար է հասկանալ իրադարձությունների էությունը, ընթացքը, հեռանկարները: Սակայն խնդիրն այս դիրքից մանրամասն վերլուծելը, ասես, «տաբու» լինի: Եթե նույնիսկ այս մասին խոսվում է՝ սոսկ հպանցիկ... Գուցե այն պատճառով, որ տարբերակները բազմաթիվ են, եւ դրանց

բոլորի վերլուծումը անշնորհակալ գործ է թվում: Բայց, ըստ իս, ավելի հավանական է, որ դա հենց *խաղի* կանոններից է բխում...

Ի դեպ, Թուրքիան, ի վերջո, «ներքին» է, թե՛ ոչ: Փաստացիորեն, նա արդեն կռվի բացահայտ մասնակից է դարձել: Հետեւապես, որպես խաղադրույք կատարած կողմ, որը միջամտում է կռվին «մրցավարների» կողմից պետք է որ «որակազրկվեր»...

Մյուս կողմից, չմոռանանք, որ խաղադրույք կարելի է կատարել նաեւ *միջնորդի* միջոցով...

Դրդապատճառ եւ շահույթ

Եւ այսպիսով. ովքեր են դրդողները, շահառուները, դիտորդները, հորն է այն շահը, որի համար դրույքներ են կատարել, որոնք են հետապնդվող նպատակները: Սա հասկանալու համար պետք է կարողանալ տեսնել իրադարձությունները մեկ ամբողջության մեջ եւ չենթարկվել ապակողմնորոշիչ, կարծրատիպային պատկերացումներին:

Ամենատարածված կարծրատիպը

Մեծաթիվ մարդկանց, հաճախ նույնիսկ՝ վերլուծաբանների համար ամենատարածված, եթե չասենք՝ միակ դրդապատճառը *նավթն* է: ԽՍՀՄ-ի փլուզումից ի վեր այն գործածվում է հանրության դատողությունները սխալ ուղղությամբ տանելու համար: Ինչ խոսք, նավթը լուրջ առարկա է եւ հաճախ է քաղաքական որոշումների հիմքը դառնում: Սակայն մեր դեպքում նավթի հիշատակումը չի կարող ժպիտ չառաջացնել, քանի որ այն սոսկ շահագործում է անցած դարասկզբի վիճակը, երբ Ադրբեջանը իրոք աշխարհի սակավաթիվ նավթ արտադրողներից էր եւ նրա աշխարհաքաղաքական դերը հսկայական էր:

Սակայն հետագայում, երբ նավթը հայտնաբերվեց բազում այլ երկրներում, Բաքվի դերը կտրուկ նվազեց: Այսօր Ադրբեջանը, որքան էլ զարմանալի թվա, նավթի արտադրության տեսակետից ԳՐԵԹԵ նշանակություն չունեցող երկիր է: Ըստ նավթի պաշարների եւ արտադրության այն զբաղեցնում է 22—24-րդ տեղն աշխարհում, արտադրելով աշխարհի նավթի հազիվ մոտ 0.9%-ը: Եթե դրան հավելենք, որ նավթամուղերի վրա գործածվող չափիչ սարքերի ճշտությունը մոտավորապես նույն կարգի է, կամ նույնիսկ ավելի ցածր՝ 0.5%-ից — 1.5%, ապա պարզ կդառնա, որ նավթի համաշխարհային արտադրության տեսակետից Ադրբեջանը, ոչ միայն որեւէ հետաքրքրություն չի ներկայացնում, այլ, կարելի է ասել՝ գոյություն չունի: Ավելացնենք, որ էլ ավելի ողորմելի վիճակում է Ադրբեջանը գազի արտադրության տեսակետից, զբաղեցնելով 30-րդ տեղն աշխարհում եւ հազիվ բավարարելով սեփական պահանջները:

Իսկ Բաբու—Ձեյխան նավթամուղը: Ի սկզբանե ոչ մեկի համար գաղտնիք չէր, որ դա սոսկ աշխարհաքաղաքական ծրագիր է, քանի որ եթե դրանով տեղափոխվեր Նույնիսկ ամբողջ ադրբեջանական նավթը, այն կգործեր նախագծային հզորության հազիվ 50%-ի չափով, եւ անհրաժեշտ էր, որ նախագծին միանա նաեւ Ղազախստանը, որպեսզի նավթամուղն իրեն արդարացնի: Սակայն որպեսզի այս նավթամուղը հասներ նախագծային հզորության դրանով պիտի անցներ Ղազախստանի նավթի կեսը: Իսկ այսօր նավթամուղն աշխատում է նախագծային թողունակության հազիվ մի 20%-ով: Սակայն բավական էր, որ այն ծածկեր դրա վրա ծախսած ծախսերը, իսկ քաղաքական օգուտը դրա դժվար է թվայնացնել: Եւ հենց այդ նավթամուղն էլ բացահայտում է, թե որն է այս տարածաշրջանի արժեքը համաշխարհային քաղաքականության համար: Այդ արժեքը հենց ինքը տարածաշրջանն է, որը կարելի է վերահսկել այդ նավթամուղի պատրվակով: Տարածքը:

Տեղ եւ պահ

Մեր, հայերիս շրջանում տարածված է այն խոսքը, թե ԽՍՀՄ-ի փլուզումը սկսվեց Արցախյան շարժումից: Ասվում է դա զգալիորեն կատակով, քանի որ, թվում է, ինչպե՞ս կարող էր ԽՍՀՄ-ի պես հսկան տապալվել իր ամենափոքր բաղադրիչի ձեռքով: Իրոք, Հայաստանից, կամ առավել եւս՝ Արցախից ստացված հարվածի, թե տնտեսական եւ թե՛ քաղաքական քաշը պիտի որ մոծակի խայթոց լիներ ԽՍՀՄ-ի համար: Եւ որքան նման շարժումներ են ճնշվել դրա պատմության ընթացքում: Սակայն խնդիրը միայն ուժը չէ, այլեւ կետն ու պահը, որին այն կիրառվում է: «Տվեք ինձ հենման կետ...», ասել է Արխիմեդը: Նա ոչինչ չէր ասել պահի հաշվով, բայց քաղաքականության մեջ ժամանակային կոորդինատը ոչ պակաս կարեւոր է:

Հայակենտրոնություն. Տարիներ առաջ ես հրապարակել եմ մի հոդված, որն անվանել եմ *Հայակենտրոնություն (Armenocentrism)* (<http://tarumian.am/blog/?p=365>) Դրանում վերլուծված է Հայաստանի՝ Հին Աշխարհամասի երկրաչափական կենտրոնում գտնվելու փաստը (Հայաստանը դիտված է *Ընդհանուր Հայքի* կամ *Եռածովքի* ընդգրկմամբ՝ մոտ 0.5 միլիոն բառակուսի կիլոմետր տարածքով): Ես ցույց եմ տվել, որ մեր երկրի այդ դիրքը վճռորոշ նշանակություն ունի, քանի որ որեւէ տարածք վերահսկելու համար պետք է վերահսկողության տակ վերցնել նրա կենտրոնը: Եւ իրոք աշխարհակալ նկրտումներ դրսևորած կայսրությունները բոլոր դարերում ջանում էին իրենց վերահսկողության տակ վերցնել այս տարածքը՝ Բաբելոնից ու Մոնղոլներից, մինչեւ ԱՄՆ եւ Ռուսաստան: Եւ նկատելի է, որ այն երկրները, որոնք վերահսկել են Հայաստանը եղել են տվյալ դարաշրջանի գերտերությունները: Ավելին, դժվար չէ նկատել, որ աշխարհում տվյալ գերտերության ազդեցությունը համաչափ է

Եռածովքի տարածքի իր կողմից վերահսկվող մասնաբաժնին եւ յուրաքանչյուր տերություն սեփական նկրտումները ներկայացնում է զավթելով այդ տարածքի լրացուցիչ մասերը (տես հոդվածը): Հետեւապես, եթե մի ուժ հարված է հասցնում այս տարածաշրջանին, անում է դա համաշխարհային խնդիրներ հետապնդելով:

Պատմության պարբերականությունը. Ինչ վերաբերում է ուժի գործադրման պահին, ապա համակարգում որեւէ բան փոխելու ամենահարմար պահն այն է, երբ համակարգը հայտնվում է անկայունության վիճակում: Այդ պահին նույնիսկ փոքր ուժի գործադրմամբ կարող է լուրջ փոփոխություն կատարվել: Պատմության հեղափոխական կետերին ես անդադարձել եմ մի քանի հոդվածներում (*Եւրոպական քաղաքակրթության զագաթնաժամը՝ «Հայաստանի Հանրապետություն», 05, 1994, <http://tarumian.am/blog/?p=110>, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը եւ քաղաքակրթության օրինաչափությունները՝ «Կառավարում», 2, 2000, <http://tarumian.am/blog/?p=1556>*): Սրանցում ես ուշադրություն եմ դարձրել այն հանգամանքին, որ մի շարք պատճառներով քաղաքակրթությունը զարգանում է արագորեն կրճատվող եւ հեղափոխական իրադարձություններով սկզբնավորված փուլերով, որոնք սկզբնավորվում են տեղեկատվական նոր տեխնոլոգիաների գործադրմամբ, եւ որոնք ուղեկցվում են նաեւ գաղափարաբանական ցնցումներով: Մեզ հետաքրքրող հեղափոխական առավել մոտիկ կետերն էին անցած դարասկիզբը (ԽՍՀՄ-ի գոյացում), դարավերջը (ԽՍՀՄ-ի փլուզում), 2007—2011 (Համաշխարհային ճգնաժամ, Արաբական գարուն), 2016 (Բրեքզիտ):

Իսկ 2020-ը եղավ կապիտալիստական ինչպես նաեւ եւ այսպես կոչված հինգերորդ տեխնոլոգիական կացութաձեւերի սպառման եւ նոր կացութաձեւերի ձեւավորման, գուցե նաեւ՝ **դեգլոբալիզացիայի** սահմանագիծը: Եւ բացի պահի այդ մեծամասշտաբ դիտարկման կա եւ ավելի մասնավոր ճշտում, կապված մի քանի շաբաթ անց ԱՄՆ նախագահի կայանալիք ընտրության հետ: Ինչպես գիտենք, հենց վերոհիշյալ անցումային գործընթացների վրա ազդելու համար էր որպես ծխածածկույթ կազմակերպվել նաեւ ընթացող «թագավարակային» փսիխոզը:

Ճիշտ տեղում, ճիշտ պահին. Հին Աշխարհամասի կենտրոնի (կամ պարզապես՝ Կենտրոնի) առկա բաժանումը հաստատվեց Առաջին աշխարհամարտի արդյունքում ստեղծված տարածաշրջանային եւ համաշխարհային անկայունության արդյունքում: Այն ժամանակ Ռուսաստանը փորձում էր էլ ավելի մեծ հատված խլել Եռածովքից, դրանով հաստատելով իր համաշխարհային նկրտումները, սակայն չափազանց փոքր ծախսերով (համեմատած Աշխարհամարտի գնի հետ), այն է՝ Ռուսաստանում

հեղափոխություն հարուցելու միջոցով, Արեւմտյան տերություններին հաջողվեց ոչ միայն չեզոքացնել Ռուսաստանի նվաճումները, այլև խլել նրա նվաճածի մի մասը (Կարսի մարզը): Եւ բացի այդ հաջողվեց խաղից հանել Օսմանյան կայսրությունը, որպես պատմական ինքնուրույն ուժ. դրա տեղում գոյացած եւրոպականացված Թուրքիան դարձավ Արեւմուտքի կամակատարը (թեեւ՝ կամակոր): Եւ դրա դիմաց *Արեւմուտքը վճարեց Թուրքիային հայոց հողերով:*

Անկայունության հերթական կետը եղավ ԽՍՀՄ-ի փլուզումը, երբ Արեւմուտքին հաջողվեց Ռուսաստանի փաստացի վերահսկողությունից դուրս բերել այդ տարածքի եւս մի մասը, որը նա վերահսկում էր Վրաստանի միջոցով, եւ զգալի չափով նվազեցնել ազդեցությունն այն տարածքում, որը նա վերահսկում էր Ադրբեջանի միջոցով. դա արվեց նպաստելով Թուրքիայի ազդեցության աճին:

Ինչպես տեսնում ենք, ընթացող պատերազմը պետք է դիտել որպես համաշխարհային ուժերի ազդեցությունների հերթական վերածեման փորձ՝ կատարված առավել անկայունության պահին: Այսինքն՝ նվազագույն գնով (իրեն համար) առավելագույն արդյունքի հասնելու հաշվարկով:

Սակայն ղվ է այս անգամ նախաձեռնել այդ փորձը: Որո՞նք են իսկական խաղացողները, դրույթադրիչները (bettors), շահառուները:

Խաղացողները

Իրանը

Իրանին կարող ենք միարժեքորեն բացառել: Այն իհարկե, ինչպես ցանկացած երկիր դեպքերի բերումով իր ձեռքում հայտնվածը յուրացնելու առիթը բաց չի թողնի, բայց մենք գիտենք, որ սկսած այն պահից, երբ 2 դար առաջ Իրանը Ռուսաստանին զիջեց Ընդհանուր Հայքի իր հատվածի զգալի մասը (որն իր ազդեցության տակ էր դեռեւս Դ դարից, երբ Հայքը բաժանվել էր Արեւմտյան (Հռոմ, Բյուզանդիա, ապա՝ Օսմանյան կայսրություն) եւ Արեւելյան կայսրությունների միջեւ), այն ժամանակից ի վեր Իրանը դեռեւս նախընտրում է պահպանել status quo-ն եւ գրեթե չի մասնակցում Հին Աշխարհամասի Կենտրոնի վերածեմանը եւ այդ ընթացքում հիմնական դերակատարները Հյուսիսային եւ Արեւմտյան կայսրություններն են:

Թուրքիան

Ինչպես ասվեց, սկսած անցած դարասկզբից, Արեւմտյան կայսրությունն իր ազդեցությունը իրագործում էր Ե Թուրքիայի միջոցով, որը սակայն ժամանակ առ ժամանակ կամակորաբար փորձում էր սեփական խաղը խաղալ, այն է՝ անկախանալ Արեւմտյան կայսրությունից եւ ինքնուրույն տիրել

քաղաքակրթական Կենտրոնին, դառնալով այն կիսող աշխարհի երեք (իսկ հետո էլ, ո՞վ գիտի, գուցե՝ երկու՝ եթե հաջողվի դուրս մղել Ռուսաստանին) գերտերություններից մեկը, ինչպես դարեր առաջ: Անշուշտ, ժամանակները փոխվել են, եւ համաշխարհային տնտեսության զարգացման այսօրվա վիճակը, երբ մայր ցամաքի կենտրոնամետ տարածությունը պարզապես չի կարող ապահովել այն ներուժը, որը հնարավորություն կտա մրցելու լայնատարած գերտերությունների հետ: Սակայն այդ ցանկությունը շատ գայթակղիչ է, եւ թուրքիան փորձում է դա անել:

Անշուշտ իրեն բնորոշ գործելակերպին հարազատ, թուրքիան սկզբնապես դա կաներ, առերես պահպանելով որոշակի հնազանդություն Արեւմուտքից, այն հույսով, որ աշխարհի գալիք հնարավոր դեգրեյալիզացիայից, այն է՝ տեղական կայսրությունների գոյացումից հետո նա կդառնա դրանցից մեկը: Չի բացառվում նաեւ, որ ինչ-որ ուժեր նրան տվել են այդ խոստումը, այլապես տարօրինակ է նրա կամակորոշության ընթացիկ «նուպան»: Այն բացահայտ դարձավ արդեն այն պահին, երբ թուրքիան անցավ նախագահական (այն է՝ կիսա-միապետական) կառավարման ձեւին: (Փակագծերում նկատենք, որ նույն ժամանակ Հայաստանը հրաժարվելով նախագահական կառավարումից ըստ էության հրաժարվեց նաեւ անկախության մի զգալի աստիճանից: Ինչ խոսք, այդ պահին անկախությունից արդեն քիչ բան էր մնացել, եւ այդ անցմամբ դա, պարզապես, ձեւակերպում ստացավ):

Արեւմուտքը

Արեւմուտքի (ՆԱՏՈ-ի) խնդիրն է այս պատերազմում ավարտին հասցնել թուրքիայի միջոցով Ռուսաստանի դուրս մղումը Հարավային Կովկասից, կամ գոնե նրա ազդեցությունը էլ ավելի նվազեցնել: Բայց թուրքիան, կարծես թե անցավ կամակորոշության բոլոր սահմանները, այնպես որ, Արեւմուտքը նույնիսկ եթե շատ չխանգարի թուրքիային այս պատերազմում, սակայն միշտ հետեւելու է աչքերը չորս արած: Թերեւս այստեղից է գալիս արեւմուտքի աննախադեպ հայանպաստ հռետորաբանությունը, թեւեւ *ոչնչի չպարտավորեցնող*. թող «մավր» թուրքիան անի իր գործը, եւ շնորհիվ Արցախյան պատերազմում կատարած իր հովանավորչական դերի վերացնի Ադրբեջանի վերջին կապերը Ռուսաստանի հետ, հետո արդեն կարելի է զբաղվել թուրքիայով (թեւեւ պարզ չէ. արագորեն փոխվող աշխարհում ժամանակ կմնա՞ դրա համար):

Ռուսաստանը

Ռուսաստանի նպատակը, բնականաբար հակառակն է. վերականգնել ազդեցությունը Արաքսի ողջ երկայնքով: 1994-ին Տեր-Պետրոսյանն ու Գեյդար Ալիևը, թե՛ Հյուսիսի, թե՛ Արեւմուտքի համար մեծ գլխացավանք ստեղծեցին.

«Երրորդ ուժի բացառման սկզբունքով» հրադադարի հաստատումը եւ այն քառորդ դար հետեւողականությամբ պահպանելը իսպառ զրկեց նրանց «խաղաղարարների» պատրվակով վերահսկողության տակ վերցնել երկու երկրները: Ճիշտ է Հայաստանի հաջորդ երկու ղեկավարների օրոք հաջողվեց նրա անկախության աստիճանը հասցնել Ռուսաստանի մի շարքային մարզի աստիճանի, բայց եթե տվյալ տարածքում չկան քո ցամաքային ուժերը, որքան էլ այն բեզ հնազանդ լինի, այն քոնը չէ (Սիդ Մեյերը դա հանճարեղորեն է արձանագրել իր Civilization-ում):

Սակայն «Թավշյայից» հետո սկսեցին նկատվել Հայաստանի փորձերը հավասարակշռելու հարաբերությունները Արեւմուտքի եւ Հյուսիսի հետ, ինչը վերջինի տեսակետից պարզ անհնազանդություն է դիտվում: Իսկ ներկայիս պատերազմը *cui prodest?* Հայերից բացի բոլորին էլ, իհարկե, *prodest*: Բայց առավելապես՝ Ռուսաստանին՝ շնորհիվ ՀԱԲԿ-ի գոյության: Մնում է միայն դիմեն եւ կարելի է «օգնել»: Երկու կողմերին էլ (թերեւս, մի երեք օր էլ «ուշանալով»): Ու մնալ: Եւ էլ չես հանի: Ահա թե ինչու է Ռուսաստանը հիշել, որ որպես Միսսկի խմբի անդամ պետք է չեզոք լինի. երբ ծուկ ես որսում, պետք է սպասել, որ կառքը ամուր խրվի որսի մսի մեջ: Արեւմուտքը նման պատրվակ չունի: Ահա թե ինչու է նրա լեզուն քաղցրացել: Եւ նույն Միսսկի խմբի անդամ Ֆրանսիան Ռուսաստանի պես նրբանկատ չէ: Բայց Ռուսաստանը մոռացել է, որ ի տարբերություն Ադրբեջանի Հայաստանը, կարծես թե, ՀԱԲԿ-ի շրջանակներում իր ռազմական դաշնակիցն է, իսկ երբ դաշնակցիդ եւ նրա թշնամու միջեւ հավասարության նշան ես դնում, դա, մեղմ ասած, գեղեցիկ չէ:

Իսկ «չեզոք» լինելու համար Ռուսաստանը նաեւ մեկ այլ պատճառ ունի: Ինչպես ասվեց, կապիտալիզմի համակարգային ճգնաժամի եւ աշխարհի հնարավոր մասնատման պայմաններում անհրաժեշտ է հնարավորինս մեծ տարածք վերահսկել, գոնե մի կես միլիարդ բնակչությամբ՝ սեփական տարածաշրջանային շուկա կազմելու համար: Նման շուկա կարող է ունենալ ԱՄՆ-ը՝ Հյուսիսային Ամերիկայի շրջանակներում, Միացյալ Եւրոպան, Հնդկաստանի ու Չինաստանի մասին չենք էլ խոսում: Իսկ Ռուսաստանը իր 145 միլիոնով առանձին շուկայի չի ձգում (հատկապես Ուկրաինայի կորստից հետո), ուրեմն ստիպված է լինելու «սոսնձվել» մեկ այլ շուկայի, թերեւս նույն Եւրոպային, եւ ամենեւին ոչ առաջատարի դերում: Գերմանիայի կողքին ԽՍՀՄ-ի ներուժը վատնած Ռուսաստանը չի դիտվում: Սակայն եթե հաջողվի ձեւավորվող ԵԱՏՄ-ի կազմում ներգրավել մի քանի երկրորդական, բայց քիչ թե շատ զարգացած եւ մարդաշատ երկրների, կարող է եւ ստացվել: Դրանցից մեկի դերում ռուս գաղափարաբաններից ոմանք տեսնում են հենց Թուրքիային: Պատկերացնո՞ւմ եք. Թուրքիան՝ ԵԱՏՄ-ում, հենց այնտեղ, ուր արդեն Հայաստանն է: Ճակատագրի

ինչպիսիք հեգնանք: Բայց առանց նույնիսկ այսպիսի հեռու գնացող ծրագրերի էլ «Թուրքական հոսքի» եւ «պոմիդորների» գոյության փաստը բավական է, որ Ռուսաստանին դրդի «չեզոքության»: Եւ, ինչ խոսք, նաեւ այն հաշվարկով, թե «куда они денутся» (մենք, այսինքն):

Ու եւս մեկը

Ստացվում է, որ Կենտրոնը վերածեւելու նախաձեռնությունը սպասելի է նշված գրեթե բոլոր ուժերից. Արեւմուտքից, Զյուսիսից ու նախ եւ առաջ՝ Թուրքիայից: Բայց արդյո՞ք հենց սրանցից մեկն է ինքնուրույն հրահրել այս պատերազմը: Ամենայն հավանականությամբ՝ ոչ: Եւ ահա թե ինչու: Ուշադիր հայացքով նկատելի է, որ սրանք բոլորն էլ ներկա փուլում ինքնուրույն խաղացողներ չեն: Սրանք թվում են ինքնուրույն, քանի որ նախորդ ժամանակների ինքնուրույն ուժերի ժառանգորդներ են: Սակայն կապիտալիզմի զարգացման ընթացքում ձեւավորվել է, իսկ դրա ներկայիս ճգնաժամի արդյունքում գլուխ է բարձրացրել մեկ այլ ուժ, որը հիմա կարողանում է իր կամքը թելադրել ավանդական ուժերին: Սա հենց այն ուժն է, որը հավակնում է ժառանգել դասական ազգային ուժերին՝ Աշխարհի ապագա կառավարման գործում:

Եւ իրոք, այսօր ամենատարբեր երկրներում նկատվում են երեւոյթներ կամ խնդիրներ (հաճախ՝ մի քանիսում՝ միաժամանակ), որոնց սակայն այդ «դասական» ազգային պետությունները լուծում չեն տալիս: Ոչ թե անհաջողության են մատնվում դրանք լուծելիս, այլ առհասարակ ոչինչ չեն ձեռնարկում. ասես, անտեսանելի մեկը արգելում է դրանք լուծել, եւ պետությունների ղեկավարները սոսկ մատնանշում են դրանց լուծման անհրաժեշտությունը: Սա հուշում է, որ նրանք չունեն նման խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ լիազորություններ եւ/կամ պատասխանատվության զգացողություն կամ կարողություն: Այդպիսին էին «Արաբական գարունը» որը միաժամանակ սկսվեց մի շարք արաբական երկրներում, դրա շարունակությունը դարձած «Իսլամական պետության» ձեւավորումը՝ մի քանի երկրներում միաժամանակ, նոր «Ժողովուրդների մեծ վերաբնակեցումը» կամ «միգրացիոն ճգնաժամը», «միջին դասակարգի» հետեւողական վերացումը բոլոր երկրներում, դեռեւս շարունակվող «թագավարակային» փսիխոզը, որն ընդգրկել է գրեթե ամբողջ աշխարհը, եւ միտում չունի դադարելու... Սրանք միայն մի քանիսն են այդ շարքից:

Այդ ուժը (որը ԱՄՆ-ը նախագահին անվանեց «խորքային պետություն») դրսեւորվում է նաեւ գործընթացներով, որոնց արդյունքում խախտվում է երկրների կառավարումը, եւ դրանցում կամ դադարում է իշխանության բնական թարմացման ընթացքը եւ երկրի ղեկին տասնամյակներ շարունակ մնում են

միեւնույն «հավերժական», իբր «ընտրված» դեմքեր, ինչպես Մերկելը՝ Գերմանիայում, Պոլտինը՝ Ռուսաստանում, Էրդոգանը՝ Թուրքիայում, Նեթանյահուն՝ Իսրայելում, Ալիեւը՝ Ադրբեջանում, որոնք դառնում են հենց այդ խնդիրների «չլուծվելու» երաշխավորները: Կամ՝ մյուս ծայրահեղությունը՝ երբ պետությունը վերանում է առհասարակ, ինչպես Լիբիայում, Սոմալիում, Եմենում, կամ՝ երկուսը՝ մեկում, ինչպես Սիրիայում, ուր երկրի բազմամյա ղեկավարը չի վերահսկում դրա ամբողջ տարածքը, իսկ դրա զգալի հատվածին տիրում են ավազակների խմբեր: Այսպիսի տարածքում նույնպես որեւէ խնդիր հնարավոր չէ լուծել: Նաեւ կան երկրներ, որոնցում պետական մեքենայի աշխատանքը ձեւականորեն պահպանվում է, իրար են հաջորդում նորանոր «ընտրված» ղեկավարներ, ինչպես Ֆրանսիան, Իտալիան, Շվեդիան, Վրաստանը, սակայն այդ երկրների «խելամիտ» ղեկավարները լավ են ճանաչում այն գիծը, որտեղ ավարտվում են իրենց լիազորությունները: Ի դեպ, Հայաստանը պատկանում է երկրների հենց այս վերջին խմբին: Մի պահ թվում էր, որ այն կարող է հայտնվել առաջին խմբում, սակայն «Թավշյան» վերադարձրեց մեզ երրորդ խումբ:

Եւ կարելի է վստահ լինել, որ ընթացող պատերազմի հրահրողը հենց այդ աներեւույթ ուժն է, իսկ երեւացող խաղացողները «ներքին» համարվեն, թե «արտաքին» եւ ինչ էլ այդ պիտակների տակ հասկացվի, սոսկ *այդ ուժի կատարածուններն են*: Այդ ուժը կարելի է նմանեցնել վիրուսի, որը ներթափանցել է ազգային պետությունների կառավարման օղակներ, եւ փոխարինելով այդ երկրների գաղափարաբանական եւ իշխանության վերարտադրման ավանդական, բնական մեխանիզմները, այժմ վերարտադրում է ինքն իրեն, եւ իր գաղափարաբանությունը այն է՝ այդ պետությունների անունից իրագործում է սեփական նպատակները:

Դա իհարկե, պարտադրաբար չի նշանակում, որ երեւացող ավանդական ուժերը անբուժելի են, կամ, առավել եւս, արդեն իսկ գոյություն չունեն (թեեւ դա էլ չի բացառված), եւ հնարավոր է, որ դրանց իմմունային, պաշտպանիչ ուժերը դեռ փորձելու են գոնե որոշ չափով սեփական խաղը խաղալ, քանի որ եթե դրանք դեռ կան, ուրեմն ունեն եւ սեփական՝ ավանդական ազգային շահեր, որոնց մասին վերելում խոսվեց: Սակայն փորձել հաշվարկել ապագա զարգացումները ելնելով միայն այդ շահերի վերլուծությունից՝ լավատեսական միամտությունը. քանի որ դրանց ներդրումը կատարվող իրադարձություններում սահմանափակ է: Միևնույն վերլուծողները հաճախ ենք զարմանում, թե ինչու այս կամ այն երկիրը անում է քայլեր, որոնք, թվում է, թե չեն բխում այդ երկրի ազգային շահերից:

Յեռանկարներ

Դատելով վերոշարադրյալից, այդ ուժի աշխարհաբաղաբական հիմնական նպատակը նույնպես Յին Աշխարհամասի կենտրոնի վրա իր ազդեցությունը տարածելն է, սակայն ոչ թե այս կամ այն ազգային ուժի տեսքով, այլ քայքայելով բոլոր տեսակի ազգային ուժերն ու դրանց ներկայությունը, եւ սեփական ազդեցությունը տարածելով ամբողջ Կենտրոնի վրա: Իսկ դրա միջոցներից մեկը կարող է լինել նաեւ այս տարածքի «սիրիացումը», կամ, եթե կուզեք՝ «սոմալիացումը»: Այլ հարց է, որ դատելով մյուս օրինակներից սիրիացումը բնորոշ է անապատային, ցածր խտությամբ եւ ազգային կամ ցեղա-կլանային տեսակետից խայտաբղետ երկրներին եւ ամենայն հավանականությամբ մեզ մոտ այն չի հաջողվի: Սակայն դա չի կարող բացառել տարբերակը, որ վերոհիշյալ ուժը այնուհանդերձ կփորձի իրականացնել այդ տարբերակը՝ հաստատելով տարածաշրջանում մշտական խառնակություն (turbulence), պղտոր ջուր, որում կարելի է ցանկացած ծուկ որսալ: Իսկ հաշվի առնելով, որ դա Կենտրոնն է, հեռանկարում դա կնշանակի այն վերահսկող առկա բոլոր ազգային տերությունների այն է՝ Ռուսաստանի, ՆԱՏՈ-ի (ԱՄՆ, Եվրոպական պետություններ), համաշխարհային քաղաքականության վրա ազդեցության սահմանափակում: Այսինքն փոքրիկ Արցախին հասցված հարվածը իրոք կարող է աշխարհացունց հետեւանքներ ունենալ:

Մինչդեռ այսօր համապատասխան երկրների ղեկավարներն ու ներկայացուցիչները ԳՐԵԹԵ չունեն սեփական կամքի ազատություն եւ «Մինսկի խմբի» երկրների «ղեկավարները» չեն որոշի ոչինչ, ինչը նախապես հաստատված չի «վերելում»՝ այդ պաշտոններում իրենց նշանակած ուժի կողմից. սեփական երկրների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, կամ Ֆրանսիայի շահերը իրենց չեն հետաքրքրում: Յենց դրա արտահայտությունն է այն, որ այսքան «մանրացել» են երկրների ղեկավարները, որպես անհատներ: Անհամեմատելի են Օբաման կամ Թրամպը (Բայդենի մասին էլ չխոսենք)՝ Ռուզվելտի կամ Քեննեդիի հետ, Մերկելը՝ Ադենաուերի, Մակրոնը՝ դը Գոլի, Պուտինը՝ Ստալինի: Սրանցից ոչ մեկը չունի այն իրական լիազորությունները, որոնք ընձեռնված են իրենց համապատասխան երկրների սահմանադրությամբ, եւ իրենցից սպասել որեւէ ինքնուրույն վճռական քայլ՝ միամտություն է: Ավելին, մեր օրերում երկրի ղեկավարի դիրքին չեն էլ կարող հասնել ինքնուրույն, բանիմաց եւ պատասխանատու անձինք. նրանց թեկնածությունները մաղվում են իրենց պաշտոնաճի հենց վաղ փուլում: Դա է պատճառը, որ «խաղաղասիրական» բարի կոչերից այն կողմ այսօրվա «առաջնորդները» ընդունակ չեն որեւէ այլ բանի. չունեն դրա լիազորությունները: Յո չէն նշանակվել իրենց պաշտոններում, որ ինքնուրույն գործեն:

Եւ ամենակարեւորը

Վերջին օրերին հաճախ են ասում, որ Հայաստանը մղում է քաղաքակրթական պայթյար, ակնարկելով սիրիացի ահաբեկիչների մասնակցությունը այս պատերազմում: Շատերի մոտ հույս կա, որ եթե «միջազգային հանրությունը» ճանաչի մեր երկիրը, որպես այդ պայթարի դրոշակակիր, դա կապահովի այդ «հանրության» աջակցությունը: Բայց դա շատ խախուտ եւ վտանգավոր ուղի է: Հարցը այստեղ բերվող ահաբեկիչները չեն. ահաբեկիչներ կարելի է «դաստիարակել» նաեւ տեղում. ի վերջո Սիրիա դրանց ոչ ոք չէր բերել. տեղում են կազմավորվել: Եւ «ահաբեկչության դեմ պայթարն» էլ նպատակ լինել չի կարող. ավելին՝ հենց այդ «պայթարի» արդյունքում (թե՛ շնորհիվ) վերջին 20 տարում ծնվեց այդ «ահաբեկչական ինտերնացիոնալը»: Այստեղ շփոթվում են պատճառը ու հետեւանքը: *Մեզ սպառնում են ոչ թե ահաբեկիչները, այլ դրանց ծնող աներեւույթ ուժը*, որը կարող է հանդես գալ ի դեմս ամենատարբեր միջնորդների: Մեզ մնում է հույս դնել միայն սեփական ուժերի վրա, եւ մնում է միայն հաղթել: Օգնողներ լինեն՝ լավ է: Աստված տա՝ լինեն: Բայց մենք չենք կարողանա ճիշտ մարտավարություն ընտրել եւ ապագայում էլ վայելել մեր հաղթանակները, մինչեւ չգիտակցենք, թե ովքեր են **իսկական խաղացողները**:

07.10.2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԻՍ ՎԱՐՉԱԽՄԲԻՆ

*... հեղափոխությունն արվում է
բռնապետություն հաստատելու համար...*

Ջորջ Օրելլ, 1984

*Դառնանք — բարբառենք նզովք ապա
Այլ իշխաններին բոլոր այն մեր,
Որ բերին մեզ մահ, ու մոռ, ու նեղ:*

Եղիշե Չարենց, Սասունցի Դավիթը

Մոտ երեք ամիս առաջ ես բաց նամակով դիմեցի ներկայումս Հայոց պետության կառավարչի պաշտոնը զբաղեցնողին, նշելով այն **իր քայլերը**, որոնք վնասում են թե՛ երկրին, եւ թե՛ իր քաղաքական ուժի հեղինակությանը, եւ նշեցի այն քայլերը, որոնցով, ըստ իս, կարելի էր շտկել վիճակը:

Ես, իհարկե հեռու էի միամիտ պատրանքից, թե ինչ-որ մի քաղաքացու նամակը (թեեւ այն արտահայտում էր բազմաթիվ մարդկանց պահանջը) կարող է ինչ-որ կերպ ազդել վարչախմբի քաղաքականության վրա: Պարզապես նամակի նպատակն էր երկրի ղեկին հայտնված անձին իր քաղաքականության սխալները սեղմ եւ մատչելի ոճով ներկայացնելը:

Սակայն անցած ժամանակահատվածում ոչ միայն դրական շարժ չարձանագրվեց, այլեւ վերջին օրերին նկատվեց, որ վարչախումբը էլ ավելի է սաստկացնում ժողովրդի կոկորդին գործադրած **մեռյալ ստամախները**:

Ուստի այժմ ես դիմում եմ իշխանության վերին օղակում հայտնված բոլոր անձանց (կրկին ոչ մի պատրանք չունենալով): Ի դեպ, հոգնակի դերանունները ստորեւ կիրառված են հենց խմբին դիմելու՝ զուտ քերականական իմաստով:

Նախորդ նամակում ես կարծիք էի հայտնել, որ դուք դեռ ունեք բավարար բանակով կողմնակիցներ եւ ձեր քաղաքականության շտկման դեպքում նրանք կսատարեն ձեզ: Այսօր կարելի է արձանագրել, որ անցած ամիսների ընթացքում դուք կորցրել եք ձեր կողմնակիցների մի ստվար զանգված եւս, ու, թերեւս, անցել եք անդարձելիության կետը:

«Նոր» թագավարակը

Իշխանության գալուց ի վեր ձեր քաղաքականության գրեթե միակ ուղղությունը կապված է եղել այսպես կոչված «ՆՈՐ» թագավարակի հետ: Սրանից դուրս մնացել են միայն Սահմանադրական փոփոխությունների կասկածելի գործընթացը եւ աղբահանությունը: Վերջ, կարծես թե: Թեեւ կա նաեւ ասֆալտափռությունը, որը սակայն, երկիմաստ նորաբանություն է եւ մասամբ նույնպես կապված է թագավարակի հետ: Այնպես որ իմաստ ունի խոսել միայն թագավարակային «ճակատում» ձեր «հերոսությունների» մասին:

Քաղաքական գործընթացներին հետեւողների եւ բժշկության տարրական հիմունքներին ծանոթի համար վաղուց ակնհայտ է, որ այսպես կոչված «համաճարակը» մեկ համաշխարհային կենտրոնից (պայմանականորեն, համարենք, որ դա ԱՅԿ-ն է՝ ՎՈԶ-ը) նախաձեռնված եւ կառավարվող քաղաքական եւ միաժամանակ՝ գործարարական ծրագիր է: Դրա համար որպես պատրվակ օգտագործվում են սովորական սեզոնային շնչառական հիվանդությունների բռնկումները (կենցաղային լեզվով՝ «մրսածությունները»), այդ թվում եւ տարբեր տեսակի հարբուխները, գրիպերը, միկոպլազմոզները, թագավարակները, որոնց զգալի մասը ներկայացվում է որպես «ՆՈՐ» թագավարակ: Պարզ է, որ ոչ մի ապացույց, որ թագավարակի այս տարվա տեսակը չի եղել նախկինում, գոյություն չունի եւ չի կարող ունենալ, քանի որ տարեկան հայտնագործվում են հարյուրավոր մանրէներ եւ այլ կենդանատեսակներ: Բայց այս «ՆՈՐ» եզրույթը ձեր ծրագրի գաղափարական մեխն է, առանց որի անհնար կլիներ ահաբեկել ժողովուրդներին: Ուստի եւ բոլոր քարոզչական աղբյուրները շեշտում են դրա «ՆՈՐ» լինելը, իսկ տարբեր խողովակներով, այդ թվում՝ դավադրաբանական ուղղվածության՝ տարածվում են լուրեր, թե իբր այն արհեստական բնույթ ունի՝ կենսաբանական գենի փորձարկման կամ գիտափորձի հետեւանք է, եւ այլ կարգի հեքիաթներ. մարդկանց վրա դա տպավորություն թողնում է: Միայն թե մարդիկ չհասկանան, որ այս տարվա համաճարակաբանական վիճակը ոչնչով չի տարբերվում նախորդ տարիների վիճակից: Չհասկանան, որ ձեր կողմնակիցները

պարզապես ուռճացնում են մահացության դեպքերը, ներկայացնելով դրանք, որպես համաճարակի իրական լինելու ապացույց, մինչդեռ ցանկացած խելամիտ մարդ վերլուծելով նույնիսկ ձեր **նկարած** պաշտոնական թվերը հասկանում է, որ թոքաբորբից մահանում է կես տոկոսից պակաս մարդ, ինչը բնական թիվ է. ի վերջո մարդիկ մահկանացու են եւ որեւէ հիվանդությունից մեռնելու են:

Պարզ է, որ ծրագիրն այս հետապնդում է բազմաթիվ քարոզչական, քաղաքական եւ տնտեսական նպատակներ. ակնհայտ՝ «հատուկ դրություն» հայտարարելու միջոցով քաղաքացիների բնական իրավունքների սահմանափակում, եւ՝ հեռահար՝ դրա քողի տակ ժողովրդականությունը չվայելող օրինագծերի հաստատում եւ հրամանների արձակում: Սակայն այսօր այնքան է «բանը բանից անցել», որ քաղաքականապես կիրթ մարդիկ արդեն պարզորոշ տեսնում են այս ամենի շահառուներին. ապացույց՝ Եւրոպական քաղաքներում ընթացող վերջին բազմահազարանոց ցույցերը՝ ընդդեմ այդ ծրագրի:

Ինչ խոսք, ակնհայտ է, որ երկրի ղեկավարները չեն կարող անտեսել արտաքին գործը ուժերը: Ով էլ լինի պետության գլուխ նա պիտի հաշվի նստի դրանց հետ, այլ ոչ թե հերոսական կեցվածք ընդունելով տանի երկիրը դեպի կործանարար առճակատում: Բայց երբ երկրի ղեկավարները արտաքին ուժերի շահերը որպես սեփական շահ են ընդունում եւ «Հռոմի Պապից ավելի կաթոլիկ» են ներկայանում, դա արդեն արդարացում չունի:

Ձեր նկաճումները

Ահաբեկում եւ ամբողջատիրություն

Դուք, որ իշխանության եկաք լավատեսությամբ եւ ազատության հույսով տոգորված ժողովրդի **ճնշող**՝ սահմանադրական մեծամասնության աջակցությամբ, այսօր կորցրել եք այդ աջակցությունը եւ այլեւս իրավունք չունեք վկայակոչելու այն: Այսօր ձեր հենարանը ժողովրդի սոսկ **ճնշված** փոքրամասնությունն է՝ միամիտ, խաբված, ահաբեկված զանգված, որին դուք շարունակում եք ահաբեկել, ձեր ՎՈՉ-ական վերադասների ապատեղեկատվությունը տարածող առաջապահ քարոզիչ «ջոկատների» միջոցով:

Ձեր քարոզի «մեխերից» մեկն էլ այն է, թե, իբր, ձեզնից դժգոհները նախորդ ուժերի կողմնակիցներ են: Դուք շատ լավ գիտեք, որ դա այդպես չէ (եթե իհարկե ինքներդ չեք հավատացել սեփական ստին): Այդ ձեր հակաժողովրդական հանցավոր գործելակերպը ոգեւորել է նախկիններին, սակայն նրանք

բավականաչափ կողոպտեցին երկիրը, որ առողջ բանականությամբ մեկը ցանկանա նրանց վերադարձը: Այլ բան է, որ մարդիկ հասկանում են, որ մրից՝ մրջուր են ընկել: Որ նախկինում կողոպտվում էին՝ դժգոհելու իրավունք ունենալով, իսկ հիմա՝ զրկված լինելով նույնիսկ այդ իրավունքից:

Ահաբեկման եւ քաղաքացիների կամքը կոտորելու ձեր հիմնական գործիքը դիմակ կրելու հանցավոր պարտադրանքն է: Հանցավոր, քանի որ ցանկացած կիրթ մարդ գիտի, որ դիմակը ոչ միայն չի պաշտպանում վարակվելուց, այլ հենց տարաբնույթ վարակների աղբյուր է դառնում դրա կրողի համար ու բացի այդ հարուցում է թթվածնային քաղց, որը հատկապես վտանգավոր է պատանիների, ծերերի եւ հիվանդների համար: Բայց դա ձեզ չի հուզում, քանի որ ձեզ համար դիմակ կրելը ծիսական բնույթ ունի. այն խորհրդանշում է դրա կրողի անխոս, ձայնազուրկ հնազանդությունը եւ որպես այդպիսին, դա Մսրա Մելիքի թրի մերօրյա համարժեքն է:

Հետաքրքիր է, որ մարդկանց ահաբեկման այսօրվա եղանակները քիչ են տարբերվում միջնադարյան պատկերացումներից, երբ հիվանդություններին վերագրվում էր **դիվային** բնույթ: Այն դարերի «մասնագետները» ասում էին, թե դեւերի համար որպես «դարպաս» է ծառայում քիթը, որով դեւերը կարող են ելնել եւ «վարակել» այլ մարդկանց: Թեեւ իրենց մտքով չէր անցնում ստիպել, որ բոլոր մարդիկ դիմակ կրեն. հավանաբար այն ժամանակվա ղեկավարները զուրկ չէին տրամաբանելու տարրական ունակությունից եւ գիտակցում էին, որ դեւերի համար դիմակը պատնեշ չի դառնա (ինչպես եւ վիրուսների համար): Այնպես որ դիմակ կրելու պարտադրանքը մեր տգետ դարի **know-how**-ն է:

Եւ դուք խոսում եք դիմակ կրելու «դիսցիպլինայի» մասին. հասկացության, որն անմիջապես հիշողություններ է արթնացնում ոչ վաղ ամբողջատիրական անցյալից, որը, պարզվում է, այսօրվա համեմատ այնքան էլ «ամբողջատիրական» չէր:



«Դիսցիպլինայի» կոչող խորհրդային բարոզչական պաստառ:

Ստիպողական բժշկություն

Արդեն չի էլ թաքցվում, որ դիմակների պարտադրանքին հետեւելու է պատվաստվելու պարտադրանքը՝ **հապճեպ ստեղծված** այսպես կոչված «պատվաստանյութերով», որոնք բստրած դեղագործական ընկերությունները փորձում են միմյանց ձեռքից խլել առավել չալաղաջ շուկաները: Փաստորեն ՎՈԶ-ի եւ ձեր՝ որպես դրա կամակատարի, նպատակն է ստիպողական բժշկությունը, որը մինչ այսօր կիրառվում էր միայն անասնաբուժությունում. անասուններին չեն հարցնում, համաձայն են նրանք, որ իրենց բուժեն, թե՞ ոչ: Մինչդեռ.

*Ոչ որ չի կարող առանց իր ազատ և
հստակ արտահայտած համաձայնության
ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ
փորձերի:*

ՀՀ Սահմանադրություն, հ. 25, կետ 4:

Իսկ տվյալ դեպքում խոսքը իրոք փորձերին է վերաբերում, քանի որ պատվաստանյութի անվտանգությունն ու արդյունավետությունը ստուգելու համար անհրաժեշտ են տարիներ, իսկ թագավարակի պես արագ փոփոխվող վարակների դեպքում դրանք առհասարակ անիմաստ են (դա ցանկացած գրագետ մարդու է հայտնի): Բժշկական եւ այլ փորձերի շարքին կարելի է դասել նաեւ դիմակներ կրելու եւ անհայտ բաղադրությամբ «ախտահանիչ» նյութերով «օծվելու» համատարած պարտադրանքը, քանի որ նման միջոցառումները երբեւէ համատարած չեն եղել, եւ դրանց համատարած կիրառելու հետեւանքները ուսումնասիրված չեն: Հիշենք նաեւ, որ հնարավոր

պատվաստումները եւ/կամ դրանց իրագործման սպառնալիքը կարող է լրացուցիչ անհաշտություն եւ պառակտում մտցնել մեր ազգի մեջ, ինչը, հաշվի առնելով թշնամիների հնարավոր ռազմական ներխուժման մշտական վտանգը, կարող է կործանարար հետեւանքներ ունենալ մեզ համար:

Բացի այդ, այսօր տապալված է ամբողջ առողջապահական համակարգը: Ձեր սերմանած պսիխոզի հետեւանքով մարդիկ խուսափում են բժիշկներից, վախենում են այցելել բուժփմնարկներ՝ վարակվելու, կամ, հակառակը՝ վարակված հայտարարվելու վախից եւ դիմում են *ինքնաբուժման*, ինչը կործանարար հետեւանքներ կարող է ունենալ նրանց առողջության համար: Դուք մարդկանց արդեն իսկ ***պատվաստեցիք պատվաստումների դեմ***. մարդիկ արդեն վախենում են պատվաստվել նույնիսկ իրական եւ լրջագույն հիվանդությունների դեմ, ինչը կարող է անկանխատեսելի առողջապահական հետեւանքներ ունենալ:

Ավելին. բուժփմնարկ այցելելու դեպքում հիվանդները, երբեմն վնասվում են այնտեղից տուգանքի սպառնալիքով՝ «ինքնամեկուսացումը» խախտելու համար: Ուշադրություն. հիվանդը վնասվում է բուժփմնարկից: Եւ հակառակը. ոչ բժշկական հիմնարկներին, օրինակ՝ բանկերին, սննդի կետերին տրվել են բժշկական լիազորություններ՝ ջերմություն չափելու, ախտահանելու եւ այլն: Այս ամենը զավեշտական կլիներ, եթե չլիներ այդքան ցավալի եւ հանցավոր: Դա ոչ միայն ստիպողական բժշկություն է, այլեւ ստորագում, քանի որ մարդն ակնկալում է բուժ ծառայություն ստանալ բժշկից, այլ ոչ թե բժշկական կրթություն չստացած մեկից: Քանի որ.

Ոչ ոք չի կարող ենթարկվել ...

նվաստացնող վերաբերմունքի ...:

ՀՀ Սահմանադրություն, հ. 26, կետ 1:

Ազգային նկարագրի խեղում

Ձեր «դիմակահանդեսով» եւ «ինքնամեկուսացման» պարտադրանքով դուք իրագործում եք հասարակության *ապամիացում դիսսոցիացիա*, քանի որ մարդը, հանրային էակ է, կապված մյուսների հետ ազգական, գործնական, ընկերական եւ այլ կապերով, եւ որքան էլ նա շփվի հեռախոսով (թեկուզե՛ տեսա-հեռախոսով)՝ կենդանի շփումը դա չի փոխարինի: Ընկերները պետք է իրար «թեւ ու թիկունք» լինեն (բառի ուղիղ եւ փոխաբերական իմաստով), այլ ոչ թե «սոցիալական (այն է՝ ընկերական) հեռավորություն» պահեն, իսկ հակառակ

սեռի հետ ընկերությունը առհասարակ ենթադրում է շատ ավելի սերտ շփում: Ակնհայտ է, որ սա արվում է ժողովրդական ընդվզումը բացառելու նպատակով, բայց արդյունքում մարդիկ կորցնում են արդյունավետ կերպով փորձ եւ գիտելիք փոխանակելու, ծանոթանալու եւ ընկերներ ձեռք բերելու հնարավորությունը, ինչը մեր նման փոքր ազգի համար կործանարար է, քանի որ մոտ ապագայում կհանգեցնի անհատների հոգեկան շեղումների աճին, ամուսնությունների թվի եւ ծնելիության նվազմանը: Իսկ ձեր վերադասը՝ ՎՈՉ-ը դա անվանում է «նոր նորմալ»: Ընդ որում, չնկատելով, որ քարոզչական այդ բանաձեւը *օբսիմորոն* է՝ *ներհակասություն*. «նորմալ» բանը հենց այն է, ինչը միշտ եղել է. նորը չի կարող նորմալ համարվել. ըստ սահմանման:

Բացի այդ.

- Ոչնչացվում է կրթությունը, քանի որ այսպես կոչված «հեռավար» կրթությունը իրականում կրթության բացակայություն է նշանակում:
- Ոտնահարվում է այնպիսի ավանդական եւ նվիրական ավանդույթ, ինչպիսին է հանգուցյալներին հուղարկավորելն ու հարգանքի տուրք մատուցելը:
- Ոստիկանությունը, զբաղված լինելով իր գործառույթից դուրս գտնվող գործով՝ դիմակ չկրելու համար տուգանքների «պլան» կատարելով, կրեց լրացուցիչ բարոյական հարված, քանի որ պարզ դարձավ, որ իրոք «Ոստիկանը ձերն է»:
- Բարոյական վնաս կրեց բժշկությունը, քանի որ բժիշկները ստիպված լինելով կրկնել ձեր զառանցական մանտրաները վերջնականապես հեղինակազրկվեցին:
- Վերջապես, դուք հարված հասցրեցիք քաղաքացիական հասարակության եւ ժողովրդավարության գաղափարին, քանի որ պարզ դարձավ, որ եթե ժողովրդական կարծիքի հետ կարելի է այնպիսի ձեռնածություններ կատարել, որ ձեզ պես անձնավորությունները կարող են գալ իշխանության, ուրեմն քաղաքացիական հասարակությունը ոչինչ չարժե:

Ձեր հեռանկարները

Միակ դրականը այս ամենի մեջ այն է, որ դուք գործում եք ամենայն բացությամբ եւ, կարծում եմ՝ անկեղծությամբ. դուք, հավանաբար, իրոք այդպիսին եք. ազգատյաց, մարդատյաց եւ տգետ: Սակայն դուք պետք է գիտակցեք, որ մենք

ապրում ենք պատմական իրադարձությունների չափազանց արագ փոփոխվող փուլում եւ որքան արագ ժողովուրդները ենթարկվում են ինչ-որ գաղափարների ազդեցությանը, այնպես էլ արագ կարող են դուրս գալ դրանց տակից: Չի բացառվում, որ շատ շուտով ձեր արարքը կդիտվի ավելի քան մեկ եւ կես հազարամյակ առաջ Մերութան Արծրունու կատարած արարքի հետ մեկ շարքում: Եւ անկախ նրանից, թե դուք ինչպես եք վերաբերվում միապետական կարգերին, դուք կարող եք արդեն մոտ ապագայում թագադրվել այդ անձնավորության օրինակով: Եւ հույս չունենաք, թե «այսօր միջնադար չէ» եւ նման բաներ լինել չեն կարող: Ինչպես արդեն նկատեցի վերելում, դուք եւ ձեր վերադասները ինքներդ եք աշխարհը սրընթաց շարժում դեպի նոր ավատատիրացում, նոր «մուճ դարերի» հաստատում: Այնպես որ ձեր անպատժելիության հաշվով համոզված մի եղեք: Եւ մի կարծեք, թե միջնադարյան սովորությունները կիրառվելու են ընտրովի: Ո՛չ. դրանք գալու են ամբողջական փաթեթով՝ all in one եւ all inclusive սկզբունքով:

Շուտ թե ուշ ժողովուրդներն ամբողջ աշխարհում կթողափեն նոր ճորտատիրության լուծը եւ կմաքրագործեն վերնախավերը (յուստրացիա կիրագործեն):

Իսկ **ստիպողական բժշկությունը** հենց այն հանցանքն է, որի համար պետք է պատժել ամենայն խստությամբ: Հենց այդ մեղադրանքով 1947 թվականին Նյուրնբերգում դատվեց 23 բժիշկների եւ պաշտոնյաների մի խումբ, որոնցից 7-ը դատապարտվեցին մահապատժի՝ կախաղանի միջոցով, 5-ը՝ ցմահ բանտարկության:



Գերմանացի հանցագործ բժիշկները Նյուրնբերգյան դատարանի առջև:

Հ.Գ. Հետաքրքիր է, որ այս «համաճարակից» շուրջ երկու տարի առաջ, 2018 թվականի ընտրություններում հաղթած «Զեր քայլը» մրցակից քաղաքական ուժերից միակն էր, որ իր նախընտրական ծրագրում ներառել էր համաճարակների դեմ պայքար մղելու դրույթը: Ինչպիսի՞ն հեռատեսություն... Արդյո՞ք դա բնատուր տաղանդ է, թե՞ քաղաքական շփումների միջոցով է փոխանցվում:

2020.09.18

ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ՄԱՐՏԱԿՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՒ ԴՎԱԿԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Որքան էլ գիտակից մարդկանց համար «նոր» մակդիրը ստացած *թագավարակի* «համաճարակի» կեղծությունը ակնհայտ լինի, սակայն աշխարհի մարդկանց զգալի մասին այն թվում է իրական: Ինչհիմա: Ինչհիմա թագավարակի զավեշտական հորինվածքին հավատում են եւ բանվորական, եւ մտավորական զբաղմունքի տեր մարդիկ, եւ կարդացածը, եւ գրականությունից հեռուն, եւ հարուստը, եւ աղքատը: Նույնիսկ՝ որոշ բժիշկ կոչեցյալները: Եթե մի կողմ թողնենք այն «բժիշկներին», ովքեր իշխող վերնախավի մտուրից անվողներն են կամ ի պաշտոն ստիպված են կրկնել ԱՀԿ-ի զառանցանքները, ապա դա հուշում է, որ գործ ունենք մարդկանց, այսպես ասած, գիտակցության «կորզման», երեւոյթի հետ: Երեւոյթի, որը ժողովրդական լեզվով նկարագրվում է «խելքը ուտել» բառակապակցությամբ: Մի խոսքով աշխարհի վերնախավը (եւ մեր վերնախավը՝ որպես նախորդի մի մասնիկը) պարզապես մարդկության «խելքը կերել են»:

Ինչպե՞ս է դա հաջողվել

Դրա համար գործածվել է երկու հիմնական հնարք: Առաջինը հայտնի է արդեն շուրջ մեկ դար եւ վերագրվում է Ադոլֆ Հիտլերին, որը կարծիք էր հայտնել, որ ***մարդիկ ավելի հակված են հավատալու մեծ, քան փոքր ստիւն***: Դա բացատրվում է նրանով, որ մանր ստեր իրենց թույլ են տալիս բոլորը եւ հեշտությամբ զանազանում են նաեւ այլոց սուտն ու ճշմարտությունը, մինչդեռ մեծ, *համազգային*, առավել եւս՝ *համամոլորակային* կեղծիք սովորական մարդը չի պատկերացնում, քանի որ չունի այդպիսի հրեշավոր սուտը տարածելու գործիք, եւ չի նկատում, որ նման գործիքներ առհասարակ գոյություն ունեն, թեեւ ոչ իր ձեռքում: «Միթե կարող են աշխարհի բոլոր երկրների ղեկավարները կրկնել միեւնույն սուտը», մտածում են մարդիկ: Եւ նույնիսկ եթե գտնվում է գոնե մեկը, որը չի կրկնում այդ սուտը, մարդիկ հակված են կարծելու, որ ստախոս է հենց

այդ մեկը (կամ, նույնիսկ՝ հոգեկան հիվանդ է) քան կարծելու, թե ստախոս են մնացած բոլորը:

Երկրորդ հնարքը դա **մարմանդ կրակի վրա եփվող գորտի սկզբունքն է**. ջերմությունը աճում է այնքան դանդաղ, որ գորտը չի նկատում այն ճակատագրական պահը երբ ջերմաստիճանը անցնում է հաճելի մակարդակը, անջատում է նրա կամքն ու գիտակցությունը եւ խաշում է: Այլ կերպ սա կարելի է անվանել «գիտակցության պատվաստում»: Այդ-այդ, կրկին՝ պատվաստում. սուտն ու ապատեղեկատվությունը չեն կիրառվում միանգամից եւ ամբողջ ուժով, այլ ներարկվում են կաթիլ առ կաթիլ, նորություն առ նորություն, մեկ ուժեղացնելով ազդեցությունը, մեկ՝ նվազեցնելով:

Միամտություն է համարելը, թե «Թագավարակ» «օպերացիան» այս տարվա ձմռանն է սկսվել: Ոչ: Երբ սկսեցին ցույց տալ «ահարկու» տեսահոլովակներ փողոցում ընկնող (ու, երեւի՝ մեռնող, բա էլ ղնց) մարդկանցով, եւ ապա՝ դաժաղներ տեղափոխող զինվորական բեռնատարներով, նախորդ տարիներին մոլորակի բնակչության աչքերն ու ականջները արդեն մշակվել էին SARS, «ատիպիկ թոքաբորբ» հասկացություններով, «խոզի», «թռչնի», «հոնկոնգյան» գրիպերով ու թագավարակներով. հիմքը դրված էր: Եւ ահա եկավ «նորը»՝ «սարսափելին»:

Բայց միամտություն է կարծել նաեւ, թե հենց այդ SARS-երից էր սկսվել մարդկանց մշակումը: Ամեն ինչ սկսվել էր շատ ավելի վաղ. առնվազն՝ կես դար առաջ, երբ սկսեցին խոսել այսպես կոչված «համընդհանուր խնդիրների» կամ «համամոլորակային մարտահրավերների» («global issues») մասին: Ցուցակը կարելի է գտնել ՄԱԿ-ի կայքում, ճեպագիտարանում եւ այլուր: Դրանց շարքում կան եւ իրական խնդիրներ, որոնք լուրջ են (օրինակ՝ միջուկային պատերազմի վտանգը), եւ երկրորդական (օրինակ՝ տիեզերքի շահագործման կարգավորումը): Սակայն, սրանց թվում կան եւ այնպիսի խնդիրներ, որոնք (անկախ դրանց իրական լինելուց կամ չլինելուց) իրենցից ներկայացնում են բացահայտ գործարարական, այն է՝ շահախնդիր նախագծեր:

Սրանց միավորում են *մի քանի հատկություններ* (կրկնում եմ. դրանց հիմքում կարող են լինել նաեւ այս կամ այն աստիճանի կարեւորության իրական խնդիրներ).

- Անսպասելի հայտնագործում
- Դրանց վերաբերյալ տեղեկատվական նյութերի տարափ
- Սարսափների (կամ օգուտների) կանխատեսում, որոնք չեն իրականանում
- Համապատասխան մասնագետների կողմից իրարամերժ պնդումներ

- Կառավարությունների կողմից այլախոհական շարժումների հետապնդում
- Դրանք «լուծելու» համար միջոցների (հսկայական միջոցների) հատկացում:

Անսպասելի հայտնագործում

Անշուշտ, ցանկացած հայտնագործություն այսպես թե այնպես անսպասելի է՝ ըստ սահմանման. մի որեւէ բան հայտնի չէր, այժմ՝ հայտնի է: Բայց լինում է, որ խնդիրը ունեցել է նախապատմություն, բայց գիտական ոլորտից դուրս դրա մասին չի խոսվել: Օրինակ, ԴՆԹ-ի հայտնագործումից, մինչեւ դրա էության բացահայտումը անցավ հազիվ մոտ 80 տարի, իսկ հիմնական խնդիրները լուծվեցին առհասարակ մի 10—20 տարվա ընթացքում: Գիտությունից հեռու մարդու համար այդ հայտնագործությունները կարող էին անսպասելի եւ ակնթարթային թվալ, թեւէ այդ ընթացքում ամբողջ աշխարհում կատարվել էր հետազոտական ահռելի աշխատանք: Առհասարակ, գիտությունը չի սիրում դեռեւս հուր, չվերլուծված, չիմաստավորված տեղեկությունների հանրայնացում, եւ որպես վերջնական լուծում ստացած տեսության ներկայացում, քանի որ միեւնույն տվյալները կարող են տրամագծորեն տարբեր եզրահանգումների բերել: *Անսպասելի* ասելով հասկանում ենք իրոք գիտական նախապատմություն չունեցող, սակավաթիվ հետազոտությունների վրա հիմնված տեսության սողոսկումը ոչ մասնագիտական ոլորտ:

Դրանց վերաբերյալ տեղեկատվական նյութերի տարափ

Արդյունքում, դեռեւս մասնագետների կողմից չմարսված տվյալները ձնագնդու պես աճում են, հավելվելով ոչ մասնագիտական մեկնաբանություններով, իսկ դրանց քանակը անտեղյակ մարդու կողմից ընկալվում է, որպես խնդրի բազմակողմանիորեն եւ մեկընդմիջտ լուծված լինելու, փաստի արտահայտություն:

Սարսափների (կամ, հակառակը՝ հրաշքների) նկարագրում եւ կանխատեսում, որոնք չեն իրականանում

Այս կարգի խնդիրների հետ կապված տեղեկության հիմնական ծավալը շրջում է ՉԼՄ-ներում: Սակայն ՉԼՄ-ները լինելով շահութաբեր հիմնարկներ կարող են շահագրգռված լինել դրանց տարածմանը, եթե տվյալ նյութը իրոք շահութաբեր է: Իսկ շահութաբեր այն կարող է լինել երկու դեպքում. կամ եթե դրա դիմաց վճարում հողվածագիրը (սա գովազդի կարգավիճակն է), կամ եթե նյութը իրոք հուզում է ընթերցողին: Սա էլ կարող է լինել, եթե նյութը ցնցող է. կամ ավետաբեր, կամ՝ աղետաբեր: Այսինքն, կամ եթե խոստանում է

շուտափույթ բարեկեցություն, կամ վերահաս կործանում: Մի խոսքով՝ խաղում է լսողի բնագրների վրա:

Տվյալ ասպարեզի մասնագետների կարծիքների բախում

Ոչ մի մասնագետ չի կարող անտարբեր լինել, եթե իր մասնագիտական խնդիրների մասին լսում է սիրողական կամ, առհասարակ՝ անգրագետ դատողություններ, թեեւ ամեն մի մասնագետ չի արտահայտվի նման դեպքերում, չի զբաղվի անգրագետին բացահայտելու անշնորհակալ գործով: Սակայն երբեմն (հատկապես եթե գիտակցվում է մոլորությունների վտանգավորությունը) մասնագետները կարող են եւ արտահայտվել: Այս դեպքում հնարավոր է զարգացումների երկու տարբերակ. կամ ընդդիմախոս մասնագետների պարզաբանումները դադարեցնում են էժանագին համբավի ձգտող անձանց աշխուժությունը եւ խնդրի քննարկումը վերադառնում է զուտ գիտական ոլորտ (սա եթե այդ արտահոսքը պատահականորեն հարուցված է եղել էժանագին համբավի ձգտող մի լրագրողի կողմից), կամ՝ ընդդիմախոսների դեմ սկսվում է իսկական հալածանք, խնդիրը շարունակում է քննարկվել ոչ մասնագիտական տիրույթում, ինչը հուշում է, այդ լրագրողների թիկունքում գործում է շահագրգիռ պատվիրատու: Ավելին. հիմնական հունից (մեյնսթրիմից) դուրս արտահայտվողների դեմ սկսում են գործադրվել պետական «զսպման» միջոցներ. պիտակավորում, գործունեության արգելակում, ընդհուպ մինչեւ տուգանք եւ կալանք: Այլ կերպ ասած, պարզվում է, որ պետությունը շահագրգռված է սկզբնապես արտահայտված կարծիքի ամրապնդման հարցում:

Դրանք «լուծելու» համար միջոցների հատկացում

Եւ վերջապես բացահայտվում է, այն, ինչի համար հարուցվել էր ողջ աղմուկը. անհրաժեշտ են միջոցներ «աշխարհը փրկելու» համար, եւ այն, որ դրանում շահագրգռված է ոչ միայն մեկ պետություն, այլ մի շարք պետություններ, գուցե եւ՝ բոլորը: Դա, սովորաբար, արտահայտվում է նաեւ որոշակի միջպետական համաձայնագրերի կնքմամբ, որոնց շրջանակներում որոշվում են պետությունների պարտավորությունները տվյալ խնդրի լուծման ուղղությամբ: Բնականաբար, դա ուղղակի կամ անուղղակի ենթադրում է որոշակի ֆինանսական հոսքերի վերաբաշխում: Հաստատվում է հայտնի ասացվածքը. ***ինչից էլ որ խոսում են՝ խոսքը միշտ փողի մասին է:***

Վերջին տասնամյակներում մենք ականատես են դարձել այս կարգի բազմաթիվ «նախագծերի»: Թվարկենք դրանցից միայն մի քանիսը, առավել տպավորիչները.

- 2000 թվականի խնդիր

- Ձերմոցային երեւոյթ եւ համաշխարհային ջերմացում
- Օզոնային անցքեր
- ՁԻԱՀ

Դիտարկենք դրանք, վերոհիշյալ չափանիշներին համապատասխանելու տեսակետից:

2000 թվականի խնդիր

Հիմա այն գրեթե մոռացված է: Եռլթյունն այն էր, որ հին համակարգիչներում տարեթվերը պահվում էին վերջին երկու նիշի ճշտությամբ, եւ արդյունքում, գալիք 2000 թվականը համակարգիչները կարող էին մեկնել որպէս 1900 թվական, կամ 0 թվական, ինչը կարող էր բերել որոշ համակարգերի խափանման: Ու թեեւ խնդիրը իրական էր, սակայն չափազանց ուռճացված. ժամանակին ամենուրեք դրա մասին տեղին եւ անտեղին գրում էին, վախեցնում էին հնարավոր համաշխարհային քաոսով, այդ թվում՝ համակարգերի սխալով պայմանավորված միջուկային պատերազմով: Մասնագետներն այս խոսակցություններին մեծ մասամբ ժպիտով էին վերաբերում, եւ իրոք ոչ մի սոսկալի բան չեղավ: Իսկ այս խնդրի լուծմանն ուղղված միջոցները ոմանք գնահատում են 300 մլրդ դոլար, որոնք, պարզ է, ինչ-որ գրպաններից տեղափոխվեցին այլ գրպաններ: Ի դեպ, դժվար չէ կռահել, թե, մասնավորապէս, ինչ գրպաններ. այս գաղափարի զարգացման հարցում հատուկ ներդրում ունի Բիլլ Գեյթսը. լսէ՛ք եք այդ անունը: Նկատեմ՝ նաեւ, արդեն այսօր սկսում են խոսել ոչ շատ հեռու ապագայում սպասող Նոյն կարգի 2038 թվականի խնդրի մասին. վաղվա եկամուտների համար պետք է ներդրում անել այսօր...

Ձերմոցային երեւոյթ եւ համաշխարհային ջերմացում

Օզոնային անցքեր

Սրանք հարակից ծրագրեր են: Ըստ առաջին գաղափարի, ներկայումս դիտվող համաշխարհային ջերմացումը (որի իրական լինելը Նոյնպէս հարցականի տակ է, բայց կարող է եւ հաստատվել հետագայում) արդյունաբերական արտանետումների հետեւանք է համարվում (հատկապէս՝ ածխաթթու գազի) եւ բնութային կործանումը կանխելու համար անհրաժեշտ է համարվում այդ արտանետումների նվազեցումը: Երկրորդ գաղափարի Եռլթյունն այն է, որ որոշ արտանետումներ էլ քայքայում են երկրի օզոնային շերտը, ինչը կհանգեցնի երկրի մակերեսին Արեւի ուլտրամանիշակազույն ճառագայթման աճին եւ կարող է բերել ցամաքային կյանքի ոչնչացմանը:

Այս երկու խնդիրները ունեն մի շարք ընդհանրություններ. երկուսն էլ ենթադրում են սարսափներ (ջրհեղեղներ, մաշկային հիվանդություններ եւ այլն): Միեւնույն ժամանակ երկուսի դեպքում էլ մասնագետները կարծիք են

հայտնվում, որ գործ ունենք համապատասխան երեւոյթների բնական տատանումների հետ, իսկ մարդածին գործոնը աննշան է, բայց նման կարծիքները անտեսվում են: Երկու խնդիրներն էլ հանգեցրեցին միջազգային համաձայնագրերի կնքման. Կիոտոյան, ապա՝ Փարիզյան՝ առաջին դեպքում, եւ Մոնրեալյան՝ երկրորդ դեպքում: Երկու համաձայնագրերն էլ ազդում են տարբեր երկրների ֆինանսատնտեսական վիճակի վրա եւ ենթադրում որոշակի հավելյալ ծախսեր, որոնք կվնասեն այդ երկրների տնտեսությանը:

Հետաքրքիր է, որ ջերմոցային գազերից հիմնականը ջրի գոլորշին է, որի դեմ պայքարելը բոլորովին արդեն զավեշտական կլիմեր, ուստի եւ շեշտը դրվում է ածխաթթու գազի վրա, որի մասնաբաժինը հազիվ մոտ 10% է: Չավեշտական է նաեւ, որ այս երկու «մարտահրավերները» հակասում են մեկը մյուսին. օգնող ջերմոցային գազերից մեկն է, եւ դրա քանակի բարձրացումը կբերի ջերմոցային երեւոյթների սաստկացմանը:

ՎՈՁ-ը (կրկին այդ ՎՈՁ-ը) Փարիզյան համաձայնագրերի իրագործման համար առաջարկում է ծախսել համաշխարհային գումարային տնտեսության՝ ՀՆԱ-ի ընդամենը մի «աննշան» 1%-ը: Այսինքն, խոսքը ոչ ավել, ոչ պակաս՝ 800 միլիարդ դոլարի մասին է. տրիլիոնի էլ չի հասնում: Բայց այդ 1%-ն էլ երկրները չգիտես ինչու չեն ուզում ծախսած լինել, իսկ Թրամփին առհասարակ ԱՄՆ-ը դուրս բերեց այս համաձայնագրից: Հիշենք, որ նա իր երկիրը նաեւ ՎՈՁ-ի կազմից հանեց. չի հասկանում, ինչ է անում:

Այնուամենայնիվ կլիմայական ծրագրեր ֆինանսավորող առնվազն 10 միլիարդանոց հիմնադրամ գոյություն ունի...

ԶԻԱՀ (Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ)

Իմունային անբավարարությունը, որի դեպքում մարդն անպաշտպան է մնում հիվանդությունների դեմ, ձեւավորվում է տարբեր պատճառներով: Խնդրո առարկա ծրագրում խոսքը վերաբերում է այն դեպքին, երբ այն հարուցվում է, իբր, մի որոշակի վիրուսով, որն անվանվեց *մարդու իմունային անբավարարության վիրուս* (ՄԻԱՎ):

Այս բոբոյին գուցե կարելի էր հավատալ, եթե դրա հետ կապված ամեն ինչը այնքան նման չլիներ Նախորդ առեւտրային շահութաբեր Նախաձեռնությունների դրսեւորումներին: Սրա մասին նույնպես սարսափներ էին պատմում անցած դարի 80-ականներից սկսած: Ասեկոսեներ էին տարածում սրա, իբր, արհեստական, ռազմական ծագման մասին (ճիշտ ինչպես այսօր՝ թագավարակի մասին): Մյուս կողմից այս գաղափարն անխոցելի է. ինչպես որ բոլոր շնչառական վարակները, կարելի է ներկայացնել, որպես «թագավարակ», այնպես էլ այս դեպքում, ցանկացած քիչ թե շատ լուրջ հիվանդություն

(թագավարակը ներառյալ), կարելի է հայտարարել «իմունիտետի» նվազման հետեւանք: Չէ որ, ի վերջո, հիվանդը մահանում է ոչ թե անմիջականորեն ՁԻԱՀ-ից, այլ, իբր դրա պատճառով գոյացած, խիստ որոշակի հիվանդությունից: 80-ականներին վիճակը ներկայացվում էր այնպես, որ թվում էր թե վերջ. ուր որ է ՁԻԱՀ-ը տարածվելու է երկրաչափական աճով (քանի որ տարածվում է նաեւ սեռական ճանապարհով) եւ մի երկու տասնամյակ անց մարդկության կեսը վերանալու է: Մենք, այսինքն, հիմա կարծես թե պիտի չլինեինք: Հարց էր առաջանում. բա մինչեւ 1981-ը այդ հիվանդությունը չկմր, ինչո՞ւ հազարամյակների ընթացքում այն չվարակեց եւ չսպանեց ամբողջ մարդկությունը: Պարզվում է, որ հենց այդ հարցը կանխելու համար էր խոսվում այդ «հիվանդության» *կապիկներից* մարդուն անցնելու մասին: Ոչինչ չի՞ հիշեցնում. պաշտոնական լեզունդի համաձայն թագավարակն էլ մեզ անցել է *չղջիկներից*, այդպես չէ: Ինչպիսի՞ գազանանոցում ենք, պարզվում է, ապրում. տեսել ենք նաեւ «խոզի գրիպ», «թռչնի գրիպ», «կովերի կատաղություն». շուտով չի մնա մի կենդանի, որից մեզ մի սոսկալի հիվանդություն անցած չլինի: Թեեւ այն հարցը, թե ինչո՞ւ 1000 տարի առաջ այդ ՄԻԱՎ-ը կապիկներից չէր անցել մարդուն, այդ հնարանքը չի լուծում: Եւ մնում է ասել, թե անցել էլ իհարկե, բայց վտանգավոր չի եղել. հենց մեր օրոք է վտանգավոր «մուտագիան» եղել. մեր բախտից է:

Իրականում, աշխարհի ժողովրդագրությունը մարդկության թվաքանակի աճի գոնե մի չնչին անկում չարձանագրեց: Այս դեպքում նույնպես որոշ մասնագետներ (հաճախ՝ անվանի, Նոբելյան մրցանակակիրներ) արտահայտվում են արմատավորված կարծիքների դեմ, պնդում, որ ՄԻԱՎ «խոսուն» անունը ստացած վիրուսի եւ ՁԻԱՀ հիվանդության միջեւ կապ չկա, մինչդեռ «առաջադեմ հանրությունը» պիտակավորում է նրանց «այլախոհ» եզրույթով, մեղադրում փաստերի աղավաղման մեջ. մի խոսքով՝ վարկաբեկում է:

Այս «մարտահրավերը» նույնպես ունի լրջագույն ֆինանսական «հետք». դրա «լուծման» վրա ծախսվում են ահռելի քանակությամբ միջոցներ: Ուստի եւ որոշ երկրներում պահանջում են *օրենքով հետապնդել* ՁԻԱՀ «այլախոհներին» (թե՛ստ խոսքի եւ խղճի ազատությունների վրա): Բա էլ ղնց. սա էլ «չալաղաջ» ծրագիր է. տարեկան ՁԻԱՀ-ի դեմ «պայքարին» հատկացվում է 10—20 միլիարդ դոլար: Եթե մեկը ծախսում է, ինչ-որ մեկն էլ, պարզ է, դա ստանում է: Բայց ծախսում են ազգային բյուջեները, ստանում են՝ փոքրաթիվ հիմնադրամները: Իսկ ինչ-որ մարդիկ արդյունքում ստանում են ինչ-որ կասկածելի դեղեր... Կամ չեն էլ ստանում:

Դավադրության տեսություն

Օրենքը՝ օրենք (խորհրդարանները ինչ «օրենք» որ պետք է՝ կընդունեն), բայց այն պետք է քիչ թե շատ ժողովրդականություն վայելի: Դրա համար պետք է ոչ մասնագետ մարդուն մի պարզ ձեռով բացատրել, թե ինչիւ տվյալ կարծիքն արտահայտողը պետք է պատժվի, կամ գոնե՝ չեզոքացվի՝ սպանիչ պիտակներով: Բոլոր դարերում պիտակավորել են, որպես կաշառակեր, դավաճան, հոգեկան հիվանդ, վիուկ...: Հագիվ թե համոզիչ լինի, եթե սովորական, ոչ մի իշխանական կամ ֆինանսական լծակներ չունեցող մարդը մեղադրվի կաշառակերության կամ դավաճանության համար (թեեւ դա էլ ավելորդ չէր լինի): Բայց մեղադրել հոգեկան խանգարման համար, կարելի է ում ասես: Առավել եւս, եթե ներկայացնես, որ տվյալ տեսությունը «դավադրաբանական» է, իսկ այդ կարծիքն արտահայտող «խելագարը» վտանգ է ներկայացնում հանրության համար:

Անշուշտ, կան որոշ «տեսություններ», որոնց անհեթեթությունը չափազանց բացահայտ է: Օրինակ, թե, իբր, Երկիր մոլորակը տափակ է, կամ՝ սնամեջ է, իսկ պաշտոնական գիտությունը դա թաքցնում է:))) Այս կարգի տեսություններից, թվում է, վնաս գրեթե չկա, ինչպես եւ՝ օգուտ: Այլ հարց է, եթե տեսությունը մատնանշում է տվյալ դավադրությունից ակնկալվող օգուտ: Այս դեպքում անմիջապես ծառանում է լատինական ասացվածքով ձեւակերպված հարցը. *Cui prodest?* Ո՞ւմ է ձեռնտու:

Եւ այսպիսով. ի՞նչ բան է «դավադրության տեսությունը»: Հասկանալու համար, սկսենք «դավադրություն» հասկացությունից: Այն, որ հանուն որեւէ նպատակի մարդիկ կարող են գործել միասնաբար՝ ակնհայտ է: Այն որ հաճախ (օրինակ՝ քաղաքականության ասպարեզում), դա կարող է (եւ պետք է) արվի գաղտնի, նույնպես ակնհայտ է: Իսկ ի՞նչ է կոչվում այն ծրագիրը, որը մարդկանց մի՛ խմբի կողմից գաղտնի իրագործվում է ընդդեմ մարդկանց մեկ այլ խմբի եւ հանուն որոշակի նպատակի: Ճիշտ է. դավադրություն: Այսինքն, առհասարակ դավադրություններ գոյություն ունեն: Այլ բան է, որ նպատակները կարող են լինել բարի եւ չար: Այսինքն, այն ինչ բարիք է մեկի համար, չարիք է հակառակ խմբի տեսակետից: Եթե գաղտնի ծրագիրը իրագործվում է մի՛ երկրի կառավարության կողմից՝ ընդդեմ մյուս՝ թշնամական երկրի, ապա առաջին երկրի շահերի տեսակետից դա բարի **գործողություն** է (դրա իրագործողները՝ «հետախույզներ» են): Մյուս երկրի տեսակետից առկա է **դավադրություն** (դրա իրագործողներն էլ «լրտեսներ» են): Հենց այս կարգի գործողությունների ամբողջությունն է կոչվում քաղաքականություն: Այլ կերպ ասած, քաղաքականությունը՝ դավադրությունների ամբողջություն է:

Իսկ կարո՞ղ է դավադրությունը կազմակերպել որեւէ երկրի քաղաքացիների մի խումբ, նույն երկրի մեկ այլ խմբի դեմ: Բնականաբար: Բայց դա կոչվում չէ՞զոք եզրույթով. քաղաքական պայքար: Իսկ կարո՞ղ է դավադրությունը ուղղված լինել տվյալ երկրի վերնախավի կողմից, նույն երկրի ժողովրդի դեմ... Դժվար է պատկերացնել... Իսկ կարո՞ղ է դավադրություն կազմակերպվել բոլոր երկրների վերնախավերի կողմից ընդդեմ բոլոր երկրների ժողովուրդների... Դե չէ... Ես մեկը արդեն... Թե՛ հա...

Այո, դավադրություններ միշտ էլ եղել են, լինելու են, եւ չեն կարող չլինել: Եւ, բնականաբար, դավադիրները ժխտելու են դավադրության փաստը եւ փորձելու են վարկաբեկել այն բացահայտողներին: Այդ թվում եւ մեղադրելով նրանց *դավադրամոլության* մեջ եւ պիտակավորելով: Ի դեպ, հենց այս տեսակետից շատ ձեռնտու է տափակ երկրի կամ այլմոլորակայինների մասին իրոք լուսանցքային տեսությունների գոյությունը. եթե «տափակ երկրի տեսությունը» եւ որեւէ թիրախային (հենց նույն այս «թագավարակի») ծրագրի հաշվով կասկածները նույն կարգի են, դա հոգեբանորեն ամրապնդում է «թագավարակի» իսկության մասին պնդումը:

Մյուս կողմից, գոյություն ունի դատողությունների այսպես կոչված «սեւ արկղի» եղանակը, որը գործածվում է որոշ, միանգամայն գիտական վերլուծություններում, երբ մի որեւէ համակարգը փակ է անմիջական հետազոտման համար, բայց հայտնի է, թե ինչ է դրա մեջ մտնում եւ ինչ է միջից ելնում: Օրինակ, եթե մի որեւէ փակ սենյակի մեջ մտնում է *վառելիք, ալյուր, ջուր*, իսկ դուրս է գալիս *հաց*, կարելի է եզրակացնել, որ փակ սենյակի մեջ գտնվում է հաց թխելու արտադրամաս: Թե հատկապես ի՞նչ սկզբունքներով է աշխատում այդ արտադրամասը, առանց լրացուցիչ տվյալների դժվար է ասել, բայց որ դա իրոք հացի արտադրամաս է՝ ակնհայտ է:

Նույնպիսի են եւ մարդկանց խմբերը, նույն՝ կառավարությունները: Որքան էլ դրանք փակ լինեն, բայց եթե դրանց մասին կան մուտքային եւ ելքային տվյալներ (իսկ դրանք միշտ էլ կան), ապա դրանց հիման վրա կարելի է կատարել **այս կամ այն հավաստիության ենթադրություններ** դրանց ներսում կատարվող իրադարձությունների մասին: Բայց ի տարբերություն նախորդ անմեղ օրինակի, բավական է կառավարության ներսում կատարվող անցքերի մասին կատարել նույնիսկ պարզ եւ հաճախ՝ շատ հավանական ենթադրություններ, եւ պիտի պատրաստ լինես հետապնդման. օրենսդրական եւ/կամ պիտակավորման միջոցով:

Դիտարկենք մի օրինակ. մի երկրի ընկերություն ցանկանում է արդյունահանել մեկ այլ երկրի օգտակար հանածոները: Մեծ հավանականությամբ, այդ երկրի կառավարությունը կարող է նրան արգելել դա,

մտահոգված լինելով բնության պահպանության հարցերով: Կարող է նաեւ թույլատրել, բայց պարտադրել, որ նա գումարներ ծախսի, ապահովելու բնության մաքրությունը: Վերջապես սահմանի վրա այդ ընկերությունից կարող են պահանջել, որ նա վճարի ինչ-որ մաքս: Մի խոսքով՝ տվյալ երկիրը բազմաթիվ հիմքեր ունի պղտորելու այդ ընկերության կյանքը:

Իսկ ինչո՞ւ է այդպես: Պատճառն այն է, որ այդ երկիրը. ա. անկախ է, այսինքն, կառավարությունը վերահսկվում է ժողովրդի կողմից, եւ բ. ժողովուրդն այդ երկիրը համարում է իր հայրենիքը: Ինչ է նշանակում «հայրենիք».

Նշանակում է մի վայր, ուր մարդը ծնվել է, տիրապետում է այդ վայրում ընդունված լեզվին (այսինքն՝ այլ լեզու գրեթե չգիտի եւ այլ երկրում իրեն կաշկանդված կգգա), եւ մտքով էլ չի անցնում, որ կարող է այլ վայր տեղափոխվել: Ա՛յ եթե այդ մարդիկ. ծնված չլինեին այդ վայրում, կամ ծնված լինելու դեպքում՝ տիրապետեին այլ լեզուներին, եւ այդ լեզուներով էլ իրենց դեռ պատմեին, թե ինչ լավ է կյանքն այլ երկրներում: Այսինքն, այդ վայրը այդտեղ ապրողներին չթվար բնակվելու միակ տեղը, որը իրենք պիտի գուրգուրեն ու պաշտպանեն: Այսինքն՝ հայրենիք չլիներ: Այդ դեպքում տվյալ հանքը հնարավոր կլիներ անարգել շահագործել, քանի որ *բնակչությունը* (արդեն ոչ թե ազգը, կամ ժողովուրդը) կառավարության առջեւ նման պահանջներ այլեւս չէր դնի, իսկ երբ տվյալ վայրում ապրելն արդեն անտանելի դառնար, կմտածեր, թե, բա՝ «երթալն է ճիշտը», կամ «որտեղ՝ հաց, այնտեղ՝ կաց», եւ կչվեր դեռեւս չաղտոտված մեկ այլ վայր: Շքեղ է:

Ուրեմն ի՞նչ պետք է անի այդ ընկերությունը (կամ՝ *ընկերությունները*. դրանք հաստատ բազմաթիվ են): Նպաստի, որ տվյալ երկիրը կամ չլինի առհասարակ (չլինի այն սահմանը, որի վրա ինչ-որ մաքս կգանձվի), կամ այն լինի ոչ ազգային (այն է՝ ժողովուրդը պատրաստ լինի հեշտությամբ լքել իր տները): Այսինքն՝ պետք է նպաստել այդ երկիրը եկվորներով («միգրանտներով») լցնելուն, եւ ընկճել այդ երկրում ապրողների «հայրենասիրությունը», այն է՝ իջեցնել մայրենի լեզվի եւ պատմության դասավանդման մակարդակը, քարոզել օտար լեզուների տիրապետելու օգուտը («ինչքան լեզու գիտես, այդքան՝ մարդ ես»), գովերգել այլ՝ «զարգացած» երկրները, պայմաններ ստեղծել, որ մարդիկ հեռանան հայրենիքից: Մի խոսքով, օտարները՝ գան, տեղացիները՝ գնան: Իսկ դժգոհողներին կարելի է հանգստացնել հավաստիացումներով, որ դրա արդյունքում շահում են բոլորը, իսկ շատ համառներին չեզոքացնելու համար նրանց կարելի է պիտակավորել, որպես օտարապաշտներ («քսենոֆոբներ», եւ այլ «ֆոբներ»), ազգայնականներ... Ճիշտ է, այս ճանապարհով արդյունքի արագ չես հասնի, բայց շտապելու կարիք էլ չկա. հիշո՞ւ եք մարմանդ կրակի վրա եփվող գորտին:

Այժմ, եթե արձանագրում ենք տվյալ (ինչ-որ մի) կառավարության (դիտելով այն, որպես «սեւ արկղ») հետեւյալ քայլերը. Մարաքեշի պայմանագրի ընդունում (որ այլազգիները իրենց լավ զգան տվյալ երկրում), Բոլոնյայի համակարգին աջակցում (որ երիտասարդները հեշտությամբ հարմարվեն այլ երկրներում), մայրենի լեզվի, գրականության, պատմության դասավանդման վատթարացում (որ երիտասարդներին այլեւս ոչինչ չկապի հայրենիքի հետ) եւ այլն, իրավունք ունենք ենթադրելու, որ կառավարությունն այդ ներկայացնում է ինչ-որ արտաքին «ընկերությունների», այլ ոչ թե տվյալ ազգի շահերը: Այլ կերպ ասած՝ դրածո է եւ դրսից ուղղորդվող: Բնական է, որ կարող ենք:

Բայց մեզ էլ կարող են հարցնել, թե այդ հր երկրի կառավարությունը նկատի ունենք: Չէ՞ որ այսօր վերոհիշյալ քայլերը կատարում են **բուրդ** երկրների կառավարությունները: (Բացի մեկ-երկու, «սխալ», երկրներից): Միանգամայն: Ուրեմն... Հիմա սա ինչ է, *դավադրաբանություն*, թե՞ *տրամաբանություն*:

Իսկ դուք հարցնում եք, թե որտեղից եկավ **թագավարակի** գաղափարը եւ ինչու նրան հավատացին: Պետք է կարողանալ միասնաբար տեսնել փոխկապված առարկաները: Այլապես *ոտքը*, *պոչն* ու *կնճիթը* առանձին դիտելով կարող եք *փիղը* չնկատել...

30.08.2020